Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
www.ichd.org

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման խնդիրները

Համահամայնքային քննարկումներ Հայաստանի մարզերում

Քննարկումների ընթացքում արտահայտված մտքերը

Քննարկումներն իրականացվել են Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից՝ Եվրասիա համագործակցության հիմնադրամի միջոցով ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տրամադրած օժանդակությամբ:

Ստորև արտահայտված տեսակետներն ու կարծիքները արտահայտվել են քննարկումների մասնակիցների կողմից և միշտ չէ, որ արտահայտում են Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Եվրասիա համագործակցության հիմնադրամի և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետներն ու կարծիքները:

1. ԱՐՏԱՇԱՏՈՒՄ
կայացած հանրային քննարկման ընթացքում արտահայտված մտքերը

28.09.2009

1. Ես ողջունում եմ մեր կառավարության նախաձեռնությունը՝ բարելավել հարաբերությունները Թուրքիայի հետ:
2. Կարծում եմ, որ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը վաղ թե ուշ բերելու է Թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաչմանը:
3. Չեք կարծու՞մ, որ ավելի ճիշտ կլիներ այս հարցերը քննարկել պատմաբանների ու մասնագետների հետ, ի՞նչ կարող են անել բժիշկները, ուսուցիչները ..
4. Սահմանը պետք է բացվի, իսկ ինչո՞ւ չբացվի, ես կարծում եմ, որ սահմանի բացման դեպքում դա կազդի մեր տնտեսական զարգացման վրա և հնարավորություն կտա լուծելու ցեղասպանության ճանաչման հարցը:
5. Սա մեզ երկրորդ ճանապարհային հնարավորություն կտա:
6. Այս հարցը մեր ամբողջ ազգի հարցն է՝ լինի պատմաբան, կոշկակար, թե ուսուցիչ..
7. Որքան էլ մենք խնդիր ունենք մեր հարևանի հետ, մենք պետք է փորձենք հարաբերություններ հաստատել:
8. Սահմանների բացելուց հետո թուրքերը հնարավոր է գնեն Հայաստանը
9. Սահմանի բացումով մենք կլուծենք դեպի արևմուտք ճանապարհը: Սակայն, չպետք է մոռանալ նաև ցեղասպանության մասին:
10. Հայաստանում հողը շատ էժան է և հարմար թուրքերի համար:
11. Մենք երկու ճանապարհ ունենք՝ Վրաստան, Իրան, Թուրքիան էլ կլինի երրորդը: Սակայն սահմանը մենք չենք փակել:
12. Կարծում եմ սահմանի բացումը, ընդհանրապես, հարաբերությունների հաստատումն անհրաժեշտ է:
13. Հայաստանը չպետք է շրջափակված լինի, բայց մեր մեջ մեծ մտավախություն կա...Ասում են . «Թշնամու հետ ընկերություն արա, բայց փայտը ձեռքիցդ մի գցի»
14. Նույնիսկ սովորական ընտանիքների դեպքում հարևանների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելը անհրաժեշտ է:
15. Հասարակ ժողովրդի համար սահմանի բացումը միշտ էլ լավ է:
16. Սահմանի բացումը լուռ... լավ չէ. պարզ չէ... հետագայում մեզ խաբելու հնարավորություն է թողնում:
17. Ձանգվածային ներկրում կսկսվի ու ոչ ոք չի վերահսկի որակն այդ ներկրված ապրանքի: Իսկ այդպիսով հնարավոր է գենոֆոնդ թունավորել:
18. Թուրքերը հանգիստ կարող են ներխուժել Հայաստան... կփոխվի երկրի դեմոգրաֆիական կազմը
19. Սահմանի բացումը ռիսկեր է պարունակում, սակայն դրան պետք է գնալ: Երբ ժամանակին բացվեց Իրանի հետ ճանապարհը, պարսկական էժան ապրանքը ողողեց շուկան, սակայն

հիմա մենք շատ ու շատ նման ապրանքներից հրաժարվել ենք: Մեր արտադրողը մրցունակ է:

20. Մաքսային ռեժիմը խիստ պետք է լինի ու աչալուրջ:

21. Մտավախությունները մեր գենետիկայի մեջ են, բայց կյանքը գնում է առաջ: Պետք է և առաջ գնալ և հետ նայել:

22. Սահմանների բացումը պետք է լինի առանց որևէ նախապայմանների:

23. Իրենց սննդարդյունաբերական ապրանքները էժան են, սա ներկրողի շահույթի հարց է միայն:

24. Սահմանի բացումը միանշանակ ընդունելի կլինի միայն պայմանագրերի միջոցով, այլապես ընդունելի չէ:

25. Դերասանություն պետք է անենք. բացահայտ ցույց չտանք, որ վատ ենք, հարաբերություններ հաստատենք, բայց մեր խնդիրը չմոռանանք:

26. Քաղաքական մերձեցում պետք է լինի, ուղղակի մենք շտապում ենք

27. Այլ մտահոգություն էլ կա՝ Հայաստանը կարող են փորձել թմրաբիզնեսի, թրաֆիքինգի ենթարկել:

28. Սահմանի բացումը շատ ռիսկային է: Պետք է սկզբում որոշել, թե ինչ ենք անելու հետագայում, հետո նոր բացել սահմանը:

29. Մենք այսպես թե այնպես թուրքական ապրանքներից օգտվում ենք, իսկ պետությունը պետք է հովանավորի տեղական արտադրողին, որ կարողանա այն մրցունակ դարձնել:

30. Հարյուր տարի իզուր ենք խոսել, որ հիմա մենք մեր պահանջից հրաժարվե՞նք:

31. Սա մեր վերջին հնարավորությունն է աշխարհին ապացուցելու, որ մենք էլ ձայնի իրավունք ունենք:

32. Սահմանի բացումը միանշանակ անհրաժեշտ է, բայց զգույշ է պետք լինել՝ թուրքը ոչխար արածեցնելով եկավ Փոքր Ասիայի տեր դարձավ, հիմա էլ աշխարհի լավագույն դիվանագիտությունը ունի:

33. Անցյալը չպետք է մոռանալ, պետք է անցյալի սխալների վրա որոշումներ կայացնել:

34. Մինչև թղթի վրա գրածը իրականացվի, կանցնի մոտ քսան տարի...

35. Թուրքիայում անգամ փողոց կա, որտեղ հայ կանայք մարմնավաճառությամբ են զբաղվում: Շատ հնարավոր է, որ սահմանի բացումը թրաֆիքինգը աշխուժացնի:

36. Սփյուռքի կարծիքը նույնպես պետք է հաշվի առնել...

37. Սահմանը ընդամենը բացելու համար չեն բացում: Կոնկրետ գործողություններ են անհրաժեշտ:

38. Շահելու ենք մե՞նք, թե օլիգարխները... Հասարակ ժողովրդին ի՞նչ օգուտ կլինի:

39. Լռություն պետք չէ. ակտիվություն է պետք. համագործակցենք, բայց ճկուն դիվանագիտության միջոցով չթողնենք, որ մեզ խաբեն:

40. Թուրքիայի կողմից դա կարող է կառավարվող երևույթ լինի՝ պետական հանցագործություն Հայաստանի նկատմամբ:

41. Միգուցե պետք է որոշ ժամանակ լռել, ինչպես նշված է առաջին սցենարում, ոտքի կանգնենք, նոր լծվենք մեր շահերի հետապնդման գործին:

42. Կարծում եմ, որ մեր հանրությունը դեռ պատրաստ չի սահմանները բացելուն:

43. Մի երկու տարվա մեջ Թուրքիան մեր ամբողջ շուկան կգրավի, տեղական տնտեսությունը կտուժի:

44. Բոլորիս մեջ կա մտավախություն, բայց պետք է հասկանալ, որ Վրաստանն էլ միակը չէ, դրա համար արժե բացել սահմանը

45. Պետք է քննարկել, թե սահմանի բացումը մեզ ինչ կտա՝ թե տնտեսական, թե քաղաքական ասպեկտով:

46. Ասում ենք, որ տնտեսապես ձեռնտու է սահմանի բացումը, իսկ ես այլ կարծիքի եմ. սահմանի բացումը նշանակում է շատ էժան ապրանքի ներմուծում, ինչը կհարվածի տեղական արտադրողին... արդյունքում մեր ունեցածն էլ կկորցնենք ու կդառնանք «խանութի վաճառողներ»...

47. Ես տեղյակ եմ, որ Թուրքիան հզոր գյուղատնտեսություն ունի. սահմանները բացելու դեպքում մեր գյուղացիները տուժելու են:

48. Տնտեսապես առանձնապես ոչինչ չի փոխվի՝ մենք ինչքան պետք է հիմա՝ ներմուծում ենք: Հնարավոր է, ասենք, չնչին գնային տարբերություն:

49. Սահմանի փակ լինելն է, որ մինչ այս խանգարել է Թուրքիային Հայաստանի դեմ զանգվածային ու ազդեցիկ ոչնչացման ծրագրեր իրականացնել:

50. Վախ կա, որ մեր տուն մտնող այդ օտարը ինչ ասես կարող է անել:

51. Սա թուրքերի համար մտածված քայլերի հաջորդականություն է՝ Հայաստանի դեմոգրաֆիան փոխելու համար

52. Հիմա էլ թուրքական ապրանքները ծփում են Հայաստանում..

53. Կարծում եմ, որ մեր հանրությունը դեռ պատրաստ չէ սահմանների բացմանը:

54. Նախկինում մեր ջերմոցներում արտադրված բանջարեղենը լավագույն համբավն ուներ: Հիմա Պարսկաստանից ու արտասահմանից ներմուծված բանջարեղենը հնարավորություն չեն տալիս մեր գյուղատնտեսության զարգանալուն: Նույնն էլ Թուրքիայի հետ սահմանների բացման դեպքում է լինելու:

55. Հայերը միշտ իրենց ձեռքբերումները կորցրել են միամտության ու սին հավատի պատճառով... Ինչու՞ հենց հիմա բարձրացվեց այս հարցը:

56. Իսկ թուրքական հանրությունը, իմ կարծիքով, մեզանից շատերի պես մասամբ պատրաստ են, մասամբ ոչ:

57. Երեք միլիոն հայ ապրում է Հայաստանում, բայց ութ միլիոն հայ ապրում է դրսում: Առաջին հերթին պետք է հաշվի առնվի սփյուռքահայերի կարծիքը այս հարցում:

58. Սահմանի բացումը շատ կարևոր եմ համարում մեր երկու հայրենիքների միավորման համար

59. Սահմանների բացումը կարող է խթանել միջին խավի զարգացմանը

60. Բացի երկու երկրներից պետք է լինի նաև միջազգային ատյանների վերահսկողություն:

61. Իսկ ես կարծում եմ, որ հայոց պատմությանը ծանոթ չլինելն է խանգարել թուրքական հասարակությանը ադեկվատ վերաբերվել մեզ:

62. Ոնց որ իմ տունը մեկը գրաված լինի, քանդած լինի, կողքի մարդը գա, ասի. «Այսպես լավ կլինի, այնպես լավ կլինի»: Առաջին հերթին պետք է հաշվի առնել Արևմտյան Հայաստան կորցրած մարդկանց կարծիքը:

63. Թուրքիան կարող է ասել, որ եթե մենք բացում ենք սահմանները, ուրեմն բարեկամներ ենք, ուստի մոռանանք անցյալը

64. Պետք է գնալ սահմանների բացման, բայց նախապայմաններով, որովհետև մենք պահանջատեր ենք: Ուղղակի պետք է այդ ամենը այնպես հրամցնել միջազգային հանրությանը, որ և գայլերը կուշտ լինեն, և ոչխարները՝ ողջ:

65. Թուրքերը դրանով լուծում են Արևմտյան Հայաստանի թուրքերով բնակեցնելու հարցը, մենք էլ դրան նպաստում են:

66. Սահմանի բացումը կապը հեշտացնում է Եվրոպայի հետ, բայց մենք մեր մասին ենք մտածելու... Հայաստանը պետք է կարողանա իր ներքին արտադրողների շահերը պաշտպանի և ապա սահման բացի:

67. Ես կարծում եմ, որ մշակութային շփումը կօգնի մեզ ճիշտ հարաբերություններ հաստատել:

68. Տնտեսական առումով սահմանի բացումը մեզ ձեռնտու է միջազգային շուկա մեզ ճանապարհ է հարթում:

69. Մենք մեր ձեռքով թուրքերին զարգացնում ենք:

70. Այսօր մենք այլընտրանք չունենք: Չինաստանից միչև Փոթի մի կոնտեյներ հասցնելը 800 դոլար արժե, իսկ Փոթիից մինչև Երևան՝ 1800: Մեզ պետք է նոր ճանապարհ:

71. Ես չեմ կարծում, թե այս սցենարի դեպքում աշխարհը մեզ կպարտադրի լռեցնել ցեղասպանության հարցը:

72. Հարցին պետք է նայել նաև էմոցիոնալ կողմից և ոչ միայն տնտեսական: Սակայն, ընդունում ենք, որ տնտեսական առումով դա շատ օգուտ կտա մեզ: Պետք է տնտեսապես հզորանալ և հետո միայն լուծել զգացմունքային խնդիրները: Գենը իրենը պետք է վերցնի:

73. Սահմանի բացումը միանշանակ կնվազեցնի ապրանքների գինը: Բայց պետք է ծանրութեթև անենք, ինչ ենք ստանում ու ինչ ենք կորցնում կամ տալիս:

74. Թուրքերը շատ ավելի լավ դիվանագետներ են, քան մենք: Պետք է զգույշ լինել՝ պետք չէ ուղղակի սահմանը բացելով զբաղվել: Այս ամենից նորից թուրքերն են օգտվելու:

75. Ռիսկ կա, որ աշխարհը կպարտադրի մեզ հանուն մեծ խաղաղության լռել մեր պատմական պահանջների մասին:

76. Պետք է այնպես անել, որ հետագա սերունդները մեզ չմեղադրեն մեր այսօրվա սխալների համար:

77. Շատ մեծ վտանգ է ներկայացնում թուրքերի մուտքի հնարավորությունը Հայաստան: Տաս-քսան տարի հետո հնարավոր է ամբողջ Հայաստանը գնված լինի թուրքերի կողմից:

78. Թուրքերը միշտ պաշտպանելու են Ադրբեջանի շահերը ցանկացած բնագավառում, իսկ Հայաստանի և Թուրքիայի միջև չեն կարող լինել բարիդրացիական հարաբերություններ

79. Մեզ հարկավոր չէ տնտեսական առավելություն՝ մեր անցյալը մոռանալու հաշվին:

80. Երևի թե տեղին չէ համեմատությունը, բայց տեսեք. Վրաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ ունենք, իսկ ջավախահայերի հետ տեսեք թե ինչպես են վերաբերվում:

81. Դիվանագիտական առումով մեզ համար այնքան էլ շահավետ չէ սահմանների բացումը: Պետք է ուշադիր լինենք, որ չկորցնենք ցեղասպանության միջազգային ընդունման պահը:

82. Մեր դիվանագիտությունը պետք է օգնի մեզ:

83. Հայաստանը չի կարող ունենալ որևէ հողային պահանջ Թուրքիայի նկատմամբ, քանի որ չկա որևէ իրավական հիմք...

84. Մեր ու նրանց պայքարը հավասար չէ, մեր նյութական միջոցները նույնը չեն:

85. Ես շատ ողջունում եմ հանրային քննարկումները և մտածում եմ, որ պետք է գնալ ռիսկի, սակայն աչալուրջ լինել:

86. Լրացուցիչ օրենքներով պետք է պաշտպանական քաղաքականություն վարվի՝ սկսած հող գնելու իրավունքից, մինչև բիզնես սկսելու հնարավորությունը:

87. Տնտեսական հրաշքների սպասել պետք չէ՝ այսօր էլ ինչքան պետք է, մենք տնտեսապես առնչվում ենք թուրքերի հետ, նույնիսկ՝ ադրբեջանցիների:

88. Ենթադրենք քսան միլիոն քրդերով բնակեցված հողերը տան մեզ, ի՞նչ ենք անելու

89. Մեր պապերի դարավոր պայքարը դնում ենք հարվածի տակ...

90. Գործընթացը սկսելուց առաջ մենք պետք է հաղթահարենք վախը, հետո անցնենք առաջ:

91. Այսօրվա մեր քննարկումները ոչինչ չեն փոխելու: Ինչ որ դրված է սեղանին՝ անկախ ամեն ինչից ստորագրվելու է:

92. Ցեղասպանության ճանաչման գործընթացի վրա սահմանի բացումը իհարկե կազդի. մեզ կստիպեն լռել, քանի որ կասեն, թե այսպիսով մենք խանգարում ենք հարաբերություններին:

93. Ես կարծում եմ, ինքներս մեզ «տուպիկի» մեջ ենք գցել... պատճառն այն է, որ մենք հարցը միշտ միակողմանիորեն ենք քննարկում՝ կամ միայն տնտեսական կողմն ենք նայում կամ էլ ապուպապերին ենք հիշում:

94. Մենք քրիստոնեությունից նույնքան հեռու ենք, ինչքան բուդդիզմից

95. Սահմանի բացումը պետք է շատ խիստ վերահսկողության տակ լինի. ինչ և ինչքան ենք ներմուծում ու արտահանում:

96. Ես կողմ եմ սահմանը բացելուն, բայց ոչ ամեն գնով... Դաշնակցականների մտավախություններն իրոք արդիական են:

97. Միակ լուծումն այն է, որ Հայաստանն ունենա մրցունակ տնտեսություն, այս պարագայում սահմանի բացումը մեզ համար վտանգավոր չէ:

98. Սահմանը բացել նշանակում է. առջևում կա անդունդ, որը բերում է բաց սահմանը, մեր ոչ մրցունակ տնտեսությունը կզիջի դիրքերը

99. Կարծում եմ, հարաբերությունների հաստատումը հենց առաջին սցենարի միջոցով կսկսվի:

100. Մենք չպետք է վավերացնենք Ղարսի պայմանագիրը: Այլապես ինչու՞ ենք ցեղասպանության ճանաչում պահանջում, եթե հետո չենք կարողանալու հող ու փոխհատուցում պահանջել:

101. Եթե մեզ համարում ենք համաշխարհային սիստեմի մաս, պետք է ընդունենք որոշակի կանոններ: Միջազգային հանրության համար անընդունելի է փակ սահմանները:

102. Հասարակությանը պարզապես պատրաստել է պետք, որպեսզի խուճապի չմատնվի երբ փողոցում հանգիստ քայլող թուրքեր տեսնի:

103. Այսօր մեր տնտեսությունը պատրաստ չէ ընդունելու Թուրքիայի շուկայի պայմանները: Մեր գյուղատնտեսությունը շատ կտուժի, քանի որ թուրքական էժան ապրանքները կլցվեն մեր շուկան:

104. Եթե Թուրքիան մտնի շուկա, կկիրառի դեմպինգային քաղաքականություն...

105. Քաղաքականությունը դա հնարավորությունների արվեստ է. մենք պետք է մեր հնարավորությունները ճշտենք, նոր խոսենք: Պետք չէ երազանքների գիրկն ընկնել:

106. Չպետք է հերքենք, որ շատ հարցերում թուրքերին զիջում ենք. միջազգային առևտուր, նույնիսկ դիվանագիտություն:

107. Արտահանելու կարիք չկա: Մեր միջոցներով ավելի լավ է ներքին պահանջարկը ամբողջությամբ բավարարել

108. Մենք պետք է դիվանագիտությունը զարգացնենք. մենք միշտ էլ դիվանագիտությունից թույլ ենք եղել..

109. Եթե դիվանագիտական հարաբերություններ հաստատվեն, դա արդեն կբերի երկխոսության բոլոր թեմաներով: Ես այսպես եմ հասկանում առանց նախապայմանների հարաբերություններ հաստատելը: Հարաբերություններ հաստատելուց հետո նոր կարելի է խոսել սահմանների և այլնի վերաբերյալ:

110. Մեր հիշողությունը չպետք է մեզ դավաճանի և պետք է հիշենք, թե թուրքերը, լինելով ավելի լավ դիվանագետներ, ինչպես են կարողանում իրենց ցանկությունը ճիշտ ներկայացնել:

111. Առաջարկում եմ սահմանը բացելու հարցը դնել հանրաքվեի:

112. Քրդերը մեր դաշնակիցը չեն, որովհետև այդ հողերը այժմ իրենցն են... Նրանք չեն տա.. Քրդերն էլ նույն թուրքն են...

113. Հայաստան-Թուրքիա հարաբերությունների մեջ ի՞նչ գործ ունի Ադրբեջանը:

114. Ադրբեջանը հիմա առերես խիստ դժգոհ է Թուրքիայի քաղաքականությունից...Պետք է վարագույրը բացել ու տեսնել, թե ինչ կա իրականում:

115. Սահմանների բացումը տնտեսական էական փոփոխության չի բերի, քանի որ հիմա փակ է միայն ցամաքային սահմանը, իսկ օդային տրանսպորտը միանշանակ աշխատում է

116. Միանգամից ասեմ, երկրորդ սցենարը Հայաստանի համար ամենալավ տարբերակն է, քանի որ այս տարբերակում Թուրքիան միշտ չի կարող աղվեսի քաղաքականություն վարել:

117. Ամեն դեպքում ցեղասպանության հարցը պետք է պահել, երբեք չես կարող ասել, թե թուրքիան ինչ կարող է անել:

118. Թուրքիան ամեն դեպքում միշտ պաշտպանելու է Ադրբեջանին՝ անկախ նրանից, սահմանները բաց են, թե փակ:

119. Եթե տնտեսական հարաբերություններում կարող ենք ճկուն լինել, մի քիչ էլ զիջող, ապա պատմական հարթությունում պետք է նույնիսկ ագրեսիվ լինենք:

120. Ղարաբաղի հարցը արդեն իսկ լուծված է, այնպես որ այս հարցը ընդհանրապես պետք չէ կապել հայ-թուրքական հարաբերություններին:

121. Ինչպե՞ս կարելի է անտեսել Ղարաբաղի հարցը. արյան գնով ենք այդ հողերը վերցրել... Ղարաբաղի հարցը բացառիկ հարց է:

122. Եթե մենք պահանջատեր լինենք ու հողեր պահանջենք՝ ո՞վ մեզ կհասկանա:

123. Պահանջատիրությունը մնում է պահանջատիրություն, քննարկելու ուրիշ ոչինչ չկա:

124. Տնտեսապես որքան հզոր լինենք, այնքան էլ քաղաքականապես անկախ կլինենք:

125. Ապրի նախագահը, որ համարձակ գնաց այս հարցը լուծելու ճանապարհով: Վերջ ի վերջո այս հարցը պետք է լուծվեր, թե՞ ոչ: Ոչ ոք ռիսկ չէր անում այս հարցը փորձեր լուծել: Աշխատող մարդն է սխալվում՝ հնարավոր են սխալներ:

126. Պետք է պատասխանենք այն հարցին, թե արժե՞արդյոք քաղաքական հարցերը զիջել տնտեսական զարգացմանը: Նույն աղանդավորների դեպքն է. փողը տանք՝ հոգին առնենք:

127. Եկեք չմոռանանք, որ նույն ցեղասպանության ժամանակ նույն գերտերությունները շատ բան էին խոստանում, բայց լռեցինք... հիմա ի՞նչ գործ ունեն, որ խառնվեն...

128. Զգոն լինենք... կարմիր կովն իր կաշին չի փոխում, ժողովուրդ ջան...

129. Եկեք չմոռանանք, որ ղարաբաղյան պատերազմի ժամանակ Թուքիան անընդհատ օգնում էր Ադրբեջանին: Նույնը կշարունակվի և սահմանների բացումից հետո, քանի որ Թուրքիան երբեք չի հրաժարվի քաղցր պատառից:

130. Սահմանը բացենք, բայց մահակը ձեռքից չթողնենք:

131. Թուրքիայի հետ հարաբերությունների բարելավումը պետք է դիտարկել մեր հզոր բարեկամ պետությունների՝ Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա շահերի տեսանկյուններից նաև:

132. Հարց է՝ Թուրքիան ուզո՞ւմ է սահման բացել: Ոչ, մենք տեսնում ենք, որ ստիպում են հզորներն ու իրենք էլ համաձայնվում են: Իսկ մենք պատմությունից գիտենք, որ երբ երրորդ ուժերն են պարտադրում, հետո մենք տուժում ենք, մեր անվտանգությունը ոչ ոք մեզ չի երաշխավորի:

133. Մեր միջոցով խաղում են Թուրքիան և Ռուսաստանը

134. Հավերժ սահմաններ չկան: Ոչ ոք չգիտեր ու չգիտի, թե ինչե դեռ կլինի: Ո՞վ էր ենթադրում ԽՍՀՄ-ի այսպիսի վերջաբան:

135. Մի հատ հարց. երբևիցե մենք կարո՞ղ ենք պատկերացնել, որ Ղարաբաղը մեզ պետք չէ... ՉԷ՛: Ուրեմն թող իրար պաշտպանեն, հող ուզեն.... մեկ է. շունը շան թաթ չի ծամելու:

136. Հայաստանը զարգանում է... Ամեն ինչ լավ է լինելու: Ավելի լավ է կամաց-կամաց գնանք առաջ, քան սահմանը բացենք ու թռիչքով զարգանանք..Հետո էլ մնանք կոտրած տաշտակի առաջ:

137. Մեր սահմանները շատ փոքր են, մենք սեղմված ենք այս տարածքում, իսկ մեր ֆիզիկական գոյատևման համար նոր ու լայն տարածքը մեզ համար անհրաժեշտություն է:

Եթե քրդական հարցը կա Թուրքիայի համար, մենք մեր պատմական հողերից չպետք է հրաժարվենք: Կարող է այս պահին հարցը չբարձրացնենք, սակայն չպետք է հրաժարվենք:

138. Ադրբեջանն ու Թուրքիան տարբեր պետություններ են, եկեք այս հարցը չմոռանանք:

139. Ճշմարտությունը պետք է բարձրաձայնել. սատանան է փսփսոցով խոսում :

140. Եթե մենք վախենում ենք ու, իրոք, վտանգ կա, ինչո՞ւ ենք առանց նախապայման կարգավորում հարաբերությունները: Ես ապրել եմ ադրբեջանցիների մեջ և գիտեմ նրանց խորամանկությունն ու դիվանագիտությունը: Չի կարելի նրանց վստահել՝ Սումգայիթից առաջ էլ էին ասում ամեն ինչ լավ կլինի:

141. Միևնույնն է գնում ենք Թուրքիա, բա մեզ պետք է՞ սահման բացել...Ուզում ե՞ն ՝ թող բացեն...Էլ ի՞նչու ենք գլուխ ջարդում:

142. Պատմությունից քաղած մեր դասերը չպետք է մոռանանք և թուրքերի հետ հարաբերություններում շատ զգոն լինել:

143. Թուրքիան միշտ էլ կորցնում է իր վստահությունը, մեր դիվանագիտության հզորության ու բանիմացության հարցն է, որ մենք կուլ չգնանք:

144. Թուրքական ապրանքի մուտքը Հայաստան ոչինչ չի նշանակում: Պետք է խոչընդոտել թուրք ժողովրդի մուտքը

145. Մեր պատմական հողերի հարցը չի փակվելու երբեք:

146. Կամ ցեղասպանության ճանաչում կամ սահմանի բացում: Եվ- և չի լինի:

147. Արցախի հարցը հավերժ լուծված է. նրանք ապրում են ավելի լավ քան բուն Հայաստանում և այլն: Մենք չպետք է մտածենք Արցախի մասին

148. Մենք պետք է վերանայենք մի քանի ասպեկտներ, քանի որ սահմանների բացումը կազդի մեր կյանքի տարբեր ոլորտների վրա՝ կրթության, տնտեսության և այլն:

149. Չենք կարծում, թե տնտեսական լուրջ ներգրավվածություն կլինի սահմանը բացելուց հետո: Իրենք իրենց կրտսեր եղբոր շահերը վեր են դասելու: Լավագույն դեպքում կբացվի երկաթուղին, իսկ էներգետիկ ծրագրերում մեզ չեն ընդգրկի:

150. Այն, ինչ որ արյամբ չկարողացան անել, կանեն դիվանագիտությամբ ու դեմոգրաֆիայով: Այս ամենը շատ վտանգավոր է:

151. Հայերը միշտ էլ ապացուցել են, որ տաղանդավոր ազգ են... Սահմանի բացումը կնպաստի տնտեսության զարգացմանը, բայց ի՞նչ գնով:

152. Ես մասնակցել եմ միջազգային երիտասարդական հավաքի: Դրա ժամանակ մենք բարեհաճորեն ընդունեցինք թուրքերի ճաշի հրավերը, իսկ նրանք նույնիսկ չփորձեցին մեր պատրաստած որևէ ուտեստ: Չմոռանանք այս մասին:

153. Միևնունն է մնալու ենք այսպես. չի բացվելու սահմանը:

154. Մենք որպես հակակշիռ առաջ ենք քաշելու ոչ թե Ղարաբաղի հարցը /որն արդեն իսկ լուծված է/, այլ ցեղասպանության հարցը:

155. Նաբուկոն հիշենք. ՌԴ նախագահի հետ հանդիպումից հետո ինքն արդեն շահագրգռված չէ դրանով: Իսկ դուք՝ Նաբուկո, հա Նաբուկո:

156. Ցեղասպանության հարց չպետք է շոշափվի, դա չքննարկվող հարց է:

157. Նույնիսկ սահմանի բացումը չի նշանակի, որ մենք բարեկամ ենք:

158. Մենք վախում ենք, որ սահմանի բացումը դեմոգրաֆիա կփոխի, բայց չենք վախենում, որ հող հետ ուզենք, հայերով փոքրամասնություն ենք կազմելու... քուրդ ու թուրք է լցվելու... հետաքրքիր ժողովուրդ ենք բայց:

159. Մենք պետք է չեզոք դիրք գրավենք: Թող գերտերությունները ստիպեն թուրքերին սահմանը բացեն, իսկ մենք պետք է ցույց տանք, որ մեր համար միևնույն է:

160. Բայց թուքերին մի՞թե կարելի է հավատալ:

161. Զուտ պրագմատիկ հարց է. օգու՞տ է սահմանի բացումը թե ոչ: Պետք է կետ առ կետ քննարկել այս հարցը:

162. Ելակետ ընդունելով արցախյան շարժումը, Հայաստանում գրանցվել է որոշակի առաջընթաց առանց սահմանները բացելու, ուստի անհրաժեշտ է մշակել հզոր ռազմավարություն մինչև որոշակի քայլեր անելը

163. Այս հարցը պետք է քայլ առ քայլ լուծել, ժամանակի ընթացքում:

164. Փորձից ենք ելնում. Իրանի հետ սահմանի բացումից հետո պարսիկները Երևանում տարածքներ են գնել, հսկայական տարածքներ, իսկ ի՞նչ կլինի,և թուրքերը ինչ կանեն՝ պատկերացնո՞ւմ եք:

165. Իրենք իհարկե շահագրգիռ են Հայաստանում հողեր գնել:

166. Այսօրվա դրությամբ կա և դրական, և բացասական ազդեցություն: Դրականը այն է, որ տարիներով եղած ներքին լարվածությունը կանցնի: Իսկ բացասականը այն է, որ թուրքերն էլ պարսիկների նման կսկսեն այստեղ շենքեր կառուցել և բիզնես սկսել:

167. Ես ցավով եմ մոտենում ցեղասպանության հարցին, բայց չեմ ուզում, որ իմ երեխան սոված մեծանա:

168. Հայաստանը պետք է նախ հստակ պատկերացնի իր շահերը, նոր մտածի այս պարտադրված պրոցեսի մեջ իր անելիքի մասին:

169. Ինչպես անգլիացիներն են ասում՝ գոյություն ունի շահ: Չի կարելի տարիներով ապրել և չխոսել հարևանների հետ:

170. Մեր ենթակառուցվածքները ռուսի ձեռքում են, թուրքին առանձնապես բան չի մնացել:

171. Երբեք արժանապատվությունն ու հաղթանակը տրորելու գնով պատրաստ չենք սահմանը բացել

172. Թուքիան շատ ճոխ սեղանի շուրջ մեզ ճաշի է հրավիրել, բայց ճաշի մեջ թույն կա... Ի՞նչ անել...

173. Այսօր շատ բան գնել Հայաստանում չեն կարող, իսկ սահմանը բացելուց հետո մեծ հոսքով կգան ու կգնեն հողեր ու սեփականություն:

174. Թուրքիան խաղում է, որովհետև սահմանները չի բացի մինչև Արցախի հարցը չդրվի զոհասեղանին

175. Սահմանի բացումը բնականաբար ազդելու է ներմուծման ու արտահանման վրա, իսկ մենք պետք է հզոր լինենք ազգային գաղափարով, վերացնենք մեր անտարբերությունը միմյանց հանդեպ ու հասկանանք, որ բոլորն էլ պոտենցիալ թշնամի ու բարեկամ են մեզ:

176. Գերմանացին հող չուներ հրեային տալու, իսկ Թուրքիան ունի:

177. Թուրքիան այլևս այն պետությունը չէ, որը յաթաղանը ձեռքին է առաջ գալիս. նրանք ունեն արդեն երրորդ սերունդ, որը կրթվում է Եվրոպայում

178. Սա հնարավոր է, կարող է պրոցեսը սկսվի ու արդյունք չլինի: Սահուն չի լինի այս անցումը:

179. Անգլիան ու Ֆրանսիան իրար հետ կռվել են հարյուր տարի, բայց հիմա ունեն բաց սահմաններ, բարեկամական հարաբերություններ

180. Շատ հնարավոր է, որ Թուրքիան «բլեֆի» հնարավորությունից է օգտվում: Պարզապես ենթարկվում է այս պահին միջազգային ճնշումներին:

181. Ոչ ոք չի հասկանում. ո՞վ է շահում, ով պարտվում:

182. Հայաստանը չի փակել, իրենք են փակել, իրենք էլ թող բացեն, մենք ինչու՞ ենք խորացել:

183. Թուրքիան համաձայնում է սահմանների բացմանն, որպեսզի ունենա տարածաշրջանային իշխանություն: Թուրքերը աստիճանաբար կգան Հայաստան և կգրավեն այն:

184. Ստատուս քվոյով ապրել ենք ու կապրենք... չենք մեռնի...

185. Կգա մի պահ, որ Թուրքիայի վարչապետը կգա և ծնկաչոք ներողություն կխնդրի հայերից, ինչպես Գերմանիան Իսրայելից:

186. Իսկ մեր հնարավորությունները անսպա՞ռ են, Իրանի հետ խնդիրներ կլինեն, Վրաստանն իր շահերն է թելադրում, բա մեզ ի՞նչ կմնա: Մնում է մենք մեր շահերից ելնելով խելացի որոշմ կայացնենք

187. Եթե սահմանները չբացվեն, Դաշնակցությունը դիվիդենտներ կստանա, կասի.«Ես հասա այս ամեն ինչին», ու կհաղթի հաջորդ ընտրություններում:

188. ՄԵզ համար հարաբերությունները Թուրքիայի հետ տնտեսապես է ձեռնտու, իսկ Թուրքիայի համար՝ քաղաքականապես...

189. Սահմանի բացումից կօգտվի առաջին հերթին Ռուսաստանը:

190. Վրաստանը մեզ խեղդում է, իսկ երբ լինի այլընտրանք՝ բոլորովին այլ պահվածք կլինի:

191. Շահող կողմերն են՝ Ռուսաստանն ու Թուքիան. պատմությունը կրկնվում է:

192. Պետք է մենք մեր աղջիկներին այնպես դաստիարակենք, որ թուրքի ներկայությունը խնդիրներ չհարուցի:

193. եթե Թուրքիան զարգացել ու կրթվել է, ապա նրանք չպետք է շարունակեն մշակութային եղեռնը

194. Գերմանիան ժամանակին պատասխան տվեց իր արարքների համար, իսկ Թուրքիան երբեք չի անի նույնը, քանի որ մարդկային գործոնից բացի գոյություն ունի նաև տարածքների խնդիր:

195. Ամեն դեպքում փակ սահմաններ ունենալը ցանկալի չէ:

196. Դուբայից, Եվրոպայից անորակ ապրանք չի՞ գալիս: Իսկ մենք մեր ներկրողներից պետք է պահանջենք, որ որակյալ ապրանք բերեն:

197. Հայերը, որ ապրում են Թուրքիայում, հաստատ կուզեն ինչ-որ ձևով նպաստել հայկական տնտեսության զարգացմանը:

198. Բիզնեսի առումով թուրքերը բավականին կիրթ են մեր հետ հարաբերություններում, ինչը կարող են հաստատել բիզնեսմենները

199. Մենք եթե հրաժարվենք ցեղասպանության ճանաչումից՝ ի օգուտ տնտեսական շահերի, ապա բախում կլինի Հայաստանի և սփյուռքի միջև... Թուրքիան էլ կասի.«Այ մարդ, քո երկիրը հրաժարվել է, էլ ի՞նչ ես ուզում...

200. Կարծում եմ, որ նրանց մոտ ավելի շատ է ազգայնամոլությունը և հասարակական անհամաձայնություն այս հարցով իրենք էլ ունեն:

201. Իրականում ամեն ինչ կրկնվում է. Հայաստանը կվերածվի կամ թուրքական վիլայեթի, կամ ռուսական մարզի:

202. Պարզապես Թուրքիայի համար ռիսկային չէ սահմանի բացումն ու փակ պահելը:

203. Ստատուս քվոն ունենք, էսպես թե էնպես... եկեք մտածենք տեղում դոփելու փոխարեն գոնե մեկ քայլ առաջ կատարենք... էլ չեմ խոսում ետ քայլ չանելու մասին:

204. Սահմանի փակ լինելը գոնե նվազեցնում է էմիգրացիայի աճը:

205. Միջազգային ասպարեզում Թուրքիան մեկ ձայն ավել կունենա խոսելու: Սա էլ է իր շահը:

206. Եթե կարողանաք համոզել, որ Թուրքիան չի իրականացնում իր պանթուրքական գաղափարախոսությունը, ապա հենց հիմա կարելի է բացել սահմանները

207. Իրենք լավ առևտրականներ են ու իրենց մանր առևտրականների համար սա օգտակար կլինի:

208. Ռուսաստանն իր տնտեսական շահերն է առաջ տանում. մեր արյան վրա նրանք փող են աշխատում:

209. Չորրորդ սցենարը կարելի է անվանել. «Էլի մեզ դաս չեղավ»...

210. Հայ- թուրքական հարցերի կարգավորումը պետք է սկսել դպրոցահասակ երեխաների կրթումից... Սա է կարևորը:

211. Ամենակարևորն այն է, որ ես՝ շարքային քաղաքացիս, պետք է վստահեմ իմ ղեկավարությանը, ու համոզված լինեմ, որ նրա քայլերը ազգակործան չեն:

212. Թուրքիան ցանկանում է բացել սահմանը, որպեսզի քողարկի ցեղասպանության հարցը:

213. Ռուսաստանն ու Թուքիան էլ խնդիրներ ունեն, Ամերիկան էլ...Շահերի բախում կլինի, որից կտուժի Հայաստանը... Դրա համար պետք է պատերազմի գնալ զենքով:

214. Նույնիսկ եթե մեծ շահողը Ռուսաստանը լինի, ամեն դեպքում դա մեզ ձեռնտու է: Ռուսաստանի օգուտը մեր օգուտն է:

215. Այս երկիրը պետք է հարստանա, որ նոր կարողանա նստել սեղանի շուրջ որպես հավասարազոր պարտնիոր: Իսկ հիմա մենք ընդամենը խաղալիք ենք ուժեղների ձեռքում:

216. Երկու ճակատով մենք չենք կարող կռվել...Դա մեր ուժերից վեր է:

217. Հայաստան երկիրը տանուլ ենք տալու, սերունդներին ոչինչ չի մնալու

218. Չորրորդ սցենարում մենք աշխատում ենք ռուսի համար, ոչ թե ինքներս մեզ...

219. մենք Սփյուռքին միշտ ընդունել ենք որպես «կթու կով», բայց իրականությունն այդպես չէ, պետք է հաշվի նստել նաև նրանց կարծիքի հետ

220. Չեմ ընդունում այս տարբերակը, որովհետև չի կարող մեր տարածքով մի բան անցնի ու մենք չօգտվենք:

221. Այս հարցը հանրաքվեով հաստատ չի հաստատվի

222. Մենք կկռվենք մինչև վերջ... Ծայրահեղ դեպքում դա կա ու կա:

223. Բարոյական հաղթանակը ո՞րն է. Հաղթանակն այն է, որ մեր հողերը մնան մեզ:

224. Եթե թուրքերը մտան Հայաստան, նրանք այստեղ ձեռնարկատիրություն կսկսեն և մենք պետք է ունենանք համապատասխան օրենքներ այդ կանխելու համար:

225. Չէէէէ.... չորրորդ սցենարը լրիվ ուրիշի ֆուտբոլում որպես երրորդ կողմ ֆուտբոլ խաղալ է... այսինքն, Հայաստան, ինչքան ուզում ես Ռուսաստանի ու Թուրքիայի խաղում գնդակ տշի, մեկ է անգամ գոլ խփես , հաղթող չես լինելու, քանի որ ֆուտբոլ երկուսով են խաղում...

226. Թուրքիան կարող է այսպիսով նոր լծակներ ստանալ մեզ համար կենսական հարցերում միջամտելու:

227. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքը, որը նույնիսկ այստեղ չի ցանկանում արտահայտել, իսկ հանրաքվեի ժամանակ նրանք «դեմ» կքվեարկեն

228. Տնտեսական շահը առաջնային է բոլոր տեսակի շահերի մեջ: Սա հաշվի առնելով՝ Ռուսաստանը երբեք իր տնտեսական շահը չի զիջի քաղաքականին՝ Հայաստանը «պահելու» հարցին:

229. Ցավոք չորրորդ սցենարն ամենահնարավոր սցենարն է, բայց մեզ համար ամենավատը...

230. Այս ամենը Ռուսաստանին է հարկավոր: Հենց սահմանը բացվի, Ռուսաստանը կհրահրի պատերազմ Ջավախքում ու ինքն էլ հյուսիսից կհարձակվի Վրաստանի վրա: Մենք ընդամենը խաղալիք ենք: Մենք ինչպե՞ս կարող ենք հավասարը հավասարի հետ նստել ու խոսել հզոր ու մեծ Թուրքիայի հետ:

231. Մենք միատարր ազգային պետություն ենք, մեր հարաբերությունները Ռուսաստանի հետ ավելի լավ են, ու մենք Վրաստանի տարբերակում չենք հայտնվի:

232. Պարսկաստանն էլ նույն Թուրքիան է... Ոչ մի տարբերություն չկա...

233. Ամեն բան կախված կլինի մեր իշխանություններից ու դիվանագիտությունից:

234. Ռուսաստանը թույլ չի տա, որ մենք իր ձեռքի տակից դուրս գանք...

235. Թուրքերը շատ զգույշ են լինելու, քանի որ իրենց հարկավոր է միջազգային հանրության առաջ պարկեշտ երևալ:

236. Ռուսաստանի համար առաջնային է պահել Հայաստանը որպես ֆորպոստ, այնպես որ ոչ մի տնտեսական շահ էլ չի կարող ստիպել Ռուսաստանին կորցնել իր ֆորպոստը:

237. Սահմանի բացումը մեզ նաև կօգնի Ռուսաստանից անկախություն ձեռք բերենք...

238. Մենք, այս որպեսական շահերից ելնելով, որոշում չպետք է կայացնենք:

239. Պետական շահը չպետք է տուժի բիզնեսի շահերից:

240. Մեր քաղաքական գործիչները անցյալից դասեր չեն քաղում, դա է խնդիրը:

241. Գերտերություններն են որոշում փոքր ազգերի ճակատագիրը: Այն ինչ պետք է լինի, լինելու է: Պետք է փորձել հնարավորինս օգուտ քաղել այս ամենից:

242. Հինգերորդի վերնագիրն արդեն դուրս եկավ, հատկապես մենք շախմատ ավելի լավ ենք խաղում, քան ֆուտբոլ, էնպես որ դիվանագիտությունը ֆուտբոլից տեղափոխենք շախմատային դաշտ:

243. Մի մանր բիզնեսի զարգացման համար պետությունը չպետք է գնա քայլերի, որ պետական քաղաքական զիջումներ լինեն: Մենք տնտեսական զիջումների կարող ենք գնալ, սակայն քաղաքական զիջումների՝ ոչ մի դեպքում:

244. Նույնիսկ Եվրոպայում կրթություն ստացացած Հ. Դինքի ընկերը՝ թուրք գրողներից մեկը, իր գրքի մեջ մանրամասն նկարագրում է ցեղասպանությունը՝ առանց օգտագործելու «ցեղասպանություն» բառը. թուրքերը չեն փոխվել ընդհանրապես

245. Թուրքիան ոչինչ չի շահում սահմանները բացելուց:

246. Չորրորդը լրիվ Թոմ ընդ Ջերրի մուլտֆիլմն է, իսկ հինգերորդը՝ «առյուծի սիրտ ես կերել, իա...»

247. Թող Թուրքիան ճանաչի Արցախի անկախությունը ու մենք կբացենք սահմանը

248. Ռուսների շահերից է բխում սահմանը բացելը, բայց դրանից հետո նրանք նաև չեն թողնի, որ մենք առանձնապես մերձենանք թուրքերի հետ:

249. Մենք սահման չենք փակել, չենք էլ բացելու:

250. Դիվանագիտական հարցերում շահում է սահմանը բացելով, իսկ տնտեսական հարթության մեջ՝ ոչինչ էլ չի շահում:

251. Մենք պատրաստ ենք սահմանները բացելուն

252. Ռուսաստանը ևս կայուն չէ, ու տարածաշրջանում իր շահերը կարող են փոփոխվել կամ էլ կարող է չկարողանա հետամուտ լինել իր այս շահին, որը մերն է նաև:

253. Սահմանները բացել, ամրագոտիները կապել

254. Մենք մեր վրա պետք է հույսներս դնենք... Ցեղասպանության հարցը , Լեռնային Ղարաբաղի հարցը պետք է մնան մեր օրակարգում:

255. Հնարավոր է, որ Ռուսաստանն ու Թուրքիան կգան համաձայնության ու մենք ոչինչ չենք կարողանա անել այդ ռիսկը կարճելու համար:

256. Պետությունը պետք է օրենքներով ապահովագրի մեզ:

257. Ամենից շատ դուրս եկավ այս արտահայտությունը. «Հայաստանը հանդես է գալիս թելադրող նախաձեռնողի դերում»... այ էսպես է պետք...

258. Շահերի բախման այս պահից մենք պետք է օգտվենք: այս հարցը էնտուզիազմի խնդիր չէ:

259. Սահմանը մենք ենք փակել, թե՞ իրանք: Ով փակել է, թող ինքն էլ բացի:

260. Երկրում պետք է գործեն օրենքները՝ սա է մեր ապահովագրությունը:

261. Զոհասեղանին չդնել ո՛չ Արցախ, ո՛չ Հայկական հարց, ոչ արժանապատվություն: Մնացածը կարելի է

262. Մի որպե, եթե սահմանը բացում ենք, մեր սոցիալական վիճակը լավանալու է, թե ոչ... իսկ եթե ոչ, էլ ի՞նչ ենք ուզում...

263. Տակտիկա, ճկունություն, դիվանագիտություն՝ ահա ինչ է պետք:

264. Հինգերորդ սցենարը համ նալին, համ մեխին խփելն է... պետք է սովորենք մի քիչ նապոլեոնություն անենք...

265. Հրեաներն ասացին. «Մենք ներում ենք, բայց չենք կարող մոռանալ»: Նույնն էլ մենք ենք ասելու:

2. ԵՂԵԳՆԱՁՈՐՈՒՄ
կայացած հանրային քննարկման ընթացքում արտահայտված մտքերը

28.09.2009

266. Անգամ սահմանի բացումից հետո չպետք է լռել, պետք է պահանջել ցեղասպանության ընդունումը:

267. Ես կարծում եմ, որ սահմանի բացումից հետո կդրվի Ղարաբաղի հարցը:

268. Սահմանի բացումից հետո անասունների գողությունը ավելի կշատանա:

269. Մենք անընդհատ տարբեր լրատվամիջոցներով լսում ենք. «սահմանի բացում, սահմանի բացում...», սակայն երբեք չի լուսաբանվում դրա իրական հետևանքները. միայն փոխադարձ մեղադրանքներ, հռետորական խոսքեր...

270. Սահմանը բացվելու դեպքում կլինի գրեթե նույնն, ինչ այսօր է: Այսօր էլ թուրքերի հետ առևտրային կապեր ունենք, պարզապես դրանք ավելի կպարզեցվեն:

271. Սահմանի բացումը ունի և դրական և բացասական կողմեր: Դրականը տնտեսական շահն է, իսկ բացասականը՝ կտուժեն ազգային շահերը:

272. Թուրքերն ասում են՝ մի ազգ, երկու պետություն:Նրանք անպայման կբարձրացնեն Ադրբեջանի հարցը, մենք էլ՝ Ղարաբաղինը:

273. Կարևորը սահմանը բացելն է, թեկուզ ցեղասպանությունից չխոսելու գնով:

274. Չգիտեմ, արդյոք ինչ-որ փոքր տնտեսական առաջընթացի համար արժե ռիսկի գնալ թե ոչ...

275. Թուրքիայի հետ ասում են պրոբլեմներ կունենանք.ոչ, չեմ կարծում, սահմանի բացումը կարևոր է, չէ՞ որ հարևաններ ենք, մենք մեր երկրից ո՞ւր կգնանք:

276. Պետք է հասնել նրան, որ վերջ դրվի թշնամությանն ու հարևանության հարթությանն անցնել:

277. Արդեն հարյուր տարի սահմանները կարելի է ասել փակ են: Մենք ի՞նչ ենք շահել մինչ այժմ:

278. Թուրքիայում անասնապահությունը մեծ պահանջարկ ունի, անասնագողությունը հաստատ կավելանա:

279. Որպեսզի սահմանների բացումը դրական ազդեցություն ունենա, պետք է, որ թե՛ հասարակական կազմակերպությունների և թե՛ պետական կառույցների կողմից ակտիվ լուսաբանում լինի:

280. Կա նաև անվտանգության խնդիր. հնարավոր է, որ Թուրքիայի հետ տնտեսական մրցակցությանը չդիմանանք:

281. Առևտուր անելու «խաթր» պետք չէ հարյուր տարվա արածը գցել ջուրը:

282. Իհարկե տնտեսական աճ էլ կլինի, բայց վտանգը մեծ է. նրանք մեզ դիտելու են որպես հումքի աղբյուր.նրանց մոտ տեքստիլ արդյունաբերությունը զարգացած է:

283. Մենք նախ պետք է որոշենք, թե սահմանի բացումը ինչ կտա մեզ... անձամբ ինձ հնարավորություն կտա նախնիներիս հայրենիքը տեսնել, միգուցե ապրանքն էլ մի քիչ էժան կլինի...

284. Ուզում եմ միտքս սկսել հիշեցումով. թուրքերի կողմից միակողմանի փակվեց սահմանը: Իրենք Ադրբեջանին աջակցելու համար Հայաստանին շրջափակման ենթարկեցին:

285. Սահմանները պիտի բացվեն, դիվանագիտական հարաբերություններ պետք է հաստատվեն, բայց ոչ մի դեպքում չենք կարող լռել մեր ազգային շահի մասին:

286. Առանց նախապայմանների սահմանի բացումն անհնար է, երկու կողմերն էլ հարցեր կբարձրացնեն:

287. Մենք ենք դնում սահմանը բացելու խնդիրը, թե Թուրքիան՝ այ սա է կարևոր: Եթե գիտակցենք, թե ում է առավել շահեկան, այն ժամանակ էլ կհասկանանք ինչպես վարվել:

288. Գիտե՞ք, որ այժմ մեկ այլ երկրում թուրքի հետ հանդիպում ենք, մի տեսակ մտավախություն ունենք՝ չենք ուզում անգամ շփվել:

289. Սահմանի բացումը միջազգային արենայում Հայաստանի հեղինակությունը կբարձրացնի:

290. Այս ամենին ես կողմ եմ միայն այն պատճառով, որ Թուրքիայի նոր սերունդը վերջապես կիմանա թե ինչ է Հայոց ցեղասպանությունը:

291. Եթե այսօր մենք գիտենք թե ինչ խնդիրներ ունենք Թուրքիայի հետ, ապա այսօր մենք չենք կարող ասել թե ապագայում ինչ խնդիրներ կարող ենք ունենալ Վրաստանի հետ:

292. Աշխարհը պետք է չշփոթի՝ մենք սահմանը չենք փակել, մեզ են շրջափակել:

293. Ասում են ամենավատ հարևանի հետ էլ լեզու գտնել է պետք, ինչ-որ հարաբերություն ստեղծելը կարևոր է: Բայց որ վտանգ կա՝ դա փաստ է:

294. Թուրքական հասարակությունը պատրաստ չէ ճանաչել ցեղասպանությունը, ինչպես նաև՝ բացել սահմանը Հայաստանի հետ:

295. Մենք ոչ նրանց շուկան գիտենք, ոչ նրանց հնարավորությունները, ոչ էլ հետներն աշխատել ենք, որ իմանանք, թե ովքեր են նրանք հիմա՝ 21-րդ դարում:

296. Տնտեսությունը, վաղ թե ուշ պետք է զարգանա չէ՞... բայց չպետք է մոռանալ, որ թուրքը Մեծ Թուրանի երազանք ունի ու երբեք էլ դրանից չի հրաժարվի:

297. Լուռ համաձայնություն լինել չի կարող, բայց մենք ուզում ենք, որ հարցերը խաղաղ ճանապարհով լուծվեն:

298. Այսօր աշխարհը գնում է միավորման, իսկ քանի որ մենք ունենք փակ սահման, ապա չենք կարող ինտեգրվել այլ երկրներին:

299. Վերջապես պետք է հասկանանք, որ պետությունները «ռոլիկների» վրա չեն. պետք է հարևանություն անել, բայց անցյալն էլ չպետք է մոռանանք:

300. Առաջին սցենարի միակ առավելությունը այլընտրանքային ճանապարհ ունենալն է, այսպես ասած ձախ ձեռքով ձախ ականջը քորելու հնարավորություն ենք ունենում:

301. Միջազգային հանրությունը մեզ և Թուրքիային չի կարող դիտարկել նույն հարթության վրա:

302. Երբ ինչ-որ մեկը վատ արարքի համար ներողություն է խնդրում, ակամայից սկսում ես մեղմ վերաբերվել. նույնն էլ պետությունները:

303. Մենք ադրբեջանցիների հետ ապրել ենք, աշխատել, բարեկամներ եղել: Երբեք մեր միջև խնդիրներ չեն եղել, բայց հիմա ամեն ինչ փոխվել է: Մենք չենք վստահում թուրքերին:

304. Վստահ, սահմանի բացումը կտա շատ նոր հնարավորություններ, բայց և կառաջացնի նոր խնդիրներ, որոնք այսօր մենք նույնիսկ չենք էլ պատկերացնում:

305. Հայի և թուրքի հարաբերությունները երբեք նորմալ չեն կարող լինել, ինչքան էլ դիվանագիտական հարաբերություններ հաստատել:

306. Ես դեմ եմ այս գործընթացին, եթե ինչ-որ նախապայման կա ցեղասպանության մասին, հողերի մասին, բայց նաև գտնում եմ, որ միայն հարաբերություններ հաստատելուց հետո կարող ենք թուրք ժողովրդին ու մտավորականության տեղեկացնել այդ ամենի մասին:

307. Սահմանները բացելով մեր երկու ժողովուրդների մոտ էլ կարծրատիպերը կկոտրվեն:

308. Անընդհատ մեկուսացված չենք կարող լինել, պետք է աստիճանաբար հասնել երկու հասարակությունների միջև խոչընդոտների վերացմանը:

309. Մենք պահանջողի դերում ենք, բայց իրական ուժ չենք ներկայացնում

310. Դաշնակները Ալեքսանդրապոլի պայմանագիր են կնքել, հիմա էլ բողոքում են այս ամենի դեմ:

311. Կա «ԷՐԳԻՐ» գնալու պետականորեն թույլատրության հարցը: Դա մոռանալ պետք չէ: Սահմանի բացումը կբացի նաև մեր պատմական հայրենիքի դռները:

312. Առաջին սցենարը մեզ ոչ մի տեսակի հաղթանակ չի տալիս, ո՛չ բարոյական, ո՛չ տնտեսական, ո՛չ իրական:

313. Մենք մեր պահանջատիրությունից չենք հրաժարվելու, երբեք:

314. Սահմանը բացելու փոխարեն Թուրքիան շատ ավելի լուրջ պահանջներ կդնի. իսկ հանուն տնտեսական շահի արդյո՞ք պետք է նման զիջումների գնալ:

315. Մեր արտադրողի մրցունակության հարցն է առաջանում՝ կդիմանա՞նք, թե ոչ թուրքական ապրանքների կողմից հայկական շուկան ողողելուն:

316. Ինչպես պարսիկները եկան ամենալավ կետերը, խանութները վերցրեցին, այնպես էլ թուրքերը կանեն:

317. Սահմանի բացումից հետո նորից կսրվի հայ-ադրբեջանական խնդիրը:

318. Մեր գյուղերը քայքայման եզրին են, հետագայում գյուղապրանքները ավեի էժան կդառնան ու հայ գյուղացին կդադարի հող մշակելուց: Իսկ ինչո՞վ կզբաղի, ընտանիք ինչո՞վ կպահի:

319. Մենք քսան տարի շրջափակման մեջ ենք, բայց լավ էլ ապրում ենք: Մեզ սահմանի բացումը ոչինչ էլ չի տալու:

320. Մեր կեցությունը այսօր չի թույլատրում նմանատիպ հարցերի քննարկում:

321. Տնտեսական, տնտեսական, իսկ քաղաքական անվտանգությո՞ւնը:

322. Որ պահին հայ-թուրքական սահմանի բացումը կապենք տնտեսականի հետ, մենք պարտվելու ենք: Կարևորը քաղաքականն է: Մենք վրեժ ունենք լուծելու այդ պետությունից ու սա շանս է:

323. Սահմանի բացումից հետո հարցը այնքան կխորանա, որ հնարավոր է նաև զինված ընդհարում:

324. Սահմանների բացումը միջազգային հանրության ճնշման արդյունք է, ոչ այլ ինչ:

325. Մեզանում լուրջ խնդիր կա գյուղատնտեսության ոլորտում: Իսկ շուկայում թուրքական գյուղմթերքի հայտնվելը մեր գյուղացուն շատ ավելի անապահով վիճակում կդնի:

326. Մեզ համար թուրքերի հետ հիմնական խնդիրը շարունակում է մնալ ցեղասպանության հարցը

327. Միջազգային կառույցները միշտ շահարկել են Հայաստանի հարցը: Եթե ԱՄՆ-ը ցանկանում ճանաչել ցեղասպանությունը, ապա պետք է ընդունի՝ առանց որևէ պայմանի:

328. ՄԻ քանի սերունդ հետո նոր կարող է ընդունվի ցեղասպանությունը, դա հիմա հնարավոր չէ..

329. Այս հարցը մենք և թուրքերը պետք է փորձենք լուծենք ինքնուրույն՝ առանց կողմնակի միջնորդության

330. Ես համաձայն եմ, որ Հայաստանը տնտեսապես հզորանա, բայց ոչ քաղաքականի հաշվին:

331. Ո՞վ ասաց, որ սահմանի բացումը ապրանք պետք է էժանացնի:

332. Մենք նախընտրում ենք գնել մեր տեղական գյուղմթերքը: Իրանականն ու վրացականը մեզ չի ձգում: Հնարավոր է նույնը լինի թուրքականի պարագայում:

333. Մեզ զրկում են մեր ձայնից

334. Ես դեմ եմ քայլ առ քայլ հարաբերություններին: Սահմանը կամ բաց է, կամ փակ, մի քիչ բաց կամ մի քիչ փակ չի լինում:

335. Մենք թուրքի հետ ընդհանուր շուկա չենք ունեցել, չենք կարող վստահ լինել, թե ինչպես կզարգանան հարաբերությունները:

336. Սահման բացելուց առաջ ազգային շահն ու տնտեսությունը պահպանող իրավական դաշտ պետք է ապահովվի;

337. Ռուսաստանը հազարամյակներ շարունակ իր շահերն է ունեցել այս տարածաշրջանում, հիմա ԱՄՆ-ն է ձեռք գցում, իսկ Հայաստանին չեն հարցնում

338. Եթե խելոք լինենք, մենք այս սահմանի բացումը կարող ենք օգտագործել և ի շահ տնտեսության, և, որը շատ ավելի կարևոր է, քաղաքականապես:

339. Թուրքիան շարունակելու է օգնել Ադրբեջանին, նրանց բանակը հզորանալու է ... Սահմանների բացումը կապ չունի.միևնույնն է մենք ոչ մի վտանգ Թուրքիայի համար չենք ներկայացնում:Միայն պետք է հզորացնել հայկական դիվանագիտությունը: Այլապես մենք տանուլ կտանք:

340. Եթե հողերը վերցնենք, խնդիրներ չեն առաջանա, որպես օրինակ կարելի է դիտարկել Արցախի օրինակը

341. Որևէ երկրի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելիս որևէ նախապայման չի դրվել ոչ մեկի կողմից: Նույն սկզբունքն էլ պետք է գործի հայ-թուրքական հարաբերություններում:

342. Սահմանի բացելուց հետո թուրքերը ներքին կարգով կսկսեն բնակարաններ և բիզնեսներ գնել Հայաստանում:

343. Թուրքիայի՝ Հայաստանի հետ սահմանների բացումը նրա Եվրոպական պետությունների աչքի առաջ խոստումներ կատարելու ցանկությունն է:

344. Երկար տարիներ սահմանը փակ է եղել ու առանձնապես դրանից չենք տուժել: Չեմ բացառում, որ սահմանի բացումը ավելի վտանգավոր լինի մեզ համար:

345. Սահմանը անպայման կբացվի, անգամ եթե մենք չուզենք: Բայց դա չի նշանակում , որ պետք է մեր խնդիրները մոռանանք:

346. Այս հարցը շատ բարդ հարց է՝ մեր հարցը չէ, և սա ոչ թե մեր քննարկման հարցն է, այլ դիվանագետների: Ահա ինչու չեն հանրաքվե անում այս հարցով, և դա ճիշտ է:

347. Թուրքերին տնտեսական առումով սահմանի բացումը բացառապես չի հետաքրքրում: Իրենք միտումնավոր սահմանակից հատվածները վատ զարգացած ու թույլ վիճակներում են պահում:

348. Մեր տնտեսությունը չի դիմանա թուրքական տնտեսության ճնշմանը:

349. Ես մի բան չեմ հասկանում. ինչու՞ ենք մենք վախենում սահմանի բացումից, ինչու՞ չենք մենք էնպիսի կեցվածք ընդունում, որ մի բան էլ իրենք վախենան:

350. Այն, որ թուրքական իշխանության ճյուղերը տարբեր բաներ են ասում դիվանագիտության վերաբերյալ, մեզ թերահավատություն է ներշնչում իրենց նկատմամբ:

351. Եթե միջազգային կազմակերպությունները միջնորդի դեր չկատարեն, ապա հարցը չի լուծվի:

352. Ինչ շուկայի զարգացում, եթե մենք շուկայական հարաբերությունների չենք անցել, մենատիրություն է դառնալու:

353. Չնայած մենք ասում ենք, որ չկան նախապայմաններ, բայց միևնույն ժանամակ օգտագործում ենք այնպիսի տերմիններ, որոնք ենթադրում են նախապայմաններ:

354. Ես մանկավարժ եմ, շատ հայրենասեր եմ ու իմ հայրենասիրությունը միշտ փոխանցել եմ իմ աշակերտներին, բայց չեն լինում հավերժ թշնամիներ ու հավերժ բարեկամներ: Պետք է առանց նախապայմանների հաստատենք մեր հարաբերությունները Թուրքիայի հետ:

355. Ընդամենը երկու տարի առաջ Թուրքիայում ոչ ոք չէր համարձակվի խոսել ցեղասպանությունից, բայց հիմա անընդհատ շոշափվում է այդ թեման: Այնպես որ շփումները կբերեն ցեղասպանության ճանաչման:

356. Ամեն դեպքում սամանը բացվելու է, մեզ ինչու պետք է հետաքրքրի ապագան:

357. Տնտեսությունն իր հետևից կբերի տնտեսական, մշակութային նոր խնդիրներ: Դրանց պետք է պատրաստվել ու պետք է փորձել պատկերացնել, թե Արարատին մյուս կողմից ինչ մտքերով են նայում:

358. Ցանկացած երկրում քաղաքակությունը որոշում են տնտեսվարողները... մեր երկրում սա ավելի քան իրական է. սահմանի բացումը կնշանակի բիզնեսի միջոցով ազդել քաղաքականության վրա:

359. Մենք միշտ բոլոր ատյաններում պասիվ դեր ենք ունեցել, բայց միշտ էլ տուժել ենք. հիմա ժամանակն է ակտիվ լինել:

360. Այս պահին մենք չենք կարող ասել այնպիսի մի դեպք, երբ հաղթել է հայկական դիվանագիտությունը:

361. Որքան բնակչության շարժը մեծանա, այնքան ազգային անվտանգության հարցը կսրվի:

362. Վրաստանի հետ ունենք բաց սահման ու հռչակված բարիդրացիական հարաբերություններ, բայց ունենք նաև շատ լուրջ խնդիրներ: Նույնն էլ լինելու է Թուքիայի դեպքում:

363. Եթե թուրքերը հանկարծ ներդրումներ անեն այստեղ, մենք կախվածության մեջ կընկնենք նրանցից: Հիշեք Սովետի պատմությունը...Ի՞նչ եղավ, երբ Միությունը փլուզվեց: Տնտեսական ինտեգրացիան քաղաքական կախվածության մեջ կդնի Թուրքիայից:

364. Մեկ հարց. ո՞վ է սահմանի բացման հարցում նախաձեռնություն վերցրել... մենք թե՞ թուրքերը... ահա թե որտեղ է թաքնված շան գլուխը:

365. Մենք այսօր չգիտենք թե ո՞վ է թուրքը: Պետք է հնարավորություն ունենանք ճանաչելու նրանց :

366. Մենք պետք է ինքներս հզորացնենք մեր երկիրը, որ ամուր կանգնենք մեր ոտքերի վրա, չպետք է ինտեգրվենք Թուրքական տնտեսության մեջ:

367. Մտավախություն կա, որ ժամանակի հետ հայերը կձուլվեն թուրքերին: Փորձը ցույց է տալիս, որ այսօր մանկատներում շատ երեխաներ կան՝ ծնված պարսիկների հետ կապերից:

368. Հենց այսպիսի մի տարբերակ է աշխատելու: Սահմանը բացելու ենք, մնալու ենք պահանջատեր և քննակելու ենք մեր խնդիրները:

369. Հային պետք է արդյոք ջերմ հարաբերությունները թուրքերի հետ, ի՞նչ կտա տնտեսական առաջընթացը

370. Առանց նախապայմանների՝ նշանակում է թե՛ մենք չենք առաջադրում նախապայմաններ, թե՛ իրենք:

371. Դիվանագետները պետք է շաաատ աշխատեն, որ ճիշտ լուծում կայացնեն:

372. Այն, որ արձանագրություններում գրված է, որ մենք ճանաչում ենք գոյություն ունեցող սահմանները և ստեղծում ենք պատմական ենթահանձնաժողով, արդեն նշանակում է, որ կան նախապայմաններ:

373. Թուրքիան տարածաշրջանում ամենահզոր տերություն է, ՆԱՏՕ-ում ամենամեծ զորք ունեցող պետությունն է: Իսկ Հայաստանը մի փոքրիկ պետություն է: Սրանից ելնելով՝ շատ նուրբ քաղաքականություն պետք է վարենք:

374. Գիտեք, ինչ սցենար էլ լինի, մենք քննարկում ենք, սահմանը բացել-չբացելու հարցը... չենք քննարկում հետևանքները. սա նշանակում է, որ մենք պատրաստ չենք...

375. Գաղտնիք չէ, որ Թուրքիայում կան շատ մեծահարուստներ և շատ հնարավոր է, որ մի օր արթնանք և տեսնենք, որ գնվել է Հայաստանի ունեցվածքի մեծ մասը:

376. Բայց և ուրիշ տարբերակ չկա: Հարևանների միջև փշալարեր չպետք է լինեն: Կբացվի սահմանը, իսկ մենք կշարունակենք մեր պահանջներին հետամուտ լինել:

377. Իմ մեջ կա մտավախություն, որ կկրկնվի նույն եղեռնը

378. Շան հետ ընկերություն արա, բայց փայտը ձեռքիցդ մի գցի:

379. «Հանդարտ և զուսպ կեցվածք»... Սա ենթադրում է պահանջներից հրաժարվել թե՞ հզոր ու խելացի դիվանագիտություն: Կարծում եմ երկիմաստությունները շատ են:

380. Գաղափարախոսությունը չպետք է առաջ անցնի տնտեսությունից, թե չէ կհասցնի փակուղու:

381. Եթե Թուրքիան մեծ ներդրումներ ունենա Հայաստանում և համագործակցի մեր բիզնեսմենների հետ, ապա Թուրքիան ազդեցություն կունենա նաև մեր քաղաքական որոշումների վրա:

382. Սահմանների բացումը կնպաստի մրցակցությանը: Մեր գյուղացիները ստիպված կլինեն ավելի լավ մթերք արտադրել, որպեսզի մրցակցի թուրքական էժան մթերքի հետ:

383. Իրանի հետ սահմանի բացումը բերեց բավականին բացասական երևույթների կապված հայ աղջիկների հետ նույն Երևանում: Կա նույն մտավախությունը Թուրքիայի հետ կապված:

384. Հայերը թուրքերի բարեկամը չեն, քրդերն էլ թշնամի են: Սահմանի բացվելը թուրքերի համար նոր խնդիրներ կարող է հարուցել:

385. Թուրքիայի հետ սահմանի բացումը ենթադրում է սահմանների հաստատում և ճանաչում: Իսկ մենք այժմ Թուրքիայի հետ չենք կարող ճանաչել ընդհանուր սահմանը:

386. Մենք ընտրություն ունենք՝ հայկական հարցի լուծումը, թե սահմանի բացումը:

387. Այժմ մենք մեր իշխանության հետևից կգնանք, քանզի նրանք էլ հայ են:

388. Այս հանրային քննարկումները մեծ վտանգ են պարունակում: Ինչո՞ւ, ասենք, հարկային փաթեթ մեզ հետ չեն քննարկում, իսկ այս խիստ կարևոր հարցը դրել են ժողովրդի քննարկման:

389. Թուրքերը գոնե պետք է մի կերպ նշեին ցեղասպանության հարցը՝ նույնիսկ առանց նշելու «ցեղասպանություն» բառը

390. Աքսիոմա է՝ ստատուս քվոն ձեռնտու է նրան, ում օգտին է աշխատում ժամանակը: Հայաստանի դեպքում՝ օգուտ չկա:

391. Մեր սխալն այն է, որ մենք միշտ մեր սերունդներին դաստիարակել ենք ընտրություն կատարելու ոգով...

392. Ցեղասպանության ճանաչում, տարածքային խնդիր. մենք սրանից չենք հրաժարվում: Երիտասարդներիս հաշվարկներով դա հեռու ապագայի խնդիր չէ:

393. Թուրքիան մեզ պետք է ճանաչի ոչ որպես խեղճ ու ճնշված ազգ, այլ ուրիշներին հավասար:

394. Թող Թուրքիայի վարչապետը չոքի մեր արտգործնախարարի դիմաց ու ներողություն խնդրի, ասի, որ արել են ցեղասպանություն: Դրանից հետո նոր կքննարկենք մյուս հարցերի մասին:

395. Փակ սահմանների դեպքում Թուրքիան զրկվում է Եվրոպայի առաջ դեմոկրատական պետություն լինելու միֆը առաջ տանելու հնարավորությունից:

396. Երրորդը կա ու կա... լինելու է այն, ինչ հիմա ունենք, ոչ մի հեռանկար չեմ տեսնում:

397. Վաղ թե ուշ Թուրքիան պետք է սահման բացի. կարելի է սպասել, հետո Թուրքիան արդեն մեր պահանջներով կբացի:

398. Ժողովրդի շահը այս հարցում զուտ բարոյական է, քանի որ մնացած հարցերը կլուծվեն ինքնաբերաբար

399. Եթե ճանաչումը պետք է գա 50 տարի հետո, իսկ մենք էլ ճանապարհի իմաստով այսքան կախված մնանք Վրաստանից՝ լավագույն սցենար չէ մեզ համար:

400. Ցեղասպանությունն իր մեջ ներառում է հատուցում փողով և հողով: Ուրիշ ճանաչում չի կարող լինել:

401. Ասածդ նման է հարևանիս երեխայի պահվածքին. ասում էր՝ եթե կոնֆետը չտաք, փայտը կմտցնեմ աչքս...

402. Շուկան ինքնըստինքյան կլուծի տնտեսական և քաղաքական մրցակցության հարցը, պետք չէ անհանգստանալ այդ առումով

403. Մենք ասում ենք. «Առանց նախապայմանների սահմանի բացում կարելի է», այլ պետք է ասենք. «Սահմանի բացում մեր առաջադրած նախապայմաններով»:

404. Թուրքական դիվանագիտությունը շատ խորամանկ է: Մեր տնտեսությունը կինտեգրեն իրենց տնտեսությանը, անտեսանելի կապեր կստեղծեն ու մի օր կասեն, թե զիջելու եք Ղարաբաղը: Ի՞նչ ենք անելու այդ ժամանակ:

405. Սահմանը բացել անպայման պետք է, բայց...

406. Սահմանի բացման դեմ ոչ մի խոհեմ մարդ ոչինչ չի կարող ասել՝ չես կարող քո հարևանի հետ միշտ թշնամի լինել: Բայց դժվար է հաշտվել այն հարևանիդ հետ, որը քո որդուն սպանել է:

407. Թե սահմանը միայն ֆուտբոլ նայելու համար պետք է բացենք, դեռ պետք չէ, շուտ է, հեռուստացույցով էլ կնայենք:

408. Այս հարցին որպես հայ մի տեսակետով ենք նայում, որպես մասնագետ՝ մի այլ:

409. Եթե չեմ սխալվում, ցեղասպանության հարցը եթե հարյուր տարի չճանաչվի, հետո դադարում է պահանջատիրական ուժ ունենալ: Վստահ եմ, որ Թուրքիան ամեն բան անում է, որ և՛ս մի քանի տարի անցնի ու մենք զրկվենք մեր պահանջատիրական իրավունքից

410. Ավելի լավ է իրավիճակը թողնել այնպես, ինչպես կա, քանի որ չգիտենք ինչ է լինելու, մենք չգիտենք, թե ով է թուրքը

411. Սփյուռքահայերը չեն կարող զգալ այն, ինչ զգում ենք մենք:

412. Վրացիները ավելի վատն են, քան թուրքերը

413. Մենք ժամանակը պետք է օգտագործենք սահմանի բացման նախապատրաստվելու համար, ոչ թե բացենք, հետո հարցեր լուծենք:

414. Այս սցենարը կնշանակի վերադարձ քսաներորդ դարասկիզբ, երբ ռուսական շահն էր որոշիչ Հայաստանի ճակատագրի համար:

415. Առանձին անհատների դեպքում բացասական վերաբերմունք թուրքերի նկատմամբ չկա

416. Հայաստանում միշտ էլ առաջնային է լինելու Ռուսաստանի շահը:

417. Տնտեսական առումով առաջընթաց անպայման կլինի, ուղղակի մենք թուրքերին չենք վստահում

418. Միշտ ասել եմ ու ասում եմ. դիվանագիտական հարաբերությունները պետք է առանձնացնել պատմականից: բայց պատմական հարթությունում պարտություն կրել անթույլատրելի է, իսկ մենք հաղթել կարող ենք թե՞ ոչ...

419. Հրադադարից հետո տասնհինգ տարի բանակցություն է գնում արևելյան ճակատի վրա, բայց արդյունք չկա: Թուրքիայի շտապողականությունը պարզ է, նրանց միանշանակ պետք է սահմանի բացումը: Բայց ես չեմ հասկանում, թե մենք ինչու ենք շտապում: Ցանկացած դեպքում ուտելու հաց կգտնենք:

420. Չէ, եկեք բացենք

421. Սահմանի բացումը մեզ կարող է բերել միայն տնտեսական շահ, իսկ Թուրքիայի համար՝ թե քաղաքական և տնտեսական:

422. Մեր կառավարությունը ընդամենը մի ստորագրություն է դնելու. իրականում սա ռուսի ցանկությունն է, որ սահմանները բացվեն: Ինչքան բան ծախեցին օտարներին մեր երկրում:

423. Մենք այլևս ոչ մի զիջում չենք կարող անել:

424. Խորհրդային Հայաստանը չի մասնակցել Կարսի պայմանագրի կնքմանը: Սա պետք է մեզ համար հաղթաթուղթ լինի:

425. Սա պրոֆեսիոնալների գործ է, թող իշխանությունը, դիվանագետները այս հարցով զբաղվեն: Սա մեր լուծելու հարցը չէ:

426. Մեր դաստիարակության մեջ մտած է, որ թուրքերը վատն են, արյունախում են և այլն: Կենդանի շփումը կփոխի այդ ստերեոտիպը

427. Թող քրդերը ապրեն մեր հողերում, բայց հողերը մերը լինեն

428. Մենք մինչև հիմա չենք գիտակցում թե ինչ ենք կորցրել: Երբ կունենանք այդ գիտակցումը, մեր մոտեցումն էլ այլ կլինի:

429. Սահմանի բացումից հետո հայ կանայք ավելի շատ են գնալու Թուրքիա...Ցավոք, հայ կանայք իրենց կամքով են գնալու:

430. Հողի կորուստը երբեք չի կարելի համարել հավերժական կորուստ:

431. Ես համարում եմ, որ ներկայիս վիճակը նման է անցյալ դարի քսանական թվականներին. գրեթե նույնությամբ խնդիրներ Վրաստանի հետ, շրջափակված Հայաստան... ու խնդիրը մեր ու Թուրքիայի միջև: Մնում է պատերազմ հայտարարվի:

432. Կարող է լինել այնպես, որ ցեղասպանության ճանաչման հարցի նախապայմանը Թուրքիայի համար լինի սահմանների բացումը:

433. Սահման բացելը չի նշանակելու փշալարերը հավաքել, մի անցակետ է ավելանալու:

434. Մենք պետք է հաշվի առնենք նաև երկու գերտերությունների շահերը մեր տարածաշրջանում:

435. Սահմանի բացելով Ռուսաստանը վստահ ավելի պակաս չի շահում, քան Հայաստանը:

436. Ստատուս քվոն բացասական է, քանի որ հիմա կա միջազգային ճնշում, տնտեսական իրադրություն, որը թելադրում է որոշակի գործողություններ:

437. Ամեն ինչ տանում է հենց չորրորդ սցենարին. շտապելու արդյունքն էլ սա կլինի:

438. Արժեքային համակարգի փոփոխություն տեղի ունեցավ. չէինք տեսել պատից կախ, տեսանք ճակատից կախ: Բայց դա նաև տնտեսության անկման հետևանքն է:

439. Ասում են նախապայմաններ չկան արձանագրություններում՝ սուտ է: Թուրքը ապուշ չէ, այլ փայլուն դիվանագետ ու չէր գնա այս ամենին, եթե չլինեին նախապայմանները:

440. Մենք որպես հյուսիս-արևելք ճանապարհային խաչմերուկ կկորցնենք մեր նշանակությունը:

441. Արժե արդյոք հանուն տնտեսական շահի կուլ գնալ ու կոտրել ազգային ինքնությունը:

442. Հնարավոր է նաև, որ սահմանի բացումը ավելի շատ նպաստի արտագաղթին:

443. Մենք ունենք Հայ դատի խնդիր, որով զբաղվում է ոչ միայն Հայաստանը, այլ ամբողջ սփյուռքը: Սահմանների բացումը մեզ կզրկի սփյուռքի հզոր օժանդակությունից:

444. Մենք մեր ազգային շահերը չպետք է ստորադասենք այլ շահերի:

445. Ոչ մի պետություն մեր սիրուն աչքերի համար ողջ գիշեր չքնի ու մտածի հային օգնելու մասին. սա տրամաբանական չէ: Իսկ մենք գիտե՞նք թե ինչ են ուզում... ՉԳԻՏԵՆՔ:

446. Վրաստանը ամեն ինչ անելու է, որ սահմանը չբացվի: Այդ պարագայում ինքը կկորցնի իր մոնոպոլ դիրքը

447. Թուրքիան երբեք Հայաստանի բարեկամ չի եղել, սահմանի բացելը ենթադրում է, որ ինչ-որ զգալի շահ ունի, որից էլ դրդված ուզում է բացել սահմանը:

448. Թուրքերի դիվանագիտությունը հայտնի է և իրենք նայում են 100 տարի առաջ, իսկ հայերը միայն՝ 24 ժամ:

449. Մենք չենք կարող բացել սահմանը՝ սփյուռքի օժանդակությունից զրկվելու գնով:

450. Մենք շատ նացիոնալիստ ենք. մեզ մոտ կորստի զգացմունք միշտ էլ լինի:

451. Սահմանը բացելով մենք վտանգում ենք հայկական դատը, հայոց հարցի լուծումը: Այսպիսով մենք ասես օգնում ենք իրենց փակելու մեր պահանջատիրության խնդիրը:

452. Սահմանը բացելով Թուրքիան անմիջապես կգրավի Հայաստանը:

453. Հարյուր տարի պայքարել ենք, որ հիմա չիր ու չամիչին կուլ գնա՞նք:

454. Մի օր մենք ենք շախ անելու, մի օր նրանք... Բայց թե որերորդ սերունդը կկարողան լուծել այս հարցը, չգիտեմ:

455. Այս ամենը սպառնալիք է Լեռնային Ղարաբաղին: Էրդողանը ամեն առիթով ասում է, որ սահմանը չի բացվի ու հարաբերություններ չեն հաստատվի մինչև այդ հարցը չլուծվի: Սա հենց այնպես չի ասվում:

456. Ինչպես կարող է նման հարցը լուծել հասարակ մարդը, իսկ մյուս հարցերում ժողովրդի կարծիքը ընդհանրապես հաշվի չի առնվում

457. Արևելահայության և արևմտահայության մեջ մեծ ճեղքվածք կառաջանա, եթե սփյուռքը չստանա իրեն հուզող հարցերի պատասխանները:

458. Եթե մյուս հարցերը չեն լուծվելու, մեզ սահմանի բացումը պետք չէ: Ես սա դիտում եմ որպես առաջին հարց՝ մեր խնդիրները հետագայում լուծելու համար:

459. Այսօր չի կարելի նշել մի հարց, որտեղ թուրքական դիվանագիտությունը պարտություն է կրել: Այս սցենարը իրատեսական չէ :

460. Ռուսաստանը միշտ ձգտում է Թուրքիայի հետ հարաբերությունների բարելավմանը՝ առանց հաշվի առնելու հայկական գործոնը

461. Շատ կարևոր է, որ մենք կարողանանք հողեր գնել Թուրքիայում:

462. Երբ ուզում են մեզ համոզել, ասում են, թե տեսեք, չինական կապիտալը ինչքան բան է ձեռք բերել Ամերիկայում ու դա ոչնչով չի վտանգում ԱՄՆ շահերին: Բայց կներեք, գերտերության համար դա բան չէ, իսկ մեզ համար նման խնդիրը կարող է լրջագույն պրոբլեմ դառնալ: Մանավանդ որ իրենք էլ միատարր ազգային պետություն չեն: Սովահար քրդերին պատկերացնո՞ւմ եք Հայաստանում:

463. Սահմանի բացումը նաև Թուքիայի հիմնախնդիրն է, չէ՞ որ նա ՄԱԿ-ի բանաձևն է խախտել: Մենք էլ պետք է առիթից ճիշտ օգտվենք:

464. Եթե մեր ձգտումները համընկնեն մեծ տիրությունների շահերին, այդ դեպքում մենք կշահենք:

465. Ռուսաստանը հաշվի է նստելու հայկական մեծ սփյուռքի հետ

466. Շատ կարևոր է, որ մենք կարողանանք հողեր գնել Թուրքիայում:

467. Ինձ թվում է, որ Թուրքիան այնքան էլ չի ցանկանում մտնել Եվրոպա:

468. Մեր հարաբերությունները ինչքան էլ լավ լինեն, մեկ է, հենց նայենք սարին, նորից թշնամանալու ենք:

469. Ո՞վ է ասում, որ եթե մենք սա ստորագրենք, ապա այլևս չենք կարող դրանից հրաժարվել: Ցանկացած պայմանագիր հետո կարելի է անվավեր ճանաչել: Պետք չէ այդքան լուրջ ընդունել այս ամենը:

470. Այսօր Հայաստանը ամենևին պատրաստ չէ սահմանի բացմանը: Մենք պետք է տարիներ առաջ սկսեինք օրենքներ մշակել:

471. Սահմանները բացելու դեպքում թուրքերը կլցվեն Հայաստան ու առանց լուրջ խնդրի կվերցնեն Հայաստանը:

472. Թուրքիան շատ խորամանկ դիվանագիտություն ունի. հիմա նրանք որոշ զիջումներ են անում, որպեսզի իրենց խնդիրները լուծեն:

473. Շատ հնարավոր է, որ Հայաստանը կորցնի որևէ քաղաքական որոշում ընդունելու հնարավորությունը: Մենք պետք է բավականին հզոր լինենք:

474. Թուրքիան կբավարարվի զուտ սահման բացելով: Այլ քայլեր չի ձեռնարկի: Ձևեր կթափի, թե հարաբերություններ է զարգացնում:

475. Եվրոպայում թուրքական տարրի մեծացումը շատ վտանգավոր է, կգա մի պահ, որ նրանք կստիպեն դարձնել Թուքիային Եվրամիության անդամ:

476. Իսկ ինչն է խանգարում, որ մենք իրենց նախապայմաններին ասենք այո (լռելու ենք, համաձայն ենք...), հենց սահմանը բացեն, ասենք. «Էլ ի՞նչ կուզեք»... Հո սահմանն էլի չե՞ն փակելու:

477. Շահողը կլինեն Ռուսաստանն ու Թուրքիան: Մենք ընդամենը կլինենք գործիք:

478. Հինգերերոդ սցենարը հնարավոր կլինի միայն, եթե մեր թիկունքին գերպետություն լինի:

479. Այսօր սահմանի բացումը պարտադրված է դրսից և մենք պետք է աշխատենք մինիմալ կորուստներով դուրս գալ այս իրավիճակից:

480. Սա գերտերությունների թելադրանքով կատարվող քայլ է, մենք դրանից օգուտ չունենք:

481. Միգուցե հարաբերությունները չի խորացնի, սակայն նրանցից կարելի է քաղաքական ցանկացած քայլ սպասել, որին մենք մեր ուղղամտությամբ ու միամտությամբ ադեկվատ ու արագ չենք արձագանքի:

482. Ի վերջո, մենք մինչև վերջ չգիտենք, թե մեր պետության առջև ինչ խնդիրներ են դրված:

483. Հինգերորդ սցենարին համար փոխադարձ վստահությունն է պակասում:

484. Ժամանակից շուտ արված քայլերը մեզ միայն կվնասեն:

485. անընդհատ խոսում ենք տնտեսություն, քաղաքականություն... բայց երբ գնանք մեր պապենական հողերը, ավելի շատ կսկսենք ատել թուրքերին:

486. Քրդերը եթե պետություն դարձան, առաջինը մեզ են վնասելու..Ինչ տարբերություն էդ հողերը ում ձեռք են՝ թուրքի թե քրդի:

487. Հարաբերությունների առկայությունը, մեր հնարավորությունը թուրքերին ինֆորմացնելու կբերեն այն բանին, որ հինգերորդ տարբերակը կլինի իրատեսական:

488. Մենք չենք վստահում մեր հարևաններին:

489. Նիկիտա Սիմոնյանին հարց են տալիս, թե ով է ամենալավ դարպասապահը, ասում ա Իվան Խոմիչը: Իսկ ինչու՞ : Որովհետև երկու աչքն էլ շիլ էր: Մենք էլ պիտի մի քիչ շիլ լինենք, որ կարողանանք Թուրքիայի հարձակումներին դիմադրել:

3. Սիսիանում կայացած հանրային քննարկման ընթացքում արտահայտված մտքերը

29.09.2009

490. Եթե սահմանը բացվում է ու ոչ մի հարց չի լուծում, ուրեմն պետք չէ բացել: Ամեն մանրուք պետք է վերանայվի:

491. Մենք շատ տեղեկություններ չունենք ընթացող գործընթացներից, այնպես որ հնարավորություն չունենք ճիշտ դատողություններ անենք:

492. Սահմանի բացումից հետո մեզ սպասում են շատ դժվարություններ, որովհետև դարավոր թշնամություն է եղել: Ժամանակ է հարկավոր, մինչև փոխըմբռնում լինի:

493. Սահմանը բացվելը դրական քայլ կլինի մեզ համար, բայց ավելի շատ կշահի Թուրքիան: Այդքան էական առաջընթաց մեր դեպքում չի լինի:

494. Սահմանի բացման հարցում օգուտը կլինի միայն տնտեսական շահը: Բայց ես դեմ եմ, քանի որ այդ պարագայում լրիվ կմոռացվի ցեղասպանությունը. հոգեբանորեն շատ կորուստներ կկրենք:

495. Քննարկման ձևաչափը սխալ է, անհրաժեշտ է ժողովրդին ներկայացնել սահմանի բացման գինը:

496. Ես մի բան գիտեմ. թուրքը մնում է թուրք: Նա երբեք չի փոխվի: Փայտը ձեռից պետք չի գցել:

497. Հայաստանում մեծացել է չբերությունը, բա կարծում եք, դա թուրքական ապրանքների հետ կապ չունի՞:

498. Ժողովրդի ներքին զգացողությունը՝ կապված ցեղասպանության ու ընդհանրապես հայ-թուրքական նախկին հարաբերությունների հետ, թույլ չի տա նույնիսկ բաց սահմանների դեպքում ունենալ նորմալ հարաբերություններ:

499. Սահմանի բացումը մեզ համար վտանգավոր է, քանի որ այդ պարագայում թուրքերը կգան, կտեսնեն , թե մեզ մոտ ինչ է կատարվում, հետո կգնան, ադրբեջանցիներին կասեն:

500. Գլխավոր հարցը նախապայմաններն են: Արդյո՞ք մեզ պետք է դրանց ենթարկվել:

501. Թուրքերին ձեռք է տալիս սահմանը բացել, բայց ամեն ինչ թողել իրենց տեղում:

502. Պետք է տարանջատել հանրային և պետական շահերը, պետք է քննարկել նախապայմանները: Մասնավորապես, արձանագրությունը:

503. Իրենց սննդամթերքը կգա էժան ու անորակ: Այ հենց սա է վտանգավոր:

504. Հայերը երբեք չեն լռի:

505. Սահմանի բացումը բխում է գերտերությունների շահերից և իրենք պետք է փորձեն կարգավորել իրավիճակը: Թուրքիա-Հայաստան հարաբերությունները կդառնան գերտերությունների ֆասիլիտացիայի խնդիր:

506. Երբ Իրանի հետ սահմանը բացվեց, ինչ էժան ու անորակ սննդամթերք ասես մտավ երկիր: Կարծում եք մեր սերնդի համար դա անհետևանք մնա՞ց:

507. Առաջին սցենարը նախատեսում է, որ լուրջ տնտեսական առաջընթաց չի լինելու. այդ պարագայում արժե՞ գնալ ինչ-որ զիջումների: Կարծում եմ, որ ոչ:

508. Սահմանի բաց կամ փակ լինելը արհեստական բան է, քանի որ մենք հոգեպես պատրաստ չենք թուրքերի հետ նորմալ շփման:

509. Մեր Նախագահը մեծ բեռ է վերցրել իր վրա, գովեստի խոսքերս նրան:

510. Թուրքերը քաղաքական շահ են հետապնդում, իսկ մենք ՝ տնտեսական: Մենք դա անում ենք հանուն մեր երեխաների:

511. Սահմանը բացում ենք ինչո՞ւ, որ գնան Անթալիայում հանգստանա՞ն: Իսկ Սևանը ո՞ւմ ենք թողնում:

512. Ծովային սահման չունենք, Թուրքիան էլ մեզանից հզոր է: Ավելի ճիշտ է, որ հայերը գնան ավելի շատ կոմպրոմիսների:

513. Տնտեսական ասպեկտով՝ սահմանի բացումը բացասաբար կազդի տեղական շուկայի և արտադրողի վրա:

514. Երկխոսության սկիզբն արդեն առաջխաղացում է: Երբ տնտեսապես հզորանանք, կարող ենք լուծել նաև մեր քաղաքական հարցերը:

515. Իրենք կգան, մեր սարերում իրենց անասուններին կպահեն, այլասերումը կտարածվի մեր ընտանիքներում ու մենք մեր ավանդապահությունը պահել չենք կարողանա:

516. Առաջին սցենարի դեպքում նպատակահարմար է կիրառել «անունը կա, ամանում չկա» ասույթը:

517. Թուրքիան մեր սիրուն աչքերի համար չի բացի սահմանը: Նա գիտի, մենք ԼՂ խնդրի կարգավորման հարց ունենք:

518. Մեզ տնտեսապես շահավետ է նրանց հետ երկխոսության գալը...

519. Տարբեր ՁԼՄ-ներ կարդալուց՝ ժողովրդի գլխի մեջ քաոս է: Մենք չենք հասկանում, որն է ճիշտ, որն է սխալ:

520. Ինչո՞ւ են գալու Սիսիանում տուն առնելու, դրանք Հյուսիսային պողոտայում են տներ առնում: Սա դեռ պարսիկները, պատկերացրեք երբ թուրքերը գան...

521. Ավելի լավ է պարանից կախվենք, քան թուրքից:

522. Եթե հաշվի առնենք առաջին սցենարի ենթատեքստերը, ապա կտեսնենք, որ սա ձեռնտու է ընդամենը մի քանի տնտեսվարողի: Սա ընդհանուր առմամբ ընդունելի տարբերակ չէ:

523. Առաջին սցենարն ամեն հարցի լուծում կամ չլուծում թողնում է ապագային, իսկ զիջումներն անում է այսօր: Բա էդպես կլինի՞...

524. Այս քննարկումն ուշացած է, պետք էր ավելի վաղ քննարկում կազմակերպել:

525. Վրացին ինչ է, որ նրանցից կախվենք: Իսկ Թուրքիան մեծ երկիր է, ակամա կախվածության մեջ կհայտնվենք:

526. Նույնիսկ սահմանների բացման դեպքում հայերը չեն լռի, կբարձրաձայնեն իրենց խնդիրները:

527. Քաղաքական առումով՝ մենք պետք է չմոռանանք ցեղասպանության հարցը, միևնույն ժամանակ՝ ստիպենք Թուրքիային բացել սահմանը:

528. Թող պարզապես սահմանափակ ապրանքաշրջանառություն լինի՝ մի երեք կետով իրենք գան, մի երեք կետով մենք: Թե չէ կգան, ամեն բան մեր երկրում կառնեն:

529. Թուրքիային պետք է մտնել Եվրամիություն և այդ ճանապարհին պետք է լավ հարաբերություններ հաստատի Հայաստանի հետ: Բայց թե միանշանակ լավ կլինի մեզ համար, թե ոչ, դժվար է ասել: Բացի այդ, կարծում եմ, որ առանց նախապայմանների Թուրքիան երբեք չի բացի սահմանը:

530. Մենակ մի խորհուրդ կտամ. յոթ անգամ չափենք, մեկ անգամ կտրենք:

531. Սահմանի բացումը բոլոր առումներով դրական է:

532. Մի բան լավ պետք է հասկանանք, սահմանը բացելուց հետո այն վերստին փակելն արդեն դժվար կլինի: Դրա համար էլ բոլոր հետևանքները պետք է լավ գիտակցենք, նոր նման որոշում կայացնենք:

533. Հարևան երկրները պետք է որոշակի շփումների մեջ լինեն, տնտեսական առումով մենք կշահենք:

534. Սիսիանում գործարաններ ու ֆաբրիկաներ կան, որ չեն աշխատում: Թուրքերը կգան, կառնեն ու կաշխատեցնեն: Կաշխատեցնեն իրենց բանվորներով: Իսկ ինչո՞ւ սփյուռքահայերը չեկան, չառան:

535. Մեր իշխանությունը գնում է այս քայլին, բայց առանց մեծ ցանկության: Դրա համար են այս քննարկումները, որ հետագա սխալների դեպքում ամբողջ պատասխանատվությունը ինքը չկրի:

536. Այսօր երևի Հայաստանին է ավելի ձեռնտու բացել սահմանը, քան Թուրքիային: Սակայն, մեր կապերը պետք է լինեն զուտ տնտեսական: Չպետք է թույլ տալ հարաբերությունների ջերմացում:

537. Ըստ թուրքերի հայերը կարող են մոռանալ Եղեռնը... Երեք միլիոն զոհ ենք տվել...Ինչպե՞ս մոռանանք

538. Իսկ առաջին սցենարն ինչպ՞ես կանդրադառնա Ռուսաստանի հետ հարաբերությունների վրա:

539. Եթե թուրքական սահմանը բացվի, ես թողնելու եմ գնամ երկրից, որովհետև ես գաղթականի զավակ եմ:

540. Կարծում եմ, որ մեր սերունդը այս հարցի լուծումը չի տեսնի:

541. Սահմանը կբացվի, բայց պայքարը շարունակվելու է...

542. Սահմանի բացումը ավելի է երկարացնելու ցեղասպանության ճանաչման գործընթացը:

543. Միևնույն է մեր շուկան ողողված է թուրքական ապրանքով, այլ խնդիր է որ այդ ապրանքը գալիս է Վրաստանից և թանկ է: Սահմանի բացումը դրական միտում է այդ առումով:

544. Մի բան հստակ է. առաջին սցենարն այլևս մեզ թույլ չի տա խոսել ու պահանջել, որ մեզ տարբեր ատյաններում լսեն:

545. Իսկ ես կարծում եմ, որ հենց Ռուսաստանին էլ ձեռք չի տալիս սահմանի բացումը:

546. Մենք հարևաններ ենք՝ պետք է ընդունենք, որ բանակցում են երկու քաղաքակիրթ երկիր և ամեն քայլում չպետք է փնտրենք թշնամանք:

547. Եկեք բացենք սահմանը, դա մեզ չափազանց անհրաժեշտ է: Բայց պետք է այնպես անել, որ հնարավորինս շահենք սրանից ու չլինեն նախապայմաններ:

548. Սահմանի բացումը առաջին հայացքից շատ գրավիչ է..Միանշանակ տնտեսական աճ կլինի: Բայց դա խայծ չպետք է դառնա: Պետք է մտածել, թե ինչպես կարելի է հասնել մեր քաղաքական շահերի իրագործմանը:

549. Տնտեսական շահը մեր համար մեծ է, սակայն քաղաքական հարաբերությունները նույնպես պետք է կարևորել:

550. Մարդն ինչքան արտաքին աշխարհի հետ շատ է շփվում, այնքան նրան վերահսկելը դժվարանում է. մեր պարագայում էլ է սա. գերտերություններին ձեռք չի տալիս մեր արտաքին շփվումների զարգացումը:

551. Թուրքիան կայսրություն է և վաղ թե ուշ այն կփլուզվի:

552. Սահմանի բացումը նախ և առաջ անհրաժեշտ է Թուրքիային, քանի որ նաև դրանից է կախված Թուրքիայի անդամակցումը Եվրախորհրդին:

553. Մենք այնքան լքյալ հողեր ունենք՝ դրանք մշակել չենք կարողանում, ասենք պահանջեցինք ու պապական հողերն էլ ստացանք՝ դրանց հետ ո՞նց ենք վարվելու:

554. Երկու վատը մի լավից էլ լավ է... Կունենանք երկու ճանապարհ ու մեկը գոնե բաց կլինի:

555. Մենք ուժ չենք աշխարհում՝ շատ փոքր ենք: Նույնիսկ մեր ցեղասպանության հարցը տարբեր պետությունների համար խաղաքարտ է այդ երկրներում հայ համայնքների և Հայաստանի վրա ճնշումներ գործադրելու համար, ինչպես օրինակ Ամերիկայում նախագահ ընտրվելու համար: Ուղղակի պետք է չափազանց խելացի լինել ու այս ամենից հնարավորինս քիչ տուժել և աշխատել օգուտներ քաղել:

556. Թուրքիան մեր հողերը պետք է վերադարձնի, այդ հարցը վաղ թե ուշ ծագելու է:

557. Ասում ենք, թե ունենք բաց սահման Պարսկաստանի հետ, բայց իրականում դա բաց սահման չէ, քանի որ սահմանափակումները շատ են:

558. Կա մտավախություն, որ մեզ կստիպեն ԼՂ հողերը վերադարձնենք:

559. Հայաստանի վրա ճնշում գործադրելու պահն ինձ, ճիշտ ասած, դուր չեկավ:

560. Հայկական դիվանագիտությունը պետք է այնքան զարգացած լինի, որ կարողանա դիմակայել թուրքականին: Հիմա դա 20/1-ի հարաբերակցությամբ է: Մեր հիմնական թերությունն էլ այն է, որ մենք հստակ չենք ձևակերպում մեր պահանջները, որ հասկանանք՝ ինչպես հասնենք դրան: Հստակ գիծ չեմ տեսնում:

561. Մեր երկու թշնամիների հետ սահմանը ամենամեծն է, դրա համար էլ սահմանի բացումը շատ կարևոր է մեզ համար: Բայց պատմա- քաղաքական հարցերը չպետք է շփոթել տնտեսականի հետ:

562. Շատ ողջունելի է Հայաստան-Թուրքիա երկխոսությունը:

563. Մենք սովոր ենք, որ ինչ անում են, ասում ենք, մեզ «ադալժենի են անում»... լավ չէ:

564. Բոլոր հարցերը կապված են ցեղասպանության հետ: Առանց այդ հարցի լուծման հնարավոր չէ մնացած բոլոր հարցերի քննարկումը:

565. Մեր դիվանագիտությունը հետևից է գալիս՝ առաջնորդելու փոխարեն:

566. Անկախ սահմանների բաց լինելուց՝ Հայաստանի խնդիրները վերջնական լուծում չեն ստանա:

567. Ցեղասպանությունն ուսումնասիրող հանձնաժողովի ստեղծումն անընդունելի է, արդեն իսկ արձանագրված փաստերը կասկածանքի տակ չեն դնի:

568. Երկրորդ սցենարն էլ օգտավետ կլինի միայն անհատների համար: Պետությունն ու հասարակությունը իրականում որևէ կերպ չի շահի:

569. Ամեն կողմից շրջափակման մեջ լինելը շատ վատ է, պետք է մտածել ճիշտ ուղի գտնելու մասին:

570. Ինձ մոտ այն տպավորությունն է, որ էշը կերել ենք, մնացել է պոչը... Ցեղասպանությունը ճանաչեցի՞ն, որ հիմա էլ սահման բացեն. մենակ խոսում են:

571. Այսօր մեծ պետությունների պահվածքը և քաղաքականությունը շատ փոփոխական է՝ կախված այդ պահի շահերից:

572. Ամեն դեպքում երրորդ սցենարը այնքան էլ նպատակահարմար չէ:

573. Թուրքերը երբեք չեն ընդունի ցեղասպանության հարցը, չի կարելի հանձնաժողով ստեղծել մի բան էլ ուսումնասիրել այն, ինչը արդեն մի շարք երկրներ ընդունել են:

574. Վայ-վայս եկել է, մնացել է վույ- վույս... իբր մեր ներքին հարցերը շատ ենք լուծել, հիմա էլ ուզում ենք արտաքին հարաբերություններ կարգավորել:

575. Յուրաքանչյուր հայի մոտ հենց խոսքը գնում է թուրքի ու Թուրքիայի մասին, առաջին հերթին արթնանում է ցեղասպանության միտքը: Սա արմատախիլ չենք կարող անել:

576. Որևէ մեծ երկիր հանուն Հայաստանի կտրուկ չի փոխի իր քաղաքականությունը:

577. Իսկ միգուցե սահմանի բացման մասին քննարկումներն իրականում երկու պետությունների կողմից էլ մարդկանց ուշադրությունը ներքին խնդիրներից շեղելու միջոց է:

578. Հարևան երկրների տարածքային ամբողջականության հետ պետք է դնել ազգերի ինքնորոշման իրավունքը:

579. Տպավորությունն այնպիսին է, որ մենք ասես խնդրում ենք, որ գան, ֆուտբոլ խաղան, սահման բացեն: Մեզ պետք չէ, մենք մեր քարերով էլ կգոհանանք:

580. Սահմանի բացումը բնականաբար մեզ համար շատ օգտակար կլինի, բայց դրանից հետո հաստատ կբարձրացնենք հողերի հետ բերման խնդիրը:

581. Ես կարծում եմ, որ Թուրքիան սահմանի բացման մասին անընդհատ խոսում է, որ մեր ձայնը կտրի ցեղասպանության հարցում:

582. Նրանք ջուրը կթունավորեն, տնտեսություն կքայքայեն... տեսեք, ջահել աղջիկներ են նստած, ոչ մեկն էլ սիրած չունի, իսկ դրանք որ գան, բնական կարիքներից դրդված կապեր կստեղծվեն ու սերունդը կայլանդակվի:

583. Ոչ, մենք ավելի լավ է մենակ ապրենք, քան թուրքի հետ ապրենք:

584. Իսկ միգուցե սա հատուկ մշակված ծրագի՞ր է ՝ Հայաստանում իրենց քաղաքականությունն իրականացնելու համար:

585. Այսօր Թուրքիայի համար նույնպես դժվար է: Նրան էլ են ստիպել որոշակի նախապայմաններ ընդունել:

586. Յա, բա որ գան, ոսկե վզնոցներով սիրաշահեն, չե՛ք դիմանա:

587. Հոգեպես պատրաստ չեմ սահմանի բացմանը:

588. Որոշում կայացնելուց առաջ պետք է նախ հասկանանք, թե հենց Թուրքիայի ինչին է պետք սահմանի բացումը: Սա եթե հասկանանք ու ծանրութեթև անենք, մեզ համար որոշում կայացնելն ավելի հեշտ կլինի:

589. Քանի դեռ այս երկրում մեծ տարբերություն կա հարուստների ու աղքատների միջև ու աղքատները շատ են, քանի դեռ մեր ներսի պրոբլեմները չենք լուծել, ոչ մի բան էլ չի ստացվի:

590. Պատմությունից ելնելով՝ կարող ենք ակնկալել, որ Թուրքիան խարդախ չի լինի նույնիսկ սահմանի հարցում և չի փորձի Հայաստանին լռեցնել՝ անտեսել ցեղասպանության հարցը՝ բացելով սահմանը:

591. Արդյո՞ք մենք պատրաստ ենք դիվանագիտական պայքարի, կարծում եմ՝ ոչ:

592. Մենք պետք է մեր մտավորականությանն օգտագործենք Թուրքիային ճնշելու հարցում:

593. Տրամաբանական չէ, որ թե՛ ցեղասպանություն ճանաչել փորձենք, թե՛ նորմալ հարաբերություններ ունենանք Թուրքիայի հետ: Դրանցից մեկը պետք է զիջի մյուսին:

594. Մեզ՝ երկուսիս էլ ճշնում են: Պետք է հասկանանք, թե ում ինչի համար...

595. Մենք պետք է պետական պրոտեկցիոնիզմի քաղաքականություն վարենք. ամեն բան չէ, որ կարելի է ներմուծել Հայաստան:

596. Գիտեք, մենք հարց ենք քննարկում, բայց ինքներս էլ չգիտենք, թե ինչ ենք ուզում, ինչ է մեզ սպասվում ու որ ավելի վատ է, ինչին ենք պատրաստ, ինչին՝ ոչ:

597. Ես նկատում էի, որ Թուրքիան արդեն պատրաստ էր փոխզիջումների գնալ՝ Օբամայի ընտրության նախօրեին, Ֆրանսիայի՝ ցեղասպանության ժխտումը պատժելու որոշումից հետո... Իսկ հիմա այդ հույսս կորավ:

598. Լրատվությունից է տպավորությունս, թե մեր խնդրի լուծումը մոտ էր հանգուցալուծման:

599. Ժողովուրդը տեղյակ չէ կատարվելիքից, անհրաժեշտ էր արձանագրությունը տպագրել, լրատվամիջոցները վատ են լուսաբանում այն, ամենը ինչը տեղի է ունենում սահմանի բացման հետ կապված:

600. Հայը ստեղծագործ է, մենք կարողանում ենք մեր քարերի վրա էլ երկիր կառուցել ու պահել:

601. Ճիշտ կլինի որ սահմանի բացման հարցը երկար չքննարկվի:

602. Մենք պետք է կարողանանք դիմակայենք Թուրքիայի դիվանագիտական քայլերին:

603. Սահմանի բացումը վստահ կդանդաղեցնի ցեղասպանության ճանաչումը:

604. Երրորդն այն է ինչ ունենք. ժամանակ առ ժամանակ իրար միս ենք ուտում, հետո իրար հետ ֆուտբոլ նայում, մեկ-մեկ էլ ամեն ինչ հասցնում կուլմինացիոն պահի, իբր «էս ա, ուր որ ա սահմանը կբացվի...», իսկ իրականում նույն տեղում դոփում ենք:

605. Ասենք սահմանը բացվի թուրքերի հետ, մեկ տարի հետո հնարավո՞ր է, որ պահանջեն Ադրբեջանի հետ սահմանը բացել:

606. Վտանգը քթներիցս կախ ապրում ենք:

607. Եթե աշխարհը ընդունի ցեղասպանությունը, կարող ենք պահանջել մեր հողերը:

608. Հիմա էլ ենք թուրքական ապրանքներ առնում, սահմանի բացման հետ դա կապ չունի:

609. Աշխարհի զարգացումը տանում է նրան, որ փակ սահմաններ ընդհանրապես պետք է չլինեն: Այս սկզբունքից պետք է ելնենք:

610. Ես մի թուրք ծանոթ ունեի, որ դեռ մի տարի առաջ ասում էր. «Շատ շուտով սահմանը պիտի բացվի...»: Հասարակ մարդ էր, բայց ասում էր, իսկ մեզ մոտ դեռ նման բաներ չէին էլ խոսում: Նշանակում է, որ Թուրքիան դեռ շատ վաղուց է պլանավորել սահման բացելն ու իր ժողովրդին էլ պատրաստել է:

611. Սահմանի բացման մեջ տեսնում եմ նաև ասիմիլացիայի քաղաքականությունը:

612. Պետք է հիշել նաև էթնիկ փոքրամասնություններին, որոնք այսօր բնակվում են Թուրքիայում և որոնց միջոցով ԱՄՆ-ը կստեղծի կառավարելի քաոս:

613. Դուք սիսիանցի ե՞ք.... զարմանում եմ ձեր լավատեսության վրա... իրոք սիսիանցի եք, գյուղապետ, բան-ման չե՞ք: Բա ինչո՞ւ եք այդքան ուզում սահմանը բացեն:

614. Հեռուստատեսությամբ թող այս սերիալների փոխարեն ավելի շատ ինֆորմացիա տան, ժողովուրդը իմանա ինչ է կատարվում: Մութ է, չգիտենք ինչի մասին ենք խոսում:

615. Թուրքի և պարսիկների միջև տարբերություն կա. այն է Եղեռնը:

616. Եթե ցեղասպանությունը չի ճանաչել, էլ սահմանի բացման շահը ո՞րն է:

617. Ես ոչ մի տարբերություն չեմ տեսնում Ադրբեջանի ու Թուրքիայի մեջ: Ընդամենը մի քանի տարի առաջ եղավ Սումգայիթի ջարդը: Բա ինչու՞ եք համոզված, որ թուրքն էլ գա, մեր քաղաքներում նոր ջարդ ու կոտորած չի անի:

618. Զուտ միջազգային վարկանիշի բարձրացման հիմնավորմամբ պետք չէ բացել սահմանը:

619. Եթե անգամ թուրքը կարմիր խնձոր լինի, գրպանդ մի դիր:

620. Ասում ենք, Թուրքիան ավելի շատ է ուզում բացի... իսկ ես ասում եմ, թուրքն էլ չի ուզում, ուղղարկի իրեն ճնշում են:

621. Միևնույն է մենք մնալու ենք անկայուն Վրաստանի հույսին:

622. Քաղաքից ո՞վ կգնա Վանն առնի: Դրա համար էլ իրենք կգան, մեր տները կառնեն, իսկ մենք....

623. Հայերն իհարկե կշահեն սահմանի բացումից, մենք պիտի տնտեսապես հզորանանք, որ մեր ձայնը ավելի լսելի կլինի: Ընթացքում պետք է քաղաքականություն մշակել:

624. Թուրքերից հեռու չէ, կարող են այնպիսի պայմաններ դնել, որ այդ մեր փոքր հզորացման դիմաց շատ կարևոր բան կորցնենք:

625. Պատմությունը ցույց է տվել, որ հայերը երբևէ չեն կարողացել իրենց շուրջը միավորել էթնիկ միավորումները և միշտ պայքարել են միայնակ:

626. Սահմանների մանր-մունր հարցերը վերանայելու են եվրահնտեգրման պայմաններում:

627. Ռուսները միշտ էլ մեզ հոգեհարազատ են եղել ավելի, քան մյուսները...Դա կրոնի հետ է կապված: Ավելի լավ է քրիստոնյայի հետ դաշինք կնքել, քան մուսուլմանի:

628. Թուրքերը միշտ էլ կարողացել են համ նալին խփեն, համ էլ մեխին: Այդ մենակ մենք ենք, որ հազար տարի նույն երգն ենք երգում, առանց հասկանալու, որ միգուցե մեր ուզածին հասնելու այլ եղանակներ էլ կան:

629. ԼՂ պատերազմը ավարտվելու է և ազերիները դեռ ձմերուկ են վաճառելու Սիսիանում:

630. Ես կարծում եմ, նույնիսկ եթե պարտադրանքով սահմանը բացվի, մեր հարաբերությունները Թուրքիայի հետ չեն լավանալու՝ թուրքը մնում է թուրք ու կարող է մեջքից խփել:

631. Փակ սահմանների դեպքում մենք կարող ենք միջազգային ասպարեզում հնչեցնել մեր խնդիրները ու ավելի լսելի կլինենք:

632. Եթե մենք լռելու ենք մեր խնդիրների մասին, ուրեմն պետք չէ բացել սահմանը:

633. Թուրքը միշտ եղել է արտակարգ դիվանագետ՝ նա թույլ չի տա, որ իր քթի տակ իր թշնամին հզորանա:

634. Ինչ էլ անենք, Թուրքիան միշտ ասելու է. «Մենք արեցինք, մենք զիջեցինք...»: Իրենք սովոր են միշտ զոհի դերում հանդես գալ, բայց չպետք է մոռանանք, որ թուրքը գառան դիմակ հագած գայլ է:

635. Պետք է լավատեսորեն տրամադրվել, անգամ Հայրենական Մեծ Պատերազմը ավարտվեց և հարաբերությունները կարգավորվեցին:

636. Այսքան տարի է Սիսիանում ապրում եմ, առաջին անգամ է, որ քաղաքից, իշխանություններից եկել են, քննարկում են անցկացնում:

637. Եթե մենք վախենանք մահմեդականությունից կամ թուրքերի կողմից ունեցվածքի ձեռք բերումից Հայաստանում՝ դա նշանակում է, որ ցանկացած երկիր պետք է իր սահմանները փակ պահի: Դրա համար պետք է փորձել ամենը կարգավորել օրենքներով և որոշակի սահմանափակումներով:

638. Մեր սփյուռքը մեզ համար նույն վայլուտան է, ինչ Ադրբեջանի համար նավթը:

639. Մենք շատ ենք վախենում, մենք հասկանում ենք, որ նրանք ամեն ինչի ընդունակ են:

640. Առաջին հերթին մեր երկրում պետք է բարելավվի սոցիալ-տնտեսական վիճակը, հզորանա երկիրը , հետո նոր քաղաքական խնդիրները պիտվի լուծվի:

641. Ժողովրդավարությունը Թուրքիայում ավելի բարձր մակարդակի վրա է, քան Հայաստանում, այսօրվա թուրքը՝ այն հին թուրքը չէ:

642. Օրերս եմ տեսել «Արտույտների ագարակը»: Տաս անգամ էլ տեսնեմ՝ հոնգուր-հոնգուր լաց եմ լինելու: Ոնց չվախենանք:

643. Սա լավատեսորեն մշակված սցենար է: Ոնց կարող է պատահել, որ մեր հարաբերությունները միանգամից լավանան:

644. Մենք մի փոքր կարող է շահենք, բայց առավել կշահեն օլիգարխներն ու հասարակության շերտավորումն ավելի կսրվի:

645. Իսկ ինչի՞ չենք կարծում, որ միգուցե հայ-թուրքական հարաբերությունների բարելավումը կօգնի նաև հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորմանը:

646. Հայ-ադրբեջանական հարաբերությունները չպետք է խառնել հայ-թուրքական հարաբերությունների հետ: Այլապես մենք տանուլ կտանք ամեն ինչում:

647. Սահմանի բացումը հասարակ ժողովրդի վիճակն էնքան էլ չի լավացնի: Կշահեն նրանք, ովքեր հիմա էլ վատ չեն ապրում:

648. Այսօրվա իրականությունն այն է, որ ռուսական կապիտալն ու ռուսական կառավարում ունեցող ընկերությունները շատ լուրջ դեր են խաղում:

649. Եթե թուրքերը գան, հաստատվեն Հայաստանում, թվաքանակով կգերակշռեն մեզանից ու մենք ակամա մեր երկրից կհեռանանք: Մենք երկիրը կկորցնենք:

650. Եթե թուրքերը ցեղասպանությունը ճանաչեն, բոլոր հարցերը կլուծվեն: Ամեն ինչ պտտվում է Ցեղասպանության հարցի շուրջ:

651. Թուրքերը խելացի կլինեն, եթե առանց նախապայմանների սահմանը բացեն...մի 10 տարում Հայաստանը կգրավեն:

652. Մենք փոքր պետություն ենք ու անգամ մի փոքր շահից էլ պետք չէ հրաժարվել: Եթե անգամ մի քանի տասնյակ գյուղեր սահմանի բացումից հետո հարստանան, էլի լավ է...

653. Ես կարծում եմ, որ Հայաստանն ու Ադրբեջանը նույն արժեքն ունեն Ռուսաստանի համար:

654. Մեզ համար շատ կարևոր է մեր քաղաքական շահը: Ռուսաստանին տնտեսական առումով զիջելով՝ մենք կարող ենք շահել քաղաքական առումով:

655. Գուցե կկորցնենք, գուցե կշահենք...բայց այլընտրանք չունենք..

656. Ռուսաստանը կարող է ճնշել, բայց թելադրել չի կարող: Մենք այս զենքը պիտի օգտագործենք:

657. Այդ ինչ է նշանակում՝ ինչպե՞ս թե հանձնաժողով կազմեն, որ քննարկեն ցեղասպանությունը ճանաչեն, թե ոչ:

658. Մենք անընդհատ մեր շահը զիջում ենք սրան կամ նրան. ե՞րբ ենք ուշադրություն դարձնելու մեր շահերին:

659. Թուրքիան դիվանագետ երկիր է և թույլ չի տա Հայաստանի զարգացումը:

660. Հինգերորդ սցենարը իրականություն չէ, սա ուղղակի երազանք է..

661. Միգուցե ցեղասպանությունը Թուրքիան ընդունի, բայց հող երբեք չի տա..հողը արյունով են վերցնում...

662. Զբոսաշրջության օգուտները բավարար չեն սահմանի բացման համար: Կարծում եմ անհրաժեշտ է փոխշահավետ պայմանագիր կնքել:

663. Մենք շախմատ պետք էխաղանք. մեկ քայլ մենք, մեկ քայլ իրենք: Որպեսզի այդ ընթացքում հասկանանք ում խոսքին հավատանք, ում խոսքին՝ ոչ: Իսկ հիմա մեզանից պահանջում են, որ մենք ամեն ինչ անենք, հետո նստենք թախտին, սպասենք բախտին:

664. Մանկապարտեզից պետք է հայրենասեր դաստիարակենք, միշտ գովենք մերը, անկախ նրանից գովելի է, թե ոչ: ԶԼՄ-ների դերն է շատ կարևոր այս հարցում:

665. Իրականում սահմանը փակել է Թուրքիան, անհասկանալի է, թե ինչու՞ են Հայաստանին ներքաշում այս խաղի մեջ:

666. Այսօրվա ամենագլոբալ հարցը մեր ներքին բարեկեցության բարելավումն է: Առանց արյուն թափած մարդու ընտանիքի համար նորմալ պայմաններ ստեղծելու մտածում ենք ինչ-որ սահմանների բացման մասին:

667. Ես երբեք Թուրքիա չեմ մտնի, երիտասարդ եմ, բայց վախս շատ մեծ է:

668. Կարծում եմ գերտերություններն այստեղ շահ չունեն:

669. Սահմանի բացումից հետո ավելի կհեշտանա երկիրը լքելու հնարավորությունը:

670. Հնարավոր է, որ Ռուսաստանի շահերը այնքան մեծ լինեն Հայաստանում, որ հենց ինքը՝ Ռուսաստանը, ստիպի Թուրքիային բաց պահել սահմանը:

671. Եթե մարդիկ սկսեն նորմալ ապրել, այլ ոչ թե մտածել օրվա հացի մասին, այդ ժամանակ միայն կարող են կենտրոնանալ այլ հարցերի, այդ թվում՝ սահմանի բացման մասին:

672. Վրացիները թշնամի չեն, բայց կարող էին լինել բարեկամ: Ասել կուզի, երեսին ժպտալը միշտ չէ, որ նշանակում է ամեն ինչ լավ է: Նույն էլ Թուրքիան. կարող ենք ժպտալ երեսին, բայց անել այն ինչ ուզում ենք: Թող մի քիչ էլ իրենք կամուկացի մեջ ընկնեն:

673. Իրականում այսօր էլ սահմանը բաց է, հիմա պիտի որոշենք, արդյոք ուզում ենք հարաբերությունները խորացնել թե ոչ:

674. Տարիներ առաջ հայկական գյուղերի դպրոցում 23 երեխա էր դասարաններում, իսկ ադրբեջանաբնակ մեր գյուղում՝ 55: Նույն հեռանկարն է սպասվում:

675. Մեր պետությունը պետք է օրենք ընդունի, որ մարդիկ չլքեն իրենց երկիրը:

676. Ես Անթալիայում չեմ հանգստացել, չեմ էլ ուզում: Հանուն սահմանի բացման իմ սկզբունքներից հրաժարվել չեմ ուզում:

677. Մեզ համար ավելի վստահելի գործընկեր է սփյուռքը, քան գերտիրությունները, որոնց համար մենք միշտ խաղալիք ենք եղել:

678. Ես չգիտեի, թե ինչ փայլուն դիվանագետ է եղել Իսրայել Օրին՝ իմացա գիշերային ինչ-որ հեռուստատեսային ծրագրից: Պետք է այս ամենի մասին տեղեկացված լինեն բոլորը ու դասեր քաղենք մեր անցած ուղուց, որ դիմակայենք այսպիսի մարտահրավերներին:

679. Ազերիներին, վրացիներին ու իրանացիներին նույնպես պետք չէ, որ սահմանը բացվի:

680. Ինչքան Հայաստանը թշնամի շատ ունենա, այնքան ՌԴ-ին ավելի լավ:

681. Բա ինձ պետք է, թե իմ մասին ով ինչ է մտածում... Ուզում եմ, անում եմ, ասում եմ... Էնպես որ, եկեք չմտածենք, թե ինչ անենք, որ միջազգային հանրության աչքը մտնենք, այլ եկեք մտածենք, թե ինչ ենք ուզում ու ինչն է մեզ համար լավ:

682. Այսօր ռուս-թուրքակա հարաբերությունները գնում են ջերմացման...սահմանի բացումը ՌԴ նախաձեռնությունն է:

683. Թուրքիայի հետ սահմանի բացումը կխթանի նաև տուրիզմի զարգացմանը: Դա նույնպես շատ կարևոր է:

684. Հինգերորդ սցենարը անհավանական է՝ ես չեմ կարծում, թե հայերի ու թուրքերի միջև վստահություն կարող է լինել երբևէ: Կարող է մենք միամտորեն վստահենք, բայց թուրքերը երբեք:

685. Ինչու՞ ես բարկանում, այս մարդիկ տնտեսագետ չեն, հաշվարկները իմանալ կամ հեռանկար ենթադրել չեն կարող:

686. Եթե մի քիչ հեռատես լինենք ու ավելի խելացի, ապա հինգերորդ սցենարը լրիվ իրականանալի է:

687. Այ մարդ, մենք մեզ լավ ենք զգում, մենք սենց էլ կապրենք: Գլուխը հանգիստ դնում ենք բարձին, մեզ դա է պետք:

688. Այս սցենարի դեպքում վախ կա, որ գերտերությունները ավելի մեծ ճնշում կգործադրեն Հայաստանի վրա՝ ճանաչելու Թուրքիայի ներկայիս սահմանները:

689. Մենք արարատցիներից լավ ենք ապրում, միայն տրանսպորտի համար ենք շատ վճարում: Մենք մեր Ուռուտում շատ լավ էլ հանգստանում ենք: Ծով գնալու կարիք էլ չունենք:

690. Այս հարցի շուրջ մեր ասելիքը տեղ չի հասնի, քանի որ մենք շատ թույլ ենք՝ իզուր քննարկում ենք: Ինչպես Ռուսաստանը ուզի, այնպես էլ կլինի:

691. Մենք պետք է գործենք համախմբված, խելացի ու զգոն:

692. Մենք ուզում ենք հանգիստ ապրել:

693. Շատ երկրներ կան, որ հարևանների հետ թշնամի են, բայց շփվում են..Մենք պետք է կարողանանք մեր շահերից ելնելով ինչ-որ փոխզիջումների գնալ:Առաջին հերթին պետք է տնտեսապես զարգանալ: Սերնդափոխությունը կբերի ցեղասպանության հարցի լուծմանը:

694. Անընդհատ նշում են, որ սահմանի բացման դեպքում թուրքական ապրանքը կողողի մեր երկիրը ու մեր տնտեսությունը կթուլանա: Իսկ ո՞վ է մեզ պարտադրում, որ խանութ գնանք ու գնեն ոչ թե հայկական ապրանքը, այլ դրան համարժեք թուրքականը:

695. Պետք է որոշենք՝ ուզում ենք լավ ապրել թե՞ անվտանգ ապրել:

696. Նույնիսկ այն փաստը, որ թուրքը կասի «ցավում եմ» զգալի առաջընթաց կլինի:

697. Հարցին միակողմանի չի կարելի վերաբերվել, Վրաստանն ինչ անում է, մենք ենք տուժում, իրականում մենք կախված ենք հենց Վրաստանից: Պիտի այլընտրանքներ գտնենք:

698. Մենք չպետք է սահմանափակենք բիզնեսը, քանի որ դա ինքնակառավարվող հարց է ժամանակի ընթացքում:

699. Եթե բացում ենք սահմանը մինչև թուրքերը ճանաչեն ցեղասպանությունը, նշանակում է մենք էլ ենք ասում ցեղասպանություն չի եղել ու գրկաբաց ընդունում ենք նրանց:

700. Սահման բացելը մեզ ակամա առաջընթաց քայլեր է պարտադրելու:

701. Եթե հայերն ու թուրքերը շփվեն, թշնամությունը կվերանա, թուրքական հասարակությունը ավելի իրազեկ կլինի: Սա էլ քաղաքականություն է: Երբ շփվենք, ավելի շատ բան կպարզվի:

702. Այսօր թուրքական մի շարք մտավորականներ արտաքսվել են՝ Հայոց ցեղասպանության ընդունման համար:

703. Իսկ մեր Սփյուռքը որքանո՞վ է խրախուսում սահմանի բացումը: Կարծում եմ, իրենք չեն ընդունի, միայն ներողությամբ չեն բավարարվի

4. ՄԱՐՏՈՒՆԻՈՒՄ
կայացած հանրային քննարկման ընթացքում արտահայտված մտքերը

29.09.2009

704. Հնարավոր չէ, որ սահմանը բացելուց հետո ցեղասպանության հարցը մոռանանք: Դա անհնար է:

705. Սահմանի բացումը ռեալ փոփոխություն մեր կյանքում իհարկե կբերի: Անցյալ տարի, օրինակ, հազարավոր տոննաներ կարտոֆիլը մնաց, որովհետև Թուրքիայից էժան կարտոֆիլ գնեցին զորամասերի համար:

706. Հարցեր են առաջանում. հարաբերություններ հաստատելուց հետո թուրքը կկարողանա՞ անշարժ գույք ձեռք բերել Հայաստանում: Եթե այդպես լինի, կնշանակի Հայաստանը նվիրում ենք նրանց:

707. Ներկրման և արտահանման հարցում կարևորը պետական մոտեցումներն են, կարող են այնպես սահմանափակել, որ մեր արտադրողը դրանից չտուժի:

708. Ելնելով մեր ներկա վիճակից, մենք պետք է խելացի գտնվենք: Արդեն երկար ժամանակ շրջափակման մեջ ենք..Պետք է նպատակին քայլ առ քայլ մոտենալ..Պետք է տնտեսապես անկախանալ, ճանապարհ հարթել սերունդների համար:

709. Օձը գեղեցիկ չի լինում: Ինչքան էլ նա գեղեցիկ լինի, մի օր կխայթի:

710. Ամեն դեպքում սահմանի բացումը բերելու է դրական փոփոխությունների մեր կյանքում:

711. Թռչնաբուծարանները ինչպես զարգացան Հայաստանում, նույն սահմանափակումը իրականացնելով ներկրվող ապրանքի նկատմամբ մենք մեր արտադրողին կօնենք:

712. Արդեն իսկ հաղթանակ է, եթե Թուրքիան ինքն է ցանկանում բացել սահմանը: Այսօրվա մեր ճիշտ որոշումից է կախված ապագա սերունդների լավ կամ վատ լինելը: Մինչև օրս Թուրքիայի դիվանագիտությունից տուժել է միայն Հայաստանը:

713. Պետք է հաշվարկ անենք. առաջինը սահմա՞ն բացել ու հզորանալ, թե շարունակել պահանջել մի երկրից, որը հազար անգամ հզոր է մեզնից:

714. Այս պարագայում կշահի մի առանձին մաս, միավոր, իսկ պետությունը՝ որպես ամբողջական, չի շահի:

715. Ամենալուսավոր կետը դա այն է, որ Վրաստանը խաղից դուրս կգա, բավական է նրանց բյուջեն լցնենք:

716. Տարիներ առաջ գերտերությունների նացիոնալիստական գործելակերպը մեզ վրա թանկ նստեց , ու մենք հիմա փոշմանել ենք:

717. Եթե տնտեսական փոխհամաձայնություն լինի, դա կնպաստի նաև քաղաքական երկխոսությանը:

718. Հանուն շահույթի, անգամ, մեր շատ պատգամավորներ ու նախարարներ ընդունակ են ամեն բան ծախելու: Դա նշանակում է, որ երաշխիք՝ մեր ապահովության ու պայմանների բարելավման հարցում չկա:

719. Թուրքիան ամեն ինչ կանի որպեսզի լավ հեղինակություն վայելի Եվրոպայում:

720. Մենք երիտասարդ պետություն ենք, նոր ենք սովորում՝ ի՞նչ է պետականությունը, դիվանագիտությունը և այլն: Իսկ Թուրքիան ունի դարավոր զարգացած գիտություն: Վտանգավոր խաղ ենք խաղում:

721. Միջազգային հանրությունը ամեն դեպքում չի կարող զսպել երկու երկրների կողմից բարձրացվող հարցերը:

722. Ես կուզեի Թուրքիան շուտ դառնար Եվրամիության անդամ, որպեսզի ճնշում լինի նաև Եվրոպայի կողմից մեր հարցի լուծման համար:

723. Սահմանի բացումը նպաստելու է մրցակցային հարաբերությունների զարգացմանը մեր երկրում:

724. Մեխը այն է, որ մեր հեղինակությունը կընկնի միջազգային հանրության աչքերում, եթե մենք խոչընդոտենք սահմանի բացմանը:

725. Մենք պետք է անտեսենք անհատների շահերը և մտածենք ընդհանուր երկրի շահերի մասին:

726. Սահման բացելուց հետո նոր պետք է մտածել մյուս հարցերի մասին...ինչպես չերչիլն է ասել ՝ կա ընդհանուր տնտեսական շահ...իսկ այսօր մեր շահերից է բխում սահմանի բացումը:

727. Եթե Եղեռնի ճանաչման գործընթացը կասեցվում է այս սցենարով, ուրեմն մեզ միանշանակ պետք չի նման սցենար:

728. Կարծում եմ Թուրքիայում հարցերի լուծողը նրանց վարչապետն է, նա ինչպես ասի , այնպես էլ կլինի:

729. Առաջին սցենարը նախատեսում է, որ Վրաստանից կախվածությունը կնվազի: Ես տեղյակ եմ, որ վրացական ճանապարհները շատ թանկ են, արդյունքում ներկա պայմաններում շահում է միայն Վրաստանը:

730. Վերցնենք շոկոլադի արտադրությունը. Գրանդ Քենդիի ու թուրքական շոկոլադի մրցակցության դեպքում, եթե չլինի պետական ճիշտ քաղաքականություն, համոզված եմ, մեր արտադրողը ամեն բան տանուլ կտա:

731. Ներկա պարագայում առաջին սցենարը գրավիչ կարող է լինել, սակայն ապագայի համար այն լուծում չէ:

732. Հակամենաշնորհային ոչ մի միջոցառում մեր երկրում չի աշխատում:

733. Թուրքիային ոչ սահմանի բացումը և ոչ էլ ԼՂ հարցի լուծումը պետք չէ: Խնդիրը Եվրոմիության պահանջների կատարման մեջ է:

734. Բաց սահմանի դեպքում, թուրքերը կարող են ներդրումներ անել այստեղ նույնիսկ առանց շահույթ հետապնդելու միայն քաղաքական նպատակներով, ու մենք կընկնենք վտանգավոր կախվածության մեջ:

735. Սահմանը պետք է բացվի, անպայման: Բայց դա չի նշանակում, որ մյուս հարցերը պետք է մոռանալ:

736. Սահմանի բացումը կօգնի Հայաստանի 2-3 գործարարներին:

737. 91-92թթ. իրանցիները իրենց ապրանքով ողողեցին մեր երկիրը: Իսկ հիմա ու՞ր է այդ վաֆլին, թխվածքաբլիթը... Ես գնում եմ Դարոհնկի ու Ծանթի արտադրանքը: Տեսնում եմ, որ մեր արտադրանքն ավելի որակյալ է ու պարսկական էժանը չեմ առնում:

738. Եթե մենք այսօր տնտեսապես չիզորանանք, ոչ մի հարց էլ չենք կարողանա լուծել: Հարկավոր է մեր ձայնը լսելի դարձնել:

739. Այս սցենարն ընդամենը Թուրքիային Եվրոպայի աչքի առաջ բարձրացնել կլինի:

740. Երեխան օրերից մի օր պետք է դուրս գա բակ, փողոց ու ճանաչի մյուսներին: Մենք էլ պետք է դուրս գանք շրջափակումից ու կամաց-կամաց ինտեգրվենք միջազգային ընտանիք:

741. Սահմանի բացումը մի քայլ առաջ է հարաբերությունների բարելավման համար, սակայն մենք դեռ չգիտենք, թե գերտիրությունները ինչպես կվարվեն:

742. Պետությունը մենք ենք, սակայն մեզ պահողը սփյուռքն է: Թուրքիան փորձում է սեպ խրել մեր ու սփյուռքի հարաբերություններում:

743. 70 միլիոնանոց Թուրքիայի դեմ 1.5 միլիոնանոց Հայաստանը ի՞նչ է անելու բաց սահմանների դեպքում: Երկու շաբաթում կլցնեն Հայաստանը ու մեր երկրի վերջը կգա:

744. Միանշանակ պետք է հաշվի առնել սփյուռքի դիրքորոշումը:

745. Մեր ժողովրդի մեծ մասը այսօր դրսում է և սփյուռքը թույլ չի տա, որ այն մոռացվի և չի լռի:

746. Չէ որ պարսկական ապրանքը վերացավ, որովհետև մեր շուկան զարգացավ: Նույնն էլ սպասում ենք հիմա, պետք է կարողանանք նոր տեխնոլոգիաներ ներմուծենք, որ կարողանանք մրցունակ ապրանք տանք:

747. Երկու կողմերն էլ պետք է կարողանան ընդհանուր եզր գտնել: Դրա համար, կարծում եմ , ազգերի շփումը շատ կարևոր է:

748. Եթե մենք խելացի օգտագործենք սահմանի բացելը, կկարողանանք շահեկան վիճակի հասնել:

749. Ես համաձայն կլինեի, եթե մենք սահման բացեինք բարեկամ երկրի հետ:

750. ՄԻ քանի հոգու գրպանը լցնելու համար զիջելու՞ ենք մեր երկիրը: Միանշանակ՝ ո՛չ:

751. Էս պահին մեզ պե՞տք է ճանաչել Ցեղասպանությունը ու Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Եթե ոչ, ապա ի՞նչ հարց կա՝ եկեք զարգացնենք մեր հարաբերությունները Թուրքիայի հետ:

752. Սահմանների բացումը փոխադարձ շահավետ երևույթ է, սակայն այն գինը որ մենք վճարում ենք, մեզ համար անհամեմատ բարձր է. սա անթույլատրելի է:

753. Այս հարցի լուծումը երկար տարիների խնդիր է, մենք պարտավոր ենք մեր սերունդների համար հիմքեր ստեղծել:

754. Սահմանի բացման հետ կրճատվում են տրանսպորտային ծախսերը, սակայն դա ոչ մի քաղաքական հարց չի լուծի:

755. Կարսի պայմանագրից նրանք պիտի հրաժարվեն. չկա այլևս Խորհրդային Հայաստան, ուստի չկա և պայմանագիր:

756. Մեր մոտ ամեն ինչ այնքան է մոնոպոլացված, որ սահմանի բացումը հարց չի լուծի:

757. Վրաստանը մեզանից միլիոն ու կես չի ջարդել, իսկ այս մյուսի հետ մենք հիշողություն ունենք:

758. Պարզ է, որ այս դարում փակ սահման չպետք է լինի, բայց չեք մտածում, որ կարող է վրացական սահմանը փակվի:

759. Մենք պիտի ընդունենք, որ Թուրքիայի հետ հավասար հարթություններում չենք, սահմանի բացումը մենք պիտի օգտագործենք զարգանալու ու Թուրքիայի հետ նույն հարթության ձգտելու համար:

760. Մենք ամեն ինչ տվել ենք ռուսներին, հիմա ուզո՞ւմ եք սահմանը բացվի ու ամեն ինչ տանք թուրքերի՞ն... չնայած այլևս բան չունենք տալու:

761. Անկախ սահմանի բացումից ներդրումներ կամ լինում են, կամ չեն լինում: Մեկը մյուսի հետ կապ չունի:

762. Վրացին ինչ գին ուզում, թելադրում է մեզ, իսկ այլընտրանքային սահմանը ակամա գները կիջեցնի:

763. Սահմանի բացումը հարևանության դեռ սկիզբն է: Հնարավոր է, որ սահմանը բաց լինի, բայց իրականում փակ լինի:

764. ՄԵնք ներքին խնդիրներ ունենք, որոնք մեզ խանագարում են այս հարցում ավելի թելադրող լինել. դա մեր սոցիալական վիճակն է, անմրցունակ լինելն է...

765. Եկեք հասկանանք, սահմանը հիմա փակ է, թե բաց է: Վրաստանով գնում, շրջանցում ու մտնում ենք Թուրքիա: Է, ինչ տարբերություն:

766. Մենք կնախընտրեինք ավելի զգույշ լինել մեր հարևանների հետ:

767. Ինձ համար անընդունելի է այն միտքը , որ թուրքերը ամեն ինչ բարդում են իրենց նախնիների վրա ու հայտարարում, որ մեղավոր չեն... Ես գտնում եմ, որ նրանք պարտավոր են ներողություն խնդրել, հատուցել փողով և, ինչու չէ, տարածքների մի մասում էլ թույլ տան հայերն ապրել: Թուրքիան պետք է հատուցի իր մեղքերի համար...

768. Եթե նայենք քաղաքական տեսանկյունից, Քոչարյանն ասում էր, Թուրքիան փակել է, թող նա էլ բացի: Այսօր Թուրքիայի շահից է բխում բացելը, ինքն էլ բացում է:

769. Քանի դեռ չեն լուծվել ցեղասպանության և հողերի հարցերը, սահմանի բացումը մեզ կնպաստի միայն տնտեսապես:

770. Խրիմյան Հայրիկը չէր, որ ասեց. <թղթի շերեփով գնացի, երբ մյուսները երկաթե շերեփով ինձ դիմավորեցին...> պիտի հազորանանք:

771. Թող մեր օլիգարխները գնան Մասիսն առնեն:

772. Թուրքերը չեն գա այստեղ երբեք, կամ էլ եթե գան...ի՞նչ տարբերություն ռուս, պարսիկ, թե թուրք:

773. Ոչ ոք Հայաստանում չի կարող ասել, որ թուրք ժողովրդի սովորական քաղաքացին գիտի ճշմարիտ պատմությունը մեր հարաբերությունների մասին: Բաց սահմաններ ու շփում ունենալու դեպքում մենք հնարավորություն կունենանք նրանց ներկայացնել ճիշտը:

774. Ինձ չի հետաքրքրում, թե Թուրքիան ինչ է շահում, ինձ միայն հետաքրքրում է, թե ես դրա դիմաց ինչ եմ վճարում...

775. Ինչո՞ւ ենք մտածում, թե միանգամից տնտեսական զարգացում կլինի, Թուրքիան նախապայմաններով է բացում սահմանը:

776. Դե եթե այդպես վախենում ենք, եկեք բոլորի հետ կտրենք մեր կապերը ու քոռ բվի նման նստենք:

777. Թուրքերը հաղթողի հոգեբանություն ունեն, նրանք գուցե շատ չեն խոսում այդ մասին., բայց մենք շատ լավ ենք հիշում ամեն ինչ..

778. Մենք իրավունք չունենք ներկայումս Թուրքիայի հետ սահման գծելու. այս առումով երկրորդ սցենարն ընդունելի է:

779. Երկրորդ սցենարով սահմանները բացելու դեպքում մենք նոր կռիվ ենք սկսելու՝ կապված Ղարսի պայմանագրի, սահմանների գծի ու այլ հարցերի շուրջ:

780. Պետք է բացվի սահմանը, սակայն պետք է պատրաստ լինել ամեն ինչի:

781. Մենք պետք է պատրաստ լինենք, որ սահմանի բացումից հետո առաջանալու են նոր խնդիրներ:

782. Ծիծաղելի է, երբ նստած մտածում ենք, թե ով ինչ կշահի, ինչ անենք, որ վրացին տուժի... Ժամանակը չէ՞, որ անենք այն, ինչ մեզ է օգուտ:

783. Արևմտյան Հայաստանում հիմա միայն քրդեր են ապրում, որովհետև դա իրենց հողը չի, նրանք վախենում են, որ մի օր հայերը հետ կվերցնեն: բայց հայերը միասնական չեն և դրա համար էլ չի լուծվում ոչ մի հարց:

784. Կարծում եմ, հավանական չի, որ սահմանները բացվեն, իսկ հարաբերությունները մնան լարված: Կարծում եմ, որ շփումները կբերեն ապասառեցման:

785. Այսօր Օբաման է ասում ինչը՝ ինչպես: Մնացած երկրները շղթայական ձևով վարակվում են նրա որոշումներով:

786. Մի քիչ տարօրինակ է, երբ Թուրքիայի նախաձեռնությամբ սահմանի բացումը ներկայացվում է որպես հայկական դիվանագիտության հաղթանակ:

787. Մենք ՄԱԿ-ի անդամ ենք դարձել, նշանակում է մեխանիկորեն ճանաչել ենք այդ երկրի սահմանները:

788. Եթե քոսոտ վրացին արդեն մեր եկեղեցիներն է սեփականացնում, մի դար հետո լրիվ կմոռացվի, որ դրանք հայկական հողեր են... Մեզ մի ճանապարհ էլ է հարկավոր:

789. Պետք է այս փուլում բացել, իսկ գործողությունները կծավալվեն իրենք իրենց:

790. Այսօր սահմանի բացումը չգիտեմ ինչքանով է ճիշտ. թուրքերը սրբություն չունեն:

791. Նույն Թուրքիան դարասկզբին քանի՞ անգամ պայմանագիր ստորագրեց Հայաստանի հետ. Սևր, Ալեքսանդրապոլ, Կարս: Մենք էլ էսօր կարող ենք ստորագրել պայմանագիր, իսկ վաղը՝ հրաժարվել:

792. Թուրքիան առաջինն է ճանաչել Հայաստանի անկախությունը, եթե հիշում եք:

793. Եթե անգամ մեր հողերը վերադարձնեն՝ ես չեմ գնա այնտեղ ապրելու:

794. Այսօր սահմանը գծված է, ու ուզենք, թե չուզենք, մենք դա ճանաչում ենք: Եթե ուժեղ հարևանդ ցանկապատել է իր տարածքը ու դու չես կարող մտնել նրա տարածքը, ո՞նց ես ասում դա քո հողերն են:

795. Սահմանի բացումը Թուրքիայն ձեռնտու քայլ է, միգուցե մի քիչ ձգելուց և ճիշտ քաղաքականություն վարելուց հետո հող էլ կարողանանք վերցնել:

796. Ես չեմ կարդացել այս սցենարները, ոչ էլ ուզում եմ կարդալ: Բայց ես որպես տասներեք շնչից բաղկացած ընտանիքի հայր, երբ փորձում եմ իմ կարծիքը համադրել իշխանությունների քայլերի հետ, հասկանում եմ, որ չկա դիվանագիտություն, կա միայն ուժեղ ու թույլ պետություններ, և պետք չէ սրան-նրան մեղադրել, այլ պետք է ուժեղանալ:

797. Սահմանի բացումից հետո հարուստներն ավելի կհարստանա, իսկ աղքատ խավը կմնա նույնը:

798. Ես մեծ մարդ եմ, ես չեմ գնա մեր պատմական հողերում ապրելու, բայց գուցե իմ թոռները գնան...

799. Քանի Թուրքիան պետք է ԱՄՆ-ին, ոչ մի ցեղասպանության հարց էլ չի լուծվի: Ես մի բան գիտեմ՝ ոչ ոք իր կամքով հող չի տա:

800. Ուժեղի մոտ միշտ էլ թույլն է մեղավոր. նստած խոսում ենք տնտեսական շահերի, քաղաքական անկախության մասին. բայց ես ասում եմ, որպեսզի մեզ հարգեն ու մենք շահենք, պետք է մենք ուժեղանանք, ինչպես հրեաները արեցին:

801. Եթե մեր դիվանագիտությունը ճիշտ վարվի, մենք կշահենք... Բայց շատ լուրջ պետք է մտածել այս մասին:

802. Երկու ընկեր հանդիպում են արջի: Արջը բռնում է դրանցից մեկին, իսկ մյուսը փախչում է ու ասում այդ արջին՝ թող արի: Ընկերն ասում է. «Ես թողնում եմ, ինքը չի թողնում»: Հիմա մենք ինչքան ուզում ենք գոռալ Ցեղասպանության մասին, մեզ բաց չեն թողնելու այնքան ժամանակ, մինչև ուժեղ չլինենք:

803. Հայկական պահանջատիրության մեջ ամենակարևորը հողի և հատուցման խնդիրն է:

804. Մենք ոգևորված ենք, բայց մեր համար սահմանի բացումը գրեթե ոչինչ չի փոխում, իսկ Թուրքիայի համար՝ լրիվ այլ հարց է:

805. Բացառվում է, որ Թուրքիան ճանաչի ցեղասպանությունը:

806. Գիտեք ինչ՝ ավելի լավ է թուրքից կախված լինենք, քան վրացուց: թուրքը գոնե պետություն ունի, իսկ ո՞վ է վրացին:

807. Պահանջատեր լինելու համար, պետք է պահանջ ունենալ ու պահանջին տեր կանգնել:

808. Սահմանի բացմամբ հայ-թուրքական հարաբերությունները կվատանան:

809. Եթե մենք ունենք պահանջ Թուրքիայի նկատմամբ, այսինքն, պատկերավոր ասած, ես հարևանիս դատի եմ տվել, ու հետո ամեն օր գնում եմ հարևանիս տուն ու սուրճ եմ խմում, հարևանություն եմ անում, ապա դատավորը ի՞նչ պետք է անի:

810. Թուրքիան իր դիվանագիտությամբ ավելի ճկուն է և սահմանի բացումով փորձում է փոշի փչել Եվրոպայի աչքերին:

811. Սահմանը ինչի՞ փակեցին...Խաղ էր... Մի խաղ էլ հիմա է...

812. Անկախ սահմանի բացումից ցեղասպանության ճանաչումը մնում է օրակարգային: Այդ ի՞նչ մշակութային ու գիտության զարգացում են ակնկալում :

813. Եթե մենք չենք ճանաչում Թուրքիայի այսօրվա սահմանը, ապա ո՞ր սահմանն ենք բացում:

814. Մենք դարեր շարունակ տուժել ենք մեր բռնած քաղաքականություններից...ԼՂ և ցեղասպանության ճանաչման հարցից պետք չէ հրաժարվել, սակայն պետք չէ դրանք առաջին պլան մղել այս փուլում:

815. Թուրքիան միշտ էլ հրաժարվել է իր պայմանագրերից, չի կատարել իր խոստումները... Մեր նման փոքր պետությունները ոչինչ անել չեն կարող:

816. Մենք ոչ մի երաշխիք չունենք, որ Եվրոպան որևէ կերպ մեր կողքին կկանգնի, ինչպես և չկանգնեց Կիպրոսի կողքին՝նրա կեսը զավթելիս:

817. Այսօր հզոր պետություններն են թելադրում խաղի կանոնները:

818. Մենք ենք այս պետության տերը և մենք պիտի հարցը լուծենք:

819. Ես կողմ եմ սահմանի բացմանը, բայց առանց վերապահումների: Պետք է իմանալ՝ գերտերությունները մեր հանդեպ այնքան հարգալից կլինե՞ն, որքան որ պետք է: Թուրքիան հզոր պետություն է, իսկ մենք...

820. Ինձ թվում է, որ սահմանի բացումը մի քիչ էլ կխանգարի ցեղասպանության ճանաչմանը: Սահմանը կբացվի, մի փոքր տնտեսական աշխուժացում կսկսվի, մարդկանց մոտ կբթանա պահանջը:

821. Հիմա հայ-թուրքական սահմանի վրա ռուսական զորք է կանգնած, բայց երբ սահմանը բացվի, պիտի այդ սահմանին միայն հայ զինվոր կանգնի:

822. Մենք մեր թափված արյունից չենք հրաժարվում, բայց պետք է մի քիչ հետաձգել ԼՂ և ցեղասպանության հարցերը:

823. Ենթահանձնաժողովի ստեղծման դեպքում եթե սկսում ես քննարկել պատմության այդ ցավոտ էջը, դրանով կասկածի տակ ես առնում իսկությունը: Անթույլատրելի է:

824. Սահմանը պիտի բացվի, նախագահի քայլերը ճկուն են, բայց հայ ժողովուրդը պիտի միավորվի սփյուռքի հետ ու լոբինգ անի ամբողջ աշխարհում:

825. Սահմանը մենք պիտի պաշտպանենք, իսկ այս հարցում ի՞նչ է կարծում նույն մեր օլիգարխը: Որտե՞ղ կլինի նա իր բիզնեսով, երբ սահման պահելու պահանջ լինի:

826. Հայաստանի շատ դժվություններ է տեսել և նույնիսկ սահմանի փակ մնալու դեպքում մենք կարող ենք գոյատևել:

827. Ծիծաղս է առաջացնում, որ դու մտածում ես, թե թուրքերը կգան, քեզ կճանաչեն, քո մասին բարի մտքեր կձևավորեն: Թուրք երեխան մեդալը դեմքիս շպրտեց: Ասում ես՝ դեռ նոր պետք է մեզ ճանաչե՞ն:

828. Գերտերություններն իրենց շահերն ունեն, նրանք մեզ հենց այնպես չեն օգնում: Պետք է պահից ճիշտ օգտվել:

829. Սահմանի բացումը կարող է նաև շատ վատ ազդել տեղական արտադրողի վրա:

830. Ինչքան էլ մենք հող ուզենք՝ հող տվող չի լինի, ինչքան էլ որդուս պատմեմ ցեղասպանության մասին՝ ոչինչ չի փոխվի:

831. Մենք յուրահատուկ ժողովուրդ ենք, մինչև դանակը ոսկորին չի հասնում, ունիկալ ու ճիշտ քայլեր չենք անում: Հիմա, եթե չենք կարողանում կողմնորոշվել, եկեք սպասենք, մինչև դանակը ոսկորին կհասնի:

832. Քանի որ սահմանը Թուրքիան է փակել, ապա նա պետք է հիմա բացի իր սահմանը: Իսկ մենք պետք է նախապայմաններ դնենք մեր կողմից սահմանը բացելու համար:

833. Մենք այսքան տարի ապրում ենք փակ սահմաններով ու միչև հիմա չենք մեռել: Նույն ձևով էլ շարունակելու ենք ու առաջ ենք տանելու մեր շահերը:

834. Մենք մի բանակ չենք կարողանում պահել, ուր մնաց մեր վերադարձրած հողերը պահենք:

835. Սահմանի բացումը կարող է վնասել մի քանի հոգու գրպանին, բայց ընդհանուր առումով բնակչությունը կշահի:

836. Հայկական Հարցը մեր պահանջն է, իսկ գերտերությունները այդ հարցը միշտ իրենց շահերով են պայմանավորում, մենք էլ լռում ենք ու հաշտվում: ՉԻ ԿԱՐԵԼԻ ԱՅՍՊԵՍ: Եթե պետք է գոռալու ենք, եթե պետք է պիտի լռենք:

837. Ալտերնատիվ բաց սահմանը մեզ անհրաժեշտ է: Այսօր Վրաստանը մոնոպոլիստ է մեր գլխին ու անկայուն պետություն է: Սա շատ վտանգավոր է:

838. Մենք էլ պետք է սկսենք քարոզել մեր երեխաներին, դրդենք նրանց, որ շփոթվեն թուրքերի հետ, որ նրանք ճանաչեն հայերին:

839. Եթե մեր երկու պետությունները հարաբերություններ սկսեն, երրորդ պետությունները չեն ցանկանա խառնվել մեր հարաբերություններին, հետևաբար չեզոք դիրք ընդունելով չեն ճանաչի ցեղասպանությունը:

840. Հրեան սպասեց-սպասեց, հետո ոտքի կանգնեց, աշխարհ տիրեց, իսկ մենք սպասում, սպասում ենք, բայց հենց ոտքի կանգնելու պահն է գալիս դեմագոգություն ենք անում: Դրա համար էլ ունենք այն, ինչ ունենք:

841. Իհարկե Ռուսաստանը շատ կշահի, բայց դրանից ելնելով մեր վիճակն էլ ինչ-որ չափ կբարելավվի.... Պետք է փորձել հզորանալ:

842. Նույնիսկ այսօր թուրքական մշակույթը շատ վատ ազդեցություն ունի մեր երիտասարդության վրա, իսկ սահմանի բացումով այս վտանգը կավելանա:

843. Որոշակի առումով դա այդպես էլ լինելու է, ցեղասպանության ճանաչումը կասեցվելու է, եթե սահմանը բացենք ու հարաբերություններ խաղանք:

844. Շատ ժամանակ թուրքը անգամ չգիտի հայը որն է, լինում են դեպքեր, որ թուրքերն ավելի վախեցած են հայերից:

845. Եկեք մենք ինքներս մեզ վստահենք: Չե՞ք հոգնել անընդհատ ասելուց, եթե եկել հարցնում ես, ուրեմն մի բան կա:

846. Փակ սահմանները զսպում է մեր տնտեսության զարգացումը, իսկ Թուրքիան շարունակում է զարգանալ նույն տեմպերով: Սա մի քանի տարի հետո բերելու է շատ ավելի լուրջ խնդիրների:

847. Սահմանի բացումը օդի ու ջրի պես պետքէ Ռուսաստանին, որ ճնշի Վրաստանանին: Բայց եթե մի փոքր շահ էլ ունենանք, էլի կարևոր է...Հիմա զրոյական վիճակում ենք:

848. Նույն Օբաման չուզեց վատամարդ դառնալ, ասաց՝ ախպեր, դուք որ ուզում եք նորմալ հարաբերություններ հաստատել, ես ու՞ր եմ խցկվում, ցեղասպանություն ճանաչում, ձեր նոր հարևանությանը խանգարում:

849. Քրդերի համար ստեղծվում է պետություն հյուսիսային Իրաքում, թող գնան այնտեղ:

850. Հարցերը պետք է քաղաքակիրթ կերպով լուծել, բայց բանակը հզորացնել է պետք: Բայց ոչ այնպես ինչպես հիմա ենք <հազորացնում>:

851. Իսկ ես վստահ եմ, որ Օբաման ստիպեց հայերին ու թուրքերին մերձեցման գնալ, որ ինքը ձեռքերը լվանա:

852. Ավելի լավ է մենք մի խողովակ ունենանք սնվելու Իրանի միջոցով, քան մի քանի թունավոր պարունակությամբ խողովակներ:

853. Հիսուն-հարյուր տարի հետո սահմանը այսպես թե այնպես բացվելու է, ու այն ժամանակ թուրքական տնտեսությունը հաստատ կուլ կտա հայակական տնտեսությունը:

854. Մենք տնտեսական շահից ելնելով չպետք է մոռանանք , որ ՀԱՅ ԴԱՏ ունենք:

855. Եթե մենք սահմանը փակ ենք պահում, սահմանը ռուսն է պահում, բայց հա գոռում մենք մեր հողերի մասին, ի՞նչ ենք ստանալու: երազանք...

856. Չկան մշտական բարեկամներ ու թշնամիներ. Պարսկաստանն էլ մի օր կարող է մեզ թշնամի դառնալ: Ալտերնատիվներ են պետք:

857. ԼՂ-ում տալիս են բարձր աշխատավարձ, պայմաններ, տուն, բայց ո՞վ կգնա այնտե՞ղ: Ու այս խելքով մեր պատմական հողերն ենք սպասում:

858. Ռոմանտիկ ազգ ենք, սիրում ենք երազանքներով ապրել:

859. Թուրքիան կփորձի նաև դեմոգրաֆիկ աճով զավթել Հայաստանը:

860. Մենք միշտ մտածում ենք՝ Կամ լրիվ, կամ ոչինչ: Բայց մի՞թե մենք հիմա ի վիճակի ենք ունենալ ամբողջ Արևմտյան Հայաստանը:

861. Քիչ առաջ հենց մտածում էի՝ գուցե մենք պատրաստ չենք դեռ որոշում կայացնելու: Ու դժվար է ասել, թե մեր շահերից է հաստատ բխում սահման բացելը: Բայց մտածում եմ, որ մի բան պետք է փոխել:

862. Սահմանը բացելուց հետո անբարոյականությունը կտիրի Հայաստանում, բիզնեսն էլ կանցնի թուրքերի ձեռքը:

863. Մենք հիմա չգիտենք էլի, թե ով է մեր անվտանգության երաշխիքը. ահա թե որն է ցավը:

864. Առաջին անգամ հնարավորություն է ստեղծվել, որ հայկական պետությունը բանակցի Թուրքիայի հետ, և ոչ թե էս կամ էն երկրի թագավորը: Պետք է օգտագործենք այս շանսը:

865. Սահմանի բացման համար նախապայմաններ թելադրողը մենք ենք լինելու:

866. ՄԻ քանի տեսակ վտանգներ կան, քանի որ մեր ազգը օտարամոլ է: Պետք է կառավարական մակարդակով արգելել խառը ամուսնություններ, բնակարանների գնում և այլն, թեև դա միջազգային օրենքների խախտում է:

867. Ինչի ենք խորացել. Շատ պարզ հարց է, ճանապարհը բացում ենք թե ոչ: վերջ:

868. Մտածում եմ, որ մեր ամենացավոտ հարցը ցեղասպանության ճանաչումն է: Հարցը լուծված լիներ, հարաբերություններ էլ կզարգացնեինք:

869. Առաջին հերթին պետք է զարգացնել տնտեսությունը, բացել գործարանները, դառնալ թելադրող պետություն...Դրանից հետո շատ հարցեր կլուծվեն:

870. Առած կա. եթե ուզում ես լեռներն իրենց տեղը փոխեն ու հավատում ես դրան, ապա լեռներն իրենց տեղը կփոխեն, բայց մարդը երբեք չի փոխվի :

871. Հայաստանում էլ ոչ մի բան չկա ծախելու, վտանգ չեմ տեսնում... Ինչ առնելու էին, արդեն առել են:

872. Մենք կուշտ ենք մեր ձեռքով կրակից շագանակ հանելուց:

873. Եթե հիմա Հայաստանը հետ քաշվի, Թուրքիան կասի, տեսաք, մենք առաջարկեցինք, դուք մերժեցիք: Եթե խաղում ենք, արդեն խաղի մեջ ենք մտել, ապա պիտի մինչև վերջ խաղանք:

874. Շատ հնարավոր է, որ սահմանի բացումով Թուրքիան փորձի լռեցնել Հայաստանը:

875. Է՛, հազար տարի գցում բռնում ենք, թե ով ինչ է ուզում, ով ինչ է շահում: Բայց էդպես էլ բան չենք անում:

876. Մենք իհարկե հասկանում ենք, որ Թուրքիան ամեն բան անում է իր ու Ադրբեջանի շահերի համար:

877. Բարեկամական հարաբերությունների դեպքում ցանկացած հարց ավելի հեշտ է լուծվում:

878. Ես կողմ եմ սահմանի բացմանը, բայց դեռ ժամանակը չէ:

879. Մենք չենք կարող ազատ ասել, որ ազատ ենք մեր արտաքին քաղաքականության ձևավորման մեջ: Գերտերություններ են որոշում գլոբալ քաղաքականությունը, իսկ մենք կարող ենք հարմարվել, կամ ճշգրտումներ անել մեր մասով:

880. Թուրքիան Եվրամիություն մտնելու խնդիր ունի, դրա համար էլ շտապում է սահմանը բացել:

881. Պետք է ուժեղ լրագրող, ուժեղ զինվոր, ուժեղ պատմաբան ու դիվանագետ լինել:

882. Կարծում եմ, որ ամեն մեկն իր գործով զբաղվի այս հարցը շատ արագ կլուծվի:

883. Մեր էներգետիկան, երկաթուղին ռուսների ձեռքում են: Ռուսների՝ խաղի մեջ մտնելու դեպքում մենք «աուտ» ենք լինելու:

884. Ով վճարում է, նա է պատվիրում երաժշտությունը, այսինքն Հայաստանը գործիք է դառնալու մեծ տիրությունների ձեռում:

885. Ես ընդամենը հասարակ հայ եմ յոթանասուն տարեկան: 75 տարի ես միշտ լսել եմ Ցեղասպանության ու մեր հողերի մասին: Բայց հինա դրա ժամանակը չէ: Պետք է բարելավել հարաբերությունները մեր հարևանի հետ, որպեսզի զարգանանք:

886. Մենք ոչ մի պայմանի դեպքում չենք կարող զիջել մեր քաղաքական շահերը որևէ այլ տեսակի շահի:

887. Մենք սահմանը բացելով նպաստում ենք նրան, որի Թուրքիան դառնա ԵՄ անդամ:

888. Այսօր մենք չենք կարող կանխատեսել Թուրքիայի հետագա քայլերը և մենք պետք է այսօրվանից սկսենք պատրաստվել ամեն տիպի զարգացման:

889. Ես հասարակ թոշակառու եմ ու կշահեմ սահմանը բացելուց: Սահմանների փակ վիճակից օլիգարխներն են շահում:

890. Ամբողջ պատմության մեջ ռուսի ու թուրքի շահերը համընկան ու...Կարսի պայմանագիրը կապին գլխներիս: Պետք է զգույշ լինել:

891. Մարտունուց շատ կանայք գնացել են Թուրքիա աշխատելու ու ոչ միայն չեն վերադարձել, այլ իրենց այդ բարոյական կերպարով մեզ նսեմացնում են:

892. ՌԴ արտգործնախարարությունը հայտարարություն է ընդունել, թե Հայաստանը և Թուրքիան հավասար պետություններ են իր համար: Հիմա ասեք. եթե պատերազմ լինի, Ռուսաստանը նման պայմաններում կգանգնի՞ մեր թիկունքին, թե ռուս-թուրքական նախորդ պատերազմի օրինակով մեզ մենակ կթողնի:

893. Իիիի, գոնե գնանք մեր նախնիների հողը տեսնենք:

894. Եթե մենք մեր էներգիան տալիս էինք ռուսին, մենք չգիտեի՞նք, որ նրանից կախվածության մեջ ենք լինելու : Ուրեմն հիմա էլ ինչու՞ ենք զարմանում, որ նրանք առաջ են քաշում իրենց շահերը:

895. Հինգերորդ սցենարը երազ է...Մենք պատերազմին ենք հավատում: Հողերը արյամբ են վերցնում:

896. Եթե Նախագահին ասել են գնա սահմանը բացի, այլ տարբերակ չկա, պետք է բացել...մենք դեռ շատ թույլ ենք տարածաշրջանում ինքնուրույն որոշումներ կայացնելու համար:

897. Մեր ուժը մեր միասնականության մեջ է: Այսօր ունենք յոթանասուն սուտ կուսակցություն ու ամեն մեկն իրենն է ասում:

898. Մենք հստակ պետք է ասենք, որ Արևմտյան Հայաստանի հողերը մերն են, Ցեղասպանությունը տեղի ունեցած փաստ է, ու ցանկացած բանակցության գնանք միայն ու միայն այս հիմքով:

899. Հիշու՞մ եք՝ Իսրայելը ոնց վերցրեց իր հողերը... Մենք պիտի կարողանանաք միասին լինել ու աշխարհում ներկայանալ որպես ազգ: Մենք բոլորս պիտի մտածենք երկրի մասին:

900. Այ տնաշեն, բա խելոք մարդը հայի հետ սահման կբացի՞...

901. Պետք է Հայաստանի իշխանությունները այսօր արդեն ունենան իրենց ձևավորված քաղաքականությունը, որպեսզի հետագայում խուճապ չսկսվի:

902. Ռուսաստանը մեր կողքին կմնա, որովհետև մենք սեպ ենք Թուրքիա, Ադրբեջան և Վրաստան եռանկյունու մեջ:

903. Դաշնակները դեմ են, որովհետև վախենում են իրենց բիզնեսների համար:

904. Մեր բոլոր խնդիրները միասնության բացակայության մեջ է: Երբ որ հասկանանք, որ կարևոր պահերին պետք է միավորվենք, ամեն ինչ լավ կլինի:

905. Դաշնակն աչքիս առաջին մարդն է, որ չի ուզում թուրքական արխիվ բացվի:

906. Ես գտնում եմ, որ մենք չենք շահի սահմանը բացելուց ու տանուլ կտանք այս կռիվը: Էսօր Էրդողանը անընդհատ ասում է, որ սահմանը կբացվի միայն Լեռնային Ղարաբաղը ազերիներին վերադարձնելուց հետո: Թուրք հմուտ դիվանագետը զուր բաներ չի ասում:

907. Լենինն ու Աթաթուրքն արդեն մեկ անգամ համաձայնության եկել ու մեր հողերը վերցրել են: Է, նույն ռուսն ու թուրքն են այսօր էլ:

908. Մենք ինքներս մեզ հետ չենք լեզու գտնում, ուր մնաց թե հարևանի հետ գտնենք. հետն էլ թշնամի հարևանի:

909. Սփյուռքը դրսում ինձ չի օգնում, ինչի պետք է իրան հարցնեմ՝ ինչ անել:

910. Պետք է հզորացնենք տնտեսությունը, բանակը ու հետո խնդիրներ բարձրացնենք...

911. Արդյոք մենք կարող ենք սահմանի բացման հաջորդ օրը պահանջել ցեղասպանության ընդունումը: Եթե ոչ, ապա պետք չէ սահմանը բացել, թեկուզ և տնտեսապես տուժենք:

912. Այսօր մեր մի կտոր Հայաստանի հողերի իննսուն տոկոսը չի մշակվում: Արևմտյան Հայաստանի հողերը որ մեզ նվիրեն, ի՞նչ ենք անելու. նոր բեռ ենք բարդելու մեր էրեխեքի ուսերին:

913. Վախենում ենք խոսելու իրավունքը կորցնելու մասին: Իսկ ես հարց եմ տալիս, էսքան որ խոսել ենք, ի՞նչ է եղել...

914. Հնարավոր է արագ զարգացումներ լինեն: Հասնելով իր ցանկությանը՝ դառնա Եվրամիության անդամ, կարող է կրկին փակել սահմանը:

915. Մենք ոչ թե շատ պիտի խոսենք, այլ խելացի և հիմնավոր:

916. Իսկ սփյուռի մասին մոռացե՞լ եք, նրանք էլ են չէ՞ հայ... Ի՞նչ կարծիքի են նրանք:

917. Թուրքիան մեզ համար անհասկանալի երկիր է, ամեն բան էլ սպասելի է:

918. Թուրքիայի հետ հարաբերություններում պետք է շատ զգոն լինել:

919. Եթե սահմանը բացելուց հետո ռուս սահմանապահը պետք է գնա այստեղից, ապա ես համաձայն չեմ:

920. Ցանկացած հայ մարդ, եթե գնա բանակցությունների, անհնար է, որ չելնի Հայաստանի ազգային շահերից:

921. Պետք է ոչ թե ասել, թե ով ինչ է շահում, այլ գտնենք ինչ-որ հնարավոր շահեր այլոց հետ ու այդպես առաջ գնալ: Չեմ հասկանում. ինչու՞ մեզ կարող են օգտագործել, իսկ մենք չենք կարող իրենց օգտագործել:

922. Սփյուռքին չի կարելի նեղացնել, բայց և նրանց չուզելը քիչ է: Մենք անընդհատ բաժանվում ենք երկու մասի՝ սփյուռք և հայաստանցիներ: Դա շատ սխալ է:

923. Ճիշտ դիվանագիտության շնորհիվ կկարողանանք պահից օգտվել ու մեզ համար ձեռնտու որոշումներ կայացնել:

924. Շոր առնելու թե հանգստանալու համար որ գնում ես, թուրքը խոնարհվում է, ասում է իմ ախպերն ես, ամեն բան քեզ համար պատրաստ է անել: Բայց երբ ասում ես Անի, Վան... պատի նման կանգնում է քո դեմ:

925. Եթե անգամ իրավաբանորեն բաց լինի սահմանը, ռեալ հարաբերություններ դեռ չեն սկսվի:

926. Մենք մի բանաստեղծություն ունեինք չէ՞. <Մենք մեզ ոչ ոքից չենք գերադասում>: Իսկ ինչո՞ւ...

927. Այսօր մեր օլիգարխները ի՞նչ են անում պետությունը զարգացնելու համար...Ամեն մեկը մի դղյակա սարքում ու վայելում... Բա մեր մասին ո՞վ պիտի մտածի:

928. Սփյուռքը պետք է ուրախ լինի մեր պետության ամրապնդման համար, այլ ոչ թե խոչընդոտի:

929. Թուրքին լավ են չէ ճանաչում. էլ ինչի՞ց ենք է վախենում:

930. Ֆրանսիայի պես երկիրը ճանաչել է ցեղասպանությունը, ասելու ենք՝ սպասիր, մենք հանձնախումբ ստեղծենք, մի հատ քննենք, տեսնենք եղել է թե չի եղել.... Տանուլ ենք տալիս արդեն հիմա:

931. Կոնկրետ մեխանիզմներ են անհրաժեշտ. օրինակ, եթե Թուրքիայից Հայաստանից լոլիկ է մտնում, դա պետք է հստակ որոշված հարկերի ենթարկվի:

932. Թեկուզ և որոշ թուրքեր այսօր ընդունում են անցյալի իրենց սխալները, բայց միևևնույն է, գենետիկորեն նրանք չեն փոխվում՝ թուրքը մնում է թուրք:

933. Ամենավտանգավորը էն ա, երբ թուրքի ու ռուսի շահն ա բռնում իրար:

934. Մեր պապերի գերեզմանոցները քանդում են, դուք ասում եք բարեկամություն ենք սկսում: Տնաքանդի հետ ո՞նց կգնաս բարեկամանալու:

935. Մեր սահմանամերձ տարածքներում քրդերն են, ինչու՞ եք բացառում, որ Թուրքիան դրանց չի դրդի դեպի Հայաստան:

936. Խելոք մարդն ուրիշի սխալների վրա ա սովորում, իսկ հիմարն իրա: Բայց մենք ոչ ուրիշի սխալմներից ենք խերվում, ոչ էլ մեր:

937. Առանց մերոնց հետ պայմանավորվելու երեկ Էրդողանը ասաց, որ հոկտեմբերի 10-11-ին արձանագրությունները պետք է ստորագրվեն: Էլ ի՞նչ ենք քննարկում:

938. Մենք վաղուց անցել ենք Թուրքիայի ազդեցության տակ, թե մեր տնտեսությունով, թե մշակույթով:

5. ՀՐԱԶԴԱՆՈՒՄ
կայացած հանրային քննարկման ընթացքում արտահայտված մտքերը

30.09.2009

939. Հայաստանը պահանջատիրական երկիր է, մենք չենք կարող լռել: Եթե հայը լռի, ուրեմն կորած է:

940. Մի ձեռներեցից մինչև հիմա չլսեցինք, որ սահմանը բացելու դեպքում գները կիջնեն:

941. Եթե Հայ դատի մասին խոսակցությունները փակվեն, ուրեմն անիմաստ է սահմանի բացումը:

942. Դու ինքդ ասացիր, սահմանը բացելու դեպքում ինչ է լինելու. ոչ մի էական տեղաշարժ:

943. Մենք դարերով հո թշնամիներ չենք մնալու. գալու է ժամանակ, չէ՞ որ պետք է համագործակցենք:

944. Եթե առաջարկված նախապայմանները ստորագրվեն, մենք հետագայում ոչ մի հիմք չենք ունենա հող պահանջելու և խոսելու:

945. Ցանկացած որոշում պետք է ի օգուտ Հայաստան պետության լինի: Այս սցենարը այդ հնարավորությունը չի տալիս:

946. Հետևանքն այն կլինի, որ ձեռներեցը նոր ճանապարհ է գտնելու, իսկ մենք տուժելու ենք:

947. Մեր արդար պահանջատիրությունը երբեք չի անտեսվելու, հայը չի լռի:

948. Համագործակցություն չի նշանակում մոռանալ...

949. Հայուհիներից շատերը մարմնավաճառությամբ են զբաղվում Թուրքիայում, սահմանը բացվելուց հետո շատ ավելի հեշտանալու է:

950. Մենք փոքր հասակից դաստիարակվել ենք այն մտքով, որ մենք երկրի պահանջատեր ենք: Իսկ այս սցենարը ընդամենը տնտեսական փոքր օգուտներ է ենթադրում:

951. Եթե պետք է խոչընդոտի ցեղասպանության ճանաչմանը, ապա չարժե բացել:

952. Սահմանի բացումը բեռնափոխադրումների առումով նորից կդառնա մոնոպոլիա, այդ իսկ պատճառով չի բերի գների իջեցման:

953. Եթե նախապայման չկա, թող բացվի, դրանից վնաս չկա:

954. Քարոզչությունն ու լուսաբանումը հանրապետությունում թերի է կատարվում, ամեն ինչ ներկայացվում է այնպես, ինչպես ձեռնտու է ղեկավարներին:

955. Լուռ ապաշրջափակում չի կարող լինել, քանի որ արդեն իսկ լուռ չէ:

956. Մենք սահման ենք ուզում բացել մի պետության հետ, որը մեզ չի ճանաչում որպես ազգ: Վտանգավոր է:

957. Ի վերջո մենք այսքան ծախս ենք անում, քննարկում ենք այս ամենը, արդյո՞ք մի օր Թուրքիան չի ասի էլ չեմ ուզում, փակում եմ:

958. Խնդիրն առանց նախապայմանների բացումն է, ոչ թե սահման բացել կամ չբացելը:

959. Վրացիները, քրիստոնեա ազգ լինելով, ի՞նչ խնդիրներ են մեզ համար առաջացնում: Բա ադրբեջանցիներից կամ թուրքերից ի՞նչ սպասենք:

960. Կտրականապես դեմ եմ սահմանի բացմանը, ոնց կա թող այդպես մնա:

961. Անհրաժեշտ են երաշխիքներ թուրքերի հետ գործ բռնելու համար, օրինակ միջազգային գարանտներ:

962. Եթե ուզում ենք պետություն լինել, պետք է անպայման սահմանը բաց լինի:

963. Ընդհանուր առմամբ անորոշությունը մեծ է, դժվար է կանխատեսում անել, թե ինչ կլինի:

964. Աշխարհում ոչ մշտական բարեկամներ կան, ոչ մշտական թշնամիներ: Ինչո՞վ է մեղավոր մեր սերունդը, որ փակել ենք նրանց բոլոր ճանապարհները:Ոնց որ պարկի բերանը փակես ու չթողնես շնչի: Բոլորին համարում ենք թշնամի ու փակում սահմանները: Բա հետո՞

965. Հարցը երաշխիքն է. այ գարնանն էլ պարարտանյութը մոտ 5900 դրամով ներկրվեց, բայց վաճառվեց 10000 դրամով: Ի՞նչ երաշխիքներ կան, որ նույնն էլ հետո չի լինի:

966. Եթե հարևանդ լավ վիճակում է, ապա դու էլ լավ կլինես:

967. Այդ պատմական հանձնաժողովը ի՞նչ է քննարկելու: Ցեղասպանությունը ընդունված փաստ է լուրջ պետությունների կողմից: Իմ պապերին մորթողների հետ ես ի՞նչ պետք է քննարկեմ:

968. Այս արձանագրությունը իդեալական չէ, բայց մենք կգանք ընդանուր հայտարարի Թուրքիայի հետ, և ներքին համաձայնության նույնպես:

969. Ցեղասպանության հարցը չի կարող մոռացվել, սակայն պետք է հասկանալ, որ վաղ թե ուշ միասին պետք է ապրենք:

970. Անհրաժեշտ է հարևանների հետ կապ ստեղծել՝ տարբեր ոլորտներում, սակայն չպետք է մոռանալ ցեղասպանության փաստը:

971. Չկա երաշխիք, որ գները կեժանանան, բա էլ առանց երաշխիք ինչի՞ բացենք:

972. Թուրքերը չեն փոխվել, մինչև հիմա Ղարսի պայմանագրից են խոսում, այս պայմաններում, ոչ մի տնտեսական առաջընթաց չի լինի:

973. Ազգային շահը երբեք չի կարելի փոխարինել տնտեսական շահով:

974. Մեր ժողովրդին դրել են հիմարի տեղ: Գրված է, որ հնարավորություն ենք ունենալու հոսանք վաճառել թուրքերին, բայց մենք միշտ էլ այդ հնարավորությունը ունեցել ենք ու վաճառել ենք:

975. Մենք պետք է փորձենք խուսափել թշնամության արտահայտումից թե՛ հայկական, թե՛ թուրքական կողմից:

976. Մեր սկզբունքը պետք է լինի «շան հետ ընկերություն արա, բայց փայտը ձեռքիցդ մի գցի»

977. Հարց եմ տալիս. Պետությունը մշակել է արդյո՞ք ազգային խնդրի կարգավորման մասին ռազմավարություն...

978. Կարող է գեղեցիկ հագնված եմ, բայց այ, հարց է, թե ինչ սննդամթերք եմ օգտագործում, ինչպես է այն ներազդում առողջությանս վրա:

979. Մենք ամեն դեպքում պետք է չմոռանանք, որ գործ ունենք Թուրքիայի հետ:

980. Առանց նախապայմանների չենք սկսել, Թուրքիան արդեն երկու նախապայման դրել է... Արդեն վատ է:

981. Սահմանի բացումը պետք չէ կապել Ղարաբաղի հարցի հետ, քանի որ սահմանի բացումը կրելու է ավելի տնտեսական իմաստ:

982. Թուրքերը ամենաանորակ ապրանքները կուղարկեն Հայաստան ու ոչ մի հսկողություն էլ չի լինելու սահմանի վրա: Մենք էլ ամենլավն ենք ուղարկելու հակառակ ուղղությամբ: Մենք միշտ ազնիվ ենք եղել, իսկ թուրքը միշտ մեջքից խփել է:

983. Սա համազգային հանրաքվեի խնդիր է ...Սա միայն մեր խնդիրը չէ:

984. Հույս մի դրեք ներդրումների վրա, ԽՍՀՄ-ն էլ էր ներդրումներ անում...

985. Մեզանից գրեթե յուրաքանչյուրը եղեռնի զոհի կամ գաղթականի ժառանգ է: Մեր հողերը դրանց ձեռքում են, ամեն անգամ սրտի ցավով եմ այդ մասին մտածում:

986. Թուրքերը հաստատ հայերին շատ վատ են ընդունելու, ես սահմանի բացումից լավ բան չեմ սպասում:

987. Այսօր Արևմտյան Հայաստանը շատերիս համար «օդ» է: Սահմանի բացման դեպքում մենք հնարավորություն կունենանք իրականում տեսնել մեր հողերը ինչը ավելի կմեծացնի մեր կապվածությունը մեր ազգային շահերին:

988. Սահմանի բացումը իր հետ բերելու է ոչ միայն տնտեսական զարգացում, այլև կբերի թշնամության նվազեցմանը և հարաբերությունների կարգավորմանը: Մարդիկ միմյանց հետ շփվելով ավելի հեշտ կարող են լուծումներ տալ խնդիրներին:

989. Ես միանշանակ դեմ եմ սահմանը բացելուն: Միակ ոսկոռն ենք մուսուլմանական աշխարհի կոկորդում, իսկ հիմա դիմացները կբացենք:

990. 21-րդ դարում կարելի է այլ ճանապարհներ գտնել, քան սահմանի բացումը:

991. Ժամանակը ամենաճիշտ բժիշկն է, ամեն ինչ պիտի բերի իր տեղը գցի:

992. Սահման հատե՞լ եք վերջերս: Հապա համեմատեք մեր սահմանապահին ու օտարին: Ես ապրանք որ բերեմ, մեր սահմանին թաքցնելու եմ, որովհետև ինչ ասես կարող եմ անցկացնել: Մեր սահմանները շատ բաց են:

993. Բացենք սահմանը, բայց պետք է նախապես պատրաստ լինենք մեր շահերը լիովին պաշտպանելու: Այսօրվա դրությամբ ես դրանում կասկածում եմ. պատրաստ չենք:

994. Տնտեսական գործընթացները Հայաստանում չի կարելի կապել սահմանի բացման հետ: Առանց այդ էլ կզարգանանք:

995. Դարեր էլ անցնեն, թուրքը հային նայելու է որպես զոհի:

996. Ցանկացած հարաբերությունների պարագայում վտանգ միշտ էլ կա. նույն վտանգները կան և՛ թուրքերի պարագայում, և՛ պարսիկների ու վրացիների... Հիմա ի՞նչ, գնանք բոլոր սահմանները փակե՞նք...

997. Սահմանը մենք ե՞նք փակել: Ո՛չ: Ով փակել է, նա էլ թող բացի...:

998. Թմրամիջոցի տրանզիտ լինելն էլ վատ չէ, որոշակի նյութական օգուտ էլ կստանանք:

999. Հնարավոր է, որ շատ էլ լավ լինի, եթե սահմանը չբացենք:

1000. Պետք է գտնել երկու երկրների համար ընդունելի մեկ ընդհանուր նպատակ:

1001. Հենց հիմա տնտեսությունը շահում է, բայց ոչ մերը՝ վրացիներինը:

1002. Մենք մեր ապագա սերունդներին պատասխան պիտի տանք ու հիմքեր ստեղծենք զարգացման համար: Դրա համար էլ սահմանի բացումը կարևոր է:

1003. Եթե արդարություն կա, գոնե պիտի ստիպեին, որ մեզանից ներողություն խնդրեին և ոչ թե հիմա, որ ընկել ենք դրանց ոտքերը:

1004. Սահմանը բացելու դեպքում հիմնական հարցը չի լուծվի, հայոց պահանջատիրության հարցը կմնա առկա: Հարցի միակ լուծումը մեր հողերը հետ բերելն է:

1005. Պատմության ընթացքում երբևէ չի եղել մի դեպք, որ աշխարհի տերությունները պաշտպանեն հայերի շահերը: Միշտ խաբել են: Այս անգամ էլ են խաբում: Թուրքիան իր աշխարհագրական դիրքով միշտ ճնշում է գործադրում աշխարհի վրա:

1006. Ապրել ենք առանց թուրքի և կշարունակենք ապրել...

1007. Ժամանակն է, որ մենք մի քիչ ոտներս կախ գցենք ու սպասենք... Թուրքիան ստիպված կլինի ընդունել մեր պայմանները:

1008. Մենք ամեն կերպ պետք է ստիպենք, որ Թուրքիան ընդունի ցեղասպանությունը: Սահմանի բացումը թույլատրելի է միայն ցեղասպանությունը ընդունելուց հետո: Միայն տնտեսական կարիքների համար չի կարելի բացել սահմանը:

1009. Սահմանը բացելու ժամանակ ինչ-որ թուղթ ստորագրելու է, չէ՞, ուրեմն այդ նախապայմանի դեպքում ցանկացած անգամ ցեղասպանության հարցը բարձրացնելիս մեզ կսպառնան ու սահմանը կփակեն:

1010. Մենք հաջողություն կունենանք, եթե «հոգեբանական հեղափոխության» ենթարկենք թուրք պատմաբաններին:

1011. Առանց նախապայմանների պետք է բացել սահմանները..Ուրիշ ոչ մի դեպքում:

1012. Նախ պետք է կայանանք ինքնուրույն, հետո նոր հարաբերություններ հաստատենք հարևանների հետ: Մենք դեռ պատրաստ չենք:

1013. Անընդունելի է գոյություն ունեցող սահմանների ճանաչումը ըստ այս արձանագրությունների, որը նշանակում է «խայտառակ» Կարսի պայմանագրի վավերացում:

1014. Չի կարելի կտրուկ լինել և ասել, որ սահմանի բացումը թույլատրելի է միայն ցեղասպանության ընդունումից հետո: Հարկավոր է գտնել միջանկյալ լուծում:

1015. Նախապայման չպետք է լինի ոչ իրենց, ոչ մեր կողմից:

1016. Մենք չենք հրաժարվելու մեր պահանջներից:

1017. Պետք է ազատվել վրացական կախվածությունից, սահմանը պետք է բացել:

1018. Մենք չենք կասկածում, չէ՞, որ ցեղասպանություն է եղել, էլ ինչի պիտի պատմական հանձաժողով ստեղծվի:

1019. Երկրորդ սցենարով այն տպավորությունն է, որ ընդամենը միջազգային հանրության աչքին բարձրանալու համար ենք գնում բոլոր քայլերին:

1020. Եթե հարաբերություններ սկսենք, ուրեմն մեր պահանջների մասին այլևս խոսելը կդառնա անթույլատրելի:

1021. Հարկավոր է սահմանը բացել, կատարել ինչ-որ դրական քայլ և, ներգրավելով այլ պետությունների, բարելավել հարաբերությունները:

1022. Թուրքիայի սահմանը պետք չէ ճանաչել, բայց դիվանագիտական հարաբերություններ պետք են:

1023. Եկել է ժամանակը, որ Վրաստանի վրա պետք է մատ թափ տալ, սահմանի բացումը դրա սկիզբը կլինի:

1024. Երկրորդ տարբերակը հավանական չէ, որովհետև հենց սահմանները բացենք ու հարաբերություններ ունենանք թուրքերի հետ, այլևս չենք կարողանալու ցեղասպանության ու հողերի հարցը բարձրացնել միջազգային ասպարեզում: Միանշանակորեն պարտվելու ենք:

1025. Սահման որ չճանաչենք, էլ ո՞նց հետները հարբերություններ ունենանք:

1026. Թուրքիան տարածաշրջանում Ամերիկայի առաջին դաշնակիցներից է, դրանում է շահագրգռվածությունը:Արդյունաբերության աճի հետ կավելանան նաև էկոլոգիական խնդիրները:

1027. Եթե մաքսային ճիշտ քաղաքականություն վարեն, Հայստանը կշահի:

1028. Այսօր Թուրքիայում թուրքացած, բայց գենետիկորեն զտարյուն հայերը շատ մեծ թիվ են կազմում: Մենք պետք է կարողանանք նրանց մոտ արթնացնել հայի ինքնագիտակցությունը ու օգտագործել նրանց ներուժը:

1029. Ցանկալի է երկրորդ տարբերակը: Թող տնտեսական հարաբերությունները լինեն չնչին մակարդակի, բայց չի կարելի հրաժարվել պահանջատիրությունից:

1030. Եթե հարաբերությունները բարելավվեցին և շփումը սերտացավ, ապա ժամանակի հետ գերտիրությունները կփորձեն ստիպել մոռանալ ցեղասպանության հարցը:

1031. Նախ տեսնենք, թե ով ումից է կախվածության մեջ. եթե մենք ենք կախվածության մեջ, ուրեմն ցավը մերն է, իսկ խնդիր լուծելու հնարավորությունը՝ իրենցը:

1032. ՄԵնք մեր հարաբերությունները հաստատենք հիմա, առանց նախապայմանների ու հետո հող էլ կուզենք, ճանաչել էլ կտանք:

1033. Ես կողմ կլինեմ սահմանի բացմանը, միայն եթե տնտեսական լուրջ հսկողություն լինի սահմանի վրա ու քաղաքականապես չպարտվենք: Բայց չեմ կարծում, թե սա հնարավոր է:

1034. Սահմանի բացումը պետք է որոշվի հանրաքվեի միջոցով և ոչ թե անհատների մակարդակով, քանի որ այդ դեպքում կխոսեն անձնական շահերը:

1035. Ամեն մի հարց իր ժամանակն ունի, հիմա սահմանը բացելու ժամանակն է, իսկ հետագա զարգացումն արդեն ապագայի հարց է:

1036. Թուրքի դիվանագիտական խելքը ոչ մեկը չունի... սա պետք է հաշվի առնենք:

1037. Մեր ժողովուրդը ծախվող ժողովուրդ է, փողը որ տեսան, կգնան այնտեղ աշխատելու:

1038. Փակ սահմաններով սցենարը ընդհանրապես ոչ մի առավելություն չունի:

1039. Թուրքական կապիտալի մուտքը Հայաստան պետք է միանշանակ վերահսկվի:

1040. Ստեղծված իրավիճակում Արևմուտքը մի ձեռքով երկու ձմերուկ է բռնում:

1041. 90 տարի այս հարցը քնած է մնացել, երբեք հայն ու թուրքը չեն նստել նույն սեղանի շուրջ իրենց կնճռոտ հարցերը քննարկելու: Հիմա լավ հնարավորություն ունենք:

1042. Մի օր սահմանը հաստատ բացվելու է, բայց այսօր , նախապայմանների առկայության մեջ, հնարավոր չէ..

1043. Ղարաբաղի հարցը մենք զենքով ենք լուծել, իսկ ցեղասպանության հարցը ու հողերի հարցը զենքով լուծելի հարց չէ:

1044. Ում տիրապետությունը, ազդեցությունը մեծ է մեր երկրում, նրա լեզուն ու մշակույթն էլ մեզ պարտադրվելու է: Նախկինում պարսկերեն են խոսել,դեռ վերջերս ռուսերեն էինք խոսում, հիմա էլ նոր կախվածություն է առաջանում՝ թուրքից: Մնում է թուրքերեն խոսենք, թուրքականն ուտենք ու թուրքականը կրենք:

1045. Մենք միշտ դիվանագիտություն ունեցել ենք, բայց առաջնորդ չենք ունեցել:

1046. Արդյո՞ք սահմանի բացմամբ մենք չենք վնասելու Ղարաբաղի հարցին: Միգուցե արժե նախ այդ հարցը լուծել, հետո ավելի անկաշկանդ կերպով բանակցել Թուրքիայի հետ:

1047. Պարսիկները հայերի օգնությամբ Հայաստանում մեծ սեփականությունների տեր են դարձել: Նույնը կանի թուրքը՝ ավելի մեծ ծավալներով:

1048. Ես ԼՂ-ից եմ ու չեմ ուզում թուրքերի հետ շփում:

1049. Մեր նկարիչ ընկերներից մեկը արդեն հինգ տարի Թուրքիայում է, այնտեղ ցուցահանդեսներ է ունեցել, նրան շատ լավ ընդունում են այնտեղ՝ առանց հիշելու նրա ազգը:

1050. Սահմանի բացումը կնվազեցնի տրանսպորտային ծախսերը, կսկսվի մրցակցություն, և, ի վերջո, կշահի հասարակ ժողովուրդը:

1051. Փակ սահմանը լավ չէ, ապագա չէ, բայց հանուն հացի սահման բացել չի կարելի: գաղափարով պետք է ապրենք:

1052. Այսօրվա սահմանը մեզ պարտադրված է, մենք չենք ճանաչում այն ու չենք էլ ճանաչի:

1053. Ազգային շահը առաջ մղելու համար ավել լավ է բաց սահմաններ լինեն:

1054. Տնտեսական և քաղաքական շահերն այդ հարցում պետք է հավասարապես պաշտպանվեն:

1055. Թուրքականը կլցվի երկրով մեկ: Թուրքերի ելումուտը կակտիվանա, ու վախենամ, սերունդի գենոֆոնդի վրա լուրջ կազդի: Մեր քաղաքում արդեն պարսիկ երեխաներն են շատացել: Հիմա չինացիներ ունենք, մյուս տարի արդեն չինացիներից երեխաների կսպասենք: Իսկ երբ թուրքը գա...

1056. Պետք է որևէ բան մտածել թուրքերի հետ ամուսնությունները արգելելու:

1057. Եթե մենք ստիպենք ընդունել ցեղասպանությունը, ապա կարող ենք այլևս չբացել սահմանը:

1058. Ճանապարհ է բացվելու, ավելի կթեթևանա մեր վիճակը:

1059. Եթե մեկից նեղացած ես, առանց նրա հետ կիսվելու, բացվելու հնարավոր չէ հասնել հարաբերությունների վերականգման: Հիմա նույն թուրքերը շատ հարցերի պատասխան չունեն:

1060. Հայաստանը իհարկե կշահի, բայց տնտեսական շահը չպետք է բարձր դասել:

1061. Սահմանը բացվել է ու արջը նապաստակին ասում է, արի ճակատդ պաչեմ: Հիմա նապաստակն ի՞նչ է անելու:

1062. Ամերիկան կստիպի, որ սահմանները բացվեն, բայց ցեղասպանության հարցն այդպես էլ չի լուծի:

1063. Գերմանիան էլ սերտ հարաբերություններ ունի Թուրքիայի հետ: Հիմա Գերմանիայի բնակչության մեջ մեծ թիվ են կազմում թուրքերը:

1064. Արդեն իսկ հարկավոր է դպրոցներում տանել թուրքերեն լեզվի ուսուցումը, քանի որ շփման համար դա անհրաժեշտ է:

1065. Հիմա մահմեդականների ժամանակահատված է: Հնարավոր է պարտվենք այս «պայքարում»:

1066. Եթե մենք նախապայմանների հարց ենք առաջ բերում, ապա բանակցությունները կձգվեն շատ երկար տարիներ:

1067. Սահմանը բացելու հեռանկարն ցույց է տալիս հայտնի ասույթը. « Թուրքը ոտքերդ լիզեց, հետո բարձրացավ գլուխդ ջարդեց»

1068. Մենք ներքուստ ազատ մարդ չենք: Հենց որ հաղթենք մեր ներքին վախը, հանդես գանք ուժեղի տեսանկյունից, բոլոր խնդիրները կլուծենք:

1069. Թուրքիան մեզ ոչինչ էլ չի տալու, ասում է «բացում ենք, մարդկային հարաբերություններ ենք հաստատում» ու վերջ:

1070. Եթե հայերը խոչընդոտեն սահմանի բացմանը, ապա համաշխարհային հանրությունը կսկսի մեղադրել Հայաստանին ստեղծված խնդիրների համար:

1071. Գերտերությունները երբեք ճնշում չեն գործադրի Թուրքիայի վրա ՝ Հայաստանի հարցը լուծելու համար:Նրանք մենակ իրենց շահերն են հետապնդում:

1072. ՄԵր ազգի ամենացավոտ կողմն այն է, որ մենք միասնական չենք. սեր չկա դեպի մեր դրոշն ու գերբը:

1073. Մենք անընհատ վախենում ենք, որ թուրքերը մեզ կխաբեն: Իսկ ես ասում եմ, որ եթե մենք չենք կարող խաբել թուրքին, ուրեմն էլ բանի պետք չենք:

1074. Մեր սահմանը Թուրքիայի հետ փաստացի երբեք բաց չի եղել: Ոչ էլ պետք է, որ բացվի:

1075. Եթե դնենք նժարին տնտեսական և քաղաքական ասպեկտները, ապա ծանրակշիռ և ավելի որոշիչ պետք է լինի քաղաքանն ու բարոյական ասպեկտը:

1076. Ինչի՞ մասին է խոսքը, անգամ Կիպրոսը՝ ունենալով հզոր թիկունք ի դեմս Եվրոպայի, չի կարողանում Թուրքիայի դեմ:

1077. Իրանը մեր ստրատեգիական պարտնյորն է, ու Իրանի հետ բաց սահմանը մեզ հերիք է: Միևնույնն է, թուրքական սահմանի բացումը հրաշքների չի բերելու, տնտեսական չնչին համագործակցություն է լինելու:

1078. Հալվա ասելով բերանդ չի քաղցրանա: Անընդհատ խոսելով ցեղասպանության մասին, ոչինչի չենք հասնի: Մեզ գործել է պետք:

1079. Ինչու չեք մտածում, որ սահմանը բացելուց հետո թուրքերը կլցվեն Հայաստան ու նոր ցեղասպանություն կանեն, ընդ որում՝ քայլ առ քայլ:

1080. Դեմ չեմ սահմանի բացմանը, սակայն ներքին քաղաքականությունը պետք է վերանայել:

1081. Աշխարհի մի քանի պետություններ ամեն կերպ փորձում են ճնշել երկու կողմերին՝ ի նպաստ իրենց սեփական շահերի:

1082. Ինչի՞ հայը կարող է Լաս Վեգասում, Ֆրանսիայում հող առնի, օտարը մեզ մոտ չի կարող:

1083. Սահման բացելու միակ նախապայմանը միջազգային հանրության կողմից ցեղասպանության ճանաչումն է լինելու:

1084. Երբ Ադրբեջանի հետ մեր հարաբերությունները վատացան, Թուրքիայի ղեկավարությունը սաստեց ադրբեջանցիներին, թե ժամանակից շուտ սկսեցին, որովհետև իրենք մի քանի տարիներ անց հարցը լուծելու էին: Ադրբեջանցիները տարեց տարի շատանում էին, ու մեր երկրում իրենք գերակշռող էին դառնալու:

1085. Եթե մենք օրենքով պաշտպանված լինենք, ոչ մի սահմանի բացում, փակում թե նախապայման մեզ համար վտանգավոր չէ: Օրենք է պետք:

1086. Այս սցենարով էլ ենք մենք մնում «երրորդ դեմքով խոսողի» կարգավիճակում:

1087. Մեր խնդիրը մեր ներքին անկայունությունն է, մի բուռ ազգ ենք 700 կուսակցություն ունենք: Չունենք ազգային գաղափարախոսություն և չկա միասնականություն:

1088. Չորրորդ սցենարը Հայաստանին նորմալ առաջընթաց չի կարող ապահովել:

1089. Եթե էներգակիրները էժանանան, ժողովրդի համար լավ կլինի, բայց հացահատիկի էժանացումից գյուղացին կտուժի:

1090. Ամբողջ Արևմտյան Հայսատանի հողերը պիտի հետ տրվեն... Ուրիշ կերպ չի կաող լինել:

1091. Միշտ փոքր պետությունները մեծ պետությունների զոհն են լինում: Իհարկե, սա մեր խաղը չէ, ու եթե մենք շահենք էլ ինչ-որ բան, ապա դա կլինի չնչին:

1092. Մեր զարգանալու համար Ռուսաստանի առկայությունը Հայաստանում պատմական անհրաժեշտություն է:

1093. Եթե ասենք թուրքերը գան, Հրազդանմաշը վերաբացեն, մենք էլ ստիպված գնալու ենք ու աշխատենք: Դա ոչ միայն բիզնեսի վրա է ազդելու, այլ մեր հոգեբանության, մշակույթի: Սա կնշանակի ներսից քանդել Հայաստանը:

1094. Բացառված չէ, որ Թուրքիան ժամանակի հետ կփորձի ճնշել Ղարաբաղի հարցի լուծման համար:

1095. Թող մի քիչ քիչ ուտենք, բայց ապահով լինենք:

1096. Սահմանի բացումից հետո առաջին տուժողը գյուղացին կլինի, իսկ առաջին շահողը՝ քաղաքացին:

1097. Կոմպրոմիս հնարավոր է, հիշենք Սևրի պայմանագիրը...

1098. Հասարակ ժողովրդի համար ոչ մի փոփոխություն չի լինելու նաև այս սցենարի դեպքում:

1099. Կիսով չափ դատարկվել է մեր երկիրը, պատկերացրեք ովքեր են լրացնելու այդ կեսը:

1100. Այս գործարքում շահում են միայն թուրքերը՝ ցույց տալով Եվրոպային իրենց դեմոկրատիան:

1101. Սահմանը որ բացվի, էլ ոչ մի հայ հետ չի վերադառնա:

1102. Եղեռնի հարցն ու Ղարաբաղի հարցը լրիվ առանձին հարթություններում են քննարկվելու:

1103. Սահմանի բացումը կստիպի մեզ մրցունակ լինել ու որակով արտադրանք կլինի:

1104. Չպետք է այնպես անել, որ աշխարհը կարծի, թե Հայաստանի միակ խնդիրը ցեղասպանության հարցն է:

1105. Թուրքերը եկան, գործարանները առան, տեղավորվեցին: Մի գիշեր էլ արթնացանք, տեսանք՝ կոտորում են...

1106. Մենք հենց ռուսի ասածով ենք հիմա շարժվում: Որպեսզի ռուսները վրացիներին վերջնականապես թուլացնեն ու նրանց վրա հարձակվեն, բացում են մեր սահմանը թուրքերի հետ:

1107. ԱՄՆ-ի դիրքորոշումն է, Թուրքիան միայն գործիք է:

1108. Մեր գյուղացու տուժելն ու չտուժելը կախված է մեր պետությունից:

1109. Սահմանի բացումով ավելի կսահմանափակվեն այսօրվա օլիգարխների հնարավորությունները և կշահի հասարակ ժողովուրդը:

1110. Ինչպես Գերմանիան ներողություն խնդրեց հրեաներից, այդպես էլ Թուրքիան պետք է վարվի: Սա մեր քաղաքականության առանցքն է լինելու:

1111. Մեր բիզնեսը մասամբ կշահի Թուրքիայում:

1112. Ի՞նչ գիտենք, թե հետագայում Ռուսաստանը հանուն իր ստրատեգիական շահերի մեզ չի դավաճանի:

1113. Քրդերն այս հարցում հայերի դաշնակիցը լինել չեն կարող:

1114. Պատմությունը բազմիցս ցույց է տվել, որ թվաքանակը հաղթանակ չի ապահովում: Այնպես որ, մեր հույսը մեր վրա պետք է դնենք ու հաղթենք որակով:

1115. Հայաստանը հանդիսանում է խաչմերուկ և խնդիրը կլուծվի՝ ելնելով միայն գերտիրությունների շահերից:

1116. Մենք ռուսների կողմից վտանգ չունենք, թող ակտիվանան:

1117. Մտավախություններ միշտ էլ լինելու են, միշտ: Էնպես որ պետք չէ վախենալ, այլ պետք է ամեն ինչ շատ խելամիտ լինի:

1118. Այս սեղանին քննարկողներից մեկն է միայն կողմ սահմանի բացմանը, այն էլ տարան հարցազրույց վերցնելու, իսկ մեզանից՝ ընդիմադիրներիցս, ոչ ոք հարցազրույց չի վերցնում:

1119. Եթե ցանկանանք, որ բացվի կբացեն, առանց թուրքին ու հային նայելու, և հակառակը:

1120. Եթե մեր գործելակերպից երրորդ երկիր է շահելու ու մեր Հայաստան երկիրը չի շահում, ուրեմն մենք վատն ենք:

1121. Եթե Հայաստանից զիջումներ են պահանջում, ապա դա նշանակում է, որ գերտիրությունները արդեն իսկ հաշվի են նստել Թուրքիայի հետ:

1122. Առանց նախապայմանի սահմանի բացմանը գրեթե բոլորս էլ կողմ ենք:

1123. Ժողովուրդն ու կառավարությունը տարբեր բաներ են ուզում:

1124. Սահմանի բացումից հետո Իրանն էլ է շահում, քանի որ իրենք էլ առանձնապես լավ չեն Թուրքիայի հետ:

1125. Մինչև դիվանագիտական հարաբերություններ չհաստատվեն Թուրքիայի հետ, սահմանը պետք չէ բացել:

1126. Որևէ հայ դրսում կողմ չէ սահմանի բացմանը:

1127. Ես բոլոր սցենարներին դեմ եմ ու չեմ ուզում թուրքերի տեսնել ընդհանրապես:

1128. Այ մարդ, նստել Վրաստանի մասին ենք մտածում. մե՛ր մասին մտածենք, մե՛ր:

1129. Սահմանի բացումը կարող է մեզ ավելի մեծ օգուտ տալ, քան սփյուռքի օգնությունն է մեզ:

1130. Ինչո՞ւ են այս ամենը այսքան հապճեպ անում: Պետք է տասը չափել, մեկը կտրել: Պետք չէ շտապել:

1131. Այս խնդիրը համահայկական հարց է, բոլոր հայերը աշխարհի տարբեր երկրներում պետք է մասնակցեն սրան..Պետք է համաշխարհային ագիտացիա կազմակերպել

1132. Մտավախություն կա, որ խոշոր կապիտալի ներմուծումը կբերի մանր հիմնարկների կործանմանը:

1133. Հայ-թուրքական հարաբերությունների բարելավման արդյունքում Ադրբեջանը վեր-վեր կթռնի, բայց ոչինչ, մենք էլ հո էշի ականջում քնած չենք:

1134. Բացառվում է, որ թուրքերը երբևէ ճանաչեն Հայոց ցեղասպանությունը կամ զղջան դրա համար:

1135. Չկա չարիք առանց բարիքի... չի կարելի այդքան հոռետես լինել:

1136. Ցեղասպանության հարցում փափկելու դեպքում՝ կարող ենք թուրքերին լավ ընդունել:

1137. Ներողությունը բավարար չէ, հողերը պետք է վերադարձնեն:

1138. Քաղաքականությունը գործընթաց ու «գորդյան հանգույցը» դանակով կտրելու սկզբունքը այս դեպքում չի գործում:

1139. Նրանք իրենց էժան ապրանքներով ընդհանրապես կվերացնեն մեր արդյունաբերությունը:

1140. Հարց եմ տալիս. Սահմանը որ բացեց, սահմանն ով է պահելո՞ւ... Ռո՞ւսը: սխալ է, ամեն մի սահման պիտի հենց այդ պետությունն էլ պահի:

1141. Հայի ապագան մեր ազգի ուժն է, ոչ թե թուրքի երաշխիքը:

1142. Միջազգային խոշոր ներդրումները չեն ծառայի իրենց նպատակին, քանի որ նրանք կրկին անգամ կուտակվելու են մի քանի անհատների ձեռքերում:

1143. Ռուսն ով է, որ եկել է մեզ պաշտպանում է:

1144. Ռուսական սահմանապահների ներկայությունը ռազմական անվտանգության հարց է լուծում:

1145. Այսօր քրդերը անկախություն են ուզում, մենք ինչու՞ չենք օգտագործում նրանց: Վարդան Մամիկոնյանն ասում էր. «Եթե սատանան պարսիկի թշնամին է, ուրեմն իմ բարեկամն է»

1146. Ղարաբաղի հարցը ընդհանրապես պետք չէ խառնել այս ամենին: Դա արդեն իսկ լուծված խնդիր է:

1147. Եթե անգամ ԱՄՆ ճանաչի ցեղասպանությունը ոչինչ էլ չի փոխվի, անհրաժեշտ է, որ Թուրքիան ճանաչի այն:

6. ԴԻԼԻՋԱՆՈՒՄ
կայացած հանրային քննարկման ընթացքում արտահայտված մտքերը

30.09.2009

1148. Ի՞նչը կմոռանանք..Հայկական հա՞ղցը... Պատմությունը մոռանալ չի կարելի:

1149. Ողջունելի նախաձեռնություն է՝ բացել սահմանը, բայց մենք չենք այն փակել:

1150. Այդ ամբողջը արդեն դարձել է հոգեբանություն, որը փոխել չի լինի: Եվ դա բոլոր սերունդների մոտ էլ այդպես է: Մենք դաստիարակված ենք այդ ոգով;

1151. Պատմությունից գիտենք, որ բաց սահմանը տնտեսապես միշտ էլ օգուտ է եղել, սակայն տնտեսականին կուլ գնալով մեզ վտանգել ենք:

1152. Անհատ ձեռներեցները այսպես թե այնպես օգտվում են, ի՞նչ է տալու սահմանի բացումը:

1153. Մտավախություն ունեմ, որ մենք համապատասխան ներուժ չունենք դիմակայելու թուրքական ապրանքների ներհոսքին:

1154. Իսկ ես կարծում եմ, որ մեր տնտեսությունը կտուժի, քանի որ իրականում դեռևս մրցունակ չենք թուրքի հետ ոտք մեկնելու համար:

1155. Կարծում եմ, որ լայն սպառման ապրանքները Թուրքիայից կբերեն ու կտարածեն մեր շուկան: Բա մեր արտադրողն ինչպե՞ս դիմանա:

1156. Անհրաժեշտ է պետական մոտեցում, պետք է ձեռքը զարկերակի վրա պահել ու նպաստել հայապահպանությանը:

1157. Ներկայումս թե՛ ֆինանսական, թե՛ տնտեսական լծակները Հայաստանում մի խումբ մարդկանց ձեռքին է կենտրոնացած: Սահմանի բացումը այդ նույն խմբի մարդկանց է օգուտ տալու:

1158. Ես կարծում եմ, որ չպետք է ընդհանրապես որևէ թուղթ ստորագրել, սա իրականում ֆիկտիվ է...

1159. Հայ-թուրքական հարաբերությունները միանշանակ ազդելու են մեր մտածելակերպի և ցանկությունների վրա

1160. Սահմանի բացումը ավելի լավ կլիներ, որ զուգորդվեր ֆինանսական ճգնաժամի թուլացմամբ:

1161. Պետք է մեր արտադրողին հնարավորություն տրվի, ներկրումը պետք է վերահսկվի, պետությունը պետք է աջակցի իր արտադրողին:

1162. Չի բացառվում, որ սահմանի բացումը չբերի որևէ աշխուժացման: Հավանական սցենար է առաջին սցենարը:

1163. Նախ պետք է սկսենք երկխոսություն, և պետք է հաշվի առնվի ժողովրդի կարծիքը:

1164. Սահմանի բաց լինելու դեպքում հայկական աշխատուժը լցնելու է թուրքական զարգացած տնտեսությունը, թուրքական պահեստներում մնացած ապրանքները ողողելու են Հայաստանը: Նորից միայն թուրքերն են շահելու:

1165. Սահմանի բացումը կբերի ներքին մեծ անկայունության:

1166. Կգա ժամանակ, որ մեր հարաբերությունները թուրքերի հետ կլավանան: Բայց մենք պահանջատեր ենք, ունենք Հայ դատ...

1167. Ստացվում է՝ միայն ներկրում է լինելու, մենք արտահանման բան չունենք: Հետագայում հայտնվելու ենք թուրքերից կախվածության մեջ:

1168. Տնտեսական օգուտը Հայաստանի համար շատ մեծ կլինի, բայց քաղաքական առումով մենք կճնշվենք:

1169. Առաջին սցենարն անհնարին եմ համարում: Քանի մենք նշում ենք ապրիլի 24-ը, ցեղասպանության հարցը չի անտեսվի:

1170. Մենք պետք է ձերբազատվենք անձնական շահերից և մտածենք պետության շահերի մասին, լինենք համախմբված:

1171. Մեր դիմացինը հզոր պետություն է, մենք փոքր ենք, դիմակայել չենք կարողանալու:

1172. Թուրքիան ներխուժելու է Հայաստան, տարիներ հետո մենք կկորցնենք մեր ազգային դեմքը:

1173. Այս ամենը, ինչ կատարվում է, լոկ քաղաքական խաղեր են, միևնույն ժամանակ մեզ բոլորիս ձեռնտու է սահմանի բացումը:

1174. Մենք այսօր զինված չենք խոսքով, քարոզչության ուժով: Այսօր փակվելու վտանգի տակ է «Լիտերատուրնայա գազետան», իսկ թուրքական լրատվամիջոցները վերցնում են մեր լրագրողների անունները ու նրանց անվան տակ ներկայացնում իրենց տեսակետը:

1175. Հայաստանում հետագայում կարող է փոքր Թուրքիա ձևավորվի: Ատում եմ թուրքին, չեմ թաքցնում ու չեմ ուզում նման կախվածության մեջ հայտնվել ու իմ ապագա սերնդին չեմ ուզում նման կախվածության հարց ժառանգեմ:

1176. Ցավոք սրտի, բոլոր վտանգները կապված հարաբերությունների հաստատման հետ, վերլուծված չեն ու չեն պատկերացվում: Ես կարծում եմ շատ վտանգներ ու ռիսկեր կան:

1177. Մեզ իրավական հիմք է պետք, որպեսզի ոչինչ չկորցնենք սահմանի բացումով:

1178. Առաջին հերթին պետք է հասկանանք, որ մեր հիմնական աղբյուրը սփյուռքից է, իրենք էլ դեմ են սահմանի բացմանը... Եթե սփյուռքին չլսենք, այդ աղբյուրից կզրկվենք:

1179. Կարծում եմ սահմանի բացումը ոչ մի ձևով չի խանգարի մեզ հուզող հարցերի լուծմանը: Հարկավոր է տնտեսական զարգացում ապահովել:

1180. Անցյալում մենք չենք լռել, այլ որոշակի քայլեր արել ենք, հատկապես վերջին տասը տարիներին: Սահմանի բացումը չի ազդի մեր պահանջատիրության վրա

1181. Եթե Հայաստանը պատրաստ չլինի երկխոսության, համաշխարհային հանրությունը ճնշում կգործադրի Հայաստանի վրա:

1182. Նույնիսկ մշակույթի նման ապաքաղաքական ոլորտում թուրքերը անընդհատ առաջ են տանում իրենց քաղաքականությունը:

1183. Խորհրդային Միության պես «ժելեզնի զանավեսի» օգնությամբ զարգանալ չենք կարող. սահմանը, կամա թե ակամա, պիտի բացվի՝ դա անխուսափելի է:

1184. Ցեղասպանությունը կարող է կրկնվի, դա նրանց մարդկային բնութագիրն է:

1185. Մենք թուրքին չենք հավատում, դա մեզ շատ է խանգարելու, մենք լավ բան չենք սպասում:

1186. Մենք սահմանի բացմանը համաձայն ենք, բայց մնում ենք պահանջատեր: Վաղ թե ուշ այդ հարցը լուծվելու է:

1187. Ռիսկեր կան հարաբերություններում, բայց ռիսկերի դեմ պայքարել է պետք, ոչ թե լռել:

1188. Թուրքիան միակողմանի փակել է սահմանը, միակողմանի էլ բացելու է: Խնդիրը մեր դիմակայման ունակության մեջ է:

1189. Մենք պետք է կարողանանք օգտվել բաց սահմաններից՝ ունենալով համապատասխան մաքսային և հարկային դաշտ:

1190. Սահմանը բացել պետք է, սակայն պետք է որոշել դրա արժեքը:

1191. Իսկ պահանջատիրությունը կախված է մեր երեխաներին տրված կրթությունից: Մենք չենք ասում, որ պատմության դասագրքերից կջնջենք մեր անցյալը:

1192. Տարանցիկ երկիր դառնալու հեռանկարը գրավիչ է... Նարկոտիկների հարցով էլ թող հատուկ մարմինները զբաղվեն

1193. Սահմանի բացումը կնպաստի նաև բարեկամական հարաբերություններ ստեղծելուն: Միգուցե թուրքերը կհասկանան, որ մենք հարևաններ ենք:

1194. Սահմանը պետք է բացել, բայց երբեք չմոռանալ ցեղասպանությունը և հողերի վերադարձը:

1195. Մեր ցանկացած պետական կառույցի հսկայական միջոցներ են հատկացվում, եթե ամեն մեկն իր գործն անի, ոչնչից էլ վախենալ պետք չէ:

1196. Չմոռանանք, որ ունենք նաև հզոր Սփյուռք, որն իր հերթին ամենամեծ պահանջատերն է, ու անկախ ամեն ինչից, նրանք չեն լռելու:

1197. Սահմանամերձ շրջաններին պետք է նախապատրաստել մինչև սահմանի բացումը, պետք է այնպես անել, որ նրանք չտուժեն ու նվաստանան, պետք է արագ զարգացնել նրանց: Հարուստի ու աղքատի միջև սահմանը բացելիս աղքատը տուժում է:

1198. Թուրքերի հետ են նաև նրանց դաշնակիցները: Մենք կարող ենք շփվել նրանց հետ՝ մեր շահերից ելնելով, բայց բարեկամանալ՝ երբեք:

1199. Սահման բացել-չբացելու հարցը միայն Թուրքիայի որոշման հարցն է: Ու նա կարող է ստեղծել սահմանի բաց լինելու պատրանք:

1200. Քաղաքագետներն իրենց գործը պետք է լավ անեն ու լավ ծանրութեթև անեն:

1201. Պետք է բանակցել Թուրքիայի հետ՝ չմոռանալով մեր պատմությունը:

1202. Նրանց հասարակությունը ոչ մի ինֆորմացիա չի ընդունի մեզանից, թուրքը կմնա թուրք:

1203. Քանի որ մեր հողերը բնակեցված չեն, կամ բնակեցված են քրդերով, մենք դեռ կարող ենք հողերի վերադարձման հարց բարձրացնել:

1204. Այժմ մենք ունենք արդեն իսկ հաստատված տնտեսական շփում Թուրքիայի հետ, ուղղակի ամեն ինչ կատարվում է Վրաստանի միջոցով, և թանկ է նստում մեր վրա:

1205. Եթե Հայաստանում ադրբեջանցիները մնային, գալու էր ժամանակ, որ իրենք գերակշռելու էին մեզ ու մեզ մեր տնից քշեին: Մասիսում հայերն արդեն փոքրամասնություն էին: Նույնն ուզո՞ւմ եք թուրքերի հետ կրկնեք մեր գլխին:

1206. Ես նախընտրում եմ նստել ու սպասել...

1207. Սահմանը իրականում փակ չէ: Հենց հիմա մենք մեր սեղանով կարող ենք նստել մեքենա ու գնալ Թուրքիա:

1208. Պետական լուրջ վերահսկողություն ու կշռադատված քաղաքականություն է պետք. հողեր չվաճառել, բիզնեսը ճիշտ կառավարել, որ իրենք այստեղ չարմատավորվեն:

1209. Մեր և թուրք հասարակությունը բարոյապես պատրաստ չեն սահմանների բացմամբ պայմանավորված շփման մեծացմանը

1210. Ցեղասպանության գնահատականը պետք է տրվի, առաջնային հարցը դա է, այնուհետև՝ սահմանի բացումը:

1211. Սահմանի բացման հեռանկարներից մեկը կարող է հենց լինել Հայկական հարցի լուծումը:

1212. Այսօր առաջնային է ԼՂ հիմնախնդիրը:

1213. Այստեղ կա տնտեսական ու քաղաքական հարց: Տնտեսական տեսանկյունից միանշանակորեն սահմանը պետք է բաց լինի: Այս տեսանկյունից աբսուրդ է փակ սահմանը: Քաղաքական առումով դժվար է ասել՝ սա մի քիչ ավելի մասնագիտական հարց է:

1214. Մենք ֆիզիկապես պատրաստ չենք երկու հակամարտության /ԼՂ և Թուրքիա/:

1215. Կգա ժամանակը, որ մի փոքր կխաղաղվի վիճակը, բայց այս մասին դեռ շուտ է խոսելը:

1216. Քանի որ Թուրքիան տնտեսապես ավելի զարգացած է ու որակի չափանիշը այնտեղ ավելի բարձր է, արդյունքում մրցակցելով մենք էլ կզարգանանք:

1217. Պետք չէ սահման բացել, մեր անվտանգությունը առավել կարևոր է:

1218. Մի քանի խնդիր կա, որ կցանկանայի, որ մեր պետությունն անդրադառնար. սփյուռքի մեջ սեպ չխրվի, միասնական գործենք, հետո էլ տնտեսական շահերի հետ մեկտեղ պետք է մտածել, որ կարող են նաև տնտեսական ռիսկեր լինել և վերջապես չթողնել, որ թուրքը գա մեզ մոտ հող առնի:

1219. Սահմանը բացել պետք է, բայց մեր խնդիրներն էլ անտեսել պետք չէ:

1220. Վրաստանը էլ հուսալի գործընկեր չէ, սահմանը պետք է բացել:

1221. Նախ պետք է պարզել, թե որ պետությունն է շահագրգռված հայ-թուրքական սահմանը վերաբացել՝ Ռուսաստանը, Ամերիկան, Եվրամիությունը..... Այ, այդ շահերը բացահայտելով կհասկանանք, թե հետագա քայլերն ինչպիսին կլինեն:

1222. ԽՍՀՄ-ի փլուզումից հետո մենք վախենում էինք գնալ Թիֆլիս, քանի որ ճանապարհին բնակվում էին շատ ազերիներ, բայց ժամանակի ընթացքում ամեն ինչ փոխվեց:

1223. Այս սցենարի դեպքում էլ շահողը միայն Թուրքիան է լինելու: Մենք նորից տնտեսապես չենք զարգանալու, նորից միջազգային վարկերը շատանալու են ու դիզվելու մեր երեխաների ուսերին:

1224. Որքանով ենք մենք վստահ, որ թուրքական հումքի ներկրումը չի խանգարի տեղական արտադրողին:

1225. Եթե սահմանը բացվի թուրքերը չեն ընդունի ցեղասպանությունը:

1226. Այս ամբողջի նախաձեռնողը հայկական կողմն էր, հայ նախագահն արեց առաջին քայլն ու սկսվեց գործընթացը: Բայց չգիտեմ, թե հետո ում միջամտությունն ու ազդեցությունը ավելացավ:

1227. Հայաստանի հասարակ բնակչի համար սահմանի բացումը միանշանակորեն օգտակար կլինի: Մրցակցությունը կավելանա, որից կշահեն մեր բնակիչները:

1228. Մենք դիվանագիտություն չգիտենք, 600 տարվա դիվանագիտություն ունի Թուրքիան, դրանց խորամանկությունից չենք փախչի: Ռիսկը շատ մեծ է:

1229. Սահմանի բացման հարցում մենք մեզ համար արդյո՞ք որոշել են, թե ինչպես ենք մեզ դրսևորելու Թուրքիայի սահմանի ճանաչման հարցում:

1230. Բայց ինչքա՞ն գործարարներ կան, որ այսօր էլ Թուրքիայից ապրանք են բերում... Սահմանը բցել-չբացելը այդքան էլ չի փոխի իրավիճակը:

1231. Ժամանակն է հասկանալ, որ հոխորտալու տակտիկան այլևս չի գործում:

1232. Ցեղասպանությունը կընդունվի միայն եթե մենք ճնշման լծակ ունենանք թուրքերի վրա:

1233. Չնայած մենք ունենք Եղեռնի բարդույթը մեր մեջ, սակայն ունենք նաև արցախյան հաղթանակ:

1234. Մեր հիմնական մտավախությունը ոչ թե սահմանի բացումն է, այլ այն, որ մեր դիվանագիտությունը պարտվելու է:

1235. Մենք վախենում ենք մեր երիտասարդության համար, քանի որ այն սպունգի նման ներծծում է յուրաքանչյուր վատ երևույթ:

1236. Մեր արմատներում ինչ-որ բան կա, որ ստիպում է, որ մենք ինքնավստահ չլինենք ու չկարողանանք լիարժեքորեն արտահայտվել:

1237. Դժվարանում եմ ասել, թե մենք կկարողանանք լավ կողմնորոշվել ու ճիշտ վերլուծել, հետո միայն քայլեր անել:

1238. Զարգացման համար, եթե պետք է ուրեմն պիտի քայլ առ քայլ առաջ գնանք, ոչ թե մեծ-մեծ խոսենք:

1239. Ռուսաստանին ձեռք է տալիս, որ Հայաստանը ունենա բաց սահման Թուրքիայի հետ, քանի որ այն վատ հարաբերությունների մեջ է Վրաստանի հետ

1240. Իշխանությունը շատ կտրուկ կայացրեց սահմանի բացման որոշումը:

1241. Սահմանի բացումը հաստատ կբերի տարածաշրջանային կայունության ավելացման, որը իր հերթին կբերի արտասահմանյան կապիտալի ներհոսքի, որը շատ դրական է:

1242. Մենք թուրքերի կրնկի տակ ենք:

1243. Կարելի է բացել սահմանը և տարբեր մեխանիզմների միջոցով հենց թուրք հասարակության մեջ ներարկենք մեր տեսակետները:

1244. Սահմանների բացում, բայց առանց սահմանի ճանաչման. սա միանշանակ է

1245. Մենք մի պտտվող օղակի մասնիկ ենք, ու այդ օղակը պտտողը չենք. մեզ չեն հարցնելու

1246. Ասում է առանց նախապայմանների.... ո՞նց հասկանանք, ինչն եք մոռանալու, ինչից ենք հրաժարվելու: Մենք մեր պահանջատիրությունի՞ց ենք հրաժարվելու: Իսկ նրա՞նք այդ ինչ էին մեզանից պահանջելու, որ չեն պահանջում՝ ասելով թե նախապայման չեն դնում:

1247. Ամբողջ աշխարհում հայերն իրենց տեղն ունեն, մենք ամեն ինչ էլ կարող ենք արտահանել, մենք ուժեղ ազգ ենք:

1248. Սահմանը բացվելուց հետո կմեղմանան հարաբերությունները:

1249. Մենք ուզում ենք մեր հողերը, բայց առանց քրդերի:

1250. Այսօր միջազգային հադիպումների ժամանակ անընդհատ նկատում ենք, որ թուրք պատվիրակները շատ ավելի են պատրաստված՝ ներկայացնելու իրենց քաղաքական շահերը: Մերոնք մեծ մասամբ պատրաստված չեն:

1251. Պապս թողել է հողը, տունը, բա իմ պապու տունն ո՞ւմից եմ պահանջելու: Պետք է նրանց ասել ու բարձրացնել մեր հողերի պահանջը:

1252. Միջազգային հանրության կողմից կա ճնշում և գերտիրությունները փորձում են կարգավորել խնդիրները այնպես, ինչպես հարմար է նախ և առաջ իրենց:

1253. Մենք ինչպես կարող ենք օգուտի մասին խոսել, եթե սահման չենք ուզում բացել, այ ժողովուրդ:

1254. Բաց սահմանների դեպքում մենք դառնալու ենք պարզապես ճանապարհ Թուրքիայի ու Ադրբեջանի միջև:

1255. Չեմ հասկանում, սահմանը բացելուց հետո դադարելո՞ւ ենք հողեր պահանջել, ո՛չ: Ուրեմն՝ բացեն-չբացեն...:

1256. Ինչպես շենք կառուցելիս, այնպես էլ հարաբերությունների կառուցման հարցում անհրաժեշտ է հիմք: Հիմք կարող է հանդիսանալ սահմանի բացումը, ինչից և կսկսվի հարաբերությունների ջերմացումը:

1257. Չեմ կարծում, որ հնարավոր է հայ-թուրքական հարցի կարգավորում: Ժողովուրդները չեն մտերմանա երբեք:

1258. Սահմանի բացման պարագայում արդյո՞ք մեր ավտոճանապարհները պատրաստ են ընդունելու բեռնափոխադրումների ծավալի աճը:

1259. Բաց սահմանը խթանելու է ընդամենը մի քանի օլիգարխների մենաշնորհային բիզնեսը:

1260. Երաշխիք չկա. թուրքի հետ ի՞նչ երաշխիք...

1261. Թուրքիան կարող է սահմանն այնպես բացել, որ մենք ոչնչից էլ չօգտվենք. ճանապարհ չտա մեզ դեպի Եվրոպա, տնտեսական լավ պայմաններ չառաջադրի:

1262. Ես չեմ ուզում Կարսի պայմանագիրը այս պրոցեսի արդյունքում դառնա վերջնական:

1263. Մեր հողերը չպետք է նրանց վաճառել:

1264. Մենք ազերիների հետ նորմալ առևտուր ենք արել, հնարավոր է, որ թուրքերի հետ էլ հանդուրժողականություն լինի:

1265. Թուրքիան իր փոքր եղբոր հարցերը երբեք մի կողմ չի դնի, հետևաբար մենք ինչի՞ ենք քննարկում մեր հարցերը մի կողմ դնելը:

1266. Ճանապարհները Պարսկաստանի հետ բաց են, ո՞ր մեկս է գնում Պարսկաստանում ապրելու: Սահմանի բաց ու փակ լինելը ի՞նչ կապ ունի:

1267. Եթե մենք ավելի ուժեղ լինենք՝ կարող ենք գնալ ու մեր պապերի հողը գնել, հաստատվել ու ապրել մեր պապական հողում:

1268. Ես վստահ եմ, որ սահմանի բացման պարագայում, օրինակ, «Գրանդ հոլդինգը» կգրավի ողջ արևելյան Թուրքիան:

1269. Սահմանը պետք է բացել ինտենսիվ զարգացմանը զուգընթաց:

1270. Ամենալուրջ խնդիրը մեր ներքին կազմակերպվածության մեջ է, մեր ներքին հարաբերությունների թուլության մեջ է: Առաջին հերթին ժողովուրդը իրեն երկրի տեր պիտի զգա:

1271. Հոգնել ենք արդարացումներից, որ մենք պետություն չենք ունեցել, նոր ենք սովորում, նոր ենք դիվանագիտություն պարացնում. Եղբայր, եթե չէնք կարողանալու լողալ, էլ ինչու՞ մտանք ջուրը:

1272. Իսկ սփյուռքահայությանը ի՞նչ պատասխան պիտի տանք. տնտեսական շահերից ելնելով պիտի քաղաքական շահը մոռա՞նանք:

1273. Ամեն դեպքում ստատուս քվո լավ չի. արդեն շատ ենք դոփում տեղում, դրա համար էլ աճում-աճում ենք, հետո միանգամից անկում ապրում:

1274. Երբ իմ հարևանը լավ է ապրում, ես էլ եմ ձգտում լավ ապրել. եթե նմանապես մենք գնանք, շփվենք այլոց հետ, կձգտենք բարելավել մեր կենսակերպը:

1275. Հայաստանում հիմա էլ կա եղեռն՝ սպիտակ եղեռն է, երբ այսքան մարդ լքում է հայրենիքը:

1276. Այսօր սփյուռքում հիմնականում Հայաստանից արտագաղթածներն են, սփյուռքի որակն էլ է փոխվել:

1277. Կարելի է բացել, եթե շատ եք հարցնում:

1278. Սփյուռքն ու Հայստանը չի կարելի առանձնացնել, օտար ափերում նրանք կարողացել են հայ մնալ, դա քիչ չէ:

1279. Մենք շփվել ենք ազերիների հետ ահը սրտներումս, վախենում ենք, որ թուրքերի հետ նույնը կլինի:

1280. Եթե սահմանը չբացվի մենք չենք ունենա տնտեսական զարգացում և ոչ մի առաջընթաց չի լինի:

1281. Մինչև Եղեռն էլ մենք ամենահարուստն ենք եղել, հիմա էլ նույնը լինելու է. մենք վախենալու բան չունենք:

1282. Մենք մինչև հիմա չենք կարողանում օգտագործել մեր ունեցած բաց սահմանների լիարժեք հնարավորությունները:

1283. Այսօր մենք չենք կարող այնքան վստահել Թուրքիային, որպեսզի թույլ տանք բացել սահմանը:

1284. Վրացիներն էլ մի բարի պտուղ չեն, նրանց հետ էլ պետք է զգույշ վարվել:

1285. Աղվեսից խուսափելու համար պետք չի սահմանը փակել, այլ պետք է թակարդ դնել: Իսկ եթե հանկարծ արջը դուրս գա, արջին պիտի մեր կողմ բերենք:

1286. Թուրքիան ավելի շատ քաղաքական շահեր ունի, ինչքան մեզ է պետք, այնքան էլ նրան:

1287. Թուրքերը մեզանից ավելի շատ են վախենում, քան մենք իրանցից:

1288. Սահմանը բացել պետք է, բայց մենք պետք է բարոյական առումով վստահ լինենք մեր ժողովրդի վրա: Այնպես չլինի, որ թուրքերը ազատ և հանգիստ կարողանան տիրանալ Հայաստանի ունեցվածքին:

1289. Ցեղասպանության հարցի լուծումը արդեն օրակարգի մեջ էր ու մեծ մասամբ հասունացած: Թուրքիան սահմանների բացման հարցը առաջ է քաշել հենց այդ հարցը լռեցնելու համար:

1290. Ասում են, որ Ռուսաստանը կողմ է, բայց ինձ իրականում թվում է, որ դեմ է:

1291. Ճիշտ է մենք թուրքական պետությունում յոթ դար ապրելուց հետո դեռ հայ ենք մնացել, բայց այնուամենայնիվ մեր ազգային նկարագիրն է փոխվել:

1292. Սահմանի բացումն անհրաժեշտություն է, մեզ տնտեսապես հզորանալ է հարկավոր:

1293. Պարսիկները խաղաղ ժողովուրդ են, սակայն նրանցից, ինչպես և թուրքերից, վատ հոտ է գալիս:

1294. Մենք պետք է լինենք ազգի դեսպան. Թուրքիայում ոչ մեկին չեն ասի, որ իր պապերը ոճիր են գործել: Սահմանների բացումը մեր համար մեծ հնարավորություն է ճշմարտությունը տարածելու հենց Թուրքիայի ներսում՝ լողափներում, քաղաքներում, գյուղերում...

1295. Երբ սկսում ես նայել, ուսումնասիրել, մարդիկ այնքան ճիշտ են արտահայտվում, որ արդեն խճճվում ես: Չգիտես ում հավատաս, ում՝ ոչ:

1296. Վտանգ կա, որ ակնկալելով մեծ գումարներ, մենք կկորցնենք մեր հողերը, բնակարանները, գործարանները և այլն:

1297. Եթե սահմանը բաց լիներ, ճգնաժամը մեզ վրա այդպես չէր ազդի...

1298. Սահմանի բացումից հետո էլ ենք պահանջելու ցեղասպանության ճանաչում:

1299. Ինչքան Ռուսաստանի վիճակը լավ լինի, այնքան Հայաստանն էլ կօգտվի:

1300. Սահմանի բացումը ձեռնտու է թուրքերին միայն, եվրահնտեգրման հետ կապված:

1301. Երբ ասիմիլացիան տեղի է ունենում հարկադրաբար ու որպես պետական քաղաքականություն, դա բերում է ազգի կործանման: Բայց եթե դա կամավոր հիմունքներով է... ինձ թվում է, ոչ մի հայ քրիստոնեա իրեն թույլ չի տա մահմեդականի հետ ամուսնանա:

1302. Եթե մենք ունենայինք ճանապարհների այլընտրանք, կմտածեինք դրանցից լավագույնը ընտրելու մասին: Մենք այսօր ճանապարհ չունենք ու մեզ պետք է բաց սահման:

1303. Սահմանների բացումով պայմանավորված է նաև տուրիզմի աճը. իսկ ինչ, եթե թուրք զբոսաշրջիկներին բերենք Ցեղասպանության թանգարան և ցույց տանք այն: Մենք պետք է գործենք համախմբված և ներքին մղումով:

1304. Փոխադարձ շահերի համընկնում կա՝ Ռուսաստանի համար էլ, Հայստանի համար էլ լավ կլինի սահմանի բացումից հետո:

1305. Փակ սահման ունենալով հանդերձ՝ հայերից շատ շատերը հանգստանում են Թուրքիայում:

1306. Սահմանի բացման նախաձեռնությունն իրենցն է, ուրեմն շահերն էլ առավելապես այն կողմում են:

1307. Այսօր հումքերի ներմուծումը մոնոպոլիա է և ոչ մի երաշխիք չկա, որ հետագայում նոր հումքն էլ չի դառնա մոնոպոլիա:

1308. Իսկ եթե Հայաստանը Ադրբեջանի ու Թուրքիայի միջև տարանցիկ երկիր դառնա՞...

1309. Թող բացումից շահի նաև Ռուսաստանը, ինչու՞ չէ: Չէ՞ որ այս պահին միայն նա է մեր թիկունքում, գոնե որոշ չափով:

1310. Հետաքրքիր է, թե ինչ դիրքորոշում ունի Ռուսաստանը, մենք իր համար սահմանին կանգնած պատվար ենք: Բա հիմա ինքը կամավոր հանձնելո՞ւ է իր դիրքերը:

1311. Վրացին ավելի վատն է,քան թուրքը...վախենում եմ մնանք շրջափակման մեջ:

1312. Մենք պիտի կարողանանք օգտվել պահից՝ մի քիչ սահման Թուրքիայից, մի քիչ Վրաստանից, մի քիչ Պարսկաստանից..Գոնե չենք շրջափակվի:

1313. Ոնց որ լռում ենք Վրաստանի ամեն մի քմահաճույքի պարագայում, այնպես էլ Թուրքիայի հարցում ենք էլի լռելու:

1314. Սահմանների բացման հարցը քննարկելիս միշտ խոսում ենք «Թուրքիան բացում է սահմանը» հասկացությամբ: Սահմանը բացողը երկու պետությունները պետք է լինեն:

1315. Չի բացառվում, որ կշատանան խառը ամուսնությունները, բայց դա մասայական բնույթ չի կրի:

1316. Արջն իրականում իր համաձայնությունը տվել է:

1317. Սահմանի բացումը ժամանակավորապես է և ռիսկային: Անգամ փակ սահմանի դեպքում, միևնույնն է, թուրքերի հետ շփվողը շփվում է:

1318. Ռուսաստանին ձեռք կտա Հայաստանի միջոցով վերահսկել ճանապարհները..

1319. Կարծում եմ , որ առողջ մրցակցություն կառաջանա, որից կօգտվենք մենք:

1320. Հայաստանը երբեք խնդրողի տեսանկյունից չպետք է հանդես գա: Եթե համաձայնվելու ենք սահմանի բացմանը, ապա անպայման մեր պահանջները բավարարելու պայմանով:

1321. Ես կողմ եմ սահմանների բացմանը, քանի որ այն կբերի տնտեսական-քաղաքական զարգացումների, բայց վախենում եմ, որ բարեկամական հարաբերությունների հաստատման դեպքում կմոռանանք Եղեռնը...

1322. Մի կոստյում հագնեմ, թե հինգ՝ դա ի՞նչ է կյանքում փոխելու: Իսկ բարոյականության հարցն ավելի կարևոր է: Շաքարավազն էժան որ առնեմ, դա իմ սրտին հովան չի, իսկ պապերիս արյան ու հողի փոխհատուցումն ավելի կարևոր է:

1323. Մենք չպետք է կղզիանանք: Մեր դիվանագետները պետք է կարողանան այնքան խելացի գտնվել, որ պահից ճիշտ օգտվենք:

1324. Սահմանի բացումը մեզ տնտեսական օգուտ կտա, բայց քաղաքական առումով նրանք էլ փոխզիջման չեն գնա, կասեն. «դե սահմանը բացեցինք, բավական չէ՞»:

1325. Այս քայլերը նման են երկու ծայր ունեցող փայտի:

1326. Հայ-թուրքական հարաբերությունների լավացումից կտուժեն միայն Վրաստանն ու Ադրբեջանը. երկուսի վրա էլ թքած ունենք:

1327. Սահմանի բացում կնշանակի գազանին իր վանդակից բաց թողնել:

1328. Մենք սահմանը բացում ենք, որովհետև Վրաստանին չենք վստահում և չենք ուզում մնալ այդ երկրի հույսին: Իսկ ինչ է, Թուրքիան ավելի՞ վստահելի է:

1329. Թուրքի հետ բարեկամություն արա, բայց փետը ձեռիցդ մի քցի:

1330. Ինչ որոշում էլ որ լինի վստահ եմ, որ հայերը տուժողի դերում են լինելու:

1331. Թուրքական դիվանագիտությունը աշխարհի հզոր դիվանագիտություններից մեկն է. մենք նրանցից պետք է սովորենք:

1332. Եթե Ռուսաստանն ու Ամերիկան լռեն, ձայն չհանեն՝ մեր հարցը չի լուծվի: Իսկ այս պահին Ռուսաստանի շահը չի համընկնում մերին, չի միջամտի մեր օգտին: Ռուսի շահից չի բխում հիմա որևէ քայլ անել:

1333. Սահմանի բացումը մեզանից կախված չէ. ոնց որ մեկին գցես բանտ ու նա ասի խցի դռան բացումը ինձանից է կախված:

1334. Եթե Թուրքիան ուզի, սահմանը կբացի, չուզի՝ չի բացի: Բա մեր միջամտությունը ո՞րն է:

1335. Ես ցանկանում եմ անձամբ շփվել թուրքերի հետ, որ նրանց բացատրեմ ամեն ինչ:

1336. Սահմանի բացումից հետո, երբ շփումները շատանան, կկարողանա՞ն արդյոք մեր երիտասարդները համոզել ու ապցուցել թուրք հասարակությանը , որ ցեղասպանությունը եղել է, որ իրենց պապերը կոտորել են: Վախենում եմ, որ հակառակը լինի, չէ՞ որ թուրքական դիվանագիտությունն ու տնտեսությունն ավելի հարուստ են:

1337. Մեր երեխաները վաղը չեն ների մեզ, եթե մենք տնտեսական հարցերին զիջենք մեր ազգային շահը:

1338. Չեմ վախենում, որ բացելուց հետո նորից կփակեն. հո մանկապարտեզ չէ՞:

1339. Այս պարագայում ամեն ոք պիտի մտածի իր սեփական շահի մասին ու կհաղթի նա, ով ավելի շատ մանիպուլացիա կկարողանա անել:

1340. Բայց սահմանի բացելն ի՞նչ կապ ունի ցեղասպանության հարցի հետ:

1341. Ընտանիք, դպրոց , պետություն՝ պետք է աշխատել համագործակցված: Հասարակությունը պետք է տեղեկացված լինի:

1342. Ինչպես կոմունիստները միացնում էին համաշխարհային պրոլետարիատին, մենք էլ բացենք սահմանն ու դառնանք մարդասիրության դեսպան՝ չտարբերակելով թուրքերին:

1343. Քաղաքական հարցերը լուծելու համար՝ կստիպեն մեզ ընկնել տնտեսական կախվածության մեջ:

1344. Այսօր արդեն մեր ռազմավարական կարևորագույն հաստատությունները ռուսների ձեռքին է ու թելադրողը նրանք են: Խոսել այս բանակցություններից ռուսներին դուրս թողնելու մասին անհեթեթություն է:

1345. Մեր դիվանագիտությունը շատ ճիշտ է, սահմանի բացումը դեռ մեր ֆիզիկական ոչնչացման պատճառ չէ: Մենք անցել ենք պատերազմ, պատվով հաղթել ենք, մեզ չեն կոտրի:

1346. Մենք նվաճող ազգ չենք եղել, երբեք: Կարևոր է, որ գոնե գաղափարական նվաճողական քաղաքականություն ունենաք:

1347. Վախենում եմ, որ նորից պատերազմ կսկսվի:

1348. Եթե սահմանի բացումը զուտ գերտերությունների քաղաքականության արդյունք է լինելու ու ձևական բնույթ է կրելու, ապա դա մեզ պետք չէ: Խոշոր գերտերությունները չպետք է խառնվեն մեր ու Թուրքիայի գործերին, և եթե մենք իսկապես ուզում ենք զարգացնել մեր տնտեսական հարաբերությունները, ապա դա լավ կլինի:

1349. Թուրքիան այօր իր էժան և անորակ ապրանքները իրացնում է Հայաստանում և մենք պետք է փորձենք կանխել այն:

1350. Եթե Վրաստանն ու Ռուսաստանն ունենային բարիդրացիական հարաբերություններ, կարելի էր նաև չբացել սահմանը, բայց հիմա անհրաժեշտ է:

1351. Օբաման խոստացել էր, որ լուծելու է հայկական հարցը: Սահմանի բացումը նա օգտագործում է իր այս միտքը իրագործելու նպատակով:

1352. Չորրորդի վերաբերյալ ասեմ. եթե նման միտք ծնվել է, ուրեմն նման զարգացումներ հնարավոր են:

1353. Մեզ թվում է, որ Թուրքիան երբեք չի ճանաչի ցեղասպանությունը:

1354. Ցեղասպանության նախաձեռնության հարցում մենք պետք է նախաձեռնող լինենք:

1355. Սահմանի բացումը հայերի աչքին «թոզ փչել է» նշանակելու: Մի քսան տարի հետո մեզ ավելի լուրջ խնդիրների առաջ են կանգնեցնելու:

1356. Մտավախություն ունեմ, որ էլի նույնն է լինելու, էլի խոսելու ենք «հայի վերջին խելքից»:

1357. Ինչքան էլ մենք քննարկենք հավանական, անհավանական, ցանկալի ու անցանկալի սցենարներ, պատմությունը ցույց է տվել, որ թուրքերի հետ գործ բռնելը անկանխատեսելի է:

1358. Արդյոք մենք այսօր պատրաստ ենք ապագա տնտեսական դժվարություններին, եթե հիմա մենք ինքներս չենք կարողանում պահել մեր ներքին բալանսը:

1359. Ռուսաստանի տնտեսական աճը կարող է միայն ուրախացնել հայերին: Դրա մեջ որևէ վտանգ չկա:

1360. Թուրքիան մեզ հող չի տա, բայց բարոյական հաղթանակ եմ ուզում:

1361. Բոլոր պետությունները շահելու են, բացի Հայաստանից ու Վրաստանից:

1362. Թուրքիան ցանկանում է մուտք գործել Եվրոպա, ուստի այն պետք է ճանաչի Ցեղասպանությունը:

1363. Մեր պետությունը տեղեկատվական հարձակողական քաղաքականություն պիտի վարի, դեռ փոքրուց պետք է երեխաներին սովորեցնել, որ թուրքը երբեք չի փոխվի:

1364. Լավ կլիներ իմանայինք դրանց մտքում ինչ կա:

1365. «Մենք ենք, մեր սարերը»-ում ասում է չէ՞.«Իզուր էրեխին մանկավարժական տվի, պիտի իրավաբանական տայի...» Կրթված սերունդ է պետք, օրենք իմացող, որ կարողանա հայի ու թուրքի հարց լուծի:

1366. Նախապայմանները պետք է հայտնի լինեին, որ իմանայինք մեր անելիքը: Չեմ ուզում հետագայում ֆիդայի դառնալ, զենք առնել ու սարերն ընկնել ու թուրքին իմ հողից քշել, հետո էլ երեխայիս բացատրել, թե այդ ո՞նց եղավ, որ այս օրին հասանք:

1367. ԱՄՆ-ին ձեռք չի տալիս սահմանի բացումը՝ Վրաստանը դեռ պիտի զարգանա մեր հաշվին:

1368. 1915 թ. բոլոր թուրքերն էլ շատ լավ են վերաբերել իրենց հարևան հայերին և այլն, բայց տեղի ունեցավ այն, ինչ տեղի ունեցավ: Ի՞նչ երաշխիք, որ մեր այսօրվա բարիդրացիությունը նույնին չի բերի:

1369. Թուրքը սահմանը կբացի, բայց ինչո՞վ ենք վստահ, որ մեկ ամսից չի փակի: Նրանք ե՞րբ են կատարել իրենց խոստումները, որ հիմա հավատանք:

1370. Հինգերորդ սցենարը շատ ցանկալի է, բայց դա շատ հեռու է:

1371. Թուրքիան պետք է իմանա, որ անպատժելի չի: Մենք հիմա սահմանը չպետք է բացենք: Պետք է սպասենք, մինչև միջազգային հանրությունը կպարտադրի ցեղասպանության ճանաչում ու փոխհատուցում:

1372. Մեր ԱԳՆ-ն բավականին հզոր կադրեր ունի, ուստի հարաբերությունների հաստատման պարագայում մեզանից դժվար կլինի բան պոկել:

1373. Ո՞նց կպահի իրեն Ադրբեջանը Թուրքիայի սահմանի բացումից հետո: Կարծում եմ շատ վատ: Դա մեզ համար նոր խնդիրներ կստեղծի:

1374. Միջազգային հանրությունը միֆ է, անզոր մի բան: Թուրքիան մինչ օրս բացարձակ անպատիժ է եղել:

1375. Ներողություն խնդրե՞լ...ծիծաղելի է:

1376. Ես մենակ մի բան եմ ուզում, որ մեր ժողովուրդը լավ ապրի, երեխաս էլ բանակում է, պատերազմ չեմ ուզում:

1377. Ամենաառաջինը մեր ազգի միասնությունն է: Եթե ներքին քաղաքական ուժերը թույլ տան, հինգերորդ սցենարը կիրականանա:

1378. Ճանաչում. Հող. Փոխհատուցում

1379. Մենք երբեք գերտերություն չենք դառնա: Ընդամենը 3միլիոն ենք:

1380. Սահմանների բացումը շահի հարց է՝ թե՛ մեր, թե՛ թուրքերի, թե՛ մյուսների:

1381. Ես չեմ հավատում, որ թուրք հասարակությունը կարող է փոխվել:

1382. Բանակը պետք է հզորացնել ու միասնական լինել:

1383. Պետք է արագ օրենք ընդունել, որով կսահմանափակենք օտար քաղաքացիներին, մասնավորապես թուրքին, Հայաստանում հող գնելու իրավունքը:

1384. Մենք պետք է շատ մեծ դիվանագետ լինենք, որպեսզի բացենք սահմանը մինիմալ կորուստներով:

1385. Հարաբերություններ տեսնում եմ, բայց արդյունքներից վախենում եմ:

1386. Տարիներ առաջ Ղափանում և ադրբեջանցի և հայ էին ապրում, հետո հավասարվեցին, առաջին քարտուղարը հայ եղավ, հետո՝ ադրբեջանցի: Այ սրանից եմ վախենում...

1387. 90 տարի պայքարել ենք, որ մի կես դար էլ հետաձգենք, կարող է ավելի ճիշտ արդյունք ստանանք:

1388. Որքան էլ շատ ուզենք թուրքերի հետ բարեկամանալ, միևնույն է մենք մեր պատմական անցյալը չենք կարող մոռանալ:

1389. Օբաման ինչքան էլ ընդունի կամ չընդունի մեզ պետք չի, կարևորը թուրքերը ընդունեն եղեռնը:

1390. Թուրքիան եվրոպական առևտրային գոտու մեջ գտնվող երկիր է: Մենք շատ արագ պետք է քայլեր ձեռնարկենք մեր առևտրական գործելակերպը եվրոպական ստանդարտներին հասցնելու համար:

1391. Մենք պետք է փորձենք ավելի հանգիստ և հաշտ բանակցել Թուրքիայի հետ, որպեսզի հաջորդ սերունդները ավելի հեշտ շփվեն միմյանց հետ:

1392. Նման զարգացումը անցանկալի է, ասենք՝ քիչ էլ հավանական է:

1393. ԱՄՆ կարող է ստիպել, որ թուրքերը ընդունեն ցեղասպանությունը, սակայն թուրքերը կասեն «...բազաներդ հավաքի ու..գնա այստեղից...»:

1394. Մենք կանգնելու ենք մի վիճակի առաջ, երբ սահմանը բացվելու է առանց մեր այո կամ ոչ-ի: Մեր խնդիրը դրան պատրաստ լինելն է:

1395. Օրինակ, երբ Սահմանադրությունն էինք ընդունում, ոչ մեկը ժողովրդի կարծիքը չէր հարցնում, այնինչ այն երկրի հիմնական օրենքն է, իսկ սահմանների բացումը ինչու՞ է քննարկվում:

1396. Մի պահ կա. մեր ժողովուրդների մեջ հոգեբանական պատնեշ կա. մինչև այդ ատելությունը չվերանա, բան դուրս չի գա:

1397. Եթե թուրքերը ճանաչեն Ցեղասպանությունը, փոխհատուցեն մեր վնասներն ու ներողություն խնդրեն, ես հաստատ նրանց հետ կբարեկամանամ: Բայց թուրքը խորամանկ է ու դա կարող է անել ձևական:

1398. Եթե մենք հրաժարվենք համագործակցությունից, Թուրքիան կկանգնի ու կհայտարարի, թե՝ տեսա՞ք, հայերն են կամակոր ու ընդդիմանում են նորմալ հարաբերություններ հաստատելուն: Այս աղվեսն ամեն դեպքում շահելու է:

1399. Սահմանի բացումը կենսական անհրաժեշտություն է մեզ համար: Մեր երկիրը պետք է հզորանա:

1400. Սահման բացվի-չբացվի, մեկ աէ, թանկություն է լինելու:

1401. Ինչքան լավ լինենք թուրքերի հետ,այնքան ավելի լավ մեզ համար: Պետք չի իրար բզկտել:

1402. Թուրք է, ուրեմն մի բան այն չէ...

1403. Բացման պարագայում տնտեսությունը կլավանա, իսկ մնացած ամեն ինչը կսառի:

1404. Որ ուզենան վնաս տան, փակ սահմանով էլ դա կանեն, ի՞նչ խնդիր կա:

1405. Եթե վախը մնաց, մենք հարաբերություններ չենք հաստատի:

1406. Մենք այսօր ծերերի հասարակություն ենք, համարիա չենք բազմանում: Ի՞նչ կլինի սահմանը բացելուց հարյուր տարի հետո: Վտանգավոր է:

1407. Չէ, այս հինգերորդը իդեալական է:

1408. Եթե մենք շատ շփում ունենանք մուսուլմանների հետ, շատ հնարավոր է, որ մենք էլ մուսուլման դառնանք:

1409. Թուրքիայի քաղաքականության մի գիծն է, որ քրդական հարցը աստիճանաբար տեղափոխում է դեպի Հայաստան:

1410. Ես չեմ ներում թուրքերին մեր եկեղեցիներում ոչխար պահելու համար, սակայն...մեր իշխանությանը ավելի շատ չեմ ներում մեր ապրելակերպի համար:

1411. Լավ է, խոսում եք կարճ ճանապարհի մասին, իսկ ես ասում եմ՝ «կարճ անվտանգ ճանապարհ»:

1412. Եթե սահմանը պետք է բացվի ցեղասպանությունը մոռանալու հաշվին, ապա մենք չպետք է այն թույլ տանք:

1413. Մենք միշտ էլ խորամանկ ու դիվանեգետ չենք գտնվել: Պետք է հասկանալ սեփական շահերը:

1414. Հայաստանում տարածված աղանդները իրենց մեջ շատ ավելի մահմեդականություն են պարունակում:

1415. Այս սցենարների վատն այն է, որ ոչ մի տեղ Հայաստան-սփյուռք համագործակցություն չեմ տեսնում:

1416. Միգուցե նվազի կախվածությունը Վրաստանից, բայց կավելանա կախվածությունը Թուրքիայից:

7. ՎԱՆԱՁՈՐՈՒՄ
կայացած հանրային քննարկման ընթացքում արտահայտված մտքերը

01.10.2009

1417. Անշուշտ մեզ անհրաժեշտ է դուրս գալ դեպի աշխարհ, բայց Հայկական հարցը մոռանալ երբեք չենք կարող:

1418. Հայ-թուրքական սահմանի բացումը զգալի ազդեցություն չի ունենա:

1419. «Սահմանի բացում» չի նշանակում մոռանալ ցեղասպանությունը:

1420. Մեր տեսակետը հայ-թուրքական հարաբերություններում այն է, որ ամբողջ ազգը պիտի շահի դրանից: Լուռ ապաշրջափակումը մեզ այդ հնարավորությունը չի տալիս:

1421. Բնականաբար, սահմանի բացումը դրական կլինի, որովհետև երկար տարիներ տևած շրջափակումն ի վերջո կավարտվի: Մենք դեպի ծով դուրս կգանք, Եվրոպա աշխարհ, տնտեսությունը մեր ավելի արագորեն կաճի:

1422. Ցանկալի է, որ Հայաստանը խնդրողի դերում հանդես չգա:

1423. 45 տարի առաջ, երբ ես անգամ չգիտեի ցեղասպանության մասին, իմ հարսանիքն եղավ ապրիլի 24-ին: Իսկ հետո , երբ իմացա, իմ հարսանիքի օրն այլևս չի նշվում: Ո՞նց կարելի է մոռանալ ցեղասպանությունը:

1424. Բոլորս համաձայն ենք սահմանի բացման հետ: Բայց հարցեր կան: Մեր օլիգարխները սահմամերձ վայրերում գնում են տներ, որպեսզի հետագայում թանկ գներով վաճառեն թուրքերին:

1425. Թուրքերի արածը աններելի է: Նրանց հետ ցանկացած հարց քննարկելիս բոլորիս մտքում մեր լսած պատմություններն են ու հատվածները, Եղեռնի վերաբերյալ ֆիլմերից:

1426. Թուրքական արտադրանքը ներկրվելու է բավականին էժան, իսկ մենք հիշում ենք, թե ինչքան անորակ թուրքական սննդամթերք էր ժամանակին մտնում հանրապետություն:

1427. Քաղաքականը տնտեսականի հետ չպիտի կապենք: Իրարից անկախ պետք է լինեն այս երկու հարցերը:

1428. Սահմանի բացումը կբերի գների թեթև անկման, սակայն չպետք է մոռանալ դիվանագիտության և քաղաքականության մասին: Կողմ եմ 1-ին սցենարին:

1429. Ապաշրջափակում ցանկացած դեպքում ֆորմալ է լինելու ու ամեն պահի Թուրքիան կարող է նորից փակել այն: Որևէ երաշխիք չկա սահմանի բաց մնալու առումով:

1430. Եթե թուրքերը Հայաստանից ապրանք արտահանելիս նույն կերպ են վարվելու, ինչպես մենք՝ բարձր մաքսատուրք սահմանելով, ուրեմն չեմ կարող ասել, թե ինչ զարգացում ակնկալել:

1431. Երիտասարդ սերնդի մեջ հայեցի դաստիարակության ու կրթության հարցն է պետք լուծել:

1432. Սահմանի բացումը միայն որոշակի խմբերի է օգուտ բերելու:

1433. Մենք կցանկանայինք սկսել պարզ շփում հասարակ մարդկանց մակարդակով, հետո նոր քննարկումը տեղափոխել քաղաքական դաշտ:

1434. Ցեղասպանության հարցի դանդաղեցումը ոչ մի կապ չունի սահմանի բացման հետ:

1435. Մենք արտահանման ապրանք ունենք՝ մեր քիմիական արտադրությունը կարող է զարգանալ:

1436. Սահմանի բացումը կնպաստի առևտրին: Բայց թուրքերը կլցվեն մեզ մոտ, թուրքի կամ պարսիկի աշխատուժը ավելի էժան է, քան հայինը, նրանք ավելի հեշտ աշխատանք կգտնեն, հետևաբար կստացվի, որ նրանք են շահում:

1437. Շատ դժվար է տնտեսական ու քաղաքական վերլուծություն կատարել: Ասենք սահմանը բացեցինք ու ես ու մի քանի այլ գործարարներ դրանից շահեցինք: Բա հետո՞: Եկեք հետոյի մասին մտածենք:

1438. Մեր տնտեսության զարգացումը կախված է ոչ թե սահմանից, այլ մեր ներքին ռեսուրսներն օգտագործելուց ու ճիշտ կառավարումից:

1439. Արդյո՞ք մեր այսօրվա արտահայտած կարծիքը ազդեցություն կունենա վերջնական որոշման վրա:

1440. Կարևորն այս մեռյալ կետից շարժվելն է:

1441. Տնտեսական վնասի ռիսկը կա, սակայն այդ մասին խոսում են սահմանափակ մարդիկ, նրանք, ովքեր ձգտում էին Հայաստանում մենաշնորհ դիրք հաստատել: Միանշանակ է, որ զարգացման տանող մեկ ճանապարհից ավելի լավ է երկու այդպիսի ճանապարհը:

1442. Սահմանը պետք է բացել, բայց դա չի նշանակում, որ մենք պետք է մոռանանք մեր պահանջատիրությունը: Ոչ էլ Թուրքիան ետ կկանգնի իր քաղաքականությունից:

1443. Դեմ եմ սահմանի բացմանը, դա առաջին քայլն է դեպի ցեղասպանության մոռացումը:

1444. Իմ պապերին են դրանք կոտորել, սրին տվել: Այսօր պետք չէ մի քանի խղճուկ թուրքական շորերի համար դրանց հետ սահմանը բացել: Ավելի լավ է մերը զարգացնենք, թեկուզ ավելի թանկ լինի:

1445. Սահմանի բացումը ընդամենը ձևական բնույթ է կրում: Եթե շոշափելի արդյունքներ չկան, ուրեմն պետք չի բացումը:

1446. Այսպես թե այնպես, մենք գնում-գալիս ենք Թուրքիա՝ զուտ տնտեսական խնդիրներ լուծելու համար: Սահմանի բացումը ոչ մի քաղաքական հարց չի փոխի:

1447. Եթե սահմանը բացվի մենք ավտոմատ ընկնում ենք կախման մեջ:

1448. Մենք ուզում ենք ազատ և էժան շուկա, սահմանի բացումը դուռ է դեպի Եվրոպա:

1449. Սահմանը փակ լինելու դեպքում մենք հնարավորություն չունենք գնալու մեր պատմական հողերն ու մեր աչքով տեսնելու մեր կորցրածը:

1450. Հայտնի է, որ շատ հարցերում մեր տնտեսությունը մենաշնորհային է, սահմանը բացելուց հետո առավել կտուժեն մենաշնորհային դիրք ունեցողները, որովհետև իրենցից բացի էլի տնտեսվարողներ կլինեն, որոնք հարաբերություններ կհաստատեն նոր գործընկերների հետ:

1451. Ես ներկայացնում եմ Վանաձորի դաշնակցության կոմիտեն, ու մենք արձանագրության հետ խնդիրներ ենք տեսնում կապված ազգային անվտանգության կամ դեմոգրաֆիկ էքսպանսիայի հետ: Վերջինս ինքնաբուխ գործընթաց է և դժվար է դրա վտանգները կանխատեսել:

1452. Մենք մեծ ազգային հարցեր ունենք ու թուրքերն էլ դա գիտեն: Չի կարելի այդ ամենի մասին մոռանալ: Նրանք տնտեսապես մեզ կխեղդեն՝ սա է նրանց նպատակը:

1453. Սահմանի բացումով կտանք հնարավորություն մեր ժողովրդին տնտեսապես ավելի ուժեղանալ ու դիմակայել բոլոր խնդիրներին:

1454. Մենաշնորհ ունեցող տնտեսվարողը Հայաստանում երբեք չի տուժի, որովհետև նրանց կապերը ավելի շատ են ու ավելի մեծ հնարավորություն ունեն մենաշնորհը խորացնելու:

1455. Պետք է պատրաստ լինել ցանկացած զարգացմանը, փորձենք նվազեցնել վտանգները և քաղել առավելագույն օգուտ:

1456. Չե՞ք կարծում, որ սահմանի բացումից հետո թուրքերին ավելի հեշտ կլինի լոբբինգի քաղաքականություն իրականացնել:

1457. Կարծում եմ մեր սփյուռքը նույնպես հարաբերություններ ունի թուրքերի հետ: Պետք չէ սփյուռքի մասին երկար մտածել:

1458. Մենք այսօրվա դրությամբ թույլ ենք ու աղքատ. համոզված եմ սահմանը բացելու դիմաց պետք է Ղարաբաղը զիջենք: Սա անթույլատրելի է:

1459. Ռուսական ձեթը էժան գնում էին, բայց այստեղ թանկ էին վաճառում: Պարզ տրամաբանություն է, մենք մեր իրականությունը գիտենք. նույնն էլ թուրքական ապրանքի հետ է լինելու: Մի քանիսը, ովքեր այդ հնարավորություններն ունեն, էժան ապրանքը կբերեն ու թանկ կվաճառեն:

1460. Ապրանքների որակի վերահսկողության համակարգ մենք չունենք:

1461. Պետք չի քննարկել միայն սահմանի բացման հարցը: Ստորագրված արձանագրությունները կետեր են պարունակում սահմանների փոխադարձ ճանաչման վերաբերյալ ու այլ շատ հարցեր, որոնք վտանգավոր են:

1462. Հարձակման համար շատ բան պետք չի, եթե որոշեն պատերազմ սկսել՝ սահմանի բաց կամ փակ լինելը չի խանգարում:

1463. Բնական է, եթե չլիներ ցեղասպանության հարցը, սահմանի բացումը ավելի հեշտ կլուծվեր: Իսկ այս պահին պետք է ավելի զգույշ լինել, հիշել Թուրքիայի խորամանկության մասին և դիվանագիտական քայլերի:

1464. Շատ մտահոգող է, որ մշակութային ու կենցաղային օտար հատկանիշներ ձեռք կբերենք: Իսկ տնտեսական սպասվող ձեռքբերումներն այդքան զգալի չեն լինի:

1465. Սահմանի բացումը կբերի հայերի համատարած արտագաղթի:

1466. Մենք հաշվի չենք առնում սփյուռքի կարծիքը, տասնյակ տարիներով այնտեղ տարված աշխատանքները, լոբբիստական աշխատանքը,կառույցները:

1467. Սահմանների բացման հիմքում պետք չէ դիտել միայն տնտեսական խնդիրներ:

1468. Հայաստանը պետք է թույլ չտա, որպեսզի սահմանափակվեն իր պահանջները:

1469. Միջազգային հանրությանը մեզ հետ չեն կոտորել, չեն ոչնչացրել... Նրանք այդ ամենը չեն ապրել, ուստի դժվար օգնեն:

1470. Ես ոտք չեմ դնի Թուրքիա, մինչև չճանաչվի Ցեղասպանության հարցը: Ինձ համար աններելի է, երբ հայերը գնում, տնավորվում են Թուրքիայում:

1471. Ոչ ոք չի կարող երաշխավորի, որ Վրաստանի տարածքով մեր ճանապարհը երբևէ չի փակվի: Ռուսն էլ իր հերթին, երբ ցանկանում է, փակում է մեր միակ ճանապարհը:

1472. Ես կողմ եմ , որ սահմանները բացվեն ՝ առանց նախապայմանների: Դրանից հետո պետք է առավել լուրջ քննարկել մյուս հարցերը:

1473. Մեր էմոցիաները միշտ խեղդում են մեզ: Մեզ մի քայլ առաջ է պետք գնալ, հարցին նայել պրագմատիզմի տեսանկյունից:

1474. Պետք է հստակ տարանջատել՝ սահմանի բացում և քաղաքականություն:

1475. Ցեղասպանության հարցը ոչ միայն երկկողմ հարաբերությունների հարց է, այլ միջազգային հանրության:

1476. Թուրքիան կփորձի սահմանների բացումով ամեն կերպ կանխել ցեղասպանության ընդունման հարցը:

1477. Մենք դեռ «ա»-ն չասած «բ»-ի մասին ենք խոսում: Առանց հիմքը գցելու շենք ենք կառուցում: Պետք է քայլ առ քայլ շարժվենք առաջ, ոչ թե ոտքով-գլխով միանգամից ընդունենք բոլոր առաջարկները:

1478. Սահմանի բացումից հետո թուրք հասարակության հետ շփումը ավելի կմեծանա ու ավելի հեշտ կլինի տեղեկատվության տարածումը:

1479. Թուրքիայի հասարակությունը մեզ պես քաղաքականացված չի, նրանց ժողովուրդը այսքան չի մտածում ու քննարկում:

1480. Սահմանը բացվելու դեպքում մենք ավելի գլոբալ խնդիրներ ունենք, քան թե անորակ ապրանքների հարցը: Այս սցենարներում ազգային արժանապատվությանը վերաբերող հարցեր կան: Օրինակ, հայ-թուրքական դիվանագետները պետք է սահմանի բացումը պաշտոնապես անվանեն ապաշրջափակում:

1481. Շատ հնարավոր է, որ սահմանի բացումից հետո թուրքերը փորձեն գույք և բիզնես ձեռք բերել Հայաստանում և ճնշեն տեղական արտադրողին:

1482. Եթե իմ դրած ստորագրությամբ պետք է ուրանանք մեր արած գործն ու թափած արյունը, ուրեմն ես ինձ չեմ ների:

1483. Մենք որպես հայ չենք կարող ճանաչել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Մենք պահանջատեր ենք:

1484. Կյանքի վատ պայմանները մեզ ստիպել են, որ ամեն ինչի մեջ անվստահություն տեսնենք:

1485. Եթե Հայաստանում նույն իրավունքները տանք թուրքերին, ինչ մենք ունենք, ժամանակ անց նրանք թվով կգերակշռեն մեզ:

1486. Միանգամայն բանականոն է, որ Թուրքիան միշտ էլ պաշտպանելու է Ադրբեջանի ու իր շահերը: Սա իմանալով մենք պետք է կառուցենք մեր հետագա քայլերը:

1487. Իմ կարծիքով թուրքերն ավելի են շահագրգռված սահմանը բացելու մեջ, քան մենք:

1488. Պետք է սպասել և տեսնել, թե թուրքական կառավարությունը ինչպիսի արձագանք կտա այն տեսաերիզներին, որոնք բաժանել ենք թուրքական դպրոցներում՝ Հայաստանը Թուրքիայի կազմում: Եթե նույնը անեին հայերը մեր կառավարությունը կդատապարտեր կազմակերպիչներին:

1489. Եթե հարևաններ ենք այսքան դարեր, պետք է կարողանանք ընդհանուր լեզու գտնենք. կռվի ժամանակ՝ կռիվ, բարեկամության ժամանակ՝ բարեկամություն:

1490. Մենք մեկ-երկու երեխա ունենք, իրենք բազմազավակ ընտանիքներ են պահում: Ոնց տարբերություն չի լինի:

1491. Համաձայն եմ սահմանը բացելուն, բայց մահակը մեր ձեռքից չպետք է գցենք:

1492. Հայաստանի սահմանամերձ տարածքները ավելի քիչ են զարգացած, ուստի սահմանի բացումը նոր շուկա կբացի Հայաստանի համար:

1493. Ցնցված եմ ՀՀ Նախագահի երեկվա ելույթով, հատկապես դուր եկավ այն, որ ՀՀ Նախագահը ընդգծեց, որ թուրքերը հիմար չեն , որ շահ չակնկալեն:

1494. Հարկավոր է սփյուռքի մեր մեծ համայնքներին օգտագործել լոբբինգ իրականացնելու համար:

1495. Մեծից պետք է գնալ փոքրին. կարևորը տնտեսական ձեռքբերումն է, որը պետք է գնահատենք:

1496. Նրանց հագուստը ինձ պետք չի, ինձ պետք է իմ կարտոֆիլն ու հանգիստ քունը:

1497. Անգամ կես դուռ որ բացվի, մեզ օգուտ է: Վրաստանի մենաշնորհը պետք է կոտրել:

1498. Ցեղասպանության մասին խոսելը մի առավելություն ունի. մենք միջազգային ասպարեզում ավելի շատ կողմնակիցներ գրավելու հնարավորություն կունենանք:

1499. Հայաստանը սահման բացել-չբացելու խնդիր չունի: Արձանագրությունների մեջ պետք է նշվի, որ Թուրքիան բարի կամք է դրսևորում և բացում է սահմանը:

1500. Կարծում եմ սահմանը բացելու պահն ու գաղափարը հասունացել է:

1501. Տնտեսական տեսանկյունից եթե հարցին նայենք՝ մենք միանշանակ օգտվում ենք: Վրաստանը մեզ խեղդում է:

1502. Եթե միջազգային հանրությունը, պետությունների ղեկավարները իմանան մեր ճիշտ պատմությունը, ապա անպայման մեր կողքին կկանգնեն:

1503. Սահմանի բացումը շատ հարկավոր է Թուրքիայի համար. նախ՝ Եվրամիություն մտնելու, երկրորդ ՝ տնտեսական կապերն ավելի բարելավելու համար:

1504. Հարկավոր է հստակ տարանջատել քաղաքական և տնտեսական ասպեկտները: Պետք չէ քաղաքական հարցերի պատճառով զսպել տնտեսական զարգացումը:

1505. Սահմանի բացման հաջորդ քայլը լինելու է Թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաչումը:

1506. Զարգացումների այս տարբերակը հնարավոր է, որովհետև պահանջատիրությունից մենք չենք հրաժարվելու ոչ մի դեպքում ու նախապայմաններ չենք ընդունելու:

1507. Եթե դու պետության հետ դիվանագիտական հարաբերություններ ես հաստատում, դա բնավ չի նշանակում, որ դու պետք է այդ երկրի սահմանները ճանաչես: Թեպետ ես օրինակ չեմ կարող բերել:

1508. Սհմանի բացումը արդեն կայացած խնդիր է. երկու կողմերն էլ դրա կարիքն ունեն:

1509. Սահմանը հիմա էլ է բաց. ով ուզում է, գնում է Թուրքիա:

1510. Մենք Սովետական Միության կնքած պայմանագրերի հետնորդն ենք:

1511. Հայաստանը շատ կարևոր խաչմերուկում է, բացի այս մեր ազգը շատ խելացի է: Սա մեր ամենօրյա եփվող ճաշը չի: Մենք դեռ չգիտենք, թե ինչ կլինի սահմանի բացումից հետո:

1512. Եթե ամբողջ աշխարհն էլ ընդունի Ցեղասպանությունը, բայց Թուրքիան չունենա, ապա ոչ մի առաջընթաց էլ չի լինի;

1513. Մենք պետք է սահմանը բացենք, բայց անպայման մնանք պահանջատեր:

1514. Մինչև չփորձես չես տեսնի համը:

1515. Մենք բացելուն դեմ չենք, բայց պետք է զգույշ լինենք:

1516. Դիվանագիտական հարաբերությունները մասամբ կլուծեն մեր քաղաքացիների պաշտպանվածության հարցը Թուրքիայում:

1517. Այսօր ամբողջ Թումանյան փողոցը պարսիկներինն է: Սահմանի բացվելու դեպքում ամբողջ Սայաթ Նովա փողոցն է դառնալու թուրքական:

1518. Մեր գյուղատնտեսությունը կտուժի, որովհետև Թուրքիայի գյուղատնտեսական ապրանքները շատ ավելի էժան են և որակով, հետևաբար դրանց ներկրման դեպքում մեր գյուղատնտեսությունը կտուժի:

1519. Եթե ՆԱՏՕ-ի զորքերը Արարատի լանջերին են, մենք ինչպե՞ս կարող ենք հավակնել այդ հողերին:

1520. Մենք ավելի ենք շահագրգռված սահմանների բացմամբ, քանի որ բացի տնտեսական վատ պայմանները, մենք կարոտախտով ենք տառապում մեր պապենական հողերի հանդեպ:

1521. Սահմանի բացումից հետո կարևորն այն է, որ հայը չմոռանա իր կարևոր խնդիրները: Ինֆորմացիան պետք է մեր երիտասարդների միջոցով սփռել թուրքերի մեջ:

1522. Թուրքերը երբեք հայերին չեն սիրել և նրանք երբեք մեր զարգացումը չեն ցանկանում:

1523. Տնտեսական իրավիճակը խեղդում է քաղաքական նկատառումներին:

1524. Եթե ցեղասպանության ճանաչման համար գրեթե մեկ դար է պահանջվել ու էլի չի հանգուցալուծվել, հողերի վերադարձի հարցն ավելի երկար ժամանակ կպահանջի:

1525. Ատելություն կա թուրքերի ու հայերի միջև, որովհետև պատմական հիշողությունը թարմ է:

1526. Այս գործընթացը պետք է շատ երկար տևի:

1527. Մեր ներկա վիճակը փակ սահմանների հետևանքն է:

1528. Մենք պետք է հստակ իմանանք մեր ակնկալիքները և զիջումները: Մենք պատասխանատու ենք այն ամենի համար, ինչ ստորագրում ենք: Ուստի և պետք է ստորագրենք միայն իրատեսական քայլերի համար:

1529. Երրորդ սցենարը չի լինի:

1530. Ինչու՞ են ՁԱԳՍ-երում գրանցում հայի ու թուրքի ամուսնությունը:

1531. Կարող ենք մի հինգ տարի սպասենք մինչև պարսկական երկաթգիծը բացվի: Հիմա մենք մրցունակ չենք:

1532. Անշուշտ լավ է, որ ունենանք սահմաններ թե՛ Թուրքիայի, թե՛ Վրաստանի հետ . երկու կիսատ-պռատը մեկից լավ է:

1533. Փակ կամ բաց սահմանը մեր տնտեսության մեջ էական նշանակություն չունի:

1534. Ներկա իրավիճակն իհարկե վատ է և մեզ դուր չի գալիս, բայց կարծում ենք, որ սովորական մարդու համար սահմանի բացումը էական ազդեցություն չի ունենա: Մեզ մոտ աղքատների և հարուստների միջև անջրպետը կմեծանա: Ինչպես անցյալում եղավ՝ արագ, անկառավարվող գործընթացներից շատ քչերը շահեցին, բայց ավելի շատերը տուժեցին: Նույնը հիմա է լինելու:

1535. Թուրքերը ամեն կերպ փորձում են տնտեսապես ճնշել Հայաստանին՝ փակ պահելով սահմանը, միևնույն ժամանակ փորձում են դրական կողմերով ներկայանալ համաշխարհային հանրությանը:

1536. Մեր գյուղացին կտուժի, թուրքական բերքը էժան է՝ Էնեգակիրները էժան են, բնակլիմայական պայմանները բարենպաստ են, բերքը առատ է:

1537. Մենք երեք միլիոն չենք, մենք ինը միլիոն ենք: Ու յոթ միլիոն քրդերի հարցն էլ իրականում այդքան սուր չի, մի վախեցեք:

1538. Եթե խոսքը գնում է տնտեսության մասին, ապա միանշանակ պետք է բացել սահմանները:

1539. Հիմա Երևանի կեսը գնել են պարսիկները

1540. Այսօրվա թուրքը ինչու՞մ է մեղավոր, որ իր պապերը եղեռն են արել: Նրանք նույնիսկ չգիտեն իրականությունը:

1541. Ցանկացած մեդալ երկու երես ունի. մենք էլ ենք սպանել, հետո ի՞նչ:

1542. Սահմանի փակ լինելու դեպքում մենք հաղթաթուղթ ենք ունենում. միջազգային ասպարեզում կարող ենք ներկայացնել, որ, այ, տեսեք, Թուրքիան ուզում է մտնել Եվրամիություն բայց հարևանի հետ սահման չի բացում:

1543. Դեռևս քսանական թվականներին իմ պապիկը Վանա տառեխ էր բերում, իսկ վատ կլինի՞, որ հիմա էլ դա անենք:

1544. Հողերի մասին առավելապես խոսում են սփյուռքահայերը: Բայց որ նայում ես՝ մենակ խոսում են: Կտակներում գրում են, թե ինձ մահից հետո կթաղեք Հայաստանում: Բայց ոչ մեկը չի գալիս ապրելու և երկիրը զարգացնելու:

1545. Պետությունը պետք է ստանձնի կարգավորիչ-սահմանափակող ֆունկցիաներ ներկրման նկատմամբ, ինչպես օրինակ վրացիները դա արեցին մեր վրաստան արտահանվող կարտոֆիլի նկատմամբ:

1546. Շարժում է անհրաժեշտ: Անշարժ ջուրը լճանում է: Թեկուզ զիջումների գնով՝ մեզ անհրաժեշտ է չդոփել տեղում:

1547. Մեր նախագահը կգնա ֆուտբոլի խաղին, վարչապետը հետո կգնա լողի մրցումներին... Մի որոշ ժամանակ հետո էլ կմոռանանք Ցեղասպանությունը:

1548. Երկար տարիներ մենք ապրում ենք Թուրքիայի հետ՝ միմյանց վնասելով այնքան, ինչքան հնարավոր է:

1549. Վրաստանի սահմանով թույլ չեն տալիս ոչ մի հայկական գիրք անցկացնել: Ի՞նչ գիտեք, թե վաղը ի՞նչ կանի վրացին: Պետք է սահման ունենալ նաև ուրիշ կողմից:

1550. Պետությունը պետք է այնպիսի պայմաններ ստեղծի, այնպես խթանի, որ մարդիկ շահագրգռված լինեն շատ երեխաներ ունենալ. թոշակառուին բարձր թոշակ տա՝ թոշակառուն էլ երեխա կբերի:

1551. Թուրքը չի գա այստեղ տուն առնի: Եթե անգամ դա լինի, Կառավարությունը պետք է վերահսկի հողի վաճառքը արտասահմանցիներին:

1552. Եթե մենք ուզում ենք առաջ գնալ, պետք է ոչ թե թուրքի վրա շեշտ դնենք, այլ, ասենք, սկանդինավյան երկրների վրա: Սահմանի բաց լինելու դեպքում մենք Թուրքիան պարզապես տարանցիկ ճանապարհ ենք դիտելու:

1553. Միշտ էլ շահում են գերտերությունները: Ցեղասպանությունն էլ գերտերությունների շահերի բախման հետևանքն էր: Դա բնական է:

1554. Ռուսը մեր ռազմավարական գործընկերը և մեր հայրն է, իսկ Թուրքիան մեր հարևանն է, բայց մենք ունենք մեր հարևանի հետ խնդիրներ:

1555. Եվրամիության հետ ճանապարհ, սահման ունենալը մեզ կօգնի:

1556. Բաց սահմանը բացարձակապես էական արգումենտ չի մեր տնտեսության զարգացման համար:

1557. Թուրքերը միշտ ավելի լավ դիվանագետներ են եղել և պատմությունը միշտ կրկնվում է: Մենք այնքան հզոր պետություն չենք, որպեսզի կարողանանք մեր պայմանները թելադրել՝ առանց որևէ կախման մեջ ընկնելու:

1558. Պատմությունը ցույց է տվել, որ մենք լավ հարևաններ չունենք, սակայն պարսիկների հետ հարաբերությունները ցույց են տվել, որ սահմանները պետք է բացել:

1559. Թուրք բիզնեսմենները կգան մեզ մոտ ներդրումներ կանեն, մենք իրենց մոտ՝ օգտագործելով մեր խելքը կզարգացնենք Թուրքիան: Հետո մեզ էլի կկոտորեն, կամ կվռնդեն:

1560. Սահմանի բացումը պետք է քննարկել ցեղասպանության հարցի հետ միասին:

1561. Մենք չպետք է սահմանափակենք մեր ռիսկերը միայն ռազմականով, կան նաև այլ ռիսկեր:

1562. Ես կարծում եմ, սա մեզ տրամադրված շանս է և մենք պետք է օգտվենք սրանից: Մեր դիվանագետներն արդեն շատ աշխատանք են արել սահմանի բացման ուղղությամբ, բայց մենք միշտ պետք է հիշենք թուրքերի կողմից դարերով դրսևորած դիվանագությունը և զգույշ լինենք ու մեր օրենսդրական դաշտն էլ ուժեղացնենք:

1563. Գերտերություններին ձեռնտու չի սահմանի բացումն ու հարցերի լուծումը, որովհետև կկորցնեն իրենց լծակները:

1564. Այսօր գրեթե ամեն ինչ Հայաստանում արտասահմանցիների ձեռքն է: Արդյո՞ք վաղը մնացած ամեն ինչը չի ընկնի թուրք գործարարների ձեռքը: Սա պետք է թույլ չտալ:

1565. Եթե մենք խոսում ենք վտանգներից, ապա առավել արդյունավետ կլիներ, որ սահմանի բացման հարցը լուծվեր ռեֆերենդումով:

1566. Ո՞վ չգիտի, որ մեր պատմության սև ուժերը կապված են մեր հոր՝ Ռուսաստանի հետ:

1567. Մենք կդառնանք թուրքական շուկա սահմանի բացմամբ: Մենք կդադարենք լինել արտադրող երկիր, զուտ վաճառականներ կլինենք:

1568. Համարենք, որ միջազգային հանրությունը մի շենք է, որտեղ երկու հարևան գժտվել ենք: Ի՞նչ վատ բան կա, որ երրորդ հարևանը միջամտում է ու լուծում է այդ խնդիրը, ու ինքն էլ շահում է դրանից:

1569. Սահմանի բացումը նախ և առաջ ժողովրդի որոշելու հարց է, որպեսզի որոշիչ լինեն ոչ թե անձնական շահերը, այլ ազգային:

1570. Ինչ էլ խոսենք, միևնույնն է անելու ենք այնպես, ինչպես անելու ենք: Ես վստահում եմ իմ նախագահին: Թող ընդունի ճիշտ որոշումներ, մենք համաձայն ենք :

1571. Չեմ ուզում դյուրահավատի տպավորություն թողնեմ, սակայն համոզված եմ, որ թուրքերը բացելու են սահմանը:

1572. Եկեք գույքագրում անենք ու տեսնենք թե ի՞նչ ունի այսօր Հայաստանը: Ցանկացած բնագավառում Ռուսաստանը ներկա է:

1573. Մեր ելակետը պետք է լինի մեր շահը: Երրորդ երկրների շահերի հետ մենք գործ չունենք: Մեզ ի՞նչ, որ Վրաստանը կտուժի սահմանի բացումից: Կարևորը, որ մենք չտուժենք:

1574. Երևի ժողովրդի մեծամասնությունը համոզված է, որ սահմանը բացվելու է, որովհետև այս աստիճանի սրություն չէր եղել մեր հարաբերություններում:

1575. Չորրորդ սցենարով մենք գործիք ենք դառնում Ռուսաստանի ձեռքում, ինչը շատ բնական է մեր նախկինում արած սխալ քայլերի հետևանքով:

1576. Այս հարցի լուծման համար հանրաքվե հարկավոր չէ, քանի որ եթե հետագայում զարգացումը գնա բացասական ուղղությամբ, ապա կրկին անգամ մեղավոր կլինի ժողովուրդը:

1577. Եթե Ռուսաստանին այս ամենը ձեռնտու չլիներ, ոչ մի բան էլ չէր լինի: Հայաստանը ամեն ինչ անում է Ռուսաստանի թույլտվությամբ:

1578. Անհրաժեշտ է բացել սահմանը և ՌԴ հետ պահպանել լավ հարաբերություններ:

1579. Մեզ պետք է նախընտրություն չտանք Ռուսաստանին կամ Ամերիկային, այլ առաջ տանենք մեր ազգային շահը:

1580. Մենք գաղութ ենք, ոչ թե պետություն, ու խաղալիք ենք գերտերությունների ձեռքին:

1581. Քաղաքական հարցերում մեզ կօգնի սփյուռքը:

1582. Սա պան-թուրքական գաղափարի իրագործմանը շատ մոտ է:

1583. Այս ամենը կբերի ՆԱՏՕ-ի ամրապնդմանը այս տարածաշրջանում:

1584. Ինչու մեր ազգային անվտանգության հայեցակարգում կարելի է գրել, որ առանց նախապայմանների են լինելու զարգացումները, իսկ այս արձանագրությունում չեն գրում: Ի՞նչ իմանամ, թե թուրքական նմանատիպ փաստաթղթերում իրականում ինչ է գրված:

1585. Տնտեսապես թույլ զարգացած պետությունը միշտ էլ կախվածության մեջ է լինելու ավելի ուժեղ պետությունից՝ որքան էլ հստակորեն գիտակցի իր ազգային ու քաղաքական շահերը:

1586. Սահմանի բացումը ամենևին չի նշանակում, որ մեծ թվով թուրքեր կգան Հայաստան:

1587. Իրանին ձեռնտու չէ սահմանի բացումը ու այս ամենից այդ պետությունը կտուժի:

1588. Մենք միաձուլման խնդիր ունենք: Չի բացառվում, որ կորցնենք մեր ազգային նկարագիրը:

1589. Պետությունը պետք է ոգևորի, խթանի ներքին զարգացումը:

1590. Թուրքն իր ստորագրածը չի իրականացնելու: Դարեդար այդպես է եղել:

1591. Մեր պետության ճիշտ քաղաքականության շնորհիվ մենք կարող ենք կայուն և ամուր դիրք ունենալ տարածաշրջանում և՛ տնտեսական, և՛ քաղաքական առումով:

1592. Ազգային անվտանգության ծրագիրը հաստատվել է, բայց ի՞նչ արդյունքներ է տվել դա: Բացարձակապես ոչ մի:

1593. Ես թուրքերին չեմ վստահում, նրանք միշտ էլ թղթի վրա մի բան են գրել՝ իրականացրել մի ուրիշ բան:

1594. Քաղաքական առումով պետք է պահել փակ սահմաններ, իսկ տնտեսական առումով՝ բացել:

1595. Հինգերորդ սցենարը ուտոպիա չեմ համարում: Դա ժամանակի խնդիր է:

1596. Մենք փոխադարձ վստահության խնդիր ունենք: Մենք պետք է աշխատենք, որ տարիների ընթացքում Թուրքիան ճանաչի ցեղասպանության հարցը:

1597. Սահմանը բացելու փոխարեն այս պահին Հայաստանը պետք է փորձի գրավել այն ենկրների ուշադրությունը, որոնք կարող են տեղում զարգացնել տնտեսությունը, վերաբացել գործարանները և տեղում պահել բնակչությանը, կանխել արտագաղթը:

1598. Հրեաներն առանց զենքի Պաղեստինից հողեր վերցրին, նույնը կարող է մեզ հետ լինել , ինչու՞ չէ: Կարևորը հավատը չկորցնելն է:

1599. Ես կարծում եմ, որ Թուրքիան պետք է հատուցի մեզ:

1600. Սա ուղղակի այն երազանքն է, որի մասին մտածում է ամեն հայ:

1601. Այսպես, թե այնպես սահմանի բացումը տնտեսապես չի ազդի հասարակ մարդկանց վրա, քանի որ գոյություն ունի մոնոպոլիա:

1602. Այսպես թե այնպես հայերը և թուրքերը շփվում են, շփումների հաճախականալու փաստը մեզ չի մտահոգում և վախեցնում:

1603. Առաջինը Թուրքիայի քաղաքական իմիջի հարցն է, ոչ թե հատուցումը:

1604. Մենք այսօր ոչինչ ասել չենք կարող, բայց ամեն ինչ մեր ձեռքերում է:

1605. Էրդողանի՝ Ծիծեռնակաբերդում ծաղիկ դնելը ընդամենը շոու կլինի: Այդտեղ որևէ հաղթանակ, առավել ևս՝ դիվանագիտական, չկա:

1606. Նրանք կանխամտածված Արևմտյան Հայաստանի տարածքները բնակեցրել են քրդերով ու չեն զարգացրել:

1607. Հինգերորդ սցենարը բաղձանք է:

1608. Թուրքերի ու ռուսների տնտեսական շահերի համընկնում հնարավոր է:

1609. Ցեղասպանության ճանաչումը ինքնանպատակ չի: Դրա հստակ նպատակը մեր հողերի վերադարձն ու բոլոր տնտեսական ու ֆինանսական կորուստների փոխհատուցումն է:

1610. Այսօր մենք չենք պատկերացնում, բայց սահմանի բացումը իր հետ կբերի անսպասելի խնդիրներ, քանի որ մի կողմում կա Հայաստան, իսկ մյուսում՝ Թուրքիա և գերտերություններ:

1611. Մենք պահանջում ենք թե՛ բարոյական, թե՛ նյութական հատուցում:

1612. Քիչ հավանական է հինգերորդ սցենարը, թուրքերը դրան չեն գնա այդպիսի արագ տեմպերով:

1613. Հերիք է բավարարվենք բարոյական հաղթանակներով: Մեզ իրական հաղթանակներ են պետք:

1614. Եթե գայլից վախենում ենք, դա չի նշանակում չպետք է գնանք անտառ:

1615. Ախր եկել եք այստեղ, ինչ հարցեր եք քննարկում: Երկու շուն կռվեցին, ճամփորդը շահեց:

1616. Թուրքիան սահմանի բացումը օգտագործում է Ցեղասպանության հարցը լռեցնելու համար

1617. Ինչ է նշանակում ռուսական սեփականություն, ամեն բան ի վերջո մեր երկրում է մնացել, այսօր ռուսն է սեփականատեր, վաղը կարող է ուկրաինացին լինի: Հաջորդ օրն էլ՝ թուրքը:

1618. Այս երկիրը պետք է կին ղեկավարի, որ ամեն ինչ խելքի գա:

1619. Սփյուռքը չլինի՝ հայաստանցիները ցեղասպանության հարցը չեն էլ շահարկի, մոռացության կտան:

1620. Եթե թուրքերի պապերը իրենց արածի համար պատասխան չեն տվել, նրանց ժառանգները պետք է պատասխան տան:

1621. Մեր ժամանակներում նորմալ չի համարվում ունենալ փակ սահման:

1622. Մենք այս հարցերը մենակ չենք կարող լուծել: Ուրիշների աջակցությունն անպայման պետք է:

1623. Եթե մենք ասում ենք, որ դա Թուրքիայի սահմանն է , ուրեմն ինչի՞ ենք ասում, թե դրանք մեր հողերն են:

1624. Թուրքիայում ամենայն խորությամբ ուսումնասիրվել է Ցեղասպանության հարցը ու իրենք շատ լավ գիտեն, թե ինչ կբերի դրա ճանաչումը: Եթե փոխհատուցման հարցը իրականություն դառնա, ապա թուրքական պետությունը պարզապես կոչնչանա:

1625. Հրեաներն ու գերմանացիները իրար հետ խաղաղ ապրում են: Կգա ժամանակ մենք էլ համերաշխ կլինենք թուրքերի հետ:

1626. Մեզանից ոչ մեկն էլ չի վստահում Թուրքիային, բայց դե ինչ արած, նա է մեր հարևանը:

1627. Հավանական է, որ Թուրքիան մեզ այնպիսի պայմաններ առաջարկի, որ սահմանները կրկին կմնան փակ: Եվ այդ ամենը աշխարհին կներկայացվի այնպես, կարծես Հայաստանն է մեղավոր:

1628. Ես չհասկացա, բա մեր իշխանություններն ինչ են անելու, որ հանկարծ թույլ տան, հողերը հետ տալու դեպքում քրդերն էլ հետը գան: Դա պետք է կանխվի:

1629. Ինչքան էլ սփյուռքը դեմ լինի սահմանի բացմանը, քայլ կատարողն ու որոշում ընդունողը Հայաստանն է լինելու:

1630. Տարեցտարի թուրքերի վերաբերմունքը փոխվում է հայերի նկատմամբ, բավական է շուտ-շուտ գնալ մեր պատմական հողերը: Հինգ-վեց տարի առաջ հայերին եղաններով քշում էին, իսկ հիմա անգլերեն լեզվով փող են մուրում մեզանից:

1631. Ես չեմ հավատում, որ Թուրքիան կշարժվի իր հայտարարություններին համահունչ, ամեն բան անում է միայն Եվրամիությանը սիրաշահելու համար:

1632. Մենք որդեգրել ենք միակողմանի սկզբունք և պատմության ընթացքում միշտ ավելի զիջել ենք:

1633. Ասում են ՝ «Հայի հետին խելքը իմը լիներ»: Եկեք մի քիչ երկար մտածենք ու այդ ետին խելքով շարժվենք:

1634. Մեր համար առաջին թշնամին այսօր ազերիներն են: Սահմանը պետք է բացել, որ պատժենք ազերիներին:

1635. Ուշ թե շուտ թուրքերը պետք է ընդունեն ցեղասպանությունը: Բայց դա կլինի այն ժամանակ, երբ ամբողջ աշխարհում կլինի ավելի քաղաքակիրթ դիվանագիտության ժամանակ:

1636. Ադրբեջանցիների հետ ընկերություն անելու մեծ փորձ ունենք մենք: Լավ էլ մարդիկ էին: Դրանց հետ ավելի լավ ընկերություն էր ստացվում, քան հայի հետ: Ամեն ինչ ժամանակի հարց է:

1637. Սփյուռքի մոտեցումը՝ «Աճյունս տարեք Հայաստան», պետք է փոխվի. Հայաստանը գերեզմանոց չի, այստեղ պետք է ապրել:

1638. Սահմանի բացումը վնասում է Ադրբեջանին: Գոնե հանուն այդ փաստի պետք է բացել սահմանը:

1639. Երկու տիրոջ ծառայից դառնալու ենք չորս տիրոջ ծառա:

1640. Ազգը չի կարող լավ կամ վատ լինել: Կան լավ մարդիկ ու վատ մարդիկ:

1641. Թուրքիան պետք է շահ ունենա սահմանի բացումից, աստված տա, որ դա ԼՂ հարցը չլինի:

8. ԳՅՈՒՄՐԻՈՒՄ
կայացած հանրային քննարկման ընթացքում արտահայտված մտքերը

01.10.2009

1642. Եթե մենք պիտի սահմանները բացենք ու մոռանանք ցեղասպանությունը, ապա դա մեզ պետք չէ:

1643. Եթե արձանագրությունը նախաստորագրած է, ուրեմն սա արդեն միջազգային պայմանագրի ուժ ունի: Իսկ այստեղ գրված չի, որ արձանագրությունները կվավերացվեն միայն հանրային քննարկումներից և մարդկանց կարծիքն իմանալուց հետո:

1644. Իմ նախնիները երազել են, որ Ղարսի ճանապարհը բաց լինի: Հիմա կարծես թե մոտ ենք դրան:

1645. Առաջին հերթին պետք է ճշտել ճանապարհային քարտեզը, նոր հասկանալ բացել սահմանը թե՞ չէ: Ինձ համար շատ բան դեռ ունեմ բացահայտելու:

1646. Քաղաքական գիտություն ուսումնասիրած մարդիկ պետք է ավելի շատ քննարկեն այս հարցը: Նրանք շատ ավելի մասնագիտորեն կմոտենան հարցին:

1647. Սահմանը բացելուց հետո ապրանքների գների անկում կլինի, որովհետև հիմա միայն վրացական ճանապարհով է ապրանք ներկրվում, իսկ վրացին, բոլորս գիտենք, թե ինչքան է աշխատում այս իրավիճակից:

1648. Ընդհանուր առմամբ մենք հենց առաջին սցենարով էլ ընթանում ենք:

1649. Սահմանի բացումից ժողովրդի միջին մակարդակը կբարձրանա փոքր բիզնեսի աշխուժացումից:

1650. Առաջին սցենարով մեզ պարտադրվում է բացել սահմանը:

1651. Այս սցենարով հայի վիճակը նշանակալիորեն չի լավանա, միայն կբավարարենք միջազգային հանրությանը:

1652. Մինչև սահմանի փակվելը մեր առևտրային հարաբերությունները շատ սերտ էին ու փոխադարձ վստահություն ունեինք:

1653. Չեմ հասկանում թե ինչու պետք է միայն սահմանամերձ գյուղերը, բնակավայրերը շահեն:

1654. Մենք պետք է դեռ հարաբերություններ հաստատենք, գտնենք խնդիրները, այնուհետև կարող ենք մտածել զարգացման այլ սցենարների մասին:

1655. Մինչև սահմանը չբացվի, դժվար է ասել, թե ինչ տեղի կունենա ու ինչ սցենարով: Կբացենք՝ կտեսնենք: Իսկ բացել անհրաժեշտ է, խաղաղություն է պետք:

1656. Քանի դեռ մեր արտադրանքը մրցունակ չէ, թուրքական ապրանքը ավելի ցանկալի կլինի ու ակամա կողողի շուկան:

1657. Քաղաքականությունը քաղաքական գործիչներին՝ թող նրանք հետագայում որոշեն իրենց անելիքը: Իսկ մեզ համար սահմանի բացումն ու հարաբերությունների հաստատումը միմիայն դրական կլինի:

1658. Ապաշրջափակումը ձեռնտու կլինի թե՛ մեզ, թե՛ թուրքերին և չեմ հասկանում, թե ինչու կա էժան թուրքական ապրանքների մտավախությունը, քանի որ այդ ապրանքներն արդեն իսկ մեր շուկայում են:

1659. Ցանկացած բանակցային գործընթաց թշնամական պայմաններում հնարավոր չէ իրականացնել:

1660. Ես կարծում եմ, որ հայ բիզնեսմենները դեռևս ճիշտ ընկալում չունեն ինչպես ճիշտ բիզնեսավարել:

1661. Եթե սահմանի բացումը չի նպաստելու Հայաստանում մենաշնորհային տնտեսության վերացմանը, ուրեմն իմաստ չունի:

1662. Արդյո՞ք սահմանի բացումը նշանակում է, որ Հայաստանը պետք է համաձայնի Թուրքիայի առաջարկած պայմաններին և մենք կտանենք տնտեսական հաղթանակ, բայց բարոյական պարտություն:

1663. Սահմանի բացումը շատ կարևոր է տնտեսության զարգացման համար, բայց հետագայում շատ հարցեր կա քննարկելու:

1664. Բնական է, որ այս փուլում Հայոց ցեղասպանության հարցը երկրորդ պլան կանցնի, սահմանի բացումը լուրջ առաջընթաց է և միայն հայ-թուրքական հարց չէ, այն նաև գերտերությունների միջամտության հարց է:

1665. Հարստության բաշխման բևեռացման հնարավորություն կլինի, հարուստն ավելի կհարստանա, իսկ աղքատն ավելի կաղքատանա:

1666. Ես արվեստի մարդ եմ ու հնարավորություն եմ ունեցել տեսնելու, թե ինչպես է զարգանում թուրքական մշակույթը: Մեզ համար զարգացած մշակույթի հետ շփվելը կարևոր է:

1667. Այսօր շատ հայ կանայք Թուրքիայում աղախնություն են անում, իսկ թուրք կինը հայ աղախին է պահում, իսկ դա արդեն շատ բան է խոսում մեր երկրների կենսամակարդակների տարբերության մասին:

1668. Ցավոտ թեման մեզ համար մեր դասագրքերն են. դասագրքերը տպագրվում էին Թուրքիայում, հիմա տպում ենք մեր երկրում ու գինը բարձրացավ: Տեսեք. եթե որևէ հումք Եգիպտոսից բերվում է ու անմիջապես մտնում երկիր թուրքական սահմանով. պարզ է, որ ավելի էժան կլինի, քան այսօր է:

1669. Ավելի անտանելի ու ավելի հիմար սցենար, քան առաջինը, պատկերացնել հնարավոր չէ: Սա անիմաստ է:

1670. Ասենք, սահմանը բացեցին: Թուրքիան Ադրբեջանի դաշնակիցն է: Ի՞նչ երաշխիք կա, որ, ասենք, չորս ամիս հետո այդ նույն սահմանը չեն փակի: Հայաստանին կմնա ստորագրված մի խայտառակ պայմանագիր: Իսկ, ընդհանրապես, սահմանը բացել չցանկացողն առնվազն հիմար պետք է լինի:

1671. Առանց սահմանը բացելու մենք հնարավորություն չունենք ինտեգրվելու Եվրոպային:

1672. Եկեք Եվրոպական Թուրքիան և Ստամբուլը չխառնենք ամբողջ Թուրքիայի հետ, և Թուրքիայի շատ տարբեր մասերի համար Հայաստանի ընդհանուր մակարդակը Եվրոպա է:

1673. Գյումրիի համար սահմանի բացումն այնքանով արդյունավետ կլինի, որ փոքր բիզնեսը, անհատ ձեռներեցներ կկարողանան բիզնես անել ու զարգանալ:

1674. Տնտեսական տեսակետից իհարկե սա լայն հնարավորություն է շրջափակումից դուրս գալու համար, բայց մեծ վախ է քաղաքական առումով: Պետք է գնահատել և սեղանի վրա դնել քաղաքական խնդիրները, մասնավորապես ԼՂ և ցեղասպանության կնճռոտ հարցերը:

1675. Նախ սկսենք նորմալ հարևանություն անենք, հետո սկսենք բանակցությունները:

1676. Հազիվ թե գտնվի մի հայ, որը այս գլոբալացման ընթացքում ցանկանա մեկուսանալ աշխարհից և չցանկանա բարելավել մեր հարաբերությունները հարևանների հետ: Մենք պետք է կարգավորենք հայ-թուրքական հարաբերությունները՝ չվնասելով մեր տնտեսությանը և բարոյապես չտուժելով:

1677. Եթե մենք ստորագրենք այս պայմանագիրը, նշանակում է մենք հրաժարվում ենք Հայ Դատից, ճանաչում ենք բոլոր միջազգային պայմանագրերը ու այդ թվում նաև Կարսի պայմանագիրը:

1678. Սահմաններ բացել, չի նշանակում , որ կմոռանանք ամեն ինչ: Շատ ժամանակ երբ շփվում ենք թուրքերի հետ, հայերս շատ թշնամանքով ենք վերաբերվում թուրքերին: Բայց երբ գալիս է պատասխան տալու պահը, մենք չենք իմանում ինչ խոսել: Պետք է երիտասարդներին տեղեկացնել:

1679. Պետք է թուրքերին բերել այն համոզման, որ մենք չենք պատրաստվում զիջել ԼՂ և ցեղասպանության հարցերում: Եթե պետք է նաև չբացել սահմանը:

1680. Մտավախություն կա, որ սահմանների բացման հետ սոցիալապես անապահով խավերը կկորցնեն իրենց բարոյական պատկերը հանուն մեծ փողերի:

1681. Երկու ժողովուրդն էլ բարդույթ ունի հարաբերություններում:

1682. Մենք սիրում ենք օտարամոլություն, և ազգային լուրջ գաղափարախոսություն մենք չունենք, օրինակ դպրոցներում:

1683. Ես հայոց լեզվի ու գրականության ուսուցիչ եմ, ու երբ երեխաներին պատմում եմ Գրիգոր Զոհրապի մասին, հասնելով 1915 թվին, ես չեմ կարող ասել «երեխաներ, կներեք, այս մասը չեմ պատմի»:

1684. Դեմ եմ սահմանի բացմանը, որովհետև այսօրվա բանակցությունները կառավարվում են դրսից, մասնավորապես ՌԴ-ից:

1685. Հաստատ բան եմ ասում. սահմանը բացելու դեպքում հենց մենակ մեր Գյումրին Թուրքիա արտահանելու ապրանք ունի:

1686. Թուրքերն ավելի ագրեսիվ են, քան հայերը...Հարաբերությունների մեջ հայերն ավելի հանգիստ են: Մենք միգուցե թուրքերին նորմալ ընդունենք, բայց այնտեղ մեզ հաստատ լավ չեն ընդունի:

1687. Այսօր գլոբալացման լուրջ քաղաքականություն է տեղի ունենում, և ուզենք թե չուզենք սահմանի բացումը լինելու է: Ու շատ լավ կլինի, որ այդ ընթացքում Հայաստանը դառնա տրանզիտ երկիր: Որպեսզի տրանզիտ դառնալու դեպքում մեր երկիրը ահաբեկչության ռեսուրսների, թմրամիջոցների փոխադրման միջոց չդառնա, ապա մեր համապատասխան կառույցները պիտի հոգ տանեն այդ մասին:

1688. Ես ահավոր սարսափած եմ դեմոգրաֆիական վտանգից: Արաբները ասում են, որ Անգլիայի հաջորդ թագուհին կլինի արաբուհի:

1689. Սահմանի բացման հարցում ճնշման է ենթարկվում ոչ միայն Հայաստանը, այլև Թուրքիան:

1690. Մեր թիկունքում ՌԴ արդեն համաձայնության է եկել Թուրքիայի հետ, դա շատ ցավալի է:

1691. Միայն պետական մակարդակի վրա թողնելով խնդիրը՝ ավելի հեշտ կենթարկվենք գերտերությունների ճնշումներին:

1692. Որպեսզի հայ աղջիկը չամուսնանա թուրքի հետ ու Սուլեյման չծնի, պետք է ուղղակի մեր աղջիկներին ճիշտ դաստիարակել: Սա արդեն մեր ներքին խնդիրն է:

1693. Գյումրին գորգ է արտադրում, որը շատ հարգի կլինի Թուրքիայում: Ավելին ասեմ, վերջերս էլ շինարարական մի բրիգադի հրավիրել էին այնտեղ աշխատելու:

1694. Սահմանի բացումն առավել ձեռնտու է Թուրքիային, քանի որ այդ սահմանամերձ տարածքներում կակտիվանա կյանքը և շրջանառությունը:

1695. Եթե մենք մեր քաղաքական շահերը առաջ չենք տանելու, ինչների՞ս է պետք սահմանի բացումը:

1696. Հարց է՝ ինչու՞ Թուրքիան այսքան շտապեց, կարծում եմ ցեղասպանության հարյուրամյակի վախն է, կամ ԱՄՆ-ի ցեղասպանության ընդունման վտանգը:

1697. Մենք պատրաստ ենք ներողությունը ընդունել ու ներել, թող թուրքերը ներողություն խնդրեն Հայոց Ցեղասպանության համար, ու նոր սկսենք հարաբերվել այդ երկրի հետ:

1698. Ես առաջարկում եմ, որ մենք այլևս մեր սեղանի շուրջը սահմանի բացման հետ կապված չօգտագործենք «եթե» բառը, քանի որ սահմանն անպայման բացվելու է և ոչ թե մեր կամքով, այլ միջազգային գերտերությունների: Այսօր ո՛չ մենք, ո՛չ էլ թուրքերը պատրաստ չենք նման հարաբերությունների, բայց պատրաստ ենք շփման:

1699. Համոզված եմ, որ Թուրքիան սահմանը չի բացի: Իսկ տնտեսական շահով բացատրել սահմանի բացման անհրաժեշտությունը՝ անիմաստ է, բոլորին էլ հասկանալի է, որ դա օգնելու է:

1700. Եթե սահմանի բացումից հետո լարվածություն առաջանա, միևնույն է , կփակենք այն:

1701. Պետք է վստահ լինել, որ տնտեսական զարգացումը շահույթ չի տա միայն մոնոպոլիստներին:

1702. Սահմանի բացումը հատկապես Գյումրիի համար շահավետ կլինի, քանի որ մենք հինգ րոպեում ավելի շուտ կհասնենք Թուրքիա ու Եվրոպա, քան թե Երևան:

1703. Թուրքիան առաջին հերթին խոսում է իր շահերի տեսանկյունից, ինչը պարտադիր չէ, որ միշտ համընկնի Ադրբեջանի շահին:

1704. Այսպես թե այնպես, մենք կապերի մեջ ենք Թուրքիայի հետ: Սահմանի բացումը կնպաստի, որ մենք շփվենք թուրքերի հետ ու այդ դեպքում ցեղասպանության ընդունումը գուցե ավելի հեշտ լինի հասնել:

1705. Եթե մենք ճանաչենք թուրքական սահմանները, թուրքերը հնարավոր է ընդունեն ցեղասպանությունը, սակայն մենք էլ հողերի վերադարձման հարց չենք կարողանա բարձրացնել:

1706. Էսօր Ադրբեջանը կառավարություն չունի, այդ պետությունը կառավարվում է Թուրքիայի կողմից:

1707. Մեր հարաբերությունները պետք է լինեն առևտրի ու տնտեսության մեջ միայն:

1708. Այսօր արդեն իսկ Գյումրիով անցում են մոտ մինչև հարյուր հիսուն թուրքական բեռնատարներ են անցնում, այնպես որ շփումն արդեն իսկ կա:

1709. Թուրքիայի հիմնական խնդիրը մոռացության մատնել ցեղասպանության և հողերի վերադարձման հարցերը:

1710. Հնարավոր է դիվանագիտական հարաբերություններ հաստատել և մնալ պահանջատեր:

1711. Թուրքիան Եվրոմիության աչքին լավ երևալու համար է ուզում սահմանը բացել, նա հիմա ավելի շահագրգռված է: Իսկ մենք էլ պիտի ճիշտ կողմնորոշվենք ու հասկանանք, թե մեզ ինչ է պետք:

1712. Մենք պետք է մնանք պահանջատիրոջ դերում և վարենք ավելի նուրբ քաղաքականություն:

1713. Կարծում եմ, որ Թուրքիան կարող է նաև զիջումներ անել Ղարաբաղի հարցում:

1714. Մենք ինչպե՞ս կարող ենք շփվել մի ազգի հետ, որը թքած ունի մեր ազգի վրա:

1715. Մեր Գյումրին ոչինչ չունի, ինչ սահմանի բացման մասին է խոսքը: Դա ձեռնտու է միայն մի քանի մոնոպոլիստների կամ օլիգարխների:

1716. Ոչ մի կապ չկա ղարաբաղյան հարցի և հայ-թուրքական հարաբերությունների միջև:

1717. Հիմա պետությունը վարկ է տալիս, դու զարգացնում ես տնտեսությունը: Նախորդ տասնամյակում շատերը Թուրքիայից ներկրեցին ապրանքային վարկով:

1718. Ցեղասպանությունը չպետք է մոռանալ ու չենք մոռանում: Երիտասարդ սերունդն էլ է այդ ոգով դաստիարակվում: Բայց չէ՞ որ, մենք ասում ենք Ցեղասպանություն ու գնում Թուրքիայում մարմնավաճառությամբ զբաղվում: Այսինքն, մենք էլի չենք մոռանա ու սահմանի բացումը, թուրքերի հետ հարաբերվելը, առևտուր անելը և այլն դրա հետ կապ չունի:

1719. Եթե ցեղասպանությունը չի ընդունվում, ուրեմն մենք երբեք չպետք է բացենք սահմանը:

1720. Կարծում եմ, որ մեր իշխանությունները ամեն դեպքում խոսելու են ազգային շահերի դիրքից:

1721. Թուրքիան եթե ուզի, կխոչընդոտի զարգացման ցանկացած հնարավորություն:

1722. Ես ծագումով հույն եմ, բայց տատիկս հայ էր ու գիտեմ ցեղասպանության պատմությունը: Ես կողմ եմ, որ Հայաստանը բացի սահմանը Թուրքիայի հետ, որովհետև դա շատ կարևոր է տնտեսության ու բիզնեսի մեջ: Սահմանների բացումը շատ կարևոր է հետագա սերունդների համար:

1723. Ինձ համար կարևոր է, որ առաջին անգամ Հայաստանն ու Թուրքիան հավասար դիրքերից են հարաբերվում, առաջին անգամ մենք պետություն ենք, որն ինքն է իր անունից խոսում:

1724. ԼՂ և մեր պատմական հողերի ու ցեղասպանության հարցերը իրար հետ ոչ մի կապ չունեն: Դրանք պետք է քննարկել տարբեր հարթություններում:

1725. Մենք պետք է Թուրքիայի հետ բարեկամական հարաբերություններ ստեղծենք, որպեսզի կարողանանք ներկա թուրք սերնդին համոզել, որ իրենց պապերը ցեղասպանության հեղինակներ են:

1726. Մենք չպետք է կենտրոնանանք մեր պահանջատիրության վրա, երբ խոսում ենք սահմանի բացման մասին: Պետք է ուրիշ ձև մտածել, կենտրոնանալ տնտեսական օգուտների վրա, պետք է երկխոսել այդ մարդկանց հետ: Չէ՞ որ բոլոր հարցերը բանակցության սեղանի շուրջ են լուծվում:

1727. ՄԱԿ-ի մշտական անդամները պետք է ընդունեն ցեղասպանությունը, դա շատ կարևոր է հայերի համար:

1728. Չնայած հռչակվում է առանց նախապայմանների սահմանը բացելու մասին, սակայն կան շատ հստակ նախապայմաններ՝ սահմանների փոխադարձ ճանաչում, տարածքային ամբողջականություն:

1729. Սահմանի բացումը ի սկզբանե շահեկան է թվում Հայաստանին, սակայն տնտեսական շահը այդքան էլ մեծ չի կարող լինել:

1730. Այն, որ մեր սահմանամերձ գյուղերը դատարկ են, հենց փակ սահմաններն են մեղավոր:

1731. Մեր պահանջատիրությունն ու ցեղասպանության ընդունումը ավելի հեշտ կլինի, եթե բացենք սահմանները: Բարեկամության պայմաններում ինչ-որ բան համոզելն ու ապացուցելը ավելի հեշտ կլինի:

1732. Յուրաքանչյուր պրոբլեմի լուծումը առաջադրելու է նոր պրոբլեմներ: Կարող է սահմանը բացվի, հետո այլ պատճառներով փակվի, մինչև խնդիրներ լուծենք: Հետո հնարավոր է, որ կգա ժամանակ ու կրկին կբացվի սահմանը:

1733. Սահմանի բացման հետ միասին պետք է ավելացնել զգոնությունը, ուժեղացնել անվտանգությունը:

1734. Թուրքիայի կողմից ցեղասպանությունը ճանաչելու դեպքում մենք հույս ունենք, որ մեր պատմական հողերը հետ կգան:

1735. Սահմանի բաց կամ փակ լինելը ոչ մի ձևով չի ազդի ցեղասպանության ճանաչման հարցի վրա:

1736. Երրորդ սցենարի դեպքում Հայաստանը միանշանակ տուժելու է տնտեսապես:

1737. Վերջին հինգ տարիների ընթացքում մենք թուրքերի մոտ մեծ առաջընթացի ենք հասել: Այսօր, ի տարբերություն անցյալի, նրանց մոտ շատերն են արդեն խոսում հայկական հարցի մասին:

1738. Իմ երկու հարևաններն արդեն երեք-չորս տարի Թուրքիայում են ու այնտեղ օդից կախված վիճակում են:

1739. Հայ-թուրքական հարաբերությունների բարելավման արդյունքը կլինի հզորների ցանկությունը:

1740. Եթե ՄԱԿ-ը ընդունի որոշում Իրանի նկատմամբ սանկցիաներ կիրառել, հայ-իրանական սահմանը կփակվի և մենք ավելի մեծ զիջման պիտի գնանք հայ-թուրքական սահմանի բացման հետ կապված:

1741. Մենք պետք է հիշենք, որ այս ամենը ստիպողական է տեղի ունենում՝ գերտերությունների ճնշման տակ: Թուրքիան սրանից կշահի Եվրոմիություն ընդունվելու ճանապարհին:

1742. Բոլոր հզոր պետությունները, կայսրությունները պատմության ընթացքում միշտ կործանվել են: Իսկ Թուրքիան դարասկզբին գրեթե կործանված պետությունից կարողացավ վերականգնվել ու հիմա լուրջ պետություն է դարձել:

1743. Բոլորս գիտակցում ենք սահմանի բացման անհրաժեշտությունը, ինչը նշանակում է, որ այսօրվա վիճակը ընդունելի չէ:

1744. Հայաստանի տնտեսական շահերից ելնելով, մենք պետք է ճիշտ որոշում կայացնենք, սահմանի բացումը կարևոր դեր կլինի մեզ համար:

1745. Մեզ անհրաժեշտ են հստակ մեխանիզմներ, դիվանագիտական հնարքներ, որպեսզի կարողանանք ճիշտ հարաբերություններ հաստատել թուրքերի հետ:

1746. Պետք է հասկանալ, թե ո՞ւմ է առավել շահեկան բացել սահմանը, մեզ թե մեր հարևանին: Այս պահին դա իրենց է ձեռնտու: Մի քանի խաղաքարտեր կհայտնվեն ձեռքում. գերտերությունների աչքում կհայտնվի սահմանը բացող երկիր: ՈՒ այս ամենը միայն Եվրոպային սիրաշահելու համար:

1747. Հայտնի պատմվածքում առյուծը չի հոշոտում իր վանդակը գցած շնիկին, որովհետև նա սիրաշահում է առյուծին: Մենք նման ենք այդ շնիկին ու երաշխիք չկա, որ առյուծը մեզ չի հոշոտի:

1748. Մենք անպայման պետք է թելադրենք մեր նախապայմանները: Թուրքիան ևս կարող է ներկայացնել Ղարաբաղի հարցի հետ կապված իր նախապայմանները, ուղղակի այս երկու հարցերի մեջ մեծ տարբերություն կա: Ղարաբաղի հարցը միանգամյա լուծման խնդիր է, իսկ ցեղասպանության հարցը շարունակական - եթե մերը ճանաչեց, ապա հետո էլ պետք է ճանաչի իր կողմից արված այլ ցեղասպանությունները /Կիպրոս, արաբներ, քրդեր/

1749. Նախապայմանով ընտանիք չի կազմվում, իսկ մենք պատրաստվում ենք մտնել նույն հանրության մեջ:

1750. Ասում են թուրքերը կգան Հայաստան ու կբնակվեն այստեղ: Ոչ, դա տեղի կունենա միայն եթե տանտերը լքի իր տունը: Եթե մենք մեր տունը թողնենք գնանք, իհարկե կգան ու կգրավեն:

1751. Ես մի ամիս առաջ եմ շփվել ադրբեջանցի երիտասարդների հետ և պարզվեց, որ իր շրջապատում ոչ ոք չգիտի , որ նա մեզ հետ շփվում է:

1752. Թուրքիան որպես պետություն ստեղծեցին եվրոպացիները որպես հավասարակշռություն ապահովող գործիք: Սակայն բանը շատ ավելի հեռուն գնաց ու հիմա այդ երկիրը հակակշիռ է դարձել:

1753. Էտ որ մենք գնացել Գլենդելն ու Հոլիվուդը գրավել ենք լավ է՞: Բա ինչպե՞ս է, որ չեն վտարում մեզ այնտեղից: Հիմա վախենում ենք թուրքից ու քրդից մեր հողի վրա՞:

1754. 15000 Մարգարա-Իգդիր ճանապարհով գնում են աշխատանքի, չի բացառվում նաև կոնֆլիկտը հայերի հետ: Քրդերը նույնպես կարող են մեծ խնդիրներ առաջացնել:

1755. Մենք ոչ մի երաշխիք չունենք, որ սահմանների փակ լինելու դեպքում կարող են առաջ տանել մեր ազգային շահերը:

1756. Երբ նոր տուն ես կառուցում, պատուհան ես ուզում բացել՝ հարևանիդ հետ վեճ ես սկսում, բայց ինչքան էլ վիճեք, այդ պատուհանը բացվում է, չէ՞:

1757. Թուրքիան լուրջ շահեր ունի Ադրբեջանում, իսկ իր եղբորը հանուն մեզ նա չի նեղացնի:

1758. Թուրքիան այսօր լուրջ տնտեսություն ունի: Սահման որ բացվի, օրինակ, թուրքական կառավարությունը դոտացիա կտա Կարսի թռչնաբուծական ֆաբրիկային ու ձուն 22 դրամով կլցվի Գյումրի: Սա՞ ենք ուզում:

1759. Այս սցենարների բոլորի մեջ հետաքրքիր բաներ կան, ուղղակի հարցը նրանում է, որ մեր ժողովուրդը հոգեբանորեն պատրաստ չի դեռ սահմանի բացմանը կամ զարգացումներին: Սահմանի բացումից հետո հնարավոր է ցայտնոտ:

1760. Հարցերը պետք է քննարկվեն իրավական դաշտում:

1761. Ազգային հարցերը ընդհանրապես կապված չեն սահմանի բացման-չբացման հարցի հետ: Սահմանի հարցը ընդամենը տնտեսական ազդեցություն կարող է ունենալ:

1762. Բացառվում է, ճիշտ հասկացեք, մենք հայկական հարցի լուծումից չենք հրաժարվում, պարզապես սահմանի բացելը խոչընդոտ չի դրան:

1763. Մենք հաստատ խնդիր կունենանք նաև քրդերի հետ, չէ՞ որ հիմա նրանք են ապրում մեր հողերում:

1764. Ռուսաստանը մեզ միշտ էլ «վաճառել» է:

1765. Ախր միջազգային օրենքներով, կարգավորումներով արդեն իսկ հաստատված, ընդունված է Թուրքիայի սահմանը:

1766. Հայաստանին ուժեղ ՌԴ-ն ձեռնտու չէ: Երբ «Ցարական Ռուսաստանը» տապալվի, նոր հայկական հարցերը կլուծվեն:

1767. Քրդերի ներքին ֆակտորը հաստատ թուրքերը կկարողանան շահավետորեն օգտագործել:

1768. Այսօր Թուրքիան ունի Ադրբեջանի նավթի ու գազատարի կարիքը:

1769. Այսօր ամռանը շաբաթը չորս անգամ ինքնաթիռ է գնում Երևան-Ստամբուլ: Այսինքն, շփումն արդեն կա: Մնում է պաշտոնապես ընդունել այդ շփումն ու սահմանը բացել: Դրանից հետո մենք իրար ավելի լավ կճանաչենք որպես հարևաններ ու ճիշտ կկողմնորոշվենք հետագա զարգացումների առումով: Դա կլինի երկար գործընթաց, բայց դրանից վախենալ պետք չի:

1770. Գերտերությունների խնդիրն է մասնատել Թուրքիան, իսկ Հայաստանը այդտեղ ոչ մի շահ չունի:

1771. Չի կարելի ասել, մինչև սահմանը չբացենք, ինչ իմանանք, թե ինչ կլինի: Խելացի են այն ազգերը, ովքեր ճիշտ կանխատեսումներ են անում ու իրենց քայլերը խելացի են դասավորում:

1772. Պետք է առաջնահերթ քննարկել այն հարցը, թե ի՞նչ կտա մեզ Ցեղասպանության ճանաչումը: Սրա հետ զուգահեռ մենք պետք է բարձրացնենք տարածքների վերադարձի ու փոխհատուցման խնդիրը: Այլապես անիմաստ է խոսել Ցեղասպանությունից:

1773. Մեծ տերությունների քաղաքականությունն է՝ բաժանիր և տիրիր: Նրանք հիմա էլ են դա անում ու այդտեղ հայերը չեն շահում:

1774. Քաղաքականության մեջ ոչինչ հենց այնպես չի լինում: Կան երրորդ կողմերի շահեր, որոնց համար պետք է այս սահմանի բացումը:

1775. Բաց սահմանը կարող է հանդիսանալ ավելի մեծ թվով խառը ամուսնությունների առիթ, վտանգը կավելանա:

1776. Փակ սահմանի դեպքում մենք ոչինչ չենք շահում, ընդհակառակը, ամեն ինչ ավելի կվատանա: Իսկ բաց սահմանի դեպքում ամեն ինչ մեզնից կախված կլինի՝ կկարողանանք, կշահենք, չէ՝ չենք շահի:

1777. Պետք չէ մոռանալ, որ հարյուրավոր տարիներ հայերը ապրել են թուրքերի հարևանությամբ և ոչ մի մերձեցում չի եղել:

1778. Բոլորն էլ շահում են: Սահմանի բացումը ելնում է մեր երկու երկրների շահերից, իսկ հետո նոր այլ երկրները:

1779. Նախապայման չի ի՞նչ է, որ պատմական ենթահանձնաժողով է ստեղծվելու: Ուրուգվայից լուրը լսեցի՞ք. հիմա էլ նոր պետություններ են ի հայտ գալիս, որոնք տարակուսում են՝ հայերս ինքներս ե՞նք կասկածի տակ դնում ցեղասպանությունը:

1780. Մենք պետք է կարողանանք Ռուսաստանի շահին զուգահեռ առաջ տանենք մեր շահերը: Մեզ օրինա՞կ չի Վրաստանը, Աբխազիան: Ռուսաստանին պետք է շոյել, շահել նրա բարեհաճությունը:

1781. ԱՄՆ-ի շահը ՆԱՏՈ-ի սահմանը բաց պահելն է՝ Հայաստանի տարածքը օգտագործելով: ՌԴ-ի շահը՝ ՌԴ-ի Գյումրիի բազայի կապն է ոչ միայն օդով: Վրաստանը շահ չունի: Իրանը շահ կունենա, եթե ՌԴ-ն ունենա, իսկ եթե ՆԱՏՈ-ն մտնի Հայաստան, ապա Իրանն էլ շահ չի ունենա:

1782. Իսկ ի՞նչ է, փակ սահմանի դեպքում ռուսը իրեն պատկանող գործարանը Հայաստանում չի՞ կարող վաճառել թուրքին: Սահմանի բացումը դրա հետ կապ չունի:

1783. Մենք էլ պիտի քրդերի ցեղասպանություն անե՞նք ..Ուր ուղարկենք 28մլն քրդերին, անգամ եթե մեր հողերը մեզ տան:

1784. Անպայմանորեն հնարավոր է նման կախվածություն, ռուսական ազդեցությունը հաշվի առնելով հասկանում եմ, որ ռուս-թուրքական շահերն ավելի մեծ կլինեն:

1785. Որոշ օլիգարխներ սահմանի բացումից անպայման կշահեն, բայց հասարակ ժողովուրդը՞...

1786. Այսօր Թուրքիայում կառավարում է խիստ հետադիմական կուսակցություն: Այնտեղ կանայք չալմայով են ման գալիս: Դրանով ես ենթադրում եմ, որ եթե Թուրքիան արդեն ընկել է այս առաջադիմական հարցի մեջ, ուրեմն ինքը չի բացում սահմանը, այլ մի երրորդ կողմը: Նկատի ունեմ Եվրոմիությունը:

1787. Ամեն դեպքում Գյումրին շահում է տնտեսապես բաց սահմանի դեպքում:

1788. Թուրքերի հետ մերձեցում չի լինի, ինչպես և այսքան ընթացքում չի եղել վրացիների հետ:

1789. Մեզ պետք է համախմբվել: Վաթսուն կուսակցության փոխարեն պետք է ունենալ երեքը, որոնք բոլորը նույնն բանն են ասում:

1790. Թուրքիան պետք է միանշանակ ներողությունը խնդրի: Ցեղասպանության ենթարկվածները պետք է ստանան նախատեսված ամբողջ փոխհատուցումը:

1791. Հայաստանը սահմանի բացումից գոնե մի քիչ կշահի, գոնե կդառնա տրանզիտ երկիր: Ուղղակի հարց է Հայաստանը ճիշտ քաղաքականություն կվարի՞ թե չէ:

1792. Հողերը ներկա վիճակով հետ տրվելու դեպքում մի հինգ տարվա մեջ մեր երկիրը կոչվի Հայաստանի Քրդական Հանրապետություն:

1793. Թուրքիայի հետ մեր հարաբերությունները կարգավորելուց առաջ, մենք պետք է նախ մեր ներքին խնդիրները լուծենք, որ ուժեղանանք ու հնարավորինս ուժեղ դիրքերից խոսենք թուրքերի հետ: Պետք է մի ազգի նվիրյալ մի օր գա իշխանության ու ասի "բավական է, այսպես ապրել չի կարելի":

1794. Երբ մի բան ուզում ես, պիտի զիջում էլ անես....Սահմանը բացելով մի լավ խաղաքարտ կորցնում ենք:

1795. Իսրայել պետությունը ստեղծեց Գերմանիան՝ գենոցիդի ենթարկելով հրեաներին: Իսկ մենք չենք կարողանում օգտագործել ցեղասպանության հարցը:

1796. Թուրքերը այսօր ունեն հիանալի ինտելիգենցիա, շատ լավ կրթված երիտասարդություն, ուստի և պետք չէ թերագնահատել մեր թշնամուն: Հարկավոր է ավելի զգոն լինել:

1797. Կունենանք այլընտրանքային ճանապարհ՝ Վրաստանից անկախ: Սահմանի բացումը կբերի 10-20 տոկոս աճ:

1798. Եթե քրդերի մասին այդպես վախեցած մտածենք՝ եկեք սահմանը չբացենք, ինչ է թե քրդերը կգան ու այստեղ կբնակվեն: Մանավանդ, որ այստեղ հարազատներ ունեն:

1799. Հայերը աշխատում են աշխարհի բոլոր երկրներում. իսկ ո՞րն է պատճառը. տնտեսական շահը: Հիմա մենք ինչպե՞ս ենք ասում, թե քաղաքական շահը առաջնային:

1800. Սահմանի բացումը ժամանակավոր բնույթ կկրի: Հենց ԼՂ հարցը լուծվի մեր օգտին, հաջորդ օրը թուրքերը մի թուրք կսպանեն հենց Գյումրիում, կգցեն մեր վրա, սահմանը կփակեն:

1801. Այսպես թե այնպես, այս ամենից գերտերություններն են շահում: Բայց մենք չէ՞ որ խելացի ազգ ենք: Եկեք այնպես անենք, որ այս ամենից առավելագույնս օգտվենք:

1802. Ինչպես կարելի է մոռանալ մեր տարիների պատմությունը, ցեղասպանությունը և փորձել սպրինտային արագությամբ լուծել այսքան հին և մեծ հարցը:

1803. Ցանկացած պետություն եթե օգնում է մի այլ պետության, ապա միայն իր շահերը առաջ տանելու նպատակով:

1804. Ադրբեջանը գազ ունի, որը ուրիշ ճանապարհներով է արտահանում: Լավ հարաբերությունների դեպքում այն կանցնի Հայաստանով, որից մենք շատ կօգտվենք:

1805. Վերջերս թուրքական Զամանն Այսօր թերթում տպվել էր մի հետաքրքիր հոդված, որտեղ ասվում էր, թե լավ, ասենք, թե համաձայն ենք, որ այստեղ հայեր են ապրել, որոնք որ տեղահանվել են, հիմա եկեք, նորից այստեղ ապրեք հայերով, բայց հողերը հետ չեն տրվի:

1806. Էլի մի համաշխարհային վերաձևվում որ լինի, դժվար թե վիճակն այնքան լավ լինի, որ քարտեզը գծեն, մեզ մեր բոլոր հողերը տան ու ասեն՝ սա էլ Հայաստան աշխարհը:

1807. Ռուսաստանը փորձում է ինչ-որ կերպ նպաստել այս հարցին, քանի որ Վրաստանի հետ լուծելու խնդիրներ ունի:

1808. Թուրքիային շատ հարկավոր է Գյումրիով անցնող երկաթուղին, իսկ Գյումրիի համար դա վա՞տ է:

1809. Բոլորս գիտենք պատմությունից, որ կայսրությունները կործանվում են. եկեք սահմանը բացեք, կործանվեն գնան:

1810. Սահմանի բացումը փոխադարձ ձեռնտու է. ես կողմ եմ սահմանը բացելուն:

1811. Եկեք հիշենք, որ թուրքը մեզնից հող չի գրավել: Եվ նրանք ճիշտ են: Մենք որևէ պատմական փաստաթուղթ չունենք, որտեղ ասվում է, թե թուրքերը մեր հողերը զավթել են, որ հիմա էլ հետ տան:

1812. Ռուսաստանը ի՞նչ շահ ունի սահմանի բացումից. ինքը արդեն իսկ ուղիղ ճանապարհ ու շփում ունի Թուրքիայի հետ:

1813. Սահմանի բացումը կվնասի միայն գյուղացուն, մնացած բոլոր առումներով մենք զարգացում կունենանք:

1814. Հայաստանն էլ, Ադրբեջանն էլ խամաճիկներ են Ռուսաստանին ձեռքին: Սահմանի բացումով ավելի է մեծանում մեր կախվածությունը Ռուսաստանից:

1815. Մենք հին հայկական ասացվածք ունենք - հայերը նման են կարտոֆիլի, լավագույն մասը հողի տակ է: Մենք լոպազ ենք: Շատ ենք սիրում նացիոնալիստական բաներից խոսել, գնալ Եռաբլուր, բայց իրականում գործնական հայրենասիրություն չունենք:

1816. Հինգերորդ սցենարը քիչըմ ուտոպիական է, բայց բաղձալի:

1817. Եկատերինան Պոտյոմկինի հետ խորհրդակցում է, սա էլ ասում է՝ եկեք հայերին ու հույներին Ղրիմից տեղափոխենք Դոն. ստեղծագործ ու արարող ժողովուրդ են, տափաստանը կծաղկացնեն: Այդպես էլ եղավ, չէ՞...

1818. Կան գերտերությունների շահեր, որոնք Հայաստանի հարցում համընկնում են: Սա իրականություն կլիներ այն ժամանակ, երբ երկրի վրա լինեինք միայն Մենք ու Ավստրիան:

1819. Սահմանները պետք է բացել միայն այն դեպքում, երբ Հայաստանը առաջ է քաշում իր նախապայմանները:

1820. Հրեաները չեն նստել ու պահանջեն արաբներից, որ ընդունեն, թե իրենց կոտորել են: Ավելի ճիշտ վարվեցին. հզորացան ու հիմա ինչ ուզում են, այն էլ արաբների գլխին բերում են:

1821. Ժամանակի ընթացքում մենք կսկսենք մեկս մյուսին հարգել, երկկողմանի ճանաչում կլինի, բայց երևի թե մենք երբեք չենք ընկերանա թուրքերի հետ:

1822. Այս հարցի լուծման հապճեպությունը թույլ չի տալիս հաշվի առնել հասարակ ժողովրդի կարծիքը: Արդյոք մեր այսօրվա ղեկավարությունը պատրաստ է պատասխան տալ կատարած քայլի համար:

1823. Եթե սահմանը բացվի, վախենում եմ, որ էդ երկրի բարքերը ավելի շատ գան մեր երկիր:

1824. Մենք չենք կարող համաձայնել «ներողության»: Բա պատմական հողե՞րը:

1825. Թուրքերը քրդերի միջոցով են հայերին բնաջնջել: Հայաստանի ու Թուրքիայի արագ մերձեցման դեպքում առաջին վտանգը կլինեն մեր հարևանությամբ ապրող քրդերը:

1826. Եթե մեզ Ցեղասպանության ճանաչումը կոնկրետ, որոշակի օգուտներ չի բերելու, ուրեմն անիմաստ է այդ հարցը առաջ քաշել:

1827. Ռաֆֆին ասում էր, անկիրթ թուրքը անկիրթ գազան է, իսկ կիրթ թուրքը կիրթ գազան է: Այս սա երբեք չպետք է մոռանանք ոչ մի սցենարի դեպքում: Պետք է համ վստահենք, համ ստուգենք:

1828. Մենք կկորցնենք սփյուռքի հայերին, եթե համաձայնենք հինգերորդ տարբերակին:

1829. Հարկավո՞ր է, որ այսօրվա քննարկման արդյունքները հասնեն մեր ղեկավարությանը և ղեկավարությունը գործի համապատասխանաբար:

1830. Գերհզոր պետություններն ամեն բան անում են, որ պահպանեն բալանսը:

1831. Թուրքիայի «ներողությունը», անվտանգության երաշխիք է:

1832. Ինձ համար ավելի լավ է, որ պարսիկների հետ շփվենք, նրանք գոնե իրենց սխալը զգացել են ու հանդարտ ապրում են:

1833. Ավելի արա՞գ զարգանան հարաբերությունները... բայց ինչ զոհողությունների ու ռիսկերի գնով: Պետք չէ:

1834. Քեմալը Լենինի հետ խաբեց հայերին ու կնքեցին պայմանագիր: Այդ խաբեություն մասին պետք է իմանա թուրք հասարակությունը:

1835. Մեր խոսակցությունն անիմաստ է, եթե կան օտարերկրյա ճնշումներ հարցի վերաբերյալ:

1836. Եթե այսօր բացվեն սահմանները, ապա հաջորդ քայլում Ռուսաստանը կփորձի միջամտել բոլոր հարցերի լուծմանը և ներ կգրավի իր զորքերին:

1837. Գերտերությունները չեն սպասում, ստիպում են արագացնել պրոցեսները:

1838. Ցեղասպանության զոհերի մասին ցավակցական արտահայտությունները մեզ բարոյական հաղթանակ են ապահովելու, ինչի կարիքը չունենք:

1839. Մի դիպված պատմեմ: Երևանում երկու հարևանուհի անընդհատ գնում, գալիս են Թուրքիա ապրանք բերելու: Նրանցից մեկը մի անգամ իր ապրանքը մոռանում է Թուրքիայի խանութում, և երբ մի քանի ամսից գնում է այնտեղ, իրեն ասում են, կներեք մենք ձեր ապրանքը քանդել ենք, այդքան չէինք կարող սպասել, բայց ահա դրա դիմաց վերցրեք Ձեր փողը: Այ այսպիսի բան մեր մոտ անհնար է: Մենք էլ սահմանի բացման դեպքում կսովորենք նման բաները, որը անվանում ենք Եվրոպական ազդեցություն Թուրքիայում:

1840. Մեկ պարզաբանում. մենք որևէ թշնամանք չունենք թուրք ժողովրդի նկատմամբ: Ինչպե՞ս կարելի ատել որևէ ժողովրդի: Մեր թշնամին թուրք պետությունն է, որը Կոստանդնուպոլիսը գրավելուց հետո դոկտրինա է մշակել հասնելու Թուրքմենստան:

1841. Ղարաբաղի հարցը մի փոքր այլ է. մենք ոչ մի թիզ հող չենք տա:

1842. Այս խաղը չի սկսվել Հայաստանի առաջարկով, մենք եղել ենք օբյեկտ, հիմա դարձանք սուբյեկտ:

1843. Որպեսզի ամեն ինչ մեր երկրների միջև նորմալ ընթանա, մեզ պետք է դանդաղ շտապել:

1844. Եթե թուրքերի ազդեցությունը մեծանա, Ռուսաստանի շահերից կբխի ավելի ամրապնդվել այստեղ:

1845. Սահմանը բացվելուց հետո թուրքերը կարող է հասնեն մինչև Ադրբեջան ու հետո ներողություն խնդրեն: Հետո՞:

1846. Ժամանակի ընթացքում մենք կսկսենք մեկս մյուսին հարգել, երկկողմանի ճանաչում կլինի, բայց երևի թե մենք երբեք չենք ընկերանա թուրքերի հետ:

1847. Ինչպե՞ս կարելի է թույլ տալ, որպեսզի ստեղծվի պատմական հանձնաժողով, ու հանկարծ թուրք պատմաբանը իր արխիվից հանի մի փոշոտ կեղծ փաստաթուղթ ու սկսի ապացուցել, որ ընդհակառակը՝ հայն է թուրքին սպանել:

9. ԱՐՄԱՎԻՐՈՒՄ
կայացած հանրային քննարկման ընթացքում արտահայտված մտքերը

02.10.2009

1848. 1993-ի ապրիլին Թուրքիան փակեց սահմանը՝ ունենալով մի նպատակ. շարունակել իր պանթուրքիստական քաղաքականությունը: Տնտեսապես թուլացնելով Հայաստանին՝ Թուրքիան հեշտությամբ կգրավեր Հայաստանը:

1849. Մեր հակամարտությունը մեր գենետիկայի մեջ է, ու սահմանը բացելուց հետո մենք հաստատ լուռ չենք նստելու: Մենք երևի կփորձենք օգտվելով առիթից թուրքական անտեղյակ հասարակությանը տեղեկացնել Ցեղասպանության և մեր հողերի մասին:

1850. Սահմանի բացման հետ կապված կան որոշակի մտավախություններ. հասարակ ժողովուրդը հոգեբանորեն պատրաստ չէ նման քայլի, սակայն պարզ է, որ կլինի տնտեսական օգուտ:

1851. Սահմանի բացման շահարկումը ունի մի նպատակ՝ սեպ խրել Հայաստանի ու սփյուռքի, Հայաստանի ու Արցախի մեջ:

1852. Եթե սահմանը բացվի, կուզեի որ տնտեսական զարգացումներ լինեին, այլ ոչ թե միայն զբոսաշրջության մակարդակով իրականացվի կապը: Առանց այդ էլ գնալ-գալ հնարավոր է, առանց տնտեսական շահի անիմաստ կլինի:

1853. Մտավախություն ունեմ, որ գերտերությունները կմիջամտեն:

1854. Յուրաքանչյուր հայ այս հարցերի մասին պետք է ունենա իր ասելիքը: Տնտեսությունն է որոշում քաղաքականությունը: Առաջին տարբերակը համ ռեալ չի, համ էլ ոչ ցանկալի:

1855. Սահմանի բացումը կբերի թրաֆիքինգի զարգացմանը: Այս պահին էլ խանգարող քիչ հանգամանք կա, բայց սահմանի բացումը առավել կնպաստի հայ աղջիկների հետ կապերին:

1856. Սահմանամերձ հատվածի բնակիչներս մեծ մտավախություն ունենք. այսպես գոնե ապահով ենք, իսկ սահմանը բացելու դեպքում մենք այդ վստահությունը չենք ունենա: Մենք չգիտենք, արդյո՞ք փոխվել է նրանց գենոֆոնդը:

1857. Սահմանի բացումից հետո կշահեն խոշոր բիզնեսմենները, բայց կշահի նաև մեր տնտեսությունը:

1858. Սահմանի նույնիսկ ֆորմալ բացումը օգտակար կլինի երկու կողմերին. ասենք, մենք մեր պղինձը Իսպանիա կամ Ամերիկա արտահանելու փոխարեն կարտահանենք Թուրքիա:

1859. Մենք ունենք չլուծված պատմական լուրջ խնդիրներ և մինչև այդ խնդիրները չլուծվեն, պետք չէ սահմանը բացել: Թող ճանաչեն Ցեղասպանությունը, ապահովվի մեր ազգային անվտանգությունը և որպես միջազգային հանրությանը արժանի երկիր նոր բացենք սահմանը և ինտեգրվենք: Հիմա շուտ է: 20 տարի դիմացել ենք, էլի կդիմանանք:

1860. Այս սցենարի դեպքում մենք ավելի շատ ունենք վնաս, քան թե օգուտ: Ներկրողներն ավելի շատ կլինեն, և եթե հիմա մենք ունենք միջին բիզնես, ապա այս զարգացման դեպքում հենց նրանք կկրեն առաջին հարվածը: Ես չեմ տեսնում ռեալ տնտեսական զարգացում հայերի համար, բացի մի քանի օլիգարխներից:

1861. Ուզում եմ նախ իմանալ, թե ով է այս նախաձեռնության հեղինակը: Եվ արդյո՞ք Հայաստանը հնարավորություն ունի այս կերպ լուծել հայկական հարցը:

1862. Թուրքերը միշտ ունեցել են ավելի հեռահար նախագծեր, իսկ մենք մեր հաշվարկների վերջում սխալվել ենք և կորցրել:

1863. Տնտեսությունը կշահի միայն այն բիզնեսներում, որտեղ մոնոպոլիա չկա:

1864. Սահմանի բացումը չպետք է նպաստի զուտ մոնոպոլիստների զարգացմանը, այլ պետք է նաև նպաստի փոքր գործարարների բիզնեսի զարգացմանը:

1865. Քրդերով է բնակեցված մեր պատմական հողերի մեծ մասը, ուրեմն առաջիկայում մենք գործ ենք ունենալու քրդերի հետ:

1866. Բայց չ՞է որ դեպի Եվրոպա գնացող ճանապարհն էլ է օգուտ, որը մեզ համար այս դեպքում բացվում է:

1867. Պետք չէ խաղալ միջազգային խաղերը և մոռանալ մեր ազգային ինքնությունն ու մեր պետականությունը դնենք վտանգի տակ:

1868. Մեր բնակչության մեծամասնությունը «յոլա գնացողներ» են, իսկ սահմանը բացելուց կօգտվեն օլիգարխները:

1869. Մեր շահը կայանում է նրանում, որ մենք կունենանք ևս մի կապող օղակ աշխարհի հետ, այլընտրանքային ճանապարհ և կախվածությունը Վրաստանից կթուլանա:

1870. Շատ լավ է, որ հիմա կլինի հնարավորություն տարածաշրջանային ներդրումների համար: Այսպես փակ սահմանով այլևս հնարավոր չի ապրել:

1871. Այսօր Թուրքիայում չկա այնպիսի գյուղատնտեսական ապրանք, որը Հայաստանից էժան լինի, այսինքն այդ առումով վտանգ չկա:

1872. Մենք պետք է ճիշտ կողմնորոշվենք. արդյո՞ք սխալ քայլ չենք անում, չէ՞ որ երկրորդ պլան ենք մղում մեր քաղաքական կարևոր խնդիրները:

1873. Անցյալ օրը տեսանք, որ թուրքական դպրոցներում դասագրքերում Հայաստանը չկա, հայկական հողերը իրենց պետության կազմում են ցույց տալիս: Սա արդեն ահազանգ է ու ուղեցույց, թե ինչպես են իրենց հարցը լուծել ուզում:

1874. Այս նախաստորագրված արձանագրությունով Թուրքիան փորձելու է իրավական հիմք ստեղծել մուտք գործելու Անդրկովկաս, հետո էլ՝ Միջին Ասիա: Դեմ եմ այս ֆորմատին:

1875. Լավ կլինի, որ սահմաններ չլինեն, դա շատ պրոգրեսիվ է, սակայն հարցը պետք է թողնել ավելի խորը վերլուծաբանների:

1876. 1927-ին Ամերիկան դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Թուրքիայի հետ, բայց այն ժամանակ էլ նրանց Կոնգրեսը չվավերացրեց այդ արձանագրությունները: Որոշ ժամանակ անց նրանք դարձան մոտ դաշնակիցներ:

1877. Հարյուր տարի է, ինչ մենք դիվանագիտություն չենք ունեցել: Հիմա սկսել ենք դիվանագիտությամբ զբաղվել: Ղարաբաղի պատերազմը սկսելուց առաջ էլ էինք վախենում, հիմա էլ մի պայմանագիր ստորագրելուց ենք վախենում:

1878. Մեր բնակչությունը այսօր անօրինական մեկնում ու առևտուր է անում Թուրքիայի հետ: Թուրքական ապրանքը այսօր ողողել է Հայաստանը: Սահմանը բացելու դեպքում այդ առևտուրը կկանոնակարգվի ու կվերահսկվի:

1879. Գյուղատնտեսական ապրանքների հսկայական հոսք կլինի Հայաստան և գներն էլ կիջնեն:

1880. Ես կարծում եմ, որ չի կարելի անընդհատ հետ նայել, պետք է առաջ նայել, նկատի ունենալ, թե ինչ հնարավորություններ ունենք: Վրաստանի հույսին մնալ՝ նշանակում է էլի ճանապարհ չունենալ: Ամեն անգամ այս կամ այն հարևանի հետ հո՞ չենք կարող գժտվել, որի՞ց հրաժարվենք կամ ո՞ւր գնանք:

1881. Դարը փոփոխություն է բերում, մենք չենք ուզում մոռանալ ցեղասպանությունը: Բայց գուցե եկել է ժամանակը հարևանին ավելի լավ ճանաչելու: Գուցե սահմանը բացելուց հետո ավելի լավ կկարողանանք մեր ճշմարտությունը քարոզել

1882. Սահմանի բացումը չի նշանակում սահմանի ֆիզիկական դեմոնտաժ, սակայն այսօր ժողովրդի մեծ մասը հենց այդպես է պատկերացնում իրավիճակը և դրանից ծագում են որոշակի մտավախություններ:

1883. Չէր լինի Հոլոքոստ, եթե չլիներ Հայոց Ցեղասպանությունը: Դրա մասին բառացի Հիտլերն է ասել մինչև Երկրորդ Աշխարհամարտը: Ի՞նչ երաշխիք, որ սահմանը բացելուց հետո ամեն ինչ նույն կերպ չի լինի և՛ քաղաքականապես, և՛ տնտեսապես:

1884. Արձանագրությունն ունի քողարկված ձև:

1885. Մենք դեռ պահանջատիրական հույսեր ունենք, որոնք այս սցենարի դեպքում, ցավոք սրտի, մենք չենք կարող շարունակել մեր պահանջատիրական նկրտումները:

1886. Այսօր ժողովուրդը պետք է երաշխիքներ ունենա և կառավարությունը հավաստիացնի ժողովրդին, որ վտանգները չեն ավելանա:

1887. Տնտեսական կապերն ու շփումները կբերեն բարոյական, կրթական ու մշակութային շփումների: Սա ունի լավ և վատ կողմեր, բայց այս շփումը պետք է:

1888. Շատ էլ լավ կլինի. էսօր Վրաստանով ենք գնում, բաց լինելու դեպքում ուղիղ կգնանք, մեր պապական հողերը տեսնելու հնարավորություն կունենանք:

1889. Մեր արդյունաբերական տեխնոլոգիաներն այնքան ցածր են, մենք ընդհանրապես չունենք բազա, որպեսզի թուրքերի հետ մրցակցենք:

1890. Խնդիրը այն գինն է, որը մենք վճարելու ենք սահմանը բացելու համար: Մենք մշակույթի, հասարակության անվտանգության խնդիր ունենք:

1891. Եվրոպան քսանմեկերորդ դարում փակ սահմաններ չի հանդուրժի:

1892. Մենք միայն մի կողմի հետ ենք հարաբերություններ առայժմ պահում՝ Իրանն է, Վրաստանի հետ առանձնապես բան չի ստացվում, Ռուսաստանի հետ էլ ուղիղ կապ չկա:

1893. Մեր փակվածությունը մեզ տանում է դեպի փակուղի:

1894. Մենք պետք է հավասար գործընկերներ լինենք:

1895. Եթե այս սահմանը վտանգելու է ցեղասպանության ճանաչումը՝ նման սահման մեզ պետք չէ:

1896. Մենք պետք է հավասար գործընկերներ լինենք:

1897. Արդեն քաղաքակիրթ ժամանակաշրջանում ենք ապրում մենք, և ես կարծում եմ, որ սահմանը անպայման պետք է բացվի: Ես վրացիների հետ շփվել եմ ու տեսել նրանց հայատյացությունը, և չեմ ուզում այլևս որ հայ-վրացական սահմանը լինի մեր միակ ելքը աշխարհ:

1898. Հայրենական պատերազմի ժամանակ միլիոնավոր մարդիկ զոհվեցին, բայց այսօր Գերմանիան Ռուսաստանի ամենամոտ դաշնակիցներից է:

1899. Թուրքիան Անդրկովկասի հետ կապ չունի, ինքն ուր, մենք ուր: Պարզապես քիթը խոթում է ու հաստատվել ցանկանում:

1900. Մենք բոլորս էլ ուզում ենք, որ սահմանը բացվի, բայց արդյո՞ք այն կբացվի: Ինչու՞ խորհրդարանի համար չկա սահմանված ժամկետ արձանագրությունները ստորագրելու համար: Վախենամ, որ արձանագրության վավերացումը մեր մոտ կամ էլ Թուրքիայում նմանատիպ պատճառներով ձգձգվի:

1901. Սերնդափոխության և շփումների արդյունքում հարցը միգուցե ավելի հեշտ լուծվի:

1902. Այս պահին մենք հիմնականում մտածում ենք տնտեսական խնդիրների մասին, սակայն նույնիսկ ակնկալվող մեծ եկամուտների դեպքում մենք չպետք է մոռանանք մեր պատմական փաստերը:

1903. Կա վտանգը, որ միջամտությունը կլինի ու մեզ կպարտադրեն չբարձրաձայնել մեր հարցերը:

1904. Ռուսաստանում ավելի շատ հայ է ապրում, քան Հայաստանում: Չե՞ք կարծում, որ սահմանը բացելուց հետո մենք նոր գաղթօջախ ենք ստեղծելու:

1905. Մենք փնթի քաղաքականություն ենք վարում ցեղասպանության ճանաչման հարցում: Խնդիրը հենց մեր մեջ է:

1906. Եթե սահմանի փակ լինելը լավ բան է, եկեք Վրաստանի սահմանն էլ փակենք ու մնանք մեկուսացված ու անվտանգ:

1907. Մեր գյուղատնտեսությունը հաստատ չի տուժելու սահմանի բացումից: Պարսկաստանի հետ սահմանի բացման ժամանակ էլ կար մտավախություն՝ հայկական շուկան պարսկական ապրանքներով ողողելու առումով:

1908. Պահանջատիրության ու հարցերի մասին բարձրաձայնում ենք միայն ապրիլյան օրերին: Դրանից առաջ ու հետո ապրում ենք առանց դա օրակարգում ունենալու:

1909. Սահմանի բացման քննարկումը շատ անսպասելի արագություն ստացավ և հասարակ մարդիկ պատրաստ չեն զարգացման, քանի որ հստակ չեն պատկերացնում դրա հետևանքները:

1910. Այդքան հոռետես չեմ, որ ասեմ թե մենք կործանման ենք գնում, սակայն տեսնում եմ, որ վտանգը կա:

1911. Ինձ ավելի շատ քաղաքական շահն է հետաքրքրում: Մենք մեր սերունդների առաջ պատասխանատու ենք: Ես կողմ եմ սահմանի բացմանը, բայց առանց նախապայմանների:

1912. Սահմանը Թուրքիան փակել է, նա էլ պիտի բացի: Մեր ձեռքին ի՞նչ կա:

1913. Պետք է շատ հստակ իմանալ, թե Թուրքիան ինչ է պահանջում Հայաստանից սահմանի բացման դիմաց:

1914. Ցեղասպանության ճանաչման ընթացքը արդեն դանդաղել է, վախենում եմ, որ սահմանի բացումից հետո դա ավելի ետին պլան մղվի:

1915. Սահմանը բացելով օլիգարխների գործունեությունը հեշտացնելու համար ես չեմ ուզում վտանգել մեր պահանջատիրությունը:

1916. Պետական քարոզչամեքենան է ամեն բան անում, որ մենք մոռացության տանք մեր հարցն ու պահանջատիրությունը. հեռուստատեսությամբ Արարատի պատկերը չեն ցուցադրում, ասես դա մեր հիմնական խորհրդանիշը չի դարեր շարունակ:

1917. Սահմանի բացումը գյուղատնտեսությանը շատ մեծ վնաս կհասցնի: Հզոր Թուրքիայի տնտեսական էքսպանսիայի վտանգը մեծանում է:

1918. Ես կարծում եմ, որ այս հարցն անպայման պետք է դրվի հանրաքվեի, իսկ նախքան այդ լայն զանգվածների հետ պետք է տարվեն իրազեկման և քննարկումների աշխատանքներ:

1919. Մեր ակնկալիքները երևի ավելի մեծ են, քան իրականում թուրքական շահումը կլինի: Սա արդեն պատճառ է անհանգստանալու:

1920. Սահմանի բացելուց մենք ոչ մի շահ էլ չունենք:

1921. Սահմանի բացումից հետո Թուրքիան վստահ այնպիսի քաղաքականություն կվարի, որ Հայաստանի ապրանքները չեն դիմանա մրցակցությանը:

1922. Ինչո՞ւ ենք մենք վախենում սահմանը բացելուց: Եթե պետք լինի նորից կփակենք: Ո՞վ է մեզ խանգարելու:

1923. Թուրքիան հզոր դիվանագիտություն ունի և ցանկացած պայմաններում շահում է:

1924. Երկու սահմանամերձ գյուղերն էլ արտադրում են նույն մթերքը՝ թե թուրքերը, թե մենք : Փետրվարին Հայաստան մտավ մի թուրք, որը լոլիկ էր վաճառում 600դրամով այն ժամանակ, երբ մենք լոլիկը վաճառում էինք 1000 դրամով: Դա հարված չէ՞ր մեր գյուղատնտեսությանը:

1925. Իզուր եք խոսում վրացական տարածքով ճանապարհի թանկության մասին, իրականում դա մեր մաքսային կառույցների անհեթեթ բարձր տարիֆների հետևանք է. մաքսազերծում են այնպիսի գնով, որ ոչ շահավետ է դառնում որևէ բան բերել:

1926. Դիվանագիտական կապն այնքան էլ կարևոր բան չի: Մեզ պետք են ավելի շոշափելի կապեր:

1927. Սահմանի բացումը միանշանակ դրական հետևանք կունենա: Մեր հարևանը Թուրքիան է և նրան փոխելու հնարավորություն մենք չունենք, ուստի և պետք է առաջնորդվենք ոչ թե զգացմունքներով, այլ դիվանագիտական քայլերով:

1928. Պետք չէ բողոքել թուրքական դիվանագիտությունից, պետք է մենք ձգվենք ու փորձենք հաղթահարել պատնեշները:

1929. Մեզ ամեն դեպքում պետք է տնտեսապես հզորանալ: Այդ դեպքում միայն մենք կարող ենք առաջ տանել պահանջատիրությունը:

1930. Մեզ, ճիշտ է, ստիպում են սահմանը բացել, ու մենք այստեղ շահ չունենք, բայց պետք չէ դրանից վախենալ:

1931. Եթե չենք կարողանում բռունցքը կոտրել, պետք է համբուրենք այն: Սա վերաբերում է թուրքական դիվանագիտությանը:

1932. Մեր սեղանի շուրջ նստածների մեծ մասը կարդացել են այս թեմայի վերաբերյալ և ունեն կարծիքներ, շատերն անտեղյակ են ընդհանրապես, շատերին էլ այս թեման ընդհանրապես չի հուզում:

1933. Ինչ է նշանակում սահմանի բացում, եթե ամառային հանգիստը աննկարագրելի մեծ թվով հայեր են Թուրքիա մեկնել: Մտեք ցանկացած խանութ. թուրքական ապրանքը ամենուրեք է:

1934. Սահմանը բացելը չի նշանակում երկու դարպասի բացում, այլ նշանակում է ավելի խորը բան. մշակութային, հոգևոր, քաղաքական դարպասների բացում: Դրա համար սա զուտ կենցաղային հարց չէ, այլ շատ ավելի խորը և պետք լավ մտածել սրա մասին:

1935. Ոչ մի իրավիճակում մենք չենք հրաժարվելու մեր հողերի վերադարձի պահանջից:

1936. Պապս երազում էր այս օրվա մասին, սահմանների բացում...

1937. Ոչ մի հասարակ հայ այսօր չի կարող մոռանալ իր անցյալը: Մինչև Թուրքիան չճանաչի ցեղասպանությունը, հայերի հոգեբանությունը չի փոխվի:

1938. Պետք է պետությունը պրոտեկցիոնիզմի քաղաքականություն վարի, բարձրացնի մաքսավճարները, որպեսզի կարողանանք մրցունակ լինել:

1939. Մենք էսօր ընկել ենք ինչ-որ եվրոպական, արևմտյան արժեքների հետևից, ինչը բացարձակ անհարիր է մեր կերպարին:

1940. Թուրքիայի այսօրվա երիտասարդությունը այնքան քաղաքակիրթ կգտնվի, որ համատեղ քննարկման դեպքում կընդունի իր պապերի կատարած ոճրագործությունը:

1941. Թուրքիան այսօր գերհզոր երկիր է և հիմա կարողանում է Եվրոպային ցույց տալ, որ Հայաստանի հետ սահմանը բացելով, ինքն ավելի կայացած երկիր է:

1942. 1916 թվին Ռուսաստանը Արևմտյան Հայաստանը գրավել տվեց հայերին: Բա պահեինք, ինչո՞ւ չպահեցինք: Ամեն ինչ մեզանից է կախված: Պետք չէ ամեն ինչ գցել Ռուսաստանի վրա:

1943. Ցեղասպանության թանգարանը նորոգելու համար ամեն շինանյութ թուրքական է եղել. փաստացի թուրքական արտադրանքը ողողել է մեր երկիրը, իսկ դուք ասում եք, թե դեռ նոր պետք է սահմանը բացել:

1944. Սահմանը Հայաստանի հետ փակելով Թուրքիան ժամանակի ընթացքում հասկացավ, որ դա Հայաստանին ծնկի բերելու միջոց չէ, դրա համար էլ հիմա ուզում է բացել սահմանը:

1945. Իմ պապերը մշեցի են եղել ու ինձ մանկությունից պատմել են իրենց կյանքը ամենայն մանրամասնությամբ: Հիմա ես ինչպե՞ս կարող եմ չխոսել մեր հողերի վերադարձից:

1946. Երկրորդ տարբերակը լավագույնն է, մեր քաղաքականության հիմքում պետք է դնել այս սցենարը:

1947. Հանրաքվեի միջոցով որոշածը կարծես թե այլևս նահանջի տեղ չի թողնում: Բացասական արդյունքի դեպքում դա այլևս հետագա շփման տեղ չի թողնում, մինչդեռ դրական արդյունքի դեպքում միգուցե ժամանակի ընթացքում հնարավոր կլիներ ապահովել երկկողմանի լավ հարաբերություններ:

1948. Հարևան չեն ընտրում: Եթե չես ուզում հարևանիդ հետ ապրել, պետք է կա՛մ նրան սպանես, կա՛մ դու հեռանաս: Երկուսն էլ հնարավոր չէ: Մենք պետք է իրար հետ ապրենք, ուզենք, թե չուզենք, ու մի օր հաստատ պետք է սահմանը բացել:

1949. Սահմանը բացելուց առաջ պետք է հասարակ ժողովրդին հոգեբանորեն պատրաստել այդ քայլին, ուղղորդել թե ինչպես է հարկավոր վարվել, ապրել թուրքերի հետ:

1950. Թուրքական պետությունը միշտ էլ ձգտել է Հայաստանն իրենով անել, նրանք չեն փոխել իրենց տեսակետը:

1951. Մենք շրջափակման մեջ ենք, պետք է բացել սահմանները, որ իրացնենք մեր ապրանքը:

1952. Հերիք է ինչ մեկուսացված ապրեցինք, բավական է: Եկեք սահմանը բացենք ու հետո փորձենք մեր հարցերը լուծել:

1953. Սահմանի բացումը ֆորմալ առումով ընդամենը մի անցակետի բացում է նշանակում:

1954. Դրված է մեր ազգի լինել-չլինելու հարցը, այդ պատճառով էլ իշխանություններն այսքան ոտ ու ձեռ են ընկել՝ ժողովրդի կարծիքն իմանալու համար: Որովհետև եթե առանց ազգի համաձայնության սահմանը համարձակվեն բացել, հետո եթե վատ լինի մեզ համար, իրենք պարզապես ինքնասպան կլինեն, չեն սպասի մեր հաշվեհարդարին:

1955. Երրորդ սցենարի դեպքում հարց է առաջանում, թե այդ դեպքում ինչ իմաստ ունի արձանագրությունների ստորագրումը:

1956. Ողջունում եմ սահմանի բացումը, տնտեսական առումով մեր համար ձեռքբերում է: Պետք է շեշտը դնել տնտեսական կապերի զարգացմանը, հետո՝ մի քանի տարի անց նոր կարելի է բարձրացնել քաղաքական հարցեր:

1957. Հարկավոր է նախ և առաջ սկսել մշակութային զարգացում՝ հատկապես երիտասարդներին շրջանում: Պետք է վերջ տալ ինտերնետային պատերազմներին: Մենք պետք է սկսենք կարդալ թուրք գրողներին, օրինակ ես Փամուկին հայ եմ համարում՝ իր մտածելակերպով:

1958. Կիզակետում ոչ թե սահմանի բացելու կամ փակելու հարցն է, այլ երկու պետությունների միջև դիվանագիտական, տնտեսական, մշակութային հարաբերությունների հաստատումն է:

1959. Առաջին հերթին մենք ճանապարհ ենք բացում դեպի մեր արևմտյան տարածքներ: Ու դա ոչ թե կբերի մեր պատմության մոռացությանը, այլ ընդհակառակը, մենք կկարողանանք վերջապես տեսնել այդ ամեն ինչը:

1960. Պետք է զուգակցել և՛ տնտեսական և՛ քաղաքական հարցերը միանգամից:

1961. Սահմանի բացման-չբացման հարցը իր մեջ շատ ռիսկայնություն է պարունակում, դրա համար էլ դրվել է այսպիսի հասարակական քննարկման:

1962. Ո՞րն է ավելի քաղաքակիրթ՝ խռով մնալ, թե՞ արդյունավետ դիվանագիտությամբ զբաղվել: Ինձ թվում է, երկրորդը:

1963. Եթե երկրում թալան է՝ կապ չունի սահմանը բաց է, թե փակ:

1964. Ցեղասպանության ճանաչումից հետո ակնկալում ենք տնտեսական փոխհատուցում, տարածքների վերադարձ:

1965. Երբ սովետական բանակում էի ծառայում, ադրբեջանցի-թուրք ընկերներ ունեի, որոնք այն ժամանակ անգամ, երբ մենք չէինք խոսում ցեղասպանության մասին, արդեն իսկ գիտեին այդ մասին ու համոզված էին, որ գալու է ժամանակ, երբ հայերը ճշմարտություն, իրավունք, փոխհատուցում են պահանջելու:

1966. Եթե մենք համարում ենք որ Թուրքիան ունի հզոր ռեսուրսներ, մենք էլ ունենք Սփյուռքի հզոր ներուժ:

1967. Հույս ունենալ, թե քանի որ ժամանակին Թուրքիան է փակել սահմանը, հիմա էլ ինքը պիտի այն բացի, անիմաստ է, որովհետև այդ դեպքում մենք ընդհանրապես հրաժարվում ենք մեր ապագայի համար պայքարելուց կամ ինչ-որ նոր հնարավորություն փնտրելուց, թեպետ գիտենք, որ ուրիշ ոչ մեկը չի պայքարելու մեր համար:

1968. Միգուցե կարիք կա կոմունիկացվել թուրք երիտասարդության հետ և վստահ կգտնվեն այնպիսինները, որոնք կընդունեն նախկին սխալները: Մի բան է ուղակի շփումով ներկայացնել խնդիրը, մի այլ բան հեռավոր նկարագրությունով: Իսկ այս ամենը հնարավոր է միայն բաց սահմանի պարագայում:

1969. Այսօրվա թուրք սերունդն էլ նույնն է, ինչ նախկինում էր: Հիմա մեկին են դատում, ով հայ սպայի է սպանել, իսկ մի՞թե այդ մեկն է ու մի սպանություն է եղել:

1970. Նույն հաջողությամբ պարսիկները կարող են անել այն ամենը, ինչը մտածում ենք, որ թուրքերը կանեն:

1971. Եթե մենք իրար կողքի դնենք երկու պետությունների այսօրվա սահմանները, արդեն իսկ մեծ տարբերություններ կտեսնենք:

1972. Սահմանը պետք է բացվի, բայց ոչ ի հաշիվ մեր ազգային շահերի: Մեզ պետք է հզոր դիվանագիտություն:

1973. Եվրոպական երկրներն այնքան շատ պայմաններ են դրել Թուրքիայի առաջ եվրահամայնք մտնելու համար, որ Թուրքիան ամեն ինչ պետք է անի Հայաստանի հետ բարի դրացիական հարաբերություններ ստեղծելու համար:

1974. Տրապիզոնի նահանգում միլիոն ու կես հայեր կան. ինչի եք ասում, թե մենակ քրդեր են ապրում Արևմտյան Հայաստանում...

1975. Ճիշտ հասկացեք, այս պայմաններում ոչ թե ցեղասպանության դեմ է հանդես գալիս Հայաստանը, այլ ավելի բարդ է դրսևորվում. միջազգային ճանաչումից հարցն իջեցվում է Հայաստան-Թուրքիա հարաբերությունների մակարդակ:

1976. Ողջունելի են այս քննարկումները, բայց սա առաջին հերթին լուրջ փորձագետների քննարկման հարց է:

1977. Սահմանի բացումով կվերանա ազգային գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը:

1978. Այսօր կան երկրներ, որոնք ճանաչել են Ցեղասպանությունը, և եթե մենք չստիպենք Թուրքիային ճանաչել այն, ապա մենք պետք է պատասխան տանք Ցեղասպանությունը ճանաչած երկրների առջև:

1979. Թուրքիային հաջողվել է միջազգային հանրությանը համոզել, որ հայ-թուրքական սահմանները գործում են, ինքը պատրաստ է ամբողջապես համագործակցել Հայաստանի հետ, իսկ Հայաստանը հանդես է գալիս նախապայմաններ թելադրողի դերում:

1980. Պարտվողական քաղաքականություն մեզ պետք չի:

1981. Հարկավոր է պատմական հարցերը մի կողմ դնել, բացել սահմանը, գնալ տնտեսական զարգացման և հետո միայն սկսել քննարկել Ցեղասպանության ընդունումը:

1982. Թե՛ Թուրքիայի, թե՛ Հայաստանի քաղաքական իմիջներն էլ բարձրանում են այս հարցի քննարկումներն սկսելու առիթով: Նույնիսկ ֆուտբոլային խաղի ժամանակ շատերն սկսեցին գովել Թուրքիայի նախագահին Հայաստան ժամանելու առիթով, շատերն էլ Հայաստանին գովեցին քաղաքական այս մեծահոգի քայլի համար:

1983. Ժամանակին Մանուչարյանը Բաքու էր գնացել ու դեռ մեզ էլ հետո վախեցնում էր՝ դրանք այսքան տանկ ունեն, էն ունեն... Բայց մենք հաղթեցինք:

1984. Ամեն ինչ առջևում է, բայց մենք, ի տարբերություն քաղաքակիրթ ազգերի, միայն կարողանում ենք անիմաստ քննադատել մեր իշխանություններին: Պետք է համախմբվել:

1985. Մեր միջից պետք է հանենք «ուժեղի մոտ միշտ էլ թույլն է մեղավոր»-ով առաջնորդվելու սկզբունքը:

1986. Մտավախություն կա, որ թանկությունը կպատի երկիրը, արհեստական կբարձրանան օրինակ անշարժ գույքի գները:

1987. Մեզ վերջին հարյուր տարիների ընթացքում առաջին անգամ հնարավորություն է տրվել դեմ դիմաց նստելու և քննարկելու մեր հարցերը:

1988. Տարիներ շարունակ մենք նպատակ ենք ունեցել Ցեղասպանության խնդիրը լուծելու, դա պետք է միշտ հիշել: Բայց այսօր ժամանակն է, որ նստենք կլոր սեղանի շուրջ ու հարցերը լուծենք քաղաքակիրթ ձևով:

1989. Թուրքը թուրք է մնում և նրանց երբեք մինչև վերջ հնարավոր չէ վստահել:

1990. Այսօր շատ հայեր կան, որոնք փոխել են իրենց ազգանունը և աստիճանաբար գնում են թուրքացման:

1991. Մեր Կառավարությունը ամբողջությամբ պետք է փոփոխության ենթարկվի, վերանայի իր գործունեությունը, ադապտացվի խաղի նոր կանոններին:

1992. Թուրքիան Եվրամիության առաջ մաքուր ու պուպուշ երևալու խնդիր ունի, դրա համար է սա նախաձեռնել:

1993. Թուրքիայի դիվանագիտությունը շատ հնարամիտ է և իրենք միշտ հայտնվում են ճիշտ ժամանակ ճիշտ տեղում:

1994. Մեր մոտ կառաջանա գենոֆոնդի պահպանման խնդիր:

1995. Ինչքան էլ մենք ուզենք բարեկամանալ, մենք պետք է հասկանանք, որ դիվանագիտության մեջ կա ոսկե կանոն. սխալ բան արած կողմն անպայման պետք է իր արածի համար

ներողություն խնդրի, այլապես այդ կողմը հետո կարող է նորից կրկնել նմանատիպ այլ քայլ:

1996. Հայաստանը Ռուսաստանի ռազմավարական պարտնյորն է: Այնպես որ նա մեզ ամեն դեպքում օգնելու է:

1997. Թուրքը ավելի լավ է քան վրացին. ինչպե՞ս կարելի է ասել, որ վրացին մեզ չի խաբի, իսկ թուրքը կխաբի:

1998. Սև կատու ենք փնտրում բացարձակ մութ սենյակում, որն այնտեղ չէ:

1999. Վրացիների հետ մեր հարաբերությունները չեն կարող կարգավորվել: Նրանց նախարարը գալիս է մեր մոտ խոստանում է մի բան, գնում է Վրաստան՝ ուրիշ բան անում:

2000. Չորրորդ սցենարի հետ կապված Հայաստանը կարող է պայմանավորվածություններ ձեռք բերի գերտերությունների հետ, մասնավորապես ՌԴ-ի:

2001. Որ սահմանը բացենք ու որոշ տնտեսական հարցեր լուծենք, էլ մարտի մեկ չի՞ լինելու:

2002. Ֆրանսիայի պես երկիրը ճանաչեց ցեղասպանությունը, արդյոք վաղը Ֆրանսիան մեզ չի ասի, թե ինչու ենք մենք անտեսել նրանց օգնությունը:

2003. Իսկ հիմա ինչու՞ չեն արվում միջազգային ներդրումներ: Չեմ կարծում, որ դրա պատճառը փակ սահմանն է:

2004. Ինչո՞ւ ենք վախենում պատմական հանձնաժողով ստեղծելուց: Մենք ոչինչ չունենք վախենալու:

2005. Գերտերությունները ստիպել են մեզ մտնել այս վիճակի մեջ, չպետք է զիջենք, պետք է պատվով դուրս գանք այս վիճակից:

2006. Եվրապառլամենտը Թուրքիայի առաջ դրել է Հայաստանի հետ սահմանի բացման հարցը, այնպես որ նա վաղ թե ուշ բացելու է սահմանը:

2007. Մեր հարգարժան նախագահը հայտարարել է, որ գերտերությունների կողմից այս հարցի առումով չի եղել ճնշում: Բայց մենք այսօր տեսնում ենք Վրաստանի և Ռուսատանի հարաբերությունները, որոնք գնալով վատթարանում են: Ուստի կարող ենք ենթադրել, որ Ռուսաստանը հիմա Հայաստանին ստիպում է զիջումների միջոցով բացել հայ-թուրքական սահմանը, որպեսզի հանգիստ իրականացնի իր տարածաշրջանային շահերը:

2008. Այստեղ ոչ միայն հայ-թուրքական հարաբերությունների հարցն է, բայց արևելք-արևմուտք բախումն է: Այս հարցում բոլոր մեծ տերությունները ունեն իրենց շահերը և հետաքրքրությունները:

2009. Մենք պետք է Թուրքիայի հետ լեզու գտնենք: Միանշանակ սահմանը պետք է բացվի:

2010. Յուրաքանչյուր իրեն հարգող ազգ ու քաղաքացի իրեն նախ պետք է հարցնի՝ նման նախաձեռնություններից ի՞նչ եմ շահելու: Եթե շահումդ միայն կոշիկ ու հագուստ է, անլուրջ է ազգային արժանապատվությունը մոռանալ:

2011. Մեր բոլոր պայմանները թուրքերը բավարարել են. խոսք չկա Ղարաբաղի մասին, նախապայման չկա և այլն: Մենք չենք կարող չբացել սահման:

2012. Ղարաբաղյան հարցի լուծումից հետո սահմանի բացման մասին կարելի է մտածել. դեռ ժամանակը չի:

2013. Մենք նախկինում էլ չէինք մտածում, թե գալու է այս օրը, երբ մենք քննարկելու ենք թուրքի հետ սահմանի բացումը: Ու նույն տրամաբանությամբ էլ գալու է այն օրը, երբ մենք մեր պահանջատիրությունն իրացնելու ենք:

2014. Մենք պետք է այնպես անենք, որ այսօրվա ԱՄՆ-ի և Ռուսաստանի թաքնված բախումից շահի Հայաստանը:

2015. Այս սցենարով սահմանի բացման դեպքում Թուրքիան ու թուրքական ընկերությունները արդեն հարաբերվելու են Ռուսաստանի հետ, ու Հայաստանը խաղից դուրս կմնա:

2016. Ռուսաստանը շահագրգռված է լինելու հզորացնելու իր տարածաշրջանային պլացդարմը: Եկեք հիշենք, թե Հայաստանը քանի միջազգային ինտեգրացիոն ծրագրից է դուրս մնացել: Այստեղ լավատեսության հիմք կա:

2017. Պետք է բացել սահմանը և չմոռանալ, որ մենք ԱԶԳ ենք:

2018. Սահմանը բացելուց կշահեն բոլորը, բացի Վրաստանից:

2019. Մեր ազգը, պետությունը Ռուսաստանի սահմանապահն է եղել ու մնալու է:

2020. Մենք իհարկե պետք է այլընտրանքային ճանապարհ ունենք, վրացին այնքան էլ հաջող հարևան չի: Բայց երբեք դիրքերը չպետք է զիջել: Եթե նահանջ է լինելու, ավելի լավ է մենք փակենք սահմանը:

2021. Գերտերությունները ցանկանում են մեզ հետ խաղալ, բայց կարող է մենք չենք ուզում՝ մեզ խաղացնում են: Կարծում եմ մենք ուզում ենք խաղալ, ուղղակի պետք է խաղի կանոնները լավ իմանանք:

2022. Եթե մենք սահմանը չբացենք մեր պայմաններով, ուրիշները կպարտադրեն այն բացել իրենց պայմաններով:

2023. Այստեղ բախվելու են մեծ պետությունների տնտեսական շահերը, իսկ տուժելու են փոքր պետությունները:

2024. Համաձայն եմ սահմանի բացմանը, համաձայն եմ կառավարության որոշմանը և վստահ եմ, որ մեր նախագահը կկատարի իր խոստումը և սահմանները կբացվեն առանց նախապայմանների:

2025. Սահմանի բացումը դեռ երեկ էր շահավետ: Բայց դա քաղաքական իմաստով ավելի շահավետ է Թուրքիային: Մեզ համար այսօր դեռ շուտ է այդ մասին մտածելը:

2026. Ռուսաստանի ազդեցությունը պետք է ավելի մեծացնենք մեր երկրում ու դրանից ավելի կշահենք:

2027. Թուրքիան մեզ համար մեծ շուկա կլիներ, բայց մենք ի՞նչ ունենք արտահանելու: Սննդամթերքը միլիոնավոր տոննաներով է արտադրում, աշխարհի առաջատարներից է: Մենք այդ ի՞նչ ենք արտահանելու, հանքային ջո՞ւր, տեքստի՞լ, կամ թե այդ ի՞նչ արդյունաբերական ուրիշ ապրանք:

2028. Թուրքիայում կա 101 հոդվածը: Ինչու՞ մենք ինքներս չենք ընդունում նմանատիպ մի հոդված:

2029. ՌԴ ուզում է էներգետիկ ռեսուրսներ արտահանի, թող արտահանի՝ մի լար է էլի: Պետք է մենք, ուղղակի, դրա գինը որոշենք:

2030. Ռուսաստանի հետ խոսելիս մենք հստակ ներկայացնելու ենք մեր պայմանները:

2031. Սահմանների բացումը բարձրացնելու է Հայաստանի քաղաքական վարկանիշը, իսկ դրանից կշահի նաև պետությունը:

2032. Ռուսաստանը գիտի, որ Հայաստանը առանց փոքր-ինչ կասկածի իր գործընկերն է: Մենք պետք է օգտվենք դրանից ու առաջ տանենք մեր հարցերը:

2033. Կիլիկիան մերձարևադարձային գոտի է, բերքը ողողում է այգիներն ու դաշտերը, երբ մեզ մոտ ամայություն է: Մենք այդ ի՞նչ ենք հակադրելու: Մենք կարտոֆիլ ենք մշակում, դա այստեղ անգամ չենք իրացնում:

2034. Չեմ հավատում, որ մենք հավասար շահեկան վիճակում ենք: Մենք դրված ենք զոհասեղանին:

2035. Եվրոմիությանն անդամագրվելու ճանապարհին առաջին պայմանը Թուրքիան կատարում է՝ բացում է սահմանը: Ինձ թվում է, նոր խոչընդոտներ կլինեն այդ ճանապարհին, որից մեկը կլինի Ցեղասպանության ճանաչումը:

2036. Այսօր մեր ապրանքները գալիս են Վրաստանով, որը մեզ այնքան էլ բարեկամ չէ և մենք պետք է աշխատենք անկախ լինել Վրաստանից և այնուհետև միայն բարձրացնել Ախալքալաքի հարցը:

2037. Թուրքական գեներալները ադրբեջանական բանակում լավ դասընթացներ են կազմակերպում, ինչպես նաև ուղարկում են լավագույն տեխնիկա նրանց բանակին: Սրանով հանդերձ ինչպե՞ս են նրանք ուզում բարեկամանալ մեր հետ:

2038. Եթե սահմանին ճիշտ մաքսային քաղաքականություն կիրառի մեր պետությունը, մենք գոնե պաշտպանված կլինենք թուրքական ապրանքի տարափից:

2039. Ամերիկան կշահի սահմանը բացելը ներկայացնելով, թե հայերի համար մի լավ բան է արել:

2040. Սևրի պայմանագրով մենք թեքվեցին դեպի Անտանտ, ունեինք 161հազարանոց տարածք: Սովետական Ռուսաստանը մեզ դեմ տվեց մի կտոր Հայաստան:

2041. Խրիմյան հայրիկը ասում էր մեր շերեփը թղթից է ու պետք է ապավինենք երկաթին: Ապավինեցինք Սարդարապատում ու հիմա կարող ենք այստեղ նստել ու ինչ-որ բան քննարկել: Մեր հարցերը մեր փոխարեն ոչ ոք չի լուծելու:

2042. Մեր գենի մեջ է հիշել ցեղասպանությունը և մենք պետք է թուրքերին այնպես անենք, որ նրանք մեզնից ներողություն խնդրեն:

2043. Ամեն ինչ կառնեն՝ գործարաններն էլ, գյուղերն էլ , մեզ էլ:

2044. Թուրքերի լացուկոցին պետք չէ հավատալ, մեզ արագ քայլեր պետք չէ: Հինգերորդ սցենարը կեղծ է:

2045. Երկու ճանապարհ դիտարկենք՝ Թուրքիայով ու Վրաստանով: Իսկ եթե ՌԴ-ն մեզ պարտադրում է ճանաչել Աբխազիայի անկախությունն ու ի հետևանք՝ Վրաստանը փակում է ճանապարհը: Մնանք թուրքի հույսի՞ն:

2046. Գերտերությունների ասած հաճոյախոսությունները ժամանակակից քաղաքականության մեջ պետք է ընդունել որպես հրաման:

2047. Սփյուռքը պետք է մեզ շատ օգնի, քանի որ իրենց պապերն են նախ և առաջ գաղթել իրենց պատմական հողերից:

2048. Ֆուտբոլային քայլ անելուց առաջ էր պետք ձիով քայլ անել:

2049. Պետք է հասկանալ գերտերությունների ասածների ենթատեքստերը և մտածել, թե ինչպես են դրանք առնչվում առկա նախապայմաններին:

2050. Եթե թուրքերը մանանա ու ոսկի շաղ տան այստեղ, միևնույն է ժողովուրդը չի ընդունի ու չի հավատա նրանց:

2051. Ամոթ կլինի, որ Սարգսյանը չգնա Թուրքիա: Հո վախկոտ չենք:

2052. Թուրքիան սահմանը բացելով ուզում է ազդեցությունը ավելացնել մեր տարածաշրջանում: Մենք էլ պետք է մեր շահերը հետապնդենք: Եկեք սահմանը բացենք: Բացելուց հետո ինչքան հավանական է, որ Թուրքիան կհասնի իր նպատակներին, այնքան էլ հավանական է, որ մեր կհասնենք մեր նպատակներին: Ամեն ինչ մեր դիվանագիտությունից է կախված:

2053. Պետք է կողմնորոշվել մեր զարգացման հարցում՝ դեպի Եվրոպա, թե՞ այլ:

2054. Ես համոզված եմ, որ Հայաստանի նախագահը առաջնորդվում է ազնիվ մղումներով և փորձելու է սահմանը բացել առանց նախապայմանների, սակայն դրանից հետո Թուրքիան ինչ-որ քայլ կձեռնարկի, որպեսզի նորից փակի սահմանը:

2055. Դու մտածում ես, որ հասարակությունների շփումից մենք կկարողանանք նրանց համոզել, որ ցեղասպանությունը ճանաչեն ու մեղանչե՞ն: Անհնար է:

2056. Մենք, օգտագործելով եղած նյութերը, արխիվները, մեր ռեսուրսները, կարող ենք հասնել մեր պահանջատիրության լուծմանը:

2057. Հայ Դատի խնդիրը մենք կարող ենք ավելի մեծ թափով նոր էջից դնել հենց սահմանը բացելուց հետո:

2058. Այս բոլոր սցենարներից ես չհասկացա, թե ինչի դիմաց ինչ ենք դնում:

2059. Մենք ներքուստ ամեն ինչի պատրաստ ենք, այնպես որ կարելի է բացել:

2060. Բոլորիս կարծիքը չի կարող ռեալ լինել: Շատ կարևոր հարցերի մասին մենք տեղեկացված չենք: Լուծումներ տալու համար մենք պետք է տեղյակ լինենք բոլոր արձանագրություններին, բոլոր կետերին:

2061. Հարաբերությունները իհարկե կզարգանան, կբարելավվեն, բայց դրա համար հարկավոր է բավականին երկար ժամանակ: Ազգերը պետք է շփվեն միմյանց հետ, պետք է փոխանակվեն փորձով, պետք է նորովի մտածենք...

2062. Եթե սահմանի բացումը սեպ է խրելու Սփյուռքի ու Հայաստանի, Արցախի ու Հայաստանի միջև, ապա սահմանի բացում ինձ բացարձակ պետք չէ:

2063. Եթե մենք ունենանք դիվանագիտական հարաբերություններ Թուրքիայի հետ, մենք հնարավորություն կունենանք ինքներս մեր խնդիրներով զբաղվել, այլ ոչ թե թուրքերը կգնան Ռուսաստան, որ մեր հարցերը լուծեն:

2064. Բանակցությունների մենք պետք է գնանք հստակ նախապայմաններով՝ մեր պահանջատիրությամբ:

2065. Ներդրումներ անելուց առաջ խոշոր միջազգային ընկերություններն անպայման կդնեն իրենց նախապայմանները և կունենան վերահսկողություն ճիշտ համակարգեր, որպեսզի հարստությունը չկուտակվի հայ օլիգարխների ձեռքում:

2066. Այդ ո՞նց եք պատկերացնում՝ առաջարկում եք բարեկամանալ, մտերմանալ, հետո ասել. «Բա գիտես, մենք չլուծված հարցեր ունենք, մենք քեզանից պահանջ ունենք»: Անհնար է:

2067. Միշտ պետք է հիշել Պետրոս Ա-ին, որը բացեց պատուհան դեպի Եվրոպա: Սա դրա պես մի բան է:

2068. Եթե անգամ ընդունեն ցեղասպանությունը և փոխհատուցեն, միևնույն է՝ չենք ներելու ներքուստ: Այնպես որ սահմանի բացումը կապ չունի:

2069. Պետք է սահմանները բացել, որպեսզի ազգերը տեսնեն թե ինչ է կատարվում երկու կողմերում: Որքան փակ, այնքան գայթակղիչ:

2070. Թուրքիան խառնվել է իրար, որովհետև Կարսի պայմանագրի վերակնքման ժամկետն է մոտենում, դրա համար էլ ամեն բան անում է մեզ պարտադրելու, որ սահմաններ ճանաչենք:

2071. Մենք դեռ չենք պատկերացնում, թե ինչ է սպասվում սահմանի բացումից հետո. ես չգիտեմ, թե որն է ճիշտ:

2072. Սահմանը բացելով մենք սկսում ենք կարծրատիպեր քանդելու մի կարևոր գործընթաց:

2073. Մենք պահանջատեր պետություն ենք, մենք չենք կարող նման զիջումների գնալ:

2074. Մենք ինֆորմացված չենք, այն ինչ մենք գիտենք հնարավորություն չի տալիս մեզ ճիշտ կողմնորոշվել:

2075. Ոչ մի բառ գրված չէ սփյուռքի մասին, ասես դա մեր ազգի մի մեծ մասը չի:

2076. Թուրքն ուզում է Հայաստանի տնտեսությունը գրավի, նա իր քաղաքական շահերն է հետապնդում:

2077. Արդեն բազմաթիվ պետություններ ընդունել են Ցեղասպանության փաստը, իսկ հիմա մենք քննարկման ու շահարկման առարկա՞ ենք դարձնում այդ հարցը:

2078. Միևնույն է թուրքը զարգանում է անգամ փակ սահմանի դեպքում, եկեք միանանք այդ գործընթացին, ոչ թե կողքից դիտորդ լինենք:

2079. Սահմանների փակ լինելու պատճառով մենք չենք կարողանում վերանորոգել Թուրքիայի տարածքում գտնվող պատմամշակութային արժեքները, հուշարձանները:

2080. Այսօր մեր բուրժուազիան՝ օլիգարխներն են տիրում մեր պետությանը, իսկ բուրժուազիան երբեք ազգային գաղափարախոսության կրող չի լինում: Նրանք մեզ կտանեն կործանման:

2081. Թուրքիան շատ խելացի ձևով ցեցը գցել է մեր մեջ ու մի կողմ կանգնել: Մենք իրար ուտում ենք, իսկ նրանք ձեռք են բերում դեմոկրատների իմիջ:

2082. Շատ խոսելը մեկ-մեկ վատ բանի է բերում: Ա՛յ մարդ, թող բացեն կտեսնենք:

2083. Այսօր հանրապետությունում չկա աշխատանք, ուստի կարծում եմ, որ երիտասարդների հոսքը դեպի Թուրքիա ավելի կմեծանա: Հիմա էլ են գնում:

2084. Անցյալ անգամ մենք քննարկեցինք ու քվեարկեցինք, որ ստատուս քվոն պահպանվի ԼՂ հարցում, Բրայզան էլ ասաց, թե այս երկիրը պատերազմ է ուզում: Հիմա ստացվում է, այս 5 սցենարներից մե՞կը պետք է ընտրենք, որ խաղաղություն լինի:

2085. Պետք է լծակ ունենալ, որ սահմանի բացման դեպքում արտագաղթի տեմպերը չավելանան: Սա արմատական հարց է: Մինչև բացումը պետք է լուծել սոցիալական խնդիրները:

2086. Այս քննարկումը ցույց է տալիս, որ մենք ունենք քաղաքացիական հասարակություն՝ մեզ փորձում են լսել:

2087. Երկրի ներսում մենք պետք է մտածենք ազգային անվտանգության հստակ ռազմավարություն, որը պետք է թղթի վրա չլինի, այլ իրականություն դառնա:

2088. Պետք է ճիշտ տնտեսական քաղաքականություն վարել... Սահմանը բացել հո չի՞ նշանակում, որ թուրքերը գան մեզ ուտեն:

2089. Մենք չպետք է հյուրի նման գնանք Թուրքիա, խաչ դնենք մեր եկեղեցու վրա և վերադառնանք, այլ պարբերաբար հոգ տանենք մեր արժեքների մասին:

2090. Իսկ ես կարծում եմ, որ մեր երկրից գնացողների թիվը սահմանի բացումից հետո կքչանա: Մեր տնտեսություն կսկսի շնչել: Ու նախկինում գնացածների, այնտեղ մնացածների համար էլ հետ գալն ավելի էժան կլինի:

2091. Մեր դիվանագիտությունը մեծ մտավախություն է առաջացնում մեզանում. կկարողանա՞ արդյոք այն պահանջված մակարդակի հմուտ լինի:

2092. Ուժեղ ենք, կշահենք, թույլ ենք, կպարտվենք ու արժանի կլինենք դրան:

2093. Սահմանը բացելով էս երկիրը չի քանդվի, բայց պետք է լինեն մարդիկ, որոնք ճիշտ կառավարեն երկիրը:

2094. Այսօր բոլորից շատ Վրաստանն է շահագրգռված, որ սահմանը չբացվի:

2095. Այսօր մենք մեր եղածը չենք կարողանում պահպանել, ինչ մնաց թե վերանորոգենք Թուրքիայի տարածքի եղած հուշարձանները:

2096. Մեր արտաքին դիվանագիտությունն արդեն սխալ է արել՝ ստորագրելով արձանագրությունները: Մինչ այդ մեր կողմից հստակ նախապայմանների պետք է դնեինք:

2097. Միևնույն է մենք ապրանքաշրջանառություն ունենք թուրքերի հետ, դա արվում է անգամ փակ սահմանների դեպքում, իսկ արտագաղթը միևնույն է կա ու կլինի...սահմանի բացումը պետք է, այն չի ազդում մեր մտավախությունների վրա:

2098. Մենք ուզում ենք սահմանը բացվի, բայց վախենում ենք :

2099. Հավերժ փակ սահմաններ չեն կարող լինել: Վերջիվերջո Ադրբեջանի հետ սահմանն էլ է մի օր բացվելու:

2100. Լսի, դու ուզում ես գնալ Անթալիա հանգստանալու, գնա ու հանգստացի: Գնացողը գնում է: Ի՞նչ կապ ունի դա սահմանը բացելու հետ: Իսկ եթե թուրքը հետո գալու է, ասենք թե ֆրանսիացու ձեռքով միլիոնների ներդրում անի այստեղ ու ստրատեգիական կառույցների տեր դառնա, հետո ամեն օր մեզ հիշեցնելու է Ղարաբաղի հարցը:

2101. Կարող է սահմանները բացենք ու «արգելված պտուղի» գաղափարը էլ չլինի ու ամեն ինչ ինքնըստինքյան կարգավորվի:

2102. Հարկավոր է մի քանի օր գնալ մնալ սահմանամերձ գյուղում, օրինակ Ջանֆիդայում, տեսնել Արաքսը և չկարողանալ անցնել գետը, նոր միայն բոլորը կհասկանան, թե ինչքան կարևոր է սահմանի բացումը:

2103. Ավելի ընդունելի էլ վերջին սցենարը, միայն թե օրենսդրական դաշտը պետք է կարգավորել:

10. ԱՇՏԱՐԱԿՈՒՄ
կայացած հանրային քննարկման ընթացքում արտահայտված մտքերը

02.10.2009

2104. Թուրքիայի կառավարությունը որոշում ունի, ըստ որի իր երկրից եկող բոլոր քաղաքացիներին հնարավորություն է տալիս Հայաստանում ձեռք բերել գույք և այլ սեփականություն: Դրա համար ես դեմ եմ սահմանի բացմանը:

2105. Ոնց որ պարսիկները լցվեցին, Երևանի կեսը իրենցով արեցին, հիմա էլ թուրքերը կլցվեն:

2106. Եթե միջազգային հանրությունը թույլ չի տալու մեզ խոսելու, մեզ էական տեղաշարժ չի ապահովելու, ապա անիմաստ է սահմանների բացումը:

2107. Իհարկե, այս դեպքում կլինեն դրական տեղաշարժեր, բայց մտավախություն ունեմ, որ մեր երկրում փոքր բիզնեսը կտուժի, և հայկական ապրանքը չի վաճառվի մեր շուկայում:

2108. Մենք դեռ էնքան կայացած պետություն չենք, որ կարողանանք բարձրաձայնել մեր խնդիրները:

2109. Թուրքիայում էլ կան ուժեր, որոնք դեմ են սահմանի բացմանը: Նրանք էլ ունեն մտավախություններ, որ հարուստ հայերը սեփականություն կգնեն իրենց երկրում:

2110. Այսօր մենք հոգեբանորեն պատրաստ չենք բաց սահմանի, քանի որ թուրքերը վստահություն չեն ներշնչում:

2111. Թուրքը մնում է թուրք, բայց սառույցն էլ վաղ թե ուշ պետք է կոտրել:

2112. Թուրքիան մեզ համար մուտք է Եվրոպա:

2113. Ես մտավախություն ունեմ, որ երկու ազգերի միախառնում տեղի կունենա, որը շատ վտանգավոր է:

2114. Նույն միջազգային հանրությունը նախորդ դարասկզբին հենց ի՞նքը չփակեց իր աչքերը մեր ջարդերի վրա: Հիմա ինչու՞ ենք նրանց վրա հույս դնում:

2115. Մենք պետք է սովորենք մեր սեփական սխալների վրա, չվստահենք թուրքերին և ինքնակամ թույլ չտանք նրանց գալ այստեղ:

2116. Մենք հիմա էլ որոշ առևտրային շփում ունենք Թուրքիայի հետ, սահման բացելուց հետո ի՞նչը կավելանա:

2117. Վաղը կունենանք հզոր տնտեսություն, բայց կոտրված քաղաքականություն:

2118. Անկախ հեռանկարներից հարևանի հետ պետք է գնալ փոխզիջման: Այլ տարբերակ չկա:

2119. Անկախ նրանից թե ինչպիսին է մեր հարևանը՝ բարեկամ թե թշնամի, մենք պետք է պատրաստ լինենք ցանկացած զարգացման, ունենանք հստակ ռազմավարություն:

2120. Հայ մարդը, երբ ծնվում է, ծնված օրվանից գիտի, որ թուրքն իր թշնամին է: Ի՞նչ կլինի, եթե հանկարծ հայ աղջիկը ամուսնանա թուրքի հետ...

2121. Ճանապարհները բացվելու դեպքում պետք է գործեն նոր հարկատեսակներ ներմուծվող ապրանքների վրա:

2122. Փակ սահմանն իհարկե վատ է ցանկացած երկրի համար, սակայն սահմանը բաց՝ միայն այն պարագայում է շահեկան, երբ երկրիդ ազգային շահին չի հակասում կամ վնասում:

2123. Չերչիլն ասում էր. «Ամենալավ քաղաքական գործիչը նա է, ով իր գրած սցենարով իրադարձությունները չզարգանալու դեպքում հստակ կարողանում է արդարացնել նոր ստեղծված իրավիճակը»: Մենք այդ հմտությունն էլ չունենք:

2124. Այսպես թե այնպես մենք արդեն Վրաստանով ներմուծում ենք թուրքական ապրանք, բայց եկեք խոսենք նաև այն հնարավորության մասին, որ մենք կկարողանանք արտահանել մեր ապրանքը: Այսինքն, մենք կկարողանանք որոշ բաներ էժան գնել, իսկ մերը՝ թանկ արտահանել:

2125. Եղել է ժամանակ, երբ Հայաստանում պարսկական էժան և անորակ ապրանքների հեղեղ էր, բայց դրանց իրացումը մեր շուկաներում տևեց 2-3 տարի, նույնը կլինի հիմա: Պետք է հեռու նայել:

2126. Ազգային շահը չպետք է ոտնահարվի, սահմանի բացումն ու դրան հաջորդող քայլերը չպետք է վնասեն մեզ:

2127. Հիմա ասում ենք սահմանը փակ է: Բայց եկեք հենց էս պահին հաշվենք, թե Հայաստանում քանի թուրք կա ու Թուրքիայում քանի հայ կա: Նմանապես, սահմանների բացումը չի նշանակում որ դա իրականում բաց է:

2128. Եթե մեր ապրանքը այստեղ ունի իր սպառողը, ապա ի՞նչ կարիք կա մեր ապրանքը դուրս տանելու: Մերն այստեղ կպակասի:

2129. Մենք թուրքի դիվանագիտությանը չենք կարող հասնել, դրա համար ես չեմ ուզում բացել սահմանը:

2130. Եթե ես ինչ-որ խնդիր ունեմ իմ հարևանի հետ, եթե նա ինչ-որ մեղք է գործել, նա պետք է անպայման ներողություն խնդրի: Մենք գումարային փոխհատուցում չենք ուզում, քանի որ դա կլինի բարոյական ապտակ: Թուրքիան պետք է մեղանչի բոլոր պետությունների առաջ:

2131. Տնտեսական էքսպանսիա կսկսի: Դա վտանգավոր եմ համարում:

2132. Ես չունեմ այն ինֆորմացիան, ինչ մեր պետական այրերը, հետևապես չեմ կարող դատողություններ անել այս բարդ խնդրի վերաբերյալ: Բայց հաստատ հարևանի հետ պետք է հարաբերվել:

2133. Անպայմանորեն կսառի Ցեղասպանության ճանաչման գործընթացը: Իսկ դրան գնալու իրավունք մենք չունենք:

2134. Էլզասի ու Լոթարինգիայի վերաբերյալ վիճաբանության ժամանակ էլ միլիոնավոր զոհեր են եղել: Հիմա Ֆրանսիայի ու Գերմանիայի սահմանը ընդամենը մի փայտ է: Սա մեզ ոչինչ չի՞ ասում:

2135. Հասարակությունների հարաբերությունները կարող է և ջերմանան, ու դա կստիպի ցեղասպանության հարցը լռեցնել:

2136. Այսպես թե այնպես թուրքական ապրանքը գալիս է, եկեք այդ ամենը օրինականացնենք:

2137. Մենք պետք է գնանք փոխզիջումների, քանի որ դա իր հետ կբերի և դրական և բացասական քայլեր: Կյանքում պետք են զարգացումներ: Սահմանի բացումով մենք կզրկենք Վրաստանին ճանապարհային մենաշնորհից: Դա դրական կողմ է:

2138. Ինչքան էլ թղթի վրա գրվի, թե մոռանալու ենք մեր Եղեռնը, դա հնարավոր չի մոռանալ: Մի՞թե կարող եմ թղթի վրա գրելով կորցնել հիշողությունս:

2139. Հասարակությունը չի փոխի իր դիրքորոշումը պահանջատիրության հարցում, սակայն իշխանությունը կարող է ստիպել փոխել դիրքորոշումն ու լռել:

2140. Մենք ինչո՞ւ ենք եկել այստեղ: Ես ուսուցիչ եմ և ես լավ անում են իմ գործը: Մենք քաղաքական գործիչ չենք, որպեսզի այս հարցը քննարկենք: Սրանով պետք է զբաղվեն մեր դիվանագետները, ու մենք էլ կարողանանք վստահել մեր քաղաքագետներին: Իսկ մենք միայն էմոցիաներով ենք առաջնորդվում, որը ճիշտ չէ: Ինչքանով էլ, որ հանրային քննարկումը օգտակար է, բժիշկը հիվանդին բուժելուց մյուսների կարծիքը չի հարցնում:

2141. Կողմ եմ բացելուն, բայց ոչ հիմա, մենք պատրաստ չենք:

2142. Սահմանը փակվել է անտեսանելի ուժերի կողմից, և ոչ թե Թուրքիայի կողմից:

2143. Սահմանի բացումից մի վտանգ էլ կա, եթե ներդրում կատարվի մեծ չափաքանակով, մեր տեղական արտադրությունը կտուժի:

2144. Սառը դատենք. այսօր իշխանություններն անգամ չեն խոսում, թե ինչ ու ինչպես ենք պահանջելու թուրքերից:

2145. Թուրքը ընդամենը ցեղախումբ լինելով, այսօր ցանկանում է ընդլայնել իր սահմանները բացելով սահմանները և աստիճանաբար բնաջնջել հայերին:

2146. Թուրքին սպանես Եվրոպայից չի գա Ասիա, այսինքն Հայաստան:

2147. Արդյո՞ք մենք կհամարձակվեինք փակել սահմանը մեր պահանջատիրության առաջ քաշման վերաբերյալ, եթե Թուրքիան չփակեր այն:

2148. Մի քանի տասնամյակ հետո էլ չենք կարող բարձրաձայնել Ցեղասպանության մասին հարցը: Ինչպես ասում են, վաղը ուշ կլինի:

2149. Տասնյակ տարիներ հետո էլ թուրքերի հետ հարաբերությունները կլինեն սառն ու ձգված, որովհետև հիշողություն ունենք, մեր պապերին չենք ուրանալու:

2150. Քաղաքական էքսպանսիայից մեզ պետք է պաշտպանի նոր մշակված օրենքը:

2151. Ճանապարհ մեզ փոքր-ինչ կօգնի ազատվել Վրաստանից այս ամոթալի կախվածությունից: Ցանկացած պահին, երբ վիճակը սրվում է, վրացին թիկունքից հարվածում է:

2152. Սրանից օգտվելու են մենաշնորհները: Մեզ ի՞նչ:

2153. Սահմանը չպետք է բացվի, մենք չպետք է զիջենք, մենք չենք կարող բարեկամանալ մեր թշնամու հետ:

2154. Հայաստանը ընդամենը մի կետ է աշխարհի վրա, ու այդ կետի հոգս ու ցավը ընդհանրապես չի հետաքրքրում աշխարհին:

2155. Ինչո՞ւ եք կարծում, թե սահմանը բացելու դեպքում թուրքը չի հարվածի, մանավանդ որ փորձն էլ ունի:

2156. Մեր օրենսդրությունն անպայման պիտի նախատեսի սահմանափակող պայմաններ, որ հանկարծ թուրքերը չդառնան ՀՀ-ի քաղաքացի:

2157. Ինստիտուտում անցնում էինք աթեիզմ, բայց չգիտեինք կրոնը ինչ է: Սա էլ նույն բանն է:

2158. Երանի թուրքի խելացի խորամանկությունից մի փոքր ունենայինք:

2159. Առանց այդ էլ թուրքական ապրանքները լիքն են Հայաստանում: Սրանից հետո ավելի շատ կլցվի ու կխեղդեն մեր տնտեսվարողներին:

2160. Մենք պետք է երկար ժամանակ պահենք այսօրվա իրավիճակը, քանի որ կա որոշակի կայունություն:

2161. Սահմանի բացվելու դեպքում հողերի առք ու վաճառքի պայմանները պետք է սահմանափակել, հատկապես սահմանամերձ մասերում:

2162. Ես գտնում եմ, որ ներկա պահին , երբ սահմանը փակ է, պահանջատիրությունը ոչ ուղղակի կերպով լուծել հնարավոր չէ: Ամեն տեսակի շփումներն առաջացնում են հարցի ավելի քաղաքակիրթ լուծման հնարավորություն:

2163. Նույնիսկ կենցաղային հարցերում մենք նստում ենք միևնույն սեղանի շուրջ և քննարկում. այս հարցում ևս մենք պետք է սկսենք բանակցել և քննարկել:

2164. Ես չնայած երիտասարդ եմ, չեմ ուզում հարցին հոգեբանական/էմոցիոնալ կողմով նայել: Ես շատ դեմ եմ սահմանի բացմանը, եթե քաղաքականապես զգալի շահ չենք ունենալու: Ես չեմ ուզում Աշտարակի հրապարակով քայլելիս առնչվեմ, տեսնեմ թուրքերին:

2165. Հիմա պարսիկներից են երեխաներ ունենում, կսկսեն թուրքերից երեխաներ ունենալ:

2166. Հավերժական թշնամիներ չկան:

2167. Սահմանը բացելուց հատկապես կշահի ձեռներեցը, այն էլ խոշոր:

2168. Այսօր թուրքերը շահագրգռված են սահմանի բացումով, մենք էլ պիտի օգտվենք առիթից՝ նախապայմաններ դնելով իրանց առջև:

2169. Թուրքիան ամենահզոր պետություններից մեկն է և մեր երկրի նման երկրին պատերազմ հայտարարել չի կարող: Միակ ճանապարհը երկուստեք հարցերի քաղաքակիրթ քննարկումն է:

2170. Մենք չենք կարող այսօր եղբայր դառնալ մեր թշնամու հետ, չեն կարող հավատալ թուրքերին, քանի որ իրենց դիվանագիտությունը շատ խաբուսիկ է:

2171. Միշտ էլ միջազգային հանրությունը մեզ լռեցրել է: Նրանք առաջնորդվում են իրենց շահերով:

2172. Այսօր ռուսը թուրքից վատ է մեր հետ վարվում: Մոսկվայում երեկոյան վեցից հետո չէի կարողանում տնից դուրս գալ, իսկ Անթալիայում...

2173. Տնտեսագետների հաշվարկներն էլ միանշանակ չեն՝ մի մասը հույս ունի, որ այդ շուկան մեզ հնարավորություն է տալիս, մյուս մասն էլ մտածում է, որ իրենց հզոր շուկան մեզ կխեղդի, մեր ներքին արտադրողը կխեղճանա: Հեռանկարներն անորոշ են...

2174. Հայ աղջիկների ամուսնանալը, Հայաստանում տուն ու հող առնելը սահմանի բացման վտանգավոր հետևանքներից են լինելու:

2175. «Առաջ» գոռալով հետ ենք գնում:

2176. Մեր մեջ մանկուց սերմանել են, որ թուրքը մեր թշնամին է: Ինչպե՞ս կարողանանք ընդունել նրանց հետ նորմալ շփումը:

2177. Իմաստուն մարդը միշտ էլ պետք է լեզու գտնի իր հարևանի հետ: Եթե նույնիսկ մեծ փոփոխություն չլինի, գոնե մի քիչ կէժանանա ամեն ինչ: Իսկ հասարակ քաղաքացու համար կոպեկն էլ փող է:

2178. Մի՛ կարծեք, թե արտասահմանում գտնվող հայերը դեմ են սահմանի բացմանը, քանի որ իրենք տարբեր երկրներում միայն օգտվում են բաց սահմաններից:

2179. Ի՞նչ պետք է անի ժողովուրդը, որ իշխանությունը չգնա ազգադավ ու ազգի շահերին հակասող քայլերի՝ մնում է միայն անընդհատ հիշեցնել, որ զգոն լինի, որ իմանա՝ մենք պահանջատեր ենք:

2180. Թուրքիան Եվրոմիություն մտնելու ճանապարհին ցանկանում է անել ևս մեկ քայլ, ու այդ քայլը անելու համար նա կախված է մեզանից: Մի՞թե մենք չենք կարող օգտվել դրանից:

2181. Թուրքը մնում է թուրք: Եթե դանակով գա, մենք դրան պիտի պատրաստ լինենք:

2182. Երկրորդ սցենարը սխալ է, միայն քաղաքական կամ միայն տնտեսական շահը մեզ պետք չէ:

2183. Եթե ստորագրվելու է մի արձանագրություն, որի համար մեր սերունդները մեզ մեղադրելու են, ուրեմն մենք նորից ենք պարտվելու:

2184. Մենք ունենք խնդրահարույց հարցեր մեր հարևանների հետ, ընդ որում նաև Վրաստանի հետ, որը մեր տնտեսությունը կաթվածահար է անում ամեն իսկ եղած հնարավորության դեպքում:

2185. Սահմանը բացվելուց հետո հնարավոր է տնտեսական աճ լինի, իսկ մի քանի սերունդ հետո, երբ նոր սերունդները կշփվեն մեզ հետ, հնարավոր կլինի ավելի հեշտ լուծել Հայ Դատի հարցը:

2186. Հարաբերությունները ջերմացնել չի կարելի, պետք է հստակ հիշել, թե մեր դիմացինն ով է:

2187. Սահմանը պետք է բացվի, քանի որ Ռուսաստանի և Վրաստանի հարաբերությունների վատացման պայմաններում մեր հնարավորությունները կնվազեն: Վիճակը ավելի կվատանա, եթե Իրանում վիճակը վատանա:

2188. Պատմության մեջ շատ են հայտնի դեպքեր, երբ ստորագրված պայմանագրերը չեղյալ են հայտարարվում կամ չեն իրագործվում: Պետք չի պայմանագիրը համարել մի անփոփոխելի ու անբեկանելի փաստաթուղթ:

2189. Սահմանը կբացենք, իսկ մնացած հարցերը կկարգավորենք միջազգային պայմանագրերով:

2190. Մենք էլ մյուսների պես հիշեցնենք ձեզ՝ փայտը ձեռքից գցել չի կարելի, երբ դիմացինդ թուրքն է:

2191. Այս հարաբերությունները նման են մրցման. մեզ ստարտ է տված և մենք պետք է օգտագործենք այդ տրված հնարավորությունը:

2192. Մենք պետք է փորձենք մեր տնտեսությունը բարելավել՝ հնարավորինս բալանսի բերելով օտարերկրյա ապրանքների հոսքը մեր երկիր և մեր ապրանքների համար ողջամիտ պայմաններով արտահանումը դուրս՝ նոր շուկաների փնտրտուքի մտքերով:

2193. Պարսիկների ու թուրքերի մեջ մեծ տարբերություն կա .թուրքն ուրիշ սերմա, դրան հավատալ չի կարելի:

2194. Հայ-թուրքական սահմանի բացումը ավելի շատ պետք է միջազգային հանրությանը, քան Թուրքիային կամ Հայաստանին:

2195. Մենք պետք է բացենք սահմանը, սկսենք բանակցություններ, ուղարկենք մեր դեսպաններին և ընդունենք նրանց դեսպաններին այստեղ:

2196. Մենք պետք է մեր ներսում էնքան կայանանք, որ կարողանանք բոլորին հաշվի նստեցնել մեզ հետ:

2197. Հո Օսմանյան կայսրությունը չի, որ ինչ ուզեն անեն...բա միջազգային հանրություն կա, բա ճնշումներ կան:

2198. Թուրքիան ոչ միայն պետք է ընդունի Ցեղասպանությունը, այլև ժամանակի հետ վերադարձնի մեր հողերը:

2199. Մեր սահմանը որ բացվի, մեր առևտրից մեր պետությունը կշահի մաքսով, հարկերով և այլն: Ինչո՞ւ վրացիները հարստանան մեր հաշվին:

2200. Մենք վախենալու ոչ մի առիթ չունենք, քանի որ աշխարհում ոչ մի գրված և վավերացված պայմանագիր մինչև վերջ չի իրականացվել:

2201. Թուրքիան մեզ հող հետ չի տա, բայց Ցեղասպանությունը կճանաչի: Այստեղից պիտի սկսենք...

2202. Թուրքերի ու հայերի միջև կռիվներ պարբերաբար եղել են, թուրքն էլ ադրբեջանցու եղբայրն է, մեր պատերազմի ու մեր պահանջատիրության հարցում՝ մեզ թշնամի:

2203. Սահմանը բացելու հարցը պարզապես համարձակության հարց չի, երկու երեխու մեջ կռիվ կամ վիճաբանություն չի: Սրան չափազանց պատրաստված պետք է գնալ:

2204. Մեր հին տարածքների հետ կապված պահանջատիրությունը կախված կլինի մեր երկրի հզորությունից:

2205. Նախիջևանը հիշեք, Ջուլֆան դատարկեցին... ո՞րը հիշեցնեմ, կոտորել, եկել ու գնացել են միշտ:

2206. Մեր մեջ հիմա մարդիկ կան, որ թրքանում են, թուրքական երաժշտություն են լսում, թուրքական շոր են հագնում և այլն: Սա արդեն զուտ դաստիարակության հարց է:

2207. Սահմանը բացելու դեպքում թուրքի «ոտքը բռնելու» է մեր հողում ու շատ ավելի լուրջ խնդիրների առաջ ենք կանգնելու:

2208. Մեր դիվանագիտական մեքենան այնքան ուժեղ չի, որ թուրքականին դիմակայի:

2209. Ես կարծում եմ, որ թուրքերն ուզում են սահմանը բացեն, որ ժամանակի ընթացքում բարեկամանան մեզ հետ ու մոռացության տալ Ցեղասպանության հարցը: Սրանով իսկ շահագրգռված են սահմանի բացմամբ:

2210. Թուրքի հետ ընկերացի, փայտը ձեռքիցդ մի գցի. սա է լինելու մեր սկզբունքը:

2211. Թուրքերը քանդում մեր գերեզմանները, մեր վանքերում ոչխար են պահում...այս պայքարը անվերջ է:

2212. Արդեն մեկ դար է, ինչ մենք սառը, թշնամական հարաբերություններ ունենք, ու պարզ է, որ նոր հարաբերությունների զարգացման գործընթացի սկիզբը կլինի թույլ, դանդաղ, սխալներով, բայց հետո ամեն ինչ կփոխվի: Հինը անցած էտապ է, պետք է նոր գործընթացներ սկսել:

2213. Այսօր աշխարհում Թուրքիան երրորդն է իր բանակի հզորությամբ. մեր բանակը դրան ինչպե՞ս է դիմադրելու:

2214. Թուրքական դիվանագիտությունը հզորների է կործանել. Բյուզանդիան միայն հուշ է հիմա...

2215. Մենք հիմա ամենաստորին կետում ենք, սրանից վատ մեր հարաբերությունները չեն կարող լինել: Այնպես որ, այսպես թե այնպես ինչ-որ բան շահելու ենք:

2216. Այս հարցում ժամանակը մեր օգտին է աշխատում, մենք ավելի կշռադատված ենք դառնում:

2217. Թուրքիայում էլ կան շատ մարդիկ, որոնք դեմ են սահմանի բացմանը: Նրանք ճանապարհներ ունեն, ծով ունեն: Ավելի շատ մեզ է պետք այդ ճանապարհը:

2218. Թուրքիայում հարյուր հազարավոր տպաքանակով տպվում են դասագրքեր ու գրքեր, որտեղ բուն հայկական հողերը թուրքական պետության սահմաններում են ցույց տրվում: Հիմա թուրք երեխան էլ ինչպե՞ս իմանա ճշմարիտ պատմությունը:

2219. Խնդիրն այն է, որ Հայ դատի պահանջատերը մենք չենք, այլ սփյուռքը:

2220. Սահմանի բացումը իր հետ կբերի թուրքերի ներհոսք և ժամանակի հետ իրենք ամբողջությամբ կգրավեն մեր երկիրը:

2221. Եթե համախմբված լինենք, մենք թուրքին էլ կդիմանանք:

2222. Մեր նախագահն իրավունք չունի սխալվելու, ու մենք էլ իրավունք չունենք նրան չհավատալու: Մենք պետք է ողջունենք նրա բռնած ռազմավարությունն այս հարցում:

2223. Մենք միշտ քայլ ենք անում, երբ որ ուրիշ տարբերակ չենք ունենում ու ամենավատ վիճակում ենք լինում:

2224. Իմ հույսը Թուրքիան չէ. ես չեմ էլ ուզում մասնակցեմ էս քննարկմանը:

2225. Թող էլի հզոր բանակ ունենա, դրանից ինչո՞ւ պիտի վախենանք, եթե մեր ուժը մեր համախմբման ու միասնության մեջ լինի:

2226. Այսօր ամբողջ Հայաստանը ողողված է թուրքական ապրանքներով, սակայն Թուրքիայում չկա հայկական ոչինչ:

2227. Ես ինքս Եղեռնից մազապուրծ փախած սերնդի հետնորդն եմ, բայց այս հարցին զգացմունքային չեմ վերաբերում, երբ ասում եմ, որ մենք պետք է ողջունենք մեր քաղաքական այրերի բռնած ռազմավարությունը:

2228. Թուրքիայի քարոզչական մեքենան շատ հզոր է, անընդհատ ֆիլմեր են նկարում, գրքեր ու հոդվածներ են տպագրում:

2229. Եթե սփյուռքը մեր մեջքին կանգնած լինի, մենք կկարողանանք ճիշտ ու հաղթանակած դուրս գանք այս ամենից:

2230. Եթե Ցեղասպանությունը ընդունվի, ապա մենք կհավատանք, որ աշխարհում արդարություն կա:

2231. Այսօր շատ մարդ կա սահմանի բացմանը դեմ, բայց բոլորը կողմ են արտահայտվում: Վախից ուրիշի դուդուկի տակ են բոլորը պարում:

2232. Ավելի լավ է մենք նստենք դեմ առ դեմ զրուցենք թուրքերի հետ, քան միջնորդները «լուծեն» մեր հարցերը:

2233. Մենք հիմա ինչ էլ ասենք, դրանք կլինեն ընդամենը զգացմունքային մակարդակի վրա մակերեսային մտքեր, բայց այս հարցը պետք է ենթարկվի պատմության քննությանը:

2234. Գերմանիան իր երկրում ստեղծել է թանգարաններ, ընդունել է իր մեղքը հրեաների հանդեպ, ինչո՞ւ Թուրքիան չի կարող նույն կերպ վարվի:

2235. Եթե սահմանը բացվի, 10 տարի հետո Արևմտյան Հայաստանում շատ հայ կլինի: 15 տարի հետո հայերը այնտեղ բիզնեսներ կունենան: Թող թուրքը վախենա:

2236. Թուրքիան Եվրոպայի կազմում ավելի վերահսկելի կլինի՞, իրեն ավելի կոռեկտ կպահի՞... Թուրքիայի՝ Եվրոմիության մեջ մտնելը նրան ավելի քաղաքակիրթ կդարձնի:

2237. Մեր ամբողջ ազգը պիտի հիմա որոշում ընդունելուց առաջ լավ մտածի, թե հետոն ինչ ու ինչպիսին է լինելու:

2238. Մեր մեջ նստած է թուրքից վախենալու հոգեբանությունը: Սա սխալ է: Իսկ ո՞վ է ասել, որ մենք պետք է նրանցից վախենան, այլ ոչ թե իրենք մեզանից:

2239. Սահմանի փակումը միայն վնաս է բերել Հայաստանին, հարկավոր է անմիջապես փոփոխել այդ իրավիճակը:

2240. Վտանգը փակ սահմանների դեպքում շատ ավելի մեծ է: Շատ ավելի հեշտ կլինի պատերազմ հայտարարել փակ սահմանների դեպքում:

2241. Փակ սահմանը նման է ապահովիչը հանած ռումբի, իսկ սահմանը բացելը՝ ապահովիչը բացելուն: Եկեք մի քիչ երկար մտածենք նախքան սահման բացելը:

2242. Սահմանի բացումը տնտեսական դրական քայլ կլինի, սակայն քաղաքական հարթությունում մենք մտածելու բան ունենք:

2243. Թուրքիան Եվրոմիություն մտնելով էլ կլինի թելադրողի դերում:

2244. Եթե սահմանը փակ մնա, մեր պահանջատիրության հարցը կմնա օրակարգի առաջին հարցերից մեկը:

2245. Եթե Թուրքիայում հնարավոր լիներ հայերի բարգավաճումը, այնտեղի հայերը հիմա շատ լավ վիճակում կլինեին: Սահմանը բացելուց հետո, հայերը չեն բնակվի Արևմտյան Հայաստանում ու գրավեն, ինչպես Սոչին այսօր:

2246. Դարերով թուրքը մեզ ճնշել է ու կոտորել, հիմ ո՞նց հավատանք ու վստահենք նրանց:

2247. Եթե սահման բացվի, Ադրբեջանը կարող է գնալ առճակատման, պատերազմի վտանգը կսաստկանա:

2248. Մեր մշակույթի պահպանման փորձերը շատ թույլ են, այդ պատճառով էլ վախենում ենք...խնդիրը մենք ենք, ոչ թե թուրքերը:

2249. Ի՞նչ մշակույթի մասին եք խոսում, երբ Թուրքիայում մեր եկեղեցիներն ու կոթողները կամ ոչնչացնում են կամ իրենց են վերագրում:

2250. Մեր համար այսօր շատ կարևոր երկու կարծիք կա. մեկը Մինսկի խմբինը, մյուսը Քլինտոնինը, մեկը Եվրոպայինն է, մյուսը ԱՄՆ-ինը: Երկուսն էլ հաստատել են, որ նախապայմաններ չպետք է լինեն այս արձանագրությունների վավերացման հիմքում,

մենք էլ շատ հավատացյալ ժողովուրդ ենք ու հավատում ենք այս միջազգային կարծիքներին:

2251. Թուրքիան այդ ի՞նչ մշակույթ ունի, որ մենք դրանով հարստանանք:

2252. Ինչքան բան կա, որ ռուսները դեռ չեն առել, թուրքերը կառնեն:

2253. Մշակութային ոչ մի կապ թուրքերի հետ հնարավոր չի:

2254. Սահմանի բացումը տնտեսական օգուտ կբերի, բայց մարդկային շփում մեզ հարկավոր չէ:

2255. Եթե նույնիսկ Հայաստանը ճնշման ներքո պաշտոնապես հայտարարի, որ չեմ հիշում իմ անցյալը, հայ մարդը հաստատ չի կատարելու այդ «պահանջը» ...

2256. Թուրքերը կգան ու կսկսեն ապրել մեր կողքին, դա՞ եք ուզում:

2257. Սա լինելու է Հայաստանի դանդաղ կործանում:

2258. Չինաստանում երբ սպանեցին հինգ թուրք երիտասարդների, թուրքերը անմիջապես բոյկոտեցին չինական ապրանքները, իսկ հայերը այդ արժանապատվությունը չունեն և ողողել են շուկան թուրքական ապրանքներով:

2259. Մեր թշնամանքի հարցը դեռ կա, քանի թուրքը չի ապաշխարել:

2260. Մեր հոգեբանությունն այնքան էլ ուժեղ չէ. մենք սիրում ենք օտար բաներ շուտ վերցնել: Սահմանի բացումը վտանգավոր է:

2261. Ինչքա՞ն կարելի է թույլ տալ, որ քո շենքի մյուս բնակիչները ճնշեն ու ասեն, թե դու ինչ անես: Ինչո՞ւ պիտի ռուսը կամ իսպանացին ասի, թե մենք ինչ պիտի անենք: Բավական է, բա մեր անկախությունը ինչի՞ համար է:

2262. Հայաստանը կդառնա ընդամենը բեռնատար մեքենաների ուղի:

2263. Եթե նախապայմաններ չլինեն, ես համաձայն եմ սահմանի բացմանը:

2264. Ռուսաստանը միշտ էլ շահող է դուրս գալիս պատմության ցանկացած իրավիճակում:

2265. Վտանգ կա, որ ռուսի կամ այլազգի մեկի առածը Հայաստանում կանցնի թուրքի ձեռքը:

2266. Իրականում թուրքական մշակույթը շաաա

2274. Շահող են դուրս գալիս այն երկրները, որոնք իրենց երկրի ներսում ստեղծել են ազատ տնտեսական հարաբերություններ, առանց մենաշնորհների տնտեսություն:

2275. Ինչպես պատերազմը, այնպես էլ քաղաքականությունը պայքար է: Մենք չպիտի խուսափենք պատերազմի այս տեսակից: Քաղաքականության մեջ ե՞րբ են կողմերն իրար հետ համաձայնում. միայն երբ նրանց շահերը համընկնում են: Հիմա մենք պիտի փորձենք մեր շահերը համաձայնեցնել կամ էլ գտնել ճիշտ դաշնակիցներ:

2276. Որ մեր տարածքները վերադարձնենք, քրդերի ձեռքը կրակը կընկնենք: Հայաստանում կլինի երեք միլիոն հայ ու յոթ միլիոն քուրդ:

2277. Մեզ պետք է դառնալ ազատ, ժողովրդավարական պետություն, իսկ դա հնարավոր կլինի այն դեպքում, երբ ազատ կլինի մեր պետության յուրաքանչյուր քաղաքացի:

2278. Մտավախություն կա, որ նույնիսկ մեր նախագահը չի կարող որևէ որոշում ընդունել, քանի որ գերտերությունները մեծ ճնշում են գործադրում իր վրա նույնպես:

2279. Ինչո՞ւ Եվրոմիությունը չի բացում իր դռները Թուրքիայի առջև, իսկ մենք ուզում ենք բացենք:

2280. Այստեղ ճշմարտություն կա, միշտ էլ Ռուսաստանի ու Ամերիկայի շահն է պատճառ լինում այս կամ այն վիճակի:

2281. Մենք այս վերջին մեկ ամիսը կորցրել ենք մեր դադարը, քանի որ սա մեր ապագայի հարցն է:

2282. Թուրքերը կարող են գնել գործարաններն ու աշխատացնել, սակայն աշխատանքի կկանչեն թուրքերին:

2283. Երբ որ մեր ժողովուրդը կտեսնի, որ բանակցությունների մեջ շահը միայն տնտեսականն է, և ազգայինը խիստ զիջում է, ապա ոտքի կկանգնի:

2284. Սահմանի փակ լինելը նպաստում է, որ մեր երկրում զարգանա մենաշնորհային տնտեսությունը: Դրա պատճառն այն է, որ հիմա խողովակի երկու կողմում էլ նույն՝ սովետական պետության հետնորդներն են:

2285. Սահմանը բացելուց հետո հանցագործությունների թիվը հաստատ կավելանա:

2286. Մենք պետք է մտածենք, որ մեզ անհրաժեշտ են եվրոպական ներդրումներ, սակայն ոչ մի եվրոպական երկիր չի ցանկանա ներդրում կատարել այն երկրում, որը ունի փակ սահմաններ և սահմանափակումներ:

2287. Շուկայական տնտեսություն ունեցող պետությունները երբեք չեն ուզենա պատերազմել միմյանց հետ:

2288. Հայաստանին կմնա այդ տնտեսական շահույթի փշուրները:

2289. Մի օր պետք է հարաբերություններ սկսվեն: Եթե թուրքերի համար հնարավոր լինի երկքաղաքացիություն, ուրեմն մեր համար էլ կլինի: Մենք էլ կգնանք ու մեր պատմական հողերում տարածքներ կգնենք:

2290. Գերմանիային ու Թուրքիային երբեք չի կարելի դնել նույն հարթության վրա: Նրանց անցած ճանապարհները բոլորովին տարբեր են:

2291. Հինգերորդ սցենարը հայերի երազանքն է, շատ հաճելի, բայց դե սա հնարավոր չէ, համենայն դեպս մոտ ժամանակներում:

2292. Եթե քաղաքականության թիկունքում կանգնածը թուրք գործարարը լինի, մենք էլի կպարտվենք:

2293. Ինձ թվում է, որ Արևմտյան Հայաստանը վերադարձնելուց հետո Լոսից իսկապես հայը կգա ու կապրի Կարսում:

2294. Սահմանը կարող է բացվի, բայց բարեկամներ երբեք չենք դառնա թուրքերի հետ:

2295. Սահմանի բացումից կշահի և Թուրքիան, և Հայաստանը և ապագա սերունդները՝ երկու երկրներում: Սակայն, մենք պետք է շարունակենք դիվանագիտական հարաբերությունների շտկումը, կարգավորումը և բարելավումը:

2296. Ես նույն Հայաստանի մասին եմ երազում, ինչ իմ տատը՝ Ղարսի հետ միասին:

2297. Հինգերորդ սցենարը միֆ է:

2298. Չի կարելի բացել սահմանը և լռել, մոռանալ ցեղասպանությունը:

2299. Ընդամենը Ցեղասպանության ճանաչումը մեզ ոչինչ չի տալիս, եթե դա փոխհատուցում չի նախատեսում:

2300. Թուրքերը հայերին ձուլելու համար պատրաստ են ամեն ինչի:

2301. Մենք չենք գնա Արևմտյան Հայաստան ապրելու. ինչո՞ւ հիմա ոչ մեկը չի գնում Ղարաբաղում բնակվի:

2302. Ուզում եմ բացվի սահմանը, առանց նախապայմանների, ԼՂ և ցեղասպանության հարցը չպետք է խառնել այս գործընթացին:

2303. Սահմանը բացելուց հետո կբերի նարկո-թրաֆիկի զարգացմանը, մեր երիտասարդները կփչանան:

2304. Անգամ ամենալավ երազում չէինք կարող պատկերացնել, որ սահմանի բացումը հնարավոր է:

2305. Եթե Էրդողանը թեկուզ խոսքով ցավակցի Ցեղասպանության զոհերին, ապա նրա հետնորդը հաստատ կճանաչի Ցեղասպանությունը:

2306. Եթե վախենանք ամեն ինչից, ուրեմն պետք է լրիվ մեկուսանանք: Դա հնարավո՞ր է: Մենք մեզանից վախենում ենք:

2307. Արագ տեմպերով մերձեցումը թուրքերի հետ հնարավոր չէ. եթե նույնիսկ վերադարձնեն Ղարսը, արտասահմանի ոչ մի հայ չի գա և բնակվի այդ հողերում, այդ իսկ պատճառով իրենք էլ իրենց հերթին են խոչընդոտում այդ գործընթացը:

2308. Եթե սայլը տեղից շարժվել ա՝ ճռռալով կգնա առաջ:

2309. Դժվար թե հնարավոր լինի հինգերորդ սցենարում նկարագրված բարի դրացիական հարաբերություններին հասնել: Դա միայն կլինի քող: Նույնիսկ սովետական ժամանակներում, երբ մեզ թույլ չեն տվել խոսել Ցեղասպանության ճանաչման ու կորսված հողերի մասին, մենք հոգում էլի թուրքերի նկատմամբ ունեցել ենք պահանջատիրական մղումներ:

2310. Հիմա է պահը հարաբերություններ հաստատելու, որովհետև երկու պետական այրեր՝ Գյուլն ու Սարգսյանը իրար հասկանում են: Հիմա պետք է ժողովրդին նախապատրաստեն:

2311. Գնացողը հիմա էլ է գնում, ոչ մի բան էլ չի պահում Թուրքիա գնալու համար:

2312. Ես կարող եմ հարյուր հիմնավորում բերել, որ մեզ անհրաժեշտ է փակել Վրաստանի ու Պարսկաստանի հետ սահմանը:

2313. Հարաբերություններ հաստատելու ու սահմանը բացելու ժամանակը մենք չենք որոշում, այլ գերտերությունները:

2314. Կարող է նույն այդ Թուրքիան այնքան ներազդի, որ մեզ ստիպի հետ կանգնել մեր պահանջներից:

2315. Էսօր Վրաստանը ցանկացած պահ օգտագործում է՝ ճնշելու Հայաստանին: Իսկ Թուրքիան կլինի այլընտրանք:

2316. Մեր սեղանի բոլոր մասնակիցներն ուզում են, որ սահմանը բացվի, բայց մտավախություններով:

2317. Ինչու՞ զարտուղի ճանապարհներով բերել ապրանք ու մի քանի անգամ թանկ, եթե կարելի է բերել ուղիղ Թուրքիայից ընդհանուր սահմանով:

2318. Կարսի ու Մոսկվայի պայմանագրերը նախ պետք է չեղյալ հայտարարել, աշխատել Սևրի պայմանագրի գոնե մի մասը հետ բերել:

2319. Ամբողջ խնդիրը մեր դիվանագիտության մեջ է: Զգույշ պետք է լինենք:

2320. Վերջին սցենարը հեքիաթ է, բայց և շատ ցանկալի:

2321. Ցեղասպանության ճանաչումից հետո հետևանքները սահմանվում են ըստ միջազգային չափանիշների /նյութական ու բարոյական փոխհատուցում և այլն/, այնպես որ դա թուրքերի որոշելու հարցը չի լինելու:

2322. Մեր երեխաները տարիներ շարունակ ունեցել են հետամնաց հայացքներ և միշտ վախել են թուրքերից: Մենք պետք է փորձենք փոխել այդ մտածելակերպը:

11. ԵՐԵՎԱՆՈՒՄ
կայացած հանրային քննարկման ընթացքում արտահայտված մտքերը

03-04.10.2009

I քննարկում

2323. Թուրքիան ու Ադրբեջանը փոխկապակցված շահեր ունեն. անհնար եմ համարում, որ թուրքերը դրա մասին մոռանան:

2324. Սահմանի բացումը ընդհանուր առմամբ մեզ լուրջ օգուտ չի տա: Ավելին, մեզնից կվերցնեն մեզ համար թանկը՝ փոխարենը տալով գրոշներ:

2325. Եթե հիմա մենք Թուրքիայի հետ հարաբերությունները բարելավենք, մյուս երկրները կասեն էլ ինչու՞ ենք մենք՝ ցեղասպանության հարցը քննարկելով/ընդունելով, այս երկու հարևանների միջև սեպ խրում:

2326. Մեր ազգայինը պահելու համար հստակ ռազմավարություն պետք է ունենանք, օրենքով պաշտպանենք մեր ազգային շահերը, հետո գնանք սահմանների բացմանը:

2327. Հավանական է, որ թուրքերը գան, հազարավոր մետրերով հող առնեն: Դրա դեմն է պետք առնել:

2328. Թուրքիան եվրոպական մաքսային գոտի է մտնում, հետևաբար նրա պրոտեկցիոնիստական քաղաքականությունն այևս չի կարող գործել:

2329. Մինչև հիմա ինչու՞ մի քանի ռոկֆելլերներ չեն եկել ու մեր մոտ հող առել: Մի՞թե դա մենք չենք ուզում:

2330. Ցեղասպանության մասին չեն խոսում միայն պետական մակարդակով: Եթե լինի ճնշում, դա չի նշանակում, որ մեզ կարգելեն խոհանոցում դրա մասին խոսել:

2331. Երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման ու զարգացման գործում երրորդ երկրի շահն ու կարծիքը չպետք է ուղղորդիչ կամ որոշիչ դեր խաղա:

2332. Ակտիվորեն շրջանառվող, հատկապես իրենցից անհեթեթություն ներկայացնող տեսակետները, ի վերջո «ուժեղանում», «ամրապնդվում» են և դառնում կարծրատիպեր:

2333. Երկու տարբերակ կա. ներմուծողները չեն նվազեցնում գները և էժանացում չի լինում, կամ էլ նրանք համապատասխանորեն նվազեցնում են գները և մենք իրականում շահում ենք. սակայն այս երկու տարբերակների իրականանալիությունը կապված չէ սահմանի բացման հետ:

2334. Եթե խոսում ենք ճնշման մասին, ապա պետք է խոսենք մեր կողմից Ցեղասպանության միջազգային ճանաչման ճնշման մասին: Դրսից ոչ մի ճնշում չի կարող լռեցնել մեզ:

2335. Մեզ մնացել է հինգ տարի Ցեղասպանության փաստը ընդունել տաու համար. 100 տարի հետո այն կկորցնի իր ակտուալությունը:

2336. Սահմանի բացումը ցանկացած դեպքում բերելու է առնվազն սահմանամերձ մարզերի տնտեսական զարգացման:

2337. Արձանագրությունները մեկ անգամ ընթերցելու արդյունքում ակնհայտ է, որ առաջին սցենարում «մոռացման» տրվող հարցերը հստակորեն նշված են որպես երկու կողմերի շահեր. այսինքն, դրանց մոռացության տալն արդեն իսկ բացառվում է:

2338. Եթե ուզում ենք պահանջատեր լինել, ապա պիտի միանշանակորեն հրաժարվենք առաջին սցենարից: Միակ հարցը սա է:

2339. Մենք 3 միլիոն ենք, նրանք՝ 70 միլիոն: Այսինքն, մենք առնվազն 23 անգամ ավելի արտահանման շուկա ենք ձեռք բերելու:

2340. Երկու երկրների մեջ բոլոր հարաբերությունները յուրօրինակ «առևտուր» են՝ սկսած բարոյականությունից, պատմությունից, շահերից և այլն. յուրաքանչյուր կողմ պետք է «շնորհք» ունենա իր շահերի օգտին օգտագործել առկա գործոնները:

2341. Սա ընդհանուր առմամբ ձեռնտու տարբերակ չի, բայց նույնիսկ սրանով առաջ շարժվելու դեպքում հնարավոր են մեզ համար նպաստավոր զարգացումներ:

2342. Եթե քո երկրում կառավարման մակարդակը վատն է, ապա կապ չունի քանի բաց սահման կա:

2343. Եթե Հայաստանում կարող են լինել մարդիկ, ովքեր համաձայն կլինեն Ցեղասպանության հարցը դնել երկրորդ պլան, ապա Սփյուռքում այդպիսի բան չի կարող տեղի ունենալ: Այս առումով պառակտում է հնարավոր մեր և Սփյուռքի միջև:

2344. Եթե այս սցենարը հիմնված է արդեն նախաստորագրված արձանագրությունների վրա, ապա դա շատ վտանգավոր է:

2345. Առաջին սցենարի միակ ասելիքն էս է. «Սահմանը բացում ենք առանց երկրի ներսում սոցիալական ու կառավարման հիմնախնդիրները լուծելու»:

2346. Ինձ թվում է Սփյուռքը չափից ավել քաղաքականացված է: Նրանք չեն պատկերացնում այս ամենի տնտեսական կողմը:

2347. Պատմական ենթահանձնաժողովի ստեղծելու քաղաքական օրակարգն առկա է. բայց մենք տեղյակ էլ չենք, թե մեզ և թուրքերին հետաքրքրող ինչ հարցեր են ներառվելու:

2348. Եթե մեր բոլոր հարցերը կապում ենք ընդամենը սահմանների բացման հետ, ապա ինչու՞ մինչև հիմա չենք կարողանում առավելագույնս օգտագործել Վրաստանի կամ Պարսկաստանի հետ սահմանի հնարավորությունները:

2349. Մինչև սահմանի բացում մենք մեր ներքին խնդիրները լուծելու անհրաժեշտություն ունենք:

2350. Ցանկացած խոշոր քայլի դեպքում Ցեղասպանության հարցը լուծվելու է. այլ հարց է, թե ինչպես: Բայց պրոցեսի առաջընթաց հաստատ կլինի: Իսկ տեղում դոփելու պարագայում այդ հարցը մնալու է բարձր ամբիոններից խոսելու մակարդակում:

2351. 60-ականներին խիստ ճնշումներ կային Ցեղասպանության թեման արծարծելու վերաբերյալ: Բայց մենք դրա մասին խոսում ու պայքարում էինք, չէ՞:

2352. Սահմաններ բացումը հնարավոր է օգտագործել նաև որպես ուսուցանող միջոց՝ հենց հայերիս ցույց տալու մեր սխալները: Սա մեր սխալների վրա սովորելու հնարավորություն է նաև:

2353. Հայ հասարակությունը պետք է ինքն իր համար պատասխանի, արդյո՞ք մենք պատրաստ ենք քննարկել ցեղասպանության հարցը: Մեր նախագահն ասել է. «ես պատրաստ եմ», արդյո՞ք մեր հասարակությունը պատրաստ է նրան, ինչին պատրաստ են իշխանությունները:

2354. Սփյուռքը սկեսուրն է, իսկ մենք ընտանիքի մնացած մասը: Չպետք է թույլ տալ, որ սկեսուրը խառնվի քո ներքին գործերին, բայց նաև չի կարելի պառակտում թույլ տալ:

2355. Առաջին սցենարի բացասական կողմը «կամ-կամ»-ն է: Ոչ մի հստակություն չկա:

2356. Ինչի՞ չեք մենք Նյուրնբերգի նման մի պրոցես պահանջում... Պատասխանս մեկն է, քանի որ մենք ինքներս չգիտենք, թե ինչ ենք ուզում. ներողություն, թե՞ մեկ այլ բան:

2357. Ղարսի պայմանագիրը արհամարհանք է միջազգային բոլոր օրենքների հանդեպ: Մենք հիմա դրանով ենք առաջնորդվում, բայց առաջ չենք քաշում, ասենք, Սուրմալուի հարցը:

2358. Սահմանը բացելու արդյունքում անհնար է, որ ոչ մի բան չփոխվի. առևտրի և տնտեսական հարաբերությունների արդյունքում, միանշանակորեն, ի վերջո տեղաշարժեր են լինելու նաև քաղաքական բնագավառում:

2359. Ես ընդհանրապես դեմ չեմ սահմանների բացմանը, բայց ոչ այս գնով:

2360. Եթե Ցեղասպանությունը տեղափոխենք դատական ոլորտ, ապա հարց. ի՞նչ եթե դատարանն ասի չի եղել Ցեղասպանություն... սա վերջնականապես մեր ճանապարհը կփակի:

2361. Ինչ-որ բան կփոխվի, բայց արդյո՞ք մենք հավասարը հավասարի պես է Հայաստանը հարաբերվելու Թուրքիայի հետ:

2362. Սահմանների հարց այս պահին չկա: Հայաստանի անկախության հռչակումից հետո Թուրքիան առաջին պետություններից մեկն էր, որ ճանաչեց մեր անկախությունը: Հենց այդ ժամանակից մեր երկու պետություններն էլ, ըստ էության, ճանաչել են միմյանց սահմանները:

2363. Ի՞նչ դիվանագիտական հաղթանակի մասին կարող ենք խոսել, եթե նոր պատմության դասագիրք են հրատարակել Թուրքիայում, որտեղ Հայաստանը չկա ու Թուրքիան սահմանակից է Ադրբեջանի հետ:

2364. Սահմանը բացելով Թուրքիան ևս մի լրացուցիչ խաղաքարտ կստանա տարածաշրջանում իր դերակատարությունն ուժեղացնելու համար:

2365. Հիմա հիմնական հարցը դիվանագիտական հարաբերությունների հաստատման խնդիրն է: Սահմանի հարցը էական չի :

2366. Սահմանը բացելուց հետո որոշակի գործընթացներ կդառնան անդարձելի թե՛ մեր կողմից և թե՛ Թուրքիայի:

2367. Ինձ թվում է այս ամենը ձևական բնույթ է կրում ու դեռ շատ ժամանակ ունենք մինչև սահմանի բացումը:

2368. Մենք շոկի պատրաստ չենք, մեզ պետք է դանդաղ մտնել ջուրը: Երկրորդ սցենարը մեզ թույլ է տալիս սառը ջրին աստիճանաբար համակերպվել:

2369. Աշխարհում սահմաններ հաստատում են պատերազմի միջոցով կամ ուժեղների կողմից: Մենք առայժմ դրանից ոչ մեկին պատրաստ չենք:

2370. Նույնիսկ եթե սահմանը բացվի ու թուրքը կարողանա գալ այստեղ, ես միևնույն է նրա հետ ընկերություն չեմ անի:

2371. Ոչ մի բան էլ չի՛ մոռացվելու. արդեն հարյուր տարի անցել է, բայց ո՞ր մեկս է մոռացել:

2372. Եկեք չհերքենք հա, որ մեզ մոտ թուրքի հանդեպ զոհի, «զալոժնիկի» սինդրոմն է իշխում:

2373. Ի տարբերություն այլ ազգերի մենք գենետիկ հիշողություն ունենք:

2374. Մեր հասարակությունները կառչել են անցյալից: Սա սխալ է: Պետք է մտածել ներկայի ու ապագայի մասին՝ չմոռանալով անցյալը:

2375. Մենք չենք փակել սահմանը. բայց և մինչ օրս էլ մեզ համար դեռ չենք որոշել, թե ինչ ենք ուզելու ցեղասպանության ճանաչման արդյունքում:

2376. Կարսի պայմանագիրը հիմա գործում է, ԽՍՀՄ-ը հինգ անգամ վավերացրել է այդ պայմանագիրը, Հայաստանի Հանրապետությունն էլ ԱՊՀ մտնելիս ճանաչել է ԽՍՀՄ-ի սահմանները:

2377. Իմ որդին կարող է ապագայում մեր հողերը պահանջել Թուրքիայից, սակայն ես այսօր դեռ չեմ կարող դա անել:

2378. Որպեսզի մեզանից վախի զգացումը դուրս գա, մեզ շփում է պետք. գելից վախենում ես, քանի դեռ գելի աչքերին չես նայել...

2379. Առանց սահմանների ճանաչման աբսուրդ է սահմանների մասին խոսելը:

2380. Մեր երկրի ներքին զարգացման մինչ օրս արձանագրված պատմությունը թույլ չի տալիս մեզ այսօր արդեն իրապես պահանջատեր լինել:

2381. Եթե ես ընտրեի առաջին և երկրորդ սցենարների միջև, ապա ավելի հավանական է թվում երկրորդ սցենարը: Մի որոշ ժամանակ մենք դեռ կմնանք պահանջատեր:

2382. Երկրորդ սցենարն իրատեսական չէ, քանի որ երկրի ներսում միշտ էլ ուժի մեծամասնությունն է իշխում, ոչ թե մեծամասնության ուժը: Իսկ մենք ուժեղ չենք:

2383. Սահմանների ճանաչումը չի նշանակում պահանջատիրությունից հավիտյանս հրաժարում: Ցեղասպանության ճանաչման գործընթացի կետերից մեկը հենց հայրենիքի կորստի ու դրա վերադարձի խնդիրն է:

2384. Մեր տնտեսական վիճակը այնքան տխուր է, որ մենք կուլ կգնանք Թուրքիային:

2385. Երբ մեր երկիրն էլ քաղաքակիրթ երկրների շարքում կկարողանա կանգնել ու հպարտորեն ասել, որ՝ այո, մեր երկիրն արդեն կայացել է, այդ ժամանակ էլ կկարողանանք մեզ թույլ տալ պահանջել մեր հողերը:

2386. Սահմանի բացումը ոչ թե Թուրքիայի հետ սահմանի բացում է նշանակում, այլ մեր պատմական հայրենիքի հետ սահմանի բացումը:

2387. Ինձ թվում է, տնտեսական գործոնն այստեղ երկրորդական է: Մենք առանց Թուրքիայի էլ կարող ենք տնտեսություն ունենալ, Թուրքիայի հետ՝ մի քիչ ավելի լավ: Սա չէ հիմնական խնդիրը:

2388. Ասենք թե մեր պահանջը բավարարվում է ու մեզ հետ են վերադարձնում մեր հողերը՝ յոթ միլիոն քրդերով: Ի՞նչ ենք անելու:

2389. Մեր էս «սիտուացիան» լրիվ Պեպոյի վիճակն է. եթե մենք մեր բարաթը չգտնենք, մեր Կեկելին տանող էլ չի լինի:

2390. Չի կարելի թշնամու հետ չշփվել, հարևանի հետ չշփվել, պետք է փորձել ուղղակի դինամիկա ապահովել մեր հարաբերություններում: Սա է ամբողջ խնդիրը:

2391. Արևմտյան Հայաստանում բնակվող քրդերը բնիկ չեն: Այդ հողերի վերադարձի դեպքում նրանք նորից քոչելու են:

2392. Ուժեղից պետք չէ վախենալ, մտնել տուն ու դուռն ու պատուհանը փակել: Նրա հետ հարաբերվելուց չես փախչի:

2393. Սահմանը պետք է որոշ ժամանակ դեռ փակ լինի: Մենք վախեր ունենք, որ պիտի հաղթահարենք, հետո միայն բացենք:

2394. Էստոնիայի բնակչության մեծամասնությունը, անկախությունից հետո, ռուս էր, բայց նրանք կարողացա՞ն ռուս նախագահ անցկացնել: Այսինքն, կան մեխանիզմներ յոթ միլիոն քուրդ ունենալով ՝ չդառնալ քրդական պետություն:

2395. Այս փուլն (երկխոսության և փաստաթղթերի նախաստորագրման և այլն) արդեն Թուրքիայի համար ևս որոշակի կոմպրոմիս է նշանակում:

2396. Կարծում եմ, որ ևս երեք-չորս տարի է մեզ անհրաժեշտ, մինչև կունենանք լուրջ կառավարություն:

2397. Սահմանի բացման ցանկացած հետաձգում վնասելու է առաջին հերթին մեզ: Եթե քսան տարի առաջ բացած լինեինք սահմանը, մենք Թուրքիայում պահպանած կլինեինք շատ լուրջ հայկական համայնք:

2398. Բիզնես շահով պիտի առաջնորդվենք: Երկու ելք ունենք. կամ պիտի այդ բիզնեսի տիրոջն իրոք ազգայնական դարձնենք, որի դեպքում կշահենք, կամ մեր ցանկացած ճիշտ քայլ սխալ արդյունք կբերի:

2399. Անգլիան ու Գերմանիան 38 թ. պայմանադիր կնքեցին, բայց պարզ չէր, թե այդ պայմանագրով ով է "հաղթած" դուրս գալիս: Սկզբից Հիտլերն էր հաղթում, հետո՝ Անգլիան: Նույնը այս արձանագրությունների դեպքում է՝ ամեն ինչ կախված է դիվանագիտությունից, պայմանագիրը կնքելուց հետո եկող գործողություններից:

2400. Եթե ենթադրենք, որ սկզբում սահմանները բացվեն, մեր երկու տնտեսությունները սերտաճեն տաս-տասնհինգ տարվա ընթացքում, այնուհետև, եթե մի օր Թուրքիան որոշի սահմանը փակել, Հայաստանը կհայտնվի խորը տնտեսական ճգնաժամում, քանի որ մեր տնտեսությունն ավելի մեծ կախվածություն կունենան Թուրքիայի՝ չափերով ավելի մեծ տնտեսությունից:

2401. Եվրոմիության պահանջով է, որ Թուրքիան ցանկանում է բացել սահման: Փակ սահմանի դեպքում ամենամեծ կորուստը կրում է Թուրքիան:

2402. Եթե այսքան առաջ գնալուց հետո մի հատ հետ գնանք ու սահմանը մնա փակ, այլևս առաջ չենք գնալու:

2403. Թասիբ, թասիբ ենք ասում... եկեք ծուռը նստենք, շիտակ խոսենք. կարծում եք, որ մենք թասիբ ունե՞նք...

2404. Կա ընդհանուր թույլ լինելու, հատկապես՝ էլիտայում տգիտության խնդիր:

2405. Մենք իրավաբանորեն ցանկացած պահի կարող ենք հետ կանգնել մեր նախաստորագրած արձանագրություններից:

2406. Եթե մեր հասարակությունը խիստ դեմ լինի, ապա Նախագահն ու իշխանությունները հո դիկտատոր չե՞ն. կամ պետք է իրենց դիրքորոշումը փոխեն, կամ էլ...

2407. Փակ սահմանները մենք կարող ենք օգտագործել որպես հաղթաթուղթ:

2408. Մեզ մոտ լավ ու խելոք սերունդը գնում է...

2409. Հարաբերություններ հաստատելու համար ամեն ինչ պետք է լինի երկկողմանի: Մենք ճանաչել ենք Ցեղասպանությունը, իսկ նրանք դեռ ոչ: Թող ճանաչեն, հետո մտածենք:

2410. Եթե մենք բարոյական հաղթանակ ենք ուզում, ասեմ, որ հաջորդ սերունդները շատ ավելի պրագմատիկ ու կոսմոպոլիտ են լինելու...

2411. Օր առաջ սահմանի բացումը կարևոր է մեզ համար:

2412. Եկեք չկորցնենք մեր բարոյական դեմքը, թեկուզ մի քիչ էլ վատ ապրենք ու սահմանը մնա փակ, քան թե, կներեք արտահայտությանս համար, դառնանք պոռնիկ զուտ լավ ապրելու համար:

2413. Թուրքիայի կողմից սահմանը փակելու ժամանակ մեր պետությունը ընդհանրապես դեր չուներ: Այժմ իրավիճակը մի փոքր այլ է:

2414. Սահմանի բացումից մենք տնտեսապես կշահենք, թե ոչ, կախված է մեր օրենսդրությունից:

2415. Թուրքին չսիրելը դեռ հայրենասիրություն չէ:

2416. Եթե ես թուրք դիվանագետ լինեի, ես կասեի, վավերացնենք դիվանագիտական հարաբերությունների ստեղծման մասին արձանագրությունը և վերջ, քանի որ դա առավելագույնն է, ինչի կարող ենք հասնել Հայաստանի հետ:

2417. Էսօր Փոթիում ամեն հարց կարգավորված է մի քանի մարդկանց կողմից ու այլ մարդ չի կարող մուտք ունենալ այնտեղ: Սահմանի բացումը մեզ այլընտրանք է տալու:

2418. Մենք հիմա նույնիսկ արտասահմանյան ներդրումների մասին օրենք չունենք ու այսպես անպատրաստ գնում ենք սահմանի բացման:

2419. Ինչու՞ է միասնական գործընթացն արտացոլված երկու առանձին փաստաթղթերում:

2420. Մենք մենաշնորհը հաղթահարելու համար այլընտրանք ենք փնտրում Թուրքիայում, բայց ինչու՞ չենք կարողանում այդ մենաշնորհի դեմն առնել հենց ներսում:

2421. Երրորդ սցենարը, ինձ թվում է, մենք արդեն ապրել ու ապրում ենք ներկայում, և այն լավը չէ:

2422. Սահմանները բաց թե փակ, մեզ համար մեկ է. ոչ մի դեպքում մենք չենք տուժելու. կարող ենք պարզապես մի քիչ ավելի շատ շահենք կամ էլի նույն տեղում մնանք:

2423. Անկախությունից ի վեր տասնյակ երկրներ ճանաչել են Ցեղասպանության հարցը: Բայց կարևորագույնը Թուրքիայի կողմից ճանաչումն է լինելու:

2424. Մեր աղջիկները հա՞վ են, ինչ է, որ թուրքերը գան տանեն ու ամուսնանան նրանց հետ:

2425. Իսկ ո՞վ ասաց, որ ժամանակ ձգելով կպատրաստվենք, և ոչ թե էլի կսպասենք մինչև «հա դե օրը կգա, բարին հետը»:

2426. Սահմանների բացումը կնպաստի երկու երկրների հասարակությունների միջև հարաբերությունների ակտիվացմանը, ինչը Ցեղասպանության ճանաչման գործընթացում օգտակար դեր կարող է ունենալ:

2427. Մինչև խաղակոճերը չգցես, չես կարող որոշել, թե ինչպես խաղաս:

2428. Հանձնաժողովների գործունեությունը անընդունելի է, որքան էլ հայտարարենք, թե այդ հանձնաժողովը ցեղասպանության լինելիության հարցը քննարկելու համար չի :

2429. Սահմանի բացումից պարզապես նպաստավոր պայմաններ կստեղծվեն անբարոյական ու թուրքի հետ ամուսնանալ ցանկացող աղջիկների համար: Դրանից նրանց թիվը ոչ կավելանա, ոչ կպակասի: Թող այդպես լինի՝ ավելի լավ է աղջիկը հաջող ամուսնություն ունենա թուրքի հետ, քան մնա չամուսնացած:

2430. Ես կարծում եմ, որ հարաբերություններից ավելի շատ շահելու ենք մենք և թուրքերը, և ոչ թե գերտերությունները:

2431. Պետք չէ խոսել նրա մասին, թե ինչ կավելանա կամ կպակասի, այլ պետք է խոսել էն գնի մասին, որը մենք վճարելու ենք այդ ավել-պակասի համար:

2432. 4-րդ սցենարով դառնում ենք պապուաս երկիր էժան աշխատուժով:

2433. Մենք դեռ չգիտենք էլ, թե ինչ գին ենք վճարելու, ուր մնաց խոսենք նրա մասին, թե արժի այդ գինը տալ թե ոչ:

2434. Անտրամաբանական կլիներ, եթե Ռուսաստանը որևէ դեր չխաղար այս գործընթացում: Ամբողջ հարցը այն է, թե մենք ինչպես ենք կարողանում օգտագործել տարբեր երկրների շահերը մեր շահերն առաջ տանելու համար:

2435. Սահմանի բացումը շոկ է լինելու մեզ համար. դրա արդյունքում կամ մենք արագորեն կհարմարվենք և կզարգանանք, կամ էլ միանգամից կտապալվենք ու էլ երբեք ոտքի չենք կանգնի:

2436. Մեր ու ռուս էլիտայի շահերը համընկնում են: Այս առումով թուրքը շանս չի ունենա այստեղ:

2437. Այսօր մեր տնտեսության ինսուլին տոկոսը Ռուսաստանի ձեռքին է: Ռուսաստանի տնտեսական զարգացումից մենք կարող ենք շահել այնքանով, որ մենք կունենանք աշխատատեղեր, տնտեսական աշխուժություն:

2438. Այսօր Ռուսաստանին անհրաժեշտ է բացել թե՛ թուրքական, թե՛ ադրբեջանական երկաթուղիները:

2439. Գուցե էն ինչ որ կորցնելու ենք արդեն իսկ կորցրել ենք. մշակույթ պահենք, աղջիկ պահենք, ազգ պահ ենք... ինչի՞ մասին է խոսքը, եթե մեր հարսանիքները մուղամ ա, մեր տաքացուցիչը թուրքական բաքսի ա, մեր փեսեն առնվազն հայ չի... էլ ի՞նչ գնի մասին ենք խոսում:

2440. Գերտերությունները շատ լուրջ ակնկալիքներ ու շահեր ունեն մեր տարածաշրջանում:

2441. Եթե մենք չուզենանք խաղալ այս խաղը, ոչ ոք չի կարող մեզ խաղացնել: Մեզ խաղացնում են ու մենք խաղում ենք, որովհետև մենք էլ այս խաղի մեջ շահեր ունենք:

2442. Սահմանի բացման արդյունքում մեր տնտեսությունը կհեղեղվի թուրքական ընկերությունների ներդրումներով. արդյունքում մեր մենաշնորհային օլիգարխները կկործանվեն:

2443. Շատ հնարավոր է, որ Ռուսաստանը պնդի, որ էներգակիրների տարանցման հերթական ուղին անցնի Հայաստանով: Ու մենք պետք է աշխատենք այս ուղղությամբ:

2444. Եթե մենք չենք կարող այսպիսի խոշոր խաղ ինքներս խաղալ, եկեք ուղղակի փորձենք այս խաղից տորթի մեր կտորը պոկենք:

2445. Ես դեմ չեմ, որ Եվրոմիության սահմանը մեզ մոտենա:

2446. Ռուսական երկաթգիծը պետք է զարգացման հնարավորություն ունենա:

2447. Այսօր Թուրքիան արգելում է որևէ ներդրում իր երկրում, եթե այն գրանցվում է հայազգի անհատի մասնակցությամբ:

2448. Երբ 88 եղավ, մեր կռիվը ադրբեջանցու հետ չէր, թուրքի հետ էր... մեզ միշտ միավորել է վրեժի զգացումը... լավ թե վատ, մեզ միավորողն այդ է:

2449. Չնայած չորրորդ սցենարով մենք կշահենք տնտեսապես՝ այնուամենայնիվ կպարտվենք մեզ համար կարևոր մեկ այլ՝ Ցեղասպանության հարցում:

2450. Ոչ մի կերպ չի կարելի Ղարաբաղի հարցը խառնել Թուրքիայի հարցին:

2451. Մեր քաղաքական շահը առաջ է մղվում այս սցենարով: Այս դեպքում մենք խուսանավելու հնարավորություն ենք ստանում, կախված չենք լինում միայն Ռուսաստանից:

2452. Ռուսաստանը չի ուզում ոչ Հայաստանի մեծացում, ոչ էլ Հայաստանի վերացում: Մենք էլ ենք նույնը ուզում՝ եթե մեծանանք, ի՞նչ պիտի անենք քրդերի հետ, երբ դառնանք փոքրամասնություն մեր իսկ երկրում: Այնպես որ մեր և Ռուսաստանի շահերը համընկնում են:

2453. Ռուսաստանի շահը սահմանը փակ պահելն է իրական, միակ շահողը բաց սահմանից Ամերիկան է... նոր ճանապարհ՝ նոր ազդեցության գոտու համար...

2454. Ես պետք է հնարավորություն ունենամ տեսնելու թուրքին, որ կարողանամ նրան ասել. «Դու Ցեղասպանություն ես արել»:

2455. Տնտեսական առումով, Հայաստանը երբեք էլ ավելի ուժեղ չի լինելու Թուրքիայից:

2456. Մեր երկրի տնտեսությունը ստագնացիայի մեջ է. դուրս գալու համար մեզ շոկ է պետք:

2457. Մենք ռուսի համար «պոլոժիտելնի» սուբյեկտ ենք, իսկ թուրքի համար՝ «օտրեցատելնի»

2458. Էս «յանըմ» փորձում ենք ֆռռացնել Թուրքիային, հա՞: Մեր պատմության մեջ նման դեպք չի եղել:

2459. Հինգերորդ սցենար... դա իհարկե երազանք է...

2460. Մենք պիտի ընդունենք այն կոնցեպցիան, որ մենք փոքր երկիր ենք, սակայն դա չի նշանակում, որ մենք թույլ երկիր ենք:

2461. Օտարի շահը դա քամին է, եթե ուզում ես, որ քամու ազդեցության տակ չընկնես, ուրեմն պիտի ընդհանրապես ջուրը չմտնես, այլ պետք է պառկես ափին:

2462. Ներքին լեգիտիմության խնդիրներից դրդված՝ «ձեռքը գցում են» բարդագույն պատմական խնդիրների լուծմանը...

2463. Հայաստանը նավթ ունեցող երկիր է. մեր նավթը սփյուռքն է: Եկեք որոշենք, մեզ մեր նավթը պետք է, թե ոչ:

2464. Մենք կարող ենք մի գյուտ անել, ասենք, ատամնաբուժության ասպարեզում ու յոթ միլիարդ մարդ օգտվի դրանից: Բայց դա դեռ մեզ մեծ պետություն չի դարձնի:

2465. Հինգերորդ տարբերակի դեպքում թուրքի ինքնությունը կվերանա: Եթե թուրքը տեղեկացվի ու ընդունի Ցեղասպանությունը, ապա այլևս թուրք չի լինի: Ցեղասպանությունը հենց այն բանի համար է արվել, որ Թուրքիան «թրքանա»:

2466. Մենք դեռ պետք է ի վիճակի լինենք մեր երկրի ներսը կառավարենք, այնուհետև անցնենք արտաքին հարցերին:

2467. Այս ամենն արդյունք է այն բանի, որ մենք ունեցել ենք ներքին խայտառակություն՝ ընտրությունների տեսքով:

2468. Թուրք հասարակությունն ու թուրք պետությունը տարբեր բաներ են:

2469. Եթե մեր ներսում ինչ-որ բան լավ չէ, դա չի նշանակում, թե արտաքին աշխարհին մենք չենք կարող լավ ներկայանալ և բարձր նպատակների ձգտել:

2470. Տնտեսական ոլորտ, անվտանգություն, սփյուռք... ահա մեր գնի սահմանները:

2471. Այս սցենարով Ցեղասպանության ճանաչման գործընթացը վերածվում է թատրոնի:

2472. Մենք այնքան ենք մեզ դրսում գովել, որ արդեն մենք էլ ենք մեր ստին հավատացել ու ներսում ոչ մի բան չենք ուզում շտկել, բարելավել:

2473. Եկեք մեր հատուկ ծառայությունների բյուջեն լիքը լցնենք, ուժեղացնենք ու սահմանները բացենք:

2474. Մենք տառապում ենք բացառիկության բարդույթով:

2475. Մեր հասարակությունների մերձեցումից հետո, թուրքական բանկերում հայերի ավանդները հետ կվերադարձնե՞ն:

2476. Բոլորն ասում են, որ Հայաստանը Թուրքիայի կոկորդում ոսկոր է. մենք ոչ մի ոսկոր էլ չենք, այլ փափուկ խմոր:

2477. Մոսադն ամենաէժան ծառայություն է, քանի որ հրեան տեղեկություն է տալիս հանուն իր պետության առանց փողի. «յուրաքանչյուր հրեա Մոսադի անդամ է»: Իսկ մե՞նք...

2478. Սիրտս, որ սիրեց թուրք աղջկա, ուզելու եմ:

2479. Այսօր Հայաստանի և Թուրքիայի միջև ըստ էության պատերազմ է ընթանում. բարեբախտաբար դա զենքով պատերազմ չէ, այլ ուղեղների:

2480. Գերմանիան փոխհատուցեց հրեաների վնասները, որովհետև պատերազմում պարտվելուց հետո նրանց ստիպեցին:

2481. Ցեղասպանության ճանաչման հիմնական արդյունքը լինելու է մեր հողերի վերադարձը:

2482. Արարատը իմ ինքնության մի մասն է, ես այն չեմ կարող մոռանալ:

2483. Բոլոր հարցերը մեզ մոտ կլուծվեն, եթե մենք ազգային գաղափարախոսություն ունենանք:

II քննարկում

2484. Ինչպե՞ս կարող ենք մոռանալ. պատմական հիշողություն կա, արյան կանչ կա, վերջապես Դաշնակցություն կա:

2485. Իշխանությունների գործողությունները պարտադիր չէ, որ բխեն ժողովրդի կարծիքից և դիրքորոշումներից:

2486. Սահմանը բացելուց հետո հազիվ թե կարելի է տեղաշարժեր ակնկալել առաջիկա երկու տասնամյակների ընթացքում:

2487. Եթե սահմանը բացվեց վախենում եմ, որ թուրքերը կգան կլցվեն ու նորից ցեղասպանության վտանգ կառաջանա:

2488. Ես 100 տոկոսով կողմ եմ սահմանի բացմանը, բայց 100 տոկոսով դեմ եմ նման պայմաններով բացելուն:

2489. Սահմանի բացումը թույլ կտա այլընտրանք ստեղծել Վրաստանով ներմուծվող ապրանքների համար:

2490. Չեմ կարծում, որ մենք միջազգային հանրության ճնշմանը չենք ենթարկվի ու չենք հրաժարվի պահանջատիրությունից:

2491. Թուրք հասարակությունն այսօր պառակտված է. կա «եվրոպականացված» Թուրքիա և կա արևելյան Թուրքիա, որոնք էապես տարբերվում են իրենց դիրքորոշումներում:

2492. Էս ո՞ր թիվն է, որ երկու պետությունների միջև փակ սահման լինի: Սահմանի բացում միանշանակ պետք է:

2493. Այսօրվա թուրքերը մեծամասնությամբ ի վիճակի չեն հայերի հետ նորմալ հարաբերություններ պահպանել:

2494. Երբ Հայաստանում տիրում է օլիգարխիկ կլանը, սահմանի բացումից պետությունը օգուտ կքաղի այնքանով, որքանով դա օգուտ կլինի օլիգարխներին:

2495. Որքան էլ լավ լինեն հարաբերությունները, հայերը երբեք չեն հրաժարվելու ցեղասպանության ճանաչումից: Ու հենց այն օրը, երբ կրկին բարձրաձայնենք, թուրքերը սահմանը կփակեն:

2496. Երկիր մտնում է այնպիսի ապրանք, որի պահանջարկը կա, եթե Հայաստան վատ ապրանք են բերում, ուրեմն դրա պահանջարկը կա:

2497. Հիմա էն դարը չէ, որ մի պետություն մեկ այլ պետությանը տարածք տա. մենք միայն կարող ենք ֆինանսական փոխհատուցում ստանալ:

2498. Սահմանի բացումը ավելի բացասաբար կանդրադառնա մեզ վրա, քանի որ մենք չունենք հստակ մշակված ռազմավարություն թե՛ մշակութային, թե արվեստի և թե՛ կյանքի այլ ոլորտների առումով:

2499. Արդեն բավականաչափ երկրներ ճանաչել են ցեղասպանությունը, մենք ճանապարհի կեսին ենք հասել: Արդեն որոշակի մակարդակից ոչ մի դեպքում չպետք է և չենք դառնա հետ, իսկ Թուրքիան էլ այդքան ուժ չի ունենա մեզ պարտադրելու:

2500. Մենք կարող ենք լուռ առաջ տանել Ցեղասպանության հարցը. չեմ հասկանում, մենք չե՞նք վիրավորվում, որ մենք անընդհատ բարձրաձայնում ենք, իսկ մեզ չեն լսում... Ինձ համար սա նշանակում է, որ անհրաժեշտ է տակտիկան փոխել:

2501. Ոչ մի չափով չի անդրադառնա ցեղասպանության ճանաչման գործընթացի վրա, պարզապես կարող է մեկ-երկու տարի կիսաձայն խոսենք, հետո կրկին դա դառնա օրակարգի հարց:

2502. Եթե ցեղասպանությունը հիշողների տեսակարար կշիռը ժամանակի ընթացքում քչանա, գուցեև հնարավոր լինի, որ իշխանությունները շատ ավելի պրագմատիկ գործոններով առաջնորդվեն:

2503. Ախպեր, էդ Ցեղասպանության հարցն առաջ տանելն անկապ «պրինցիպ» ա:

2504. Եթե մենք սկսենք թուրքական ապրանքներ գնել, նրանցից կախված ենք դառնում ու նրանք կարող են մեր օդը փակել, եթե ցանկանան:

2505. Հայաստանը կշահի բեռնափոխադրումներից, իսկ Թուրքիայի շա՞հը որն է՝ իհարկե ցեղասպանությունը լռեցնելը:

2506. Օրինակ Թուրքիայում օրենսդրությամբ կարգավորվում է այն, որ որևէ այլ ազգի անձ չի կարող սեփականություն ձեռք բերել, մինչդեռ Հայաստանը չունի նման սահմանափակում:

2507. Եթե մենք թուրքիայի հետ ճանապարհը չբացենք, մենք կախված կլինենք Վրաստանից, իսկ դա վտանգավոր է

2508. Սահմանի բացումը քաղաքական հարց չէ, միայն՝ տնտեսական:

2509. Ցեղասպանության հարցը չի կարելի կապել սահմանի բացման հետ: Հետո ինչ, որ Թուրքիան այդ հարցերը շահարկում է:

2510. Թուրքերն իրենց երեխաներին ֆիլմ են ցուցադրում, որտեղ իբր թե հայերն են կոտորել թուրքերին. քսան տարի հետո, պատկերացնում եք, նման դաստիարակության պայմաններում, ինչ դիրքորոշում կունենա թուրք հասարակությունը հայերի նկատմամբ:

2511. Թուրքերը Եվրոմիության խնդիր ունեն, նրանք ուզում են մուտքի հնարավորություն ստանալ, հետևաբար սա ոչ թե Թուրքիայի նախաձեռնությունն է, այլ պարտադրված քայլ է:

2512. Ես կարծում եմ, որ մեզ հնարավորություն է տրվել մի քայլ առաջ անելու ու մենք պետք է ձեռքից բաց չթողնենք այդ հնարավորությունը:

2513. Եթե օրինակ 10 թուրք մեծահարուստ ցանկանա ինչ-որ կարողություն այստեղ ձեռք բերել, դա ընդամենը մեկ օրվա հարց է, քանի որ մենք այդ ամենը կանխող օրենք չունենք:

2514. Ավելի զարգացած պետության հետ առևտուր անելը մեզ միշտ էլ շահեկան է:

2515. Հայաստանից արտահանման հարցը թուրքիայի հետ կապված չի, հարցը մեր մրցունակության մեջ է, այս տեսանկյունից թուրքիայի հետ սահմանի բացումը մեր վրա տնտեսապես առանձնապես չի անդրադառնա:

2516. Սփյուռքը շատ արագ ձուլվում է, հատկապես ոչ իսլամական երկրներում և քսան տարի անց նրանք դժվար թե հիշեն իրենց պապերի հետ տեղի ունեցածը:

2517. Եթե մենք բոլորին նույն աչքով նայենք, մեզ համար որոշում կայացնելը հեշտ կլինի: Թուրք, թե պարսիկ մեկ է, օտար են: Էնպես որ պետք չի կենտրոնանալ էն մտքի վրա, որ դիմացինը թուրք է

2518. Թուրքիան մեզ համար շուկա չի, Թուրքիան մեզ համար ճանապարհ է դեպի արտաքին շուկա:

2519. Թուրք ա, գել ա, հարևան ա...

2520. Իմ կարծիքով, թուրքերը հերթական անգամ մեր աչքին թոզ են փչում: Իրենք միշտ էլ նույնն են մնալու:

2521. Սահմանի բացումը, վստահ, ունի և դրական և բացասական կողմ. բացումը մեզ հնարավորություն է տալիս սակարկել Վրաստանի հետ:

2522. Եթե թուրքական սահմանը բացվի, թուրքական մշակույթի ազդեցությունը մեր ազգի վրա կմեծանա

2523. Մենք համ սահմանն ենք ուզում բացել, համ ցեղասպանությունը ճանաչել տալ: Այդպես չի լինում, երկու երնեկ մեկ տեղ չի լինում: Ստիպված ենք ընտրություն անել ու վտանգը հաշվի առնել:

2524. Քաղաքականությունը հուզական գործ չէ... ինչի՞ ենք մենք էմոցիաները խառնում դիվանագիտության հետ:

2525. Թուրքին ինչ-որ պահի ինքը կճանաչի ցեղասպանությունը:

2526. Անիմաստություն է սահմանը բացել, քանի դեռ թուրքերի հետ մենք ունենք չճշտված սահման ու հողեր, որոնք մեզ պետք է վերադարձվի:

2527. Օրինակ, ադրբեջանցիների հետ խորհրդային շրջանում շատ լավ հարաբերություններ ունեինք, ինչու՞ չենք կարող և թուրքերի հետ նույն կերպ շփվել:

2528. Առաջին սցենարի դեպքում պահանջատիրությունը պակասում է, մենք պետք է ավելի ուժեղ լինենք:

2529. Մի խելոք մարդ ասեց. տվեք ինձ հենման կետ ու ես կշրջեմ աշխարհը... հիմա մենք էդ հենման կետը կարող ենք գտնել ու ի օգուտ մեզ օգտագործել, բայց, չգիտեմ ինչու, վախենում ենք:

2530. Հայ մտավորականությունը դարասկզբին ոչ մի քայլ չձեռնարկեց ցեղասպանության կանխման ուղղությամբ:

2531. Թուրքերի համար էլ միանշանակ լավ չի սահմանը բացելը, բայց մենք պետք է փորձենք ճանաչել միմյանց ու կարողանանք ճիշտ ու մեզ համար անվտանգ որոշումներ կայացնել:

2532. Սահմանի բացումը կբերի միայն նոր անհաշտության:

2533. Թուրքիայի հետ սահմանի բացումն ինչ-որ իմաստով մեր երկրի անկախության երաշխիքներ է տալիս:

2534. Թուրքին պետք չի անմիջապես գրկաբաց ընդունել:

2535. Դեմ չեմ սահմանի բացմանը, բայց կտրականապես դեմ եմ նման պայմաններով բացմանը: Այս պահին մենք չունենք նույնիսկ հստակ հաշվարկված տնտեսական օգուտը:

2536. Եթե չենք ուզում մշակույթի առումով թուրքիայի ազդեցության տակ ընկնել, պետք է օրենսդրորեն այդ դաշտը կարգավորենք, որոշակի խոչընդոտներ սահմանենք:

2537. Ես թուրքի բացասական կերպար եմ կրում իմ մեջ, չէի ցանկանա հիմա հանդիպել:

2538. Դա էլ է տարբերակ՝ սահմանը բացում ենք, ճանաչում ենք սահմանները ու հրաժարվում պահանջից:

2539. Թուրքն էլ հատուկ կռվի չի ձգտում, հասարակ ժողովրդի համար խաղաղությունն է ցանկալի:

2540. Երբևէ Հայաստանում չեմ տեսել աշխատող թուրքի, իսկ մերոնք գնում են հարյուրներով:

2541. Մի մոռացեք, մի անգամ զիջման գնացողը հետո ավելի մեծ զիջման էլ կգնա:

2542. Հայերը գնում են Թուրքիայում աշխատելու, որովհետև խելացի են:

2543. Ժողովուրդը չի մոռանա ցեղասպանության մասին, իսկ իշխանությունն էլ չի կարող ժողովրդի կամքին հակառակ գնալ:

2544. Ագրեսիվ ենք տրամադրված թուրքի հանդեպ, բայց գնում ենք Անթալիա հանգստանալու:

2545. Եթե սահմանները բացվեն, հայ աղջիկները կամուսնան թուրք տղաների հետ, իսկ թուրք համասեռամոլները կգան կլցվեն Հայաստան, որովհետև մեզ մոտ ավելի ազատ է:

2546. Մի շարք երկրներ ճանաչել են ցեղասպանության հարցը, հիմա ո՞նց կարող ենք մենք մոռանալ:

2547. Այսօրվա Թուրքիան նույնքան դեմոկրատ է, որքան և մենք: Ավելին, Թուրքիան առնվազն երկու անգամ անց է կացրել արդար ընտրություններ:

2548. Իմ սերունդներին ի՞նչ պատասխան եմ տալու Ցեղասպանության պահանջից հրաժարվելու համար: Ի՞նչ է, իմ սերունդներն իրենց վատ ապրելու համար ինձանից հաշիվ չե՞ն պահանջելու...

2549. Հայաստանում ու Թուրքիայում սերունդ է փոխվել, որը ցեղասպանություն չի տեսել: Բայց փոխադարձ թշնամանքի ներշնչումը շարունակվում է:

2550. Եթե մենք սահմանը բացենք, կրկին բնաջնջման սպառնալիքի առաջ կհայտնվենք:

2551. Սահմանի բացումը մեզ տալիս է ալտերնատիվ ճանապարհներ, առավել ևս փոխում է Հայաստանի միջազգային իմիջը:

2552. Հիմա, որ Վրաստանի հետ մեր սահմանը բաց է, ինչ է վրացիների հետ ենք ամուսնանո՞ւմ, թե ձուլվում ենք վրացիների հետ, որ թուրքերի հետ ձուլվենք:

2553. Միջազգային իրավունքի կանոններով Հայաստանը հավակնություններ կարող է ունենալ Թուրքահայաստանի հողերի նկատմամբ, սակայն ոչ Պարսկահայաստանի հողերի նկատմամբ:

2554. Երկրորդ սցենարը Թուրքիայի համար ապահովում է Եվրոմիության անդամությունը. իսկ դա մեզ համար վտանգավոր է նրանով, որ այդ պարագայում նրան ավելի կլսեն, քան մեզ...

2555. Այ մարդ, ինչի՞ ենք մենք մեզ դարերով էշ համարում... Ինչի՞ ենք կարծում, որ մեզ հա կուտ պիտի տան, մենք էլ ուտենք: Չի կարելի չէ՞, պետք է մի շահ էլ մենք ունենանք, մեր մասին մտածենք:

2556. Հայաստանի միջազգային իմիջը բարձրանում է ոչ թե սահմանների բացումով, այլ մեկ անգամ արդար ընտրություններ անցկացնելով, կանխելով մարտի 1-ը:

2557. Այն, որ ադրբեջանցիների հետ մենք խաղաղ ապրել ենք խորհրդային ժամանակաշրջանում, ընդամենը հեքիաթ է, եթե չասենք՝ սուտ:

2558. Անթալիայի այուտովկան էլ կէժանանա, բայց մեկ ա մենք չենք գնա:

2559. Սահմանը բացելուց հետո քրդերն ու թուրքերը կողողեն երկիրը, իսկ իրենք ավելի ցածր մշակույթ ունեն, մենք միայն կորցնելու բան ունենք:

2560. Հասարակ առևտրականին, որը Թուրքիայից ապրանք է ներմուծում, բացարձակ չի հետաքրքրում ցեղասպանության փաստը հիշելը և պահանջատեր լինելը:

2561. Մի վտանգ եմ տեսնում. եթե ընդունում ենք Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, նշանակում է կընդունենք նաև Ադրբեջանինը:

2562. Հերիք չի մենք հայերով իրար հետ ենք կռվում, հիմա էլ ուզում ենք թուրքի հետ ախպերանալ:

2563. Ոնց որ կազինո խաղանք. ամեն ինչ դնում ենք սեղանին. կամ կհաղթենք կամ կպարտվենք: Հիմի պիտի նայենք. մենք հաճույքի համար ենք գնում խաղալու թե՞ հիմնավորված «ստավկա» ենք դնում:

2564. Մենք հիմա զրոյական վիճակում ենք. կամ մի քայլ առաջ կամ մի քայլ հետ:

2565. Լավ, ենթադրենք ՀՆԱ-ն յոթ տոկոս աճ կտա, դա ի՞նչ կտա մեզ...

2566. Հայաստանի արդյունաբերության կործանման օբյեկտիվ պատճառը տարածաշրջանային շուկաների փակվելը կամ փակ լինելն է մեզ համար:

2567. Եթե Եվրոպան մեզ ճնշի, մենք ստիպված սուս կմնանք:

2568. Հիմա, ասենք, թուրքերը մեր հողերը հետ տվեցին, ինչ ենք անելու այդ հողերի հետ, մենք այնքան ռեսուրս չունենք որ այդ հողերը մշակենք:

2569. Մենք դիմակայել ենք բոլորին՝ Թուրքիայի հետ փակ սահմանով, հիմա էլ պետք է դիմակայենք բոլորին՝ ներառյալ Թուրքիան իր բաց սահմանով:

2570. Խայտառակությունը այն է, որ եթե մենք ընդունում ենք Թուրքիան և իր սահմանները, նշանակում է, որ մենք պետք է մոռանանք ցեղասպանությունը:

2571. Ներմուծվող ապրանքների վրա, հատկապես Թուրքիայից եկող ապրանքների դեպքում, համապատասխան տնտեսական և մաքսային քաղաքականություն է պետք վարել, որպեսզի մեր տեղական արտադրողը չտուժի:

2572. Տարածքները որ հետ տան, մեզնից քանիսն են գնալու քրդերի մեջ ապրելու, կամ ինչքան քրդեր կգան Հայաստան, դա վտանգավոր է:

2573. Այդ որո՞նք են արդյունաբերության այն ճյուղերը, որ դեպի Թուրքիա արտահանման պոտենցիալ ունեն:

2574. Հայերը սիրում են գլուխները տաք տեղ պահել, պայքարի ոգի չեմ տեսնում:

2575. Ինչու ենք մենք ստորագրում մի բան, որը կարող ենք չստորագրել:

2576. Թուրք- հայ... ամուսնանալ... յա՛, մինչև հայկական ծիրանը չասի, չեմ ամուսնանա:

2577. Այսօր Հայաստանում կան գործարաններ և ռեսուրսներ, որոնք պարզապես նպատակահարմար չէ գործարկել երեք-միլիոնանոց շուկայի համար, սակայն դեպի ավելի մեծ շուկաներ ելքի հնարավորության դեպքում դրան շահագործումը միանշանակորեն շահավետ կլինի:

2578. Եթե կառավարությունը տեսնի, որ շահ ունի, ժողովրդի կարծիքը հաշվի չի առնի:

2579. Չի կարելի քաղաքական շահը հանուն տնտեսական շահի կորցնել:

2580. Սահմանի բացումը միջոց է, իսկ ցեղասպանության ճանաչումը՝ նպատակ:

2581. Պետությունն այսօր փորձ է անում աշխարհին ներկայացնել, թե իբր հետաքրքրված է ժողովրդի կարծիքով:

2582. Միգուցե արժե մի պահ մոռանալ ամեն ինչ և փորձել X հարևան երկրի հետ սահմանը բացել ու հարաբերություններ ստեղծել, այնուհետև փորձել պատմության կնճռոտ խնդիրները պարզել:

2583. Եթե մենք տնտեսապես կարող, մրցունակ լինենք, կկարողանանք նաև թելադրել:

2584. Ես, օրինակ, չգիտեմ, թե ինչ է եղել ցեղասպանության ժամանակ:

2585. Ընդունենք Հայաստանը պետք է ինչ-որ մի բան զիջի, ապա այդ դեպքում ինչ է զիջելու Թուրքիան: Սահմանի բացումը ավելի ձեռնտու է Թուրքիային, քանի որ դա առաջին հերթին վնասում է հենց իր վարկանիշին և քայլ է դեպի Եվրոմիություն:

2586. Սահմանի բացումը ենթադրում է նաև փոփոխություններ բանակում. իսկ սրան մենք պատրա՞ստ ենք:

2587. Ի՞նչ կա հիշելու՝ Սումգայիթում հենց ամեն բան այդպես էլ եղել է:

2588. Հայերը ավելի «դուխով» են, քան թուրքերն ու քրդերը, որ ուզենանք կարող ենք մենք էլ իրանց կոտորենք, ուղակի պետք է մեր ազգը իրա առաջ նպատակ դնի՝ դառնալ միասնական:

2589. Սահմանը բացվելու դեպքում թուրքական ագրեսիան մեծանալու է:

2590. Եթե որևէ երկիր ցանկանում է դառնալ Եվրոմիության անդամ, ապա նա չպետք է ունենա որևէ փակ սահման. դա գրված է Կոպենհագենյան կոչվող փաստաթղթում:

2591. Մենք սովոր ենք սահմանը փակ պահել, որ չմտածենք: Հիմա վախենում ենք սահմանը բացել, որովհետև վախենում ենք մտածելուց:

2592. Իրենց խորամանկությունն այնքան է, որ կարողացան կազմակերպել ու Դինքին սպանելուց հետո հազարներով դուրս գալ ու «Մենք հայ ենք» ներկայանալ: Թատրոն էր:

2593. Նման պայմաններով սահման բացելը նշանակում է ասել. Թուրքիա, արի մեզ կեր:

2594. Այսօր մենք տեսնում ենք, որ Եվրոպան արհեստականորեն փակում է էժան և անորակ չինական ապրանքների մուտքը եվրոպական շուկա. սա տնտեսական քաղաքականության հարց է:

2595. Երրորդ սցենարում «պլյուս» կամ «մինուս» չկա. կմնա էն ինչ ունենք:

2596. Արդյո՞ք այսօրվա հայաստանյան հասարակությունը պատրաստ է իր հարևանի հետ հարաբերություն ունենալ. մենք պետք է մի տեղից սկսենք, օրինակ, սահմանը բացելը կարող է մեկնարկային կետ լինել:

2597. 93-ին, երբ փակվել է սահմանը, մեր երկիրը ավելի վատ վիճակում էր, և եթե այն ժամանակ մենք չենք ընդունել այդ պայմանները, ապա ինչո՞ւ պետք է հիմա համաձայնվենք:

2598. Հասարակությունը առանձնապես չի զգալու սահմանի բացմանը հաջորդող զարգացում:

2599. Եթե մենք ուզում ենք զարգանալ, պետք չի մեր հույսն ուրիշի վրա դնենք. մենք որ ուզենք, մենք ինքներս էլ կզարգանանք:

2600. Եթե այսպես գնա, մինչև վերջ էլ մենք մերն ենք ասելու, իրենք՝ իրենցը, ոչ էլ սահմանը կբացվի

2601. Տարածքային ամբողջականությունը և սահմանների ճանաչումը երկու տարբեր հարցեր են. օրինակ, Վրաստանի հետ էլ մեր սահմաններ դեմարկացված չեն:

2602. Հարց է ծագում, թե ինչու է Թուրքիան գնացել բանակցությունների. միթե Հայաստանի հետ սահմանը այդքան կարևոր է Թուրքիայի համար:

2603. Եթե չկա երկխոսություն, ինչպե՞ս կարող են վերացնել անցյալ տառապանքների հետևանքները մեզ համար:

2604. Մենք հայերս չունենք ազգային նպատակ, ինչ-որ բան, որին բոլորս ձգտում ենք

2605. Սահմանի բացում նշանակում է պարտվել:

2606. Հայերը ռասիստ չեն:

2607. Ես, որպես Հայաստանի երիտասարդ քաղաքացի, որը հայրենադարձի զավակ է, ու որի ընտանիքը տուժել է Ցեղասպանությունից, սեփական ջանքով տուրիզմի մեջ հասել եմ լուրջ հաջողությունների: Մյուս տարի, տուրիզմի միջազգային համաժողովը տեղի է ունենալու Ստամբուլում, և ես պետք է մասնակցեմ դրան: Այո,՛ իմ ընտանիքի ցավը հաշվի առնելով, կողմ եմ պահանջատիրությանը և Ցեղասպանության ճանաչմանը, սակայն, որպես գործարար, կողմ եմ նաև սահմանի բացմանը:

2608. Չեմ կարծում, որ մենք թուրք հասարակությանը լավ ենք ճանաչում:

2609. Երրորդ սցենարը դրական է այն իմաստով, որ հնարավորություն է տալիս մեր քաղաքական շահն առաջ տանել:

2610. Սահմանի բացումը քաղաքականապես կարևոր է Հայաստանի համար:

2611. Թուրքիայում մեծ քանակով քրդեր են ապրում, որոնք շատ ավելի լավ են տրամադրված հայերի նկատմամբ:

2612. Մենք ամեն ինչ միանգամից ենք ուզում. ասում ենք էս կամ էն սցենարը չենք ուզում, քանի որ աճ չի լինի: Բայց առաջընթացը հո մի տարվա հարց չի՞...

2613. Ցեղասպանության ճանաչումը չի կարող լինել մեր վերջնական նպատակը, վերջնական նպատակը պիտի լինի հայ դատը՝ հայերի գերիշխանությունը պատմականորեն հայկական տարածքներում

2614. Թուրքիան եկել է, մեզ կոտորել է, սահմանը փակել է, ապա ինչու պետք է մենք հիմա իրենց պայմանները ընդունենք:

2615. Մեր ուսերին շատ մեծ պատասխանատվություն է դրված. մենք որոշելու ենք մեկ ու կես միլիոն զոհերի հիշատակի ու արյան իրավունքի հարցը:

2616. Մեր բոլոր քարտեզներում Թուրքիայի հետ Հայաստանի սահմանը նշված է այնպես, ինչպես կար Խորհրդային միության ժամանակ, էլ ի՞նչ ճանաչել-չճանաչելու մասին ենք խոսում:

2617. Ես համաձայն եմ Հայաստան-Թուրքիա դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը և սահմանների բացմանը: Մնացած գործընթացներին դե՛մ եմ: Այսօրվա Արձանագրություններն իմ ուզածը չեն բավարարում:

2618. Մենք հիմա միայն Վրաստանով ճանապարհ ունենք, մեզ անհրաժեշտ է էլի մեկ ուղի:

2619. Թուրքիան կլինի այն շուկան, որտեղ «կսպառվի» Հայաստանի մտավոր պոտենցիալի արտադրանքը:

2620. Իմ կարծիքով, զուտ հոգեբանական բարդույթ է մեզ մոտ, որ փակ սահմանները խոչընդոտում են Հայաստանի տնտեսական զարգացմանը:

2621. Ի՞նչ կերպ ենք մենք մեր հողերը վերադարձնելու, եթե հիմա ընդունենք այս պայմանները:

2622. Մենք նույնիսկ մեր փոքր տարածքում չենք կարողանում նորմալ գոյատևել, ավելի մեծ հայկական տարածքներն ինչ ենք անում

2623. Հայ գյուղացին է մեղք: Սահմանը բացվելուց հետո մեր օլիգարխները կսկսեն էժան գյուղատնտեսական մթերքներ ու բանջարեղեն գնել թուրքերից իրենց արտադրության համար, ու կթքեն մեր գյուղացու շահերի վրա:

2624. Եթե Թուրքիան սահմանը բացում է, նշանակում է երկու երնեկ մի տեղ Թուրքիայի համար՝ համ Եվրոմիություն կմտնի, համ էլ տարածքային ամբողջականության ճանաչմամբ Ցեղասպանության հարցն էլ կփակի: Բայց մենք սա չենք հասկանում, որ եթե սահմանը փակ պահենք, մեկ է, թուրքը պիտի համոզի, որ սահման բացենք... սա էլ հենց էն է, ինչ պիտի օգտագործենք մեր պահանջն առաջ տանելու համար:

2625. Չե՞ք կարծում, որ տարածքների պահանջատիրության հարցը դնելը ի սկզբանե կործանարար է հայ ազգի համար:

2626. Մեր ժողովրդի սոցիալական վիճակն այնքան վատ է, որ այսօր ծնողները մտածում են, որ ավելի լավ է երեխաներն ամուսնանան օտարազգիների հետ, այդպիսով կարողանան պահել ընտանիքն ու լավ ապրել: Սա արդեն սպառնալիք է մեզ համար:

2627. Եկեք չմոռանանք, որ քաղաքականությունը թելադրվում է հզոր տնտեսությամբ: Քանի՞ հզոր, բայց աղքատ պետություն գիտեք...

2628. Իրավական հարթության մեջ, ցեղասպանության մասին միջազգային իրավունքի դրույթները հետադարձ ուժ չունեն և 1915թ. տեղի ունեցածը չի կարող համարվել ցեղասպանություն:

2629. Մտավախությունը հասկանում եմ, բայց հո չի նշանակում, որ սահմանը բացելուց հետո միլիոնավոր թուրքեր են գալու այստեղ ապրելու:

2630. Մենք տարիներ հետո ուզում ենք լինենք Հայաստանում, մի տեղ, ուր հողը մեզ կապում է՝ Հայաստանում, Ղարաբաղում, Ղարսում - Հայաստանում

2631. Մեր բլոկադան բազմաշերտ է, հայ-թուրքական բլոկադայից բացի անհրաժեշտ է բացել տարբեր մականունավոր օլիգարխների իրականացրած բլոկադան: Ինձ թվում է մեր տնտեսությունը ավելի շատ շրջափակում են օլիգարխները, և ոչ-թե հայ-թուրքական սահմանը:

2632. Թուրքիան միակ պետությունը չի աշխարհում ու ինքնագլուխ հարցերը չի լուծում...

2633. Ինչպես կարելի է մոռանալ 15 թիվը:

2634. Եթե Ճապոնիան կարողանում է իր արտադրանքը ինքնաթիռներով արտահանել, ապա մենք էլ կարող ենք նույնն անել:

2635. Նա ով կարողանում է իր ընտանիքը Ռուսաստանում հայ պահել, նույնը կկարողանա անել նաև Թուրքիայում:

2636. Լավ ղեկավարը պետք է այնպես որոշում կայացնի, որ գոնե հաշվի առնի մեծամասնության կարծիքը. սա նշանակում է սահմանի բացում՝ առանց Թուրքիայի տարածքային ամբողջականության ճանաչման:

2637. Այսօր Հայաստանը դարձել է Թուրքիայի շատ խելացի քաղաքականության զոհ. Թուրքիան շատ հմուտ կարողացել է համոզել Հայաստանին, որ իր ցանկությունը նաև Հայաստանի ցանկությունն է:

2638. Գրիչ ձեռք բերելու համար պետք չի ավելին տալ, քան էդ գրիչի արժեքն է...

2639. Չի կարելի Հայաստանի դիվանագիտությունը քննարկել ֆուտբոլի ընթացքում, քանի որ առաջին իսկ «բարոյական տանուլը» մենք տվեցինք՝ հենց այդ խաղը տանուլ տալով:

2640. Բայց պարսիկներն էլ են շատ ու գալիս են այստեղ սովորելու, աշխատելու, սակայն չեն մնում ապրելու, որովհետև մենք չենք ընդունում:

2641. Հենց պահանջատիրության ոգին է, որ մեզ թույլ տվեց հաղթանակի հասնել Ղարաբաղյան հակամարտության հարցում:

2642. Վերջապես պատմության մեջ առաջին անգամ կարող ենք ունենալ բարոյական պարտություն, սակայն, արդյո՞ք դիմացը ռեալ հաղթանակ իրոք կստանանք:

2643. Դե ֆակտո, ցավոք սրտի, Կարսի պայմանագիրը գործում է:

2644. Եթե Հայաստանում ընդամենը 5 հոգու ձեռնտու լինի սահմանի բացումը, ապա այն կբացվի՝ անկախ հասարակ ժողովրդի կարծիքից:

2645. Յուրաքանչյուր պետության վրա ամենամեծ ազդեցությունը ունի ավելի մեծ պետությունը

2646. Կարսի պայմանագրում հիմնական թաքնված «օձի գլուխը» Նախիջևանի հանդեպ Թուրքիայի պրոտեկտորատի դրույթն է:

2647. Չորրորդ սցենարը ենթադրում է գերտերությունների կողմից տարածաշրջանում հարցերի լուծում՝ Թուրքիային որպես գործիք օգտագործելով:

2648. Ամեն ինչ ունի իր գինը. ուստի մենք պետք է ունենանք հստակ ռազմավարություն՝ բոլոր ոլորտներին վերաբերող:

2649. Երկրի ներսում հարց որոշողը նա է, ով փող ունի, իշխանություն ունի, այսինքն էլիտան, ու էլիտայի կարծիքի վրա կարող են ազդել դրսից՝ ելնելով նրանց անձնական շահերից

2650. Գերտերությունները դժվար թե որևէ էական օգուտներ ունենան հայ-թուրքական հարաբերությունների բարելավումից:

2651. Ես բարոյապես «կկշտանամ» միայն այն դեպքում, եթե լուծվի մեր հողերի հարցը: Եթե մենք Թուրքիային ծնկի բերենք և վերադարձնենք մեր հողերը, ապա քրդերի հետ պայքարելը խնդիր չի լինի:

2652. Ես հստակ գիտեմ, որ ստորագրվող փաստաթուղթը ինքնին վտանգ է:

2653. Հայերին պետք չի, որ մեր տարածքով գազատար անցնի, մենք ագահ ենք, դրա համար էլ հիմա քննարկում ենք այս հարցը, որովհետև գազատարի գումարից «փայ» ենք ուզում

2654. Մենք ոչ թե պիտի մտածենք, էս ծախենք, էն ծախենք, որ մի քիչ փոխ աշխատենք, այլ պետք է ինչ-որ բան ստեղծենք, որ ուրիշի փայտը միշտ մեր գլխին չլինի:

2655. Եկեք ծուռը նստենք շիտակ խոսենք: Էս բազարը սկսեց ռուս-վրացական կռվից, որից հետո մերոնք շատ վախեցան: Էնպես որ, էս պրոտոկոլները վախից դրդված ենք ստորագրում, ոչ թե ֆլան-ֆստան, օգուտ-մօգուտ ...

2656. Սա շահավետ է բոլոր գերտերությունների համար. Ռուսաստանի համար՝ Վրատանին ճնշելու, Ամերիկային՝ որպես նոր ճանապարհ դեպի իրեն հետաքրքրող տարածաշրջան, Եվրոմիությունն էլ՝ խաղաղության և անվտանգության առումով:

2657. Ռուսաստանը միշտ էլ իր շահն է հետապնդում: Ու ներկա պահին իր շահը մենք ենք:

2658. Ռուսաստանը երբեք հային չի պաշտպանին: Իսկ հայերս հավատում ենք հեքիաթներին ու պուպուշ խոսքերին:

2659. Ամեն դեպքում ես սահմանի բացման-չբացման հարցում ավելի շատ ներքին խնդիր եմ տեսնում, ոչ թե արտաքին: Ներքին խնդիրներ շատ ունենք, որոնք թույլ չեն տալիս ավելի ինքնավստահ լինեք. արդյունքում էլ ամեն ինչ ուրիշի վրա ենք բարդում:

2660. Արդյո՞ք, եթե հասարակ ժողովուրդը դեմ լինի սահմանի բացմանը, սահմանը չի բացվի:

2661. ԱՄՆ համար Աֆղանստան իր զենքն ու զորքը հասցնելու և պահելու համար սա նոր, շատ ավելի հարմար ճանապարհ կարող է լինել:

2662. Մեր բիզնեսմենները իրենց շահերից ելնելով կարգավորելու են հայ-թուրքական հարաբերությունները՝ անտեսելով հայերի ազգային շահերը

2663. Բնական է, որ երրորդ երկրների շահերը շատ մեծ են:

2664. Ռուսական շահը գերակշռելու է:

2665. Լրիվ աղվեսի պատմությունն է. քիթը խաղողին չհասավ, ասեց խաղողը թթու էր... Հերիք մենք մեր սխալները ուրիշի գլխին բարդենք:

2666. Մենք ԱՄՆ-ում ազդեցությամբ երկրորդ ուժեղ լոբբիստական ուժն ունենք:

2667. Վերջիվերջո ամեն բան գնալու է դրան՝ մենք դրսի շահերին ենք սպասարկելու, տվյալ դեպքում՝ Ռուսաստանի:

2668. Երեկ Սերժ Սարգսյանը խոսեց, խոսեց, բայց ի՞նչ ասեց... ոչ մի բան, թոզ փչեց աչքերիս, հիմա էլ հարցնում է, թե ինչ ենք ուզում:

2669. Պետք է առաջին հերթին առաջ տանենք մեր քաղաքական ու գաղափարական շահերը, հետո նոր ուշադրություն դարձնենք տնտեսականին, ու բիզնեսը պետք է հարմարվի քաղաքականին, ոչ թե հակառակը

2670. Մեր կառավարությունը սահմանը կբացի անպատճառ, որովհետև հենց մի փոքր շահ տեսավ՝ էլ ուրիշ բան չի նկատելու:

2671. Մեզ Ռուսաստանի գործակալներ պետք չեն. չեմ ասում մենակ էսօրվա մասին, չէ՞ որ վաղն էլ երկրի ղեկավար պիտի մեզանից մեկը լինի:

2672. Մեր երկրի ղեկավարը կարող է հրաժարվել ստորագրել սահմանի բացման համար, եթե հիմնավորի դա նրանով, որ իր երկիրը իր ամբողջ բնակչությամբ դեմ է:

2673. Մեզ հարկավոր են ներդրումներ, որպեսզի մենաշնորհները վերանան ու ավելի մեծանա խաղաղություն պահպանելու բոլորի ջանքերը:

2674. Շատերը ԱՄՆ-ի դուդուկի տակ են պարում, մենք էլ ռուսի. սա մեզ լավ բանի չի հասցնի. մենք պիտի վատի միջով անցնենք, որ լավ բանի հասնենք:

2675. Իմ ամենամեծ մտահոգությունը Ղարաբաղն է, որը միակ ամենաէական, նյութական ձեռքբերումն է, մնացածը ուտոպիստական երազանքներ են:

2676. Ռուսը կթողնի՞ թուրքին այստեղ մենաշնորհ ունենալ:

2677. Այս պարագայում ավելի կարևոր է ոչ թե սահմանի բացումը, այլ այն, թե դու ինչպես ես այդ ամենը ներկայացնում:

2678. Բիզնեսում սկզբունքներ չկան, եթե ձեռնտու պայմաններ առաջարկեն թուրքերը, ռուսները կծախեն այստեղ ամեն ինչ:

2679. Ցանկացած իրավիճակ կարելի է ներկայացնել այնպես, ինչպես ձեռնտու է այդ պահին մեզ:

2680. Փաստ է, որ երրորդ երկրները դեմ են տվել այս համաձայնագիրը մեզ:

2681. Ազգային անվտանգության տեսանկյունից ես ժողովրդագրական լուրջ խնդիր եմ տեսնում. այսօր Արևելյան Թուրքիայում մարդ չի ապրում, բայց տնտեսության զարգացման արդյունքում այդտեղ թուրքերը լցվելու են ու բազմանալու:

2682. Ինչո՞ւ ենք իլյուզիաների ետևից ընկել, ի՞նչ է, մեր գլխին հիմա չեն տալիս, մեզ չե՞ն ստիպում Կարսի պայմանագրի մասին լռել ու ընդունել:

2683. Սահմանի բացելու էֆեկտը սովորական թուրքը ավելի քիչ կզգա, քան սովորական հայը:

2684. Այստեղ կա նաև լեգիտիմության խնդիր:

2685. Հիմա Թուրքիան է ձիով քայլ անում, ես կասեի «դաժե» թագուհով:

2686. Իսկ ես ասում եմ, սպիտակ ձիս նստելու եմ ու գնամ Թուրքիա:

2687. Թուրքիան չի ճանաչի Հայաստանի ցեղասպանությունը, սա այն թեման չի, որի մասին կարող ենք եթե-ով խոսել, իսկ եթե պիտի ասեն, հա եղել է, բայց ոչինչ չենք փոխհատուցում, ինչներիս է պետք:

2688. Եթե ամբողջ ժողովուրդը միավորվի և ոտքի կանգնի, ապա ոչինչ չի ստորագրվի, քանի որ ամեն ինչից, նախ և առաջ, շահում է Թուրքիան:

2689. Այդ ե՞րբ է եղել, որ հայ դիվանագետները մատի վրա «ֆռռացնեն» թուրք դիվանագետներին, կողքից նաև՝ գերտերությունների դիվանագետներին, որ քայլ ձիով կարողանանք անել:

2690. Հինգերորդն ի սկզբանե անհավանական սցենար է:

2691. Մենք պետք է հինգերորդ սցենարը համարենք մեր ռազմավարական նպատակ:

2692. Մեզ Ցեղասպանության հուշարձանում թուրքի արհեստական ծաղիկ պետք չի, այլ մեզ առնվազն նրա բնական ներողությունն է պետք:

2693. Թուրքիան և Հայաստանը երբեք չեն դառնա եղբայրական, քանի որ ոչ մի կողմը իր ժողովրդի կարծիքը հաշվի չի առնում:

2694. Պետությունը պետք է հաշվի առնի ժողովրդի կարծիքը, հակառակ դեպքում պետությունը պետք է յուրաքանչյուր մարդու պատասխան տա:

2695. Հինգերորդ սցենարում մենք ունենք մեր սփյուռքը մեզնից հեռացնելու խնդիր, որովհետև սփյուռքը պատրաստ չի նման փոփոխությունների

2696. Մենք առավոտյան զարթնելիս, պետք է մտածենք, որ գնում ենք մեր լուման ներդնելու Թուրքիան և Ադրբեջանը թուլացնելու գործում:

2697. Մենք ինքնուրույն չենք որոշումներ կայացնում, մի հատ վերև ենք նայում, թե Ռուսաստանն ինչ կասի:

2698. Եթե մենք աչքներս փակում ենք թուրքի դիվանագիտության, կեղծավորության վրա, էլ մենք թուրքից ինչո՞վ ենք լավը:

2699. Այս սցենարը մեր կրթական ու երեխաների դաստիարակության միջով կարմիր թելով պիտի անցնի՝ որպես ազգի գերնպատակ:

2700. Սահմանը բացում ենք՝ պահպանելով մեր պահանջատիրությունը:

2701. Այս պահին պետությունը ամեն կերպ քարոզում է, որ սահմանի բացումը օգուտ կբերի յուրաքանչյուր քաղաքացուն, սակայն հստակ չի ասում հետագա քայլերը և զարգացումը:

2702. Սահմանը բացելիս պետք է արձանագրել՝ մենք սահման ենք բացում, սակայն հողերից չենք հրաժարվում:

2703. Հա՛, Գյուլը կգա, մի հատ ծաղիկ կառնի, կդնի հուշարձանին, էդ ծաղկի փողը կգնա բյուջե, տնտեսությունը կզարգանա... ասել կուզեմ, էդ ծաղկից մեզ ի՞նչ:

2704. ԱՄՆ-ին ձեռք է տալիս սահմանի բացումը, քանի որ նա ավելի կհզորացնի իր ազդեցությունը Թուրքիայում:

2705. Անլուրջ է ֆուտբոլային դիվանագիտությամբ նման հարցեր լուծելը:

2706. Մենք, համաձայնելով պատմական հանձնաժողովի ստեղծման գաղափարի հետ, ինքներս հարցականի տակ ենք դնում ցեղասպանության փաստը:

2707. Հայաստանում հիմա էլ կան կանայք, որ թուրքերի «դաշտային» կանայք են, հիմա էլ կան....

2708. Ռուսաստանը նույնպես շահ ունի սահմանի բացման հարցում, քանի որ կա նավթամուղերի և այլ հարցեր...

2709. Թուրքիայում պաշտպանված չես լինի, գոնե այնքան, որքան Ռուսաստանում կամ Վրաստանում:

2710. Եթե հյուպատոսական ծառայություն լինի, դա կօգնի մեր իրավունքները պաշտպանել այնտեղ:

2711. Մեր առջև եղած վտանգները տեսնելու համար, պետք է լավ իմանանք մեր նպատակները

2712. Մեզանից «ծիծաղելի» երկիր չէր կարող լինել. էդ բոլոր սպորտաձևերի միջից պիտի հենց ֆուտբո՞լն ընտրեինք, որ դիվանագիտություն խաղայինք... հազար ասեցինք, մենք ֆուտբոլ խաղալ չգիտենք. չեմ հասկանում, մեր ղեկավարությունը Հայաստանի ֆուտբոլից «բեխաբար» ա՞:

2713. Միակ և կարևոր վտանգը այն է, որ Հայաստանը դառնում է պլատֆորմ Թուրքիայի և Իրանի ավելի լավ հարաբերությունների և կապերի համար:

2714. Եթե մենք ցեղասպանության հարցը միայն ժամանակավոր երկրորդ պլան տանենք, այդպիսով խելամիտ քաղաքականություն վարենք ու հզորանանք, ավելի արագ կլուծենք մեր հարցերը:

2715. Սփյուռքին հարկավոր չէ խառնել այս հարցին, սփյուռքը իր համար հանգիստ ապրում է այնտեղ:

2716. Հայերը տնտեսական առումով պասիվ են, մենք մեր ունեցած ներուժը չենք իրացնում, հետևաբար թուրքերի ազդեցությունը մեր շուկայում ավելի մեծ կլինի, քան մերը իրանց մոտ, իրենք այդ լծակները կարող են մեր վրա քաղաքական առումով օգտագործել

2717. Մենք իսկի ինքներս մեր միջև երկխոսություն չունենք, ուրիշ երկրի հետ ո՞նց ենք ուզում երկխոսություն հաստատել:

2718. Չի կարելի մտածել, որ ամեն ինչ հիմնված է դավադրության թեորիայի վրա. օրինակ Ֆրանսիայում երեկվա կատարվածը:

2719. Ասենք թե Թուրքիան ճանաչեց ցեղասպանությունը, բա հետո ի՞նչ ենք անելու:

2720. Եթե կախված ենք, ինչ տարբերություն ումից ենք կախված, թուրքից թե՛ վրացուց:

2721. Բա որ նարդի եք խաղում, ինչի՞ եք թուրքերեն թվեր ասում. բա թշնամի ա, բա բոյկոտ եք...

2722. Ֆուտբոլ խաղալուց պետք է դատավորի անաչառություն լինի, որ խաղ ստացվի: Հայ-թուրքական ֆուտբոլային դատավորը ԱՄՆ-ն է, մի՞թե արդար խաղ կստացվի սրանից հետո:

2723. Քրդերի հարցը լուծվելու է, օրինակ, իրենց պետականության հաստատմամբ, օրինակ՝ Իրաքում:

2724. Բոլորս էլ գիտենք ինչ է նշանակում «թուրքական դեսպանատուն»...

2725. Փակ սահմանները ունեն իրենց դրական կողմերը, օրինակ՝ տնտեսական ճգնաժամը մեր վրա ուժեղ չի անդրադառնա

2726. Քանի հայը միասնական չի, որևէ խնդիր լուծել չի հաջողվի:

2727. Ցեղասպանության ճանաչումը մեզ բարոյական բավարարում կբերի, սպանված ժողովրդից հաղթանակած ժողովուրդ կդառնանք:

2728. Ես շատ բան չեմ հասկանում, բայց մի բան հասկանում եմ հաստատ. երբ երկրում ցինիզմ է տիրում, ինձ դա ոչ մի հուսադրող բան չի ասում:

2729. Հայաստանում նախագահի շրջագայությունից առաջ հավաքել էին ՄԻԱՍԻՆ-ի երիտասարդներին, վճարել իրենց, որպեսզի նրանք ակցիա կազմակերպեն՝ ԿՈՂՄ սահմանի բացմանը:

2730. Մենք ունենք վեցերորդ սցենար, որտեղ պայման դնողը մենք պիտի լինենք:

2731. Առանց մեր պայմանների լրիվ սուտ ա:

IIIքննարկում

2732. Բնականաբար, այդպես էլ լինելու է, աշխարհը մեզ ստիպելու է և լռեցնելու մեր ձայնը:

2733. Ցեղասպանության հարցը մոռանալը անհեռատես քայլ է, քանի որ Սփյուռքը հավաքական պահող գործոններից մեկն է:

2734. Միջազգային հանրության համար ավելի կարևոր է գործընթացի իմիտացիա անել, այլ ոչ թե իրական լուծում տալ մեր խնդրին:

2735. Նախ ՝ ոչ ոք ոչ մի բան չի մոռանա: Այդ մեկը բացառվում է: Ինձ անհանգստացնում է Կովկասյան նոր աշխարհակարգի ստեղծման գաղափար:

2736. Թեև առաջին սցենարն իրատեսական մասեր ունի, սակայն նախաստորագրված արձանագրություններն իրենք այս սցենարն ամբողջությամբ իրականանալի չեն դարձնում:

2737. Սահմանի բացումից հետո էլ չի վերջանա երկու ազգերի դարավոր թշնամությունը, թեև կարող է նպաստել տնտեսության զարգացմանը:

2738. Առաջին հերթին տնտեսական, երկրորդ՝ քաղաքական առաջընթաց եթե չկա, ապա ավելի խտանալու է հայ-թուրքական հարաբերությունների թնջուկը:

2739. Էս վերջին ամիսներին անընդհատ քննարկում ենք հայ-թուրքական հարաբերություններն ու շատ մտահոգություններ ենք ի հայտ բերում: Մասնավորապես, շահողները՝ ընդամենը մանրածախ առևտրով զբաղվող մի քանի մարդ:

2740. Հայկական հարցը լռեցվել է նախկինում, հիմա էլ դրան են ձգտելու:

2741. Սահմանների բացումը չի նշանակում ցեղասպանության և հայկական հարցի փակում և մոռացում:

2742. Առաջին սցենարը մի քիչ ընդունելի չի մեր արժանապատվության տեսանկյունից: Չի կարելի լռել, թե ինչ է սահման է բացվել:

2743. Մոտակա տասնամյակում ես համարում եմ, որ Թուրքիան միանշանակ չի ճանաչի Ցեղասպանության փաստը:

2744. Եթե նույնիսկ Թուրքիան էլ պրոտեկցիոնիզմով չզբաղվի, հայկական արտադրանքի համար բարդ է լինելու թուրքական շուկան գրավելը:

2745. Սահմանի բացումը մեզ ի՞նչ օգուտ է բերելու՝ ոչ մի:

2746. Տարածաշրջանային անտագոնիզմը փորձում են փոխարինել հարաբերությունների հաստատման հետ:

2747. Հիմնական և մեծ ոլորտներում ներդրումներ կատարելու համար անհրաժեշտ են միջպետական համաձայնագրեր և ազգային շահից բխող քաղաքականություն:

2748. Սխալ է կարծել, թե հայերը խելոք էն, իսկ մյուս ազգերը ոչ: Եթե այդքան խելոք ենք, ինչո՞ւ ենք այս վիճակում:

2749. Ամենամեծ մտահոգությունն այն է, որ ստիպված կլինենք հրաժարվել Ցեղասպանությունից ու մեր պահանջատիրությունից:

2750. Ինձ առավել վախեցնում է այն, որ ցանկացած ոչ ադեկվատ քայլ ցանկացած կողմի կողմից, կարող է միջազգային հանրության, այսպես ասած, «բարկությունն» առաջացնել:

2751. Պետք է խուսափենք ինքներս մեզ վարկաբեկելու վտանգից:

2752. Եթե տրամաբանենք՝ պարզ է, որ մեզ համար վրացական ուղին միակն է, ու բնական է, որ պետք է ստեղծել այլընտրանք: Բայց մյուս կողմից խոշոր արտադրողներն են միայն, որ Թուրքիայում շուկա կգտնեն: Իսկ այստեղ գները կպահպանվեն բարձր ու ոչ մատչելի:

2753. Նման պայմաններով սահմանի բացումը Հայաստանին ձեռնտու չէ, իսկ Թուրքիան ավելի շատ կսկսի ճնշել Հայաստանին՝ ստիպելով մոռանալ ցեղասպանությունը:

2754. Մենք ունենք սփյուռք, որի մեծ մասը ձևավորվել է ցեղասպանության հետևանքով: Առաջին սցենարի դեպքում մեծ անդունդ կառաջանա սփյուռքի և հայստանաբնակների միջև:

2755. Տարածքային ամբողջականության սկզբունքը նշվում է ստորագրված արձանագրություններում, ինչը ԼՂ հարցի շահարկման հնարավորություն է ընձեռնում:

2756. Սահմանների բացում լավ կլինի ոչ միայն տնտեսության համար, այլև՝ երիտասարդության համար, բայց մենք չենք կարող մոռանալ պատմությունը:

2757. Ցանկացած սցենարի քննարկումից առաջ պետք է հաշվի առնել հիմնական քաղաքական խաղացողների ով լինելն ու նրանց իրական մտադրությունները:

2758. Ամեն ինչի սպեղանին ժամանակի մեջ է: Պետք է համաձայնվել բացել այսօր սահմանը, մի քիչ աշխուժացնել առևտուրը: Որոշ ժամանակ անց կտեսնենք դա մեզ օգուտ բերեց, թե՞ ոչ:

2759. Եթե սահմանը բացվի, երկաթուղին անմիջապես չի աշխատելու: Ստացվում է, որ դրանով մենք առկախ ենք թողնում ցեղասպանության ճանաչման հարցը, իսկ դիմացն անգամ ակնկալվող տնտեսական աճ չենք ստանում:

2760. Չեմ հավատում՝ երկաթուղու բացումը կմնա խոստում:

2761. Թուրքերի կենտրոնացումը որոշակի շրջաններում կվտանգի պետության հիմքերը:

2762. Այս սցենարը լավատեսական եմ համարում այնքանով, որ սահմաններն, ի վերջո, բացվում են ու թեթև աշխուժություն է նկատվում մեր տնտեսության մեջ:

2763. Սահմանների բացումը միանշանակ վատ է, քանի որ այդ եղանակը նպաստում է պանթուրքիզմի իրականացմանը: Սա մշակված է նրանց կողմից:

2764. Մենք չափազանց միատարր ազգ ենք և ձուլում մեզ չի սպառնում:

2765. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր երիտասարդությունը հեշտ չի հանձնվում. մենք՝ երիտասարդներս, դեմ կլինենք սահմանի բացմանը և ցեղասպանության անտեսելուն նման կերպ:

2766. Եվրոմիությունն է ճնշում Թուրքիային, իսկ մենք էլ խնդրողի դերում ենք երևում:

2767. Օր-օրի մենք տեսնում ենք, որ Վրաստանը մեզ համար վստահելի գործընկեր չէ: Ալտերնատիվ է պետք:

2768. Ազգային ինքնագիտակցությունը հայ երիտասարդության շրջանում շատ թույլ է, ձուլման վտանգ այնուամենայնիվ կա:

2769. Երբ նախաձեռնվում է խաղ, արտաքին ուժի ազդեցությունից անկախ, հաղթող կամ պարտվող կարող է լինել միայն խաղացողը, ոչ թե խաղի դատավորը, բժիշկը կամ օգնականը...

2770. Սահմանների բացումով մենք ճանաչում ենք Թուրքիայի սահմանները:

2771. Արդյո՞ք Թուրքիան շահագրգիռ է բացել սահմանը, թվում է, որ մենք ենք միայն շահագրգռված, որովհետև մեզ այլընտրանքային ճանապարհ է հարկավոր:

2772. Ենթադրենք առևտուրը ավելի հեշտ և էժան կլինի, սակայն միայն դա բավական առիթ չէ սահմանը բացելու համար:

2773. Առանց սահմանները բացելու ու անընդհատ խոսելով ոչնչի չենք հասնի:

2774. Կենցաղային մակարդակում հարաբերություններ, այսպես թե այնպես, կան. մենք նրանց հետ առևտուր ենք անում, գնում այնտեղ հանգստանում ենք և այլն: Խոսքը այս դեպքում զուտ պաշտոնական հարաբերությունների հաստատման մասին է:

2775. Աբխազական պատերազմի ժամանակ ընդամենը մի քանի օրում Հայաստանը սպառեց իր ռեսուրսները, ուրեմն ի՞նչ վստահություն, որ այլ պարագայում կդիմանանք

2776. Նույնիսկ էդ մեծ զոհողության՝ Ցեղասպանությունից հրաժարվելու գնով մենք չենք կարող հասնել մեր կենսամակարդակի բարձրացմանը:

2777. Մեր տնտեսությունը կարող է ձուլվել Թուրքիայի տնտեսության հետ, Թուրքիան կուլ կտա մեզ:

2778. Ես կարծում եմ, որ Թուրքիային Հայաստանը ընդհանրապես չի հետաքրքրում:

2779. Եթե տնտեսական հարցերի ամբողջ կծիկը չի լուծվում, ուրեմն չեմ հասկանում ինչու ենք բացում սահմանը: Եթե երկաթուղին կանգնած է մնալու, անիմաստ է գնալ նման ռիսկի:

2780. Հայաստանն այնքան տնտեսական ուժ չունի, որ մեծ ցանցային ծրագրեր նախաձեռնի. այս պարագայում թելադրողի դեր ստանձնելն այնքան էլ իրատեսական չեմ համարում:

2781. Այսօրվա թուրքերը շատ տարբեր են անցյալ դարի բարբարոս թուրքերից և շփումներ հաստատման դեպքում մենք ավելի լավ կարող ենք ճանաչել նրանց և համագործակցել:

2782. Ստամբուլը Թուրքիա չի, Թուրքիայում չորս-հինգ քաղաք կա...

2783. Ես որքան գիտեմ, Ցեղասպանությունից 100 տարի անց այլևս հնարավոր չէ բարձրացնել այս հարցը, այնպես որ ընդամենը հինգ տարի ունենք մեր հարցը առաջ տանելու համար:

2784. Ի՞նչ կապ ունի պաշտոնական հարաբերությունների հաստատումը մեր աղջիկների թուրքերի հետ ամուսնանալու հետ: Ուզում ես չինական պատ էլ կառուցի, դա ամուսնացողին չի արգելի ամուսնանալ:

2785. Եթե հայկական արտահանումը կանխվում է թուրքական կողմից, հայկական կողմը պետք է դիմի սիմետրիկ քայլերի: Եթե թուրքական կողմը մեզ է վնասելու, նույնը պետք է մենք անենք:

2786. Ինչպես եղել է լուռ շրջափակում, այնպես կլինի լուռ ապաշրջափակում:

2787. Եթե սահմանները բաց են, նշանակում է առնվազն բեռնափոխադրումների հաշվին տնտեսական որոշակի առաջընթացն ապահովված է:

2788. Եթե կարտոֆիլի ներմուծման տուրքը թուրքը շատ բարձր սահմանի, այդ դեպքում մենք էլ պետք է գտնենք մեկ այլ ապրանք, որի ներմուծումը ինքներս կխոչընդոտենք բարձր մաքսատուրքով:

2789. Ինձ թվում է, արձանագրությունները չափից ավելի են քննարկվում, ինչը ժողովրդին ու կուսակցություններին շատ շահարկումների տեղիք է տալիս:

2790. Առաջին սցենարով մենք կկորցնենք մեր հզորության գրեթե միակ գործոնը՝ սփյուռքը:

2791. Շատ հավանական է, որ ոչ միայն Թուրքիան, այլև Հայաստանն ունի խորամանկ դիվանագիտություն, սակայն մենք այդ մասին չենք բարձրաձայնում:

2792. Մեր տրանսպորտային միջոցները այժմ գտնվում են օտարների ձեռքում, ուստի սահմանների բացումը այս ոլորտում մեզ ոչինչ չի տա:

2793. Ոչ ոք դեմ չէ սահմանի բացմանը, բայց ի՞նչ գնով: Դա պետք է հաշվի առնել:

2794. Հայերեն «արձանագրություն» բառը շատ ավելի լուրջ նշանակություն ունի, քան դրա համարժեք «պրոտոկոլ» բառը: Սա է պատճառը, որ մենք այդքան լուրջ նշանակություն ենք տալիս այդ փաստաթղթերին:

2795. Շատ վատ է, երբ քսան տարի շարունակ երկրում փոփոխություններ չեն լինում:

2796. Ես չեմ կարծում, որ սահմանի բացումից հետո գենոցիդի հարցը առաջին պլան կմղվի: Այնտեղ, որտեղ բիզնես կա, քաղաքական հարցերը ետին պլանում են:

2797. Եթե ցեղասպանության հարցը մոռացության ենթարկվի առաջիկա տաս տարում, ապա դա կարող է մոռացության ենթարկվել հավերժ:

2798. Հիմնական հարցը, որ պիտի քննարկենք, դա այն է, արդյոք մենք պատրաստ ենք սահմանի բացման համար վճարենք լռությամբ...

2799. Ես անձամբ բացասական չեմ տրամադրված ոչ թուրքերի, ոչ ադրբեջանցիների համար: Բայց դեմ եմ սահմանների բացմանը, քանի որ դա կբերի միայն մեր «խոշոր ձկների» հարստացման, իսկ ժողովրդի համար ոչինչ չի փոխվի:

2800. Այսօրվա դրությամբ սահմանի բացումը Թուրքիային ոչ մի տնտեսական օգուտ չի տա, քանի որ Հայաստանը նրա համար ընդամենը մի քաղաք է: Թուրքիան սահմանի բացումը քննարկում է զուտ իր միջազգային իմիջի համար:

2801. Եթե սփյուռքը մեզ ընդհանրապես չօգնի, մենք միանշանակ կխամրենք: Այսօրվա դրությամբ մենք հիմնականում ապրում ենք սփյուռքից ուղարկված գումարներով:

2802. Կան ապրանքներ, որոնց վրա մենաշնորհ չկա, ահա հենց այդ ապրանքների ներկրման արդյունքում միայն կիջնեն գները:

2803. Իսկ ես կարծում եմ, սահմանի բացման դեպքում մենք մեր հարցն առաջ տանելու համար ավելի մեծ դաշտ ենք ստանում, քանի որ մենք երկխոսության խնդիր ունենք:

2804. Մեր երիտասարդության մեջ չկա գաղափարախոսություն ու ինքնագիտակցություն, ուստի հոգեբանական ոլորտում մենք պատրաստ չենք սահմանների բացմանը այժմ:

2805. Բոլոր սցենարներն էլ հնարավոր եմ համարում, արձանագրության կետերը պետք չի քննարկել, որովհետև ցանկացած պահի դրանք կարելի է փոփոխել:

2806. Ոչ միայն մենք սփյուռք ունենք, այլ նաև թուրքերը: Մենք ենթադրում ենք, որ մեր սփյուռքը ավելի ուժեղ է, բայց այդպես է արդյո՞ք:

2807. Մենք պետք է երաշխիք ունենանք, որ միջազգային հանրությունը չի ճնշի մեզ և ստիպի շատ արագ լուծել ցեղասպանության հարցը:

2808. Սահմանների բացումը ամեն դեպքում փոքր-ինչ կթուլացնի լարվածությունը մեր երկրների միջև:

2809. Մենք սփյուռք, պետություն ունենք... պիտի դերերի բաշխում լինի. ով է զբաղվում ասենք տնտեսությամբ, ով է զբաղվում պահանջատիրությամբ և այլն:

2810. Մի վայրկյան անգամ չեմ կասկածում, որ Սադախլոյի նման մի շուկա էլ ձևավորվելու է հայ-թուրքական սահմանին:

2811. Սահմանների բացման դեպքում ես տեսնում եմ այն վտանգը, որ Հայաստանում կկիրառվեն տեռորիստական ակտեր:

2812. Չի կարող որևէ ճնշում լինել Հայաստանի վրա, քանի որ մենք անկախ երկիր ենք և մենք չենք կարող մոռանալ եղած փաստը՝ ցեղասպանությունը:

2813. Սփյուռքը պետք է շարունակի բարձրաձայնել Սփյուռքի մասին, իսկ մենք զբաղվենք հիմնականում մեր պետության կայացմամբ:

2814. Սա նման է «տրոյական ձիու» պատմությանը. Թուրքիան ուզում է ներթափանցել և ուտել մեզ ներսից:

2815. Ի՞նչ պիտի մեր պատմաբանները խոսեն պատմական հանձնաժողովում... մենք մեզ համար մութ կետեր ունե՞նք:

2816. Սահմանների փոխադարձ ճանաչումը վերջ կդնի մեր հողերը ինչ-որ ժամանակ վերադարձնելու մեր հույսերին:

2817. Չի բացառվում, որ սահմանի բացումից հետո Թուրքիան նորից ինչ-ինչ պատճառներով բարկանա և կրկին անգամ փակի սահմանը:

2818. Իմ կատարած հարցումները ցույց են տվել, որ ժողովուրդը ցանկանում է բաց սահման նոր աշխատատեղերի համար:

2819. Նոր սփյուռքի ներկայացուցիչներն են հիմնականում դեմ սահմանի բացմանը, այլ ոչ թե «հին»:

2820. Դիվանագիտությունը 94թ-ից հետո չի աշխատում, ԱԳՆ-ն դարձել է տուրիստական գործակալություն: Այսօր մենք վայելում ենք ոչ ճիշտ կադրային քաղաքականության արդյունքները:

2821. Արձանագրությունները փորձ է փոխելու ստատուս քվոն:

2822. Թուրքին ձեռնտու է հիմա սահմանը բացել՝ բացում է: Հետո պետք լինի նորից կփակի: Պետք չէ այս ամենի համար գնալ քաղաքական զիջումների:

2823. Բանակցությունները պարտադիր են, պետք է բանակցել թե՛ բարեկամների, թե՛ թշնամիների հետ:

2824. Հայ-թուրքական սահմանի որոշման հարցը ակտուալ է ու կարևոր:

2825. Արձանագրության մեջ եթե արծարծվում է սահմանների ճանաչումը, մենք կանգնում ենք կործանման եզրին:

2826. Այսօրվա բանակցությունները պատերազմ են կլոր սեղանի շուրջ:

2827. Մենք իհարկե ավելի թույլ պետություն ենք, մեր հարևանն աշխարհի առաջատար զարգացած երկրներից մեկն է, փորձ է անելու մեզ ճնշել:

2828. Կադրերը ձևավորվում են պատերազմների ընթացքում

2829. Պատերազմն է ծնում հերոսներ:

2830. Հասարակության տարբեր շերտեր այսօր դեմ են սահմանի բացմանը, քանի որ կան փաստեր, որոնք մենք չենք կարող մոռանալ:

2831. Մենք ինչո՞ւ պետք է ճանաչենք սահմանները:

2832. Մենք ենք մտածում, որ հանձնաժողովներում պիտի քննարկենք մշակութային, տեղանունների հարցեր: Բայց արդյո՞ք մենք ենք թելադրելու, թե ինչ քննարկենք: Իսկ եթե նրանք պահանջե՞ն, որ քննարկենք Ցեղասպանության հարցը:

2833. Թուրքիային Հայաստանը տնտեսական առումով ընդհանրապես չի հետաքրքրում. նա ցանկանում է մի գնդակով երկու նապաստակ խփել՝ մեկը Եվրոմիությունն է, մյուսը իր քաղաքականությունը:

2834. Թուրքիան և մյուս թուրքալեզու երկրները այսպես թե այնպես կանգնած են լինելու Ադրբեջանի մեջքին:

2835. Մեր դրությունն էլ մի բան չի, սահմանների բացումը գոնե մի բան կփոխի:

2836. Կան օրինակներ. Իռլանդիան և Միացյալ Թագավորությունն ունեն սահմանային վեճ, բայց դա չի խոչընդոտում հարաբերություններին

2837. Եթե հանձնաժողովներում պիտի քննարկենք զուտ մասնագիտական հարցեր, էդ դեպքում այդ հանձնաժողովի դերը ո՞րն է լինելու կամ նրա միջկառավարական ստատուսն ինչի՞ համար պիտի լինի:

2838. Երիտասարդության շրջանում ավելի շատ խնդիրներ կառաջանան, քանի որ հայ և թուրք երիտասարդների միջև միջադեպերը անխուսափելի կլինեն:

2839. Իմ ականջը «մազոլ» ա արել արդեն էդ «առանց նախապայմանների» արտահայտությունը: Թող լավ էլ նախապայմաններ լինեն մեր կողմից: Թուրքիան ուզում է, թող իր նախապայմաններն էլ մտցնի:

2840. Ես զարմանում եմ, թե ոնց ենք փող տալիս ու գնում Անթալիա: Ինչպե՞ս կարելի է հարստացնել թուրքերին:

2841. Խաղաղության հաշտություն չկա նաև Ռուսաստանի և Ճապոնիայի միջև, սահմանների լուրջ վեճ կա, սակայն նրանք հարաբերվում են, տնտեսական և քաղաքական հարաբերություններն անգամ զարգանում են:

2842. Մենք ինքնուրույն որոշումներ կայացնելու ընդունակ չենք, սովորել ենք ենթարկվելուն:

2843. Նախապայմաններով բանակցություն լինում են ուժեղ լինելու դեպքում: Մեր դեպքում դա հնարավոր չէ: Գերտերությունները թույլ չեն տալիս ո՛չ Թուրքիային, ո՛չ Հայաստանին պայմաններ դնել:

2844. Երկրորդ սցենարի իրական լինելը հնարավոր կլինի միայն այն դեպքում, երբ արդեն ստորագրված պրոտոկոլների մեջ փոփոխություններ մտցվեն՝ սահմանների փոխադարձ ճանաչման, երկկողմ ու բազմակողմ միջազգային պայմանագրերի հարգման առումով:

2845. Պատմությունից ելնելով կարող ենք ասել, որ Հայաստանը պարբերաբար լավ և վատ հարաբերություններ է ունեցել իր բոլոր հարևանների հետ:

2846. Հարցը ոչ թե հանձնաժողով ստեղծելը կամ չստեղծելն է, այլ պատմաբանների որակը:

2847. Մեր պապական հողերում քրդեր են ապրում, ի՞նչ անենք դրանց՝ մորթե՞նք:

2848. Եթե Թուրքիան նախապայմաններ դնի ոչ թե ուրիշ երկրի՝ Ադրբեջանի վերաբերյալ, այլ իր երկրի, դա հասկանալի կլինի:

2849. Ես տեսնում եմ շրջապատի ուսանողների բացարձակ անտարբերությունը այս հարցի նկատմամբ: Իսկ ընդհանուր առմամբ մարդիկ ապատեղեկացված են:

2850. Սահմանի բացումից հետո հակահայկական ոչ մի բան էլ չի սկսվի, հարցը նրանում է, թե միմյանց միջև ինչ պահանջներ կլինեն: Հայ-թուրքական հարաբերությունների սրությունը մի փոքր կթուլանա:

2851. Միջպետական հանձնաժողովի արդյունքը կլինի այն, որ առաջ կգան «կառավարական» պատմաբաններ:

2852. 33-35թվերին Գերմանիան չհարձակվելու պայմանագիր ուներ իր բոլոր հարևանների հետ, բայց դա չկանխեց համաշխարհային պատերազմը:

2853. Թող քրդերը վարձակալեն մեր հողերն ու գումարը վճարեն մեր պետբյուջե:

2854. Մենք այդքան դիվանագետ չենք, որքան Թուրքիան, ուստի հետագա բոլոր հնարավոր զարգացումները պետք է ամրագրվեն, որպեսզի մենք քիչ խնդիրներ ունենանք:

2855. Մենք մինչև հիմա տարածքների պահանջ չենք ներկայացրել Թուրքիային:

2856. Փակ տարածքներ, որոնք վերահսկվում են բանակի կողմից՝ ահա այս մոդելը կարող ենք կիրառել քրդերի նկատմամբ:

2857. Եթե չես կարողանում Արցախը բնակեցնել, ինչո՞ւ խոսենք Արևմտյան Հայաստանի հողերի մասին:

2858. Սահմանի բացումը առաջին հերթին արտաքին ուժերի ճնշումն է Թուրքիայի վրա և ոչ թե Հայաստանի:

2859. Դիվանագիտությունն ինքը իրենից խաբեբայություն է ներկայացնում: Հիմա մենք կարող ենք ստորագրել ցանկացած արձանագրություն, բացել սահմանները, ուժեղանալ, հետո մեր ձեռքերով վերադարձնել մեր հողերը:

2860. Հայաստանի համար հողերի հարցը ոչ միայն կենսական անհրաժեշտություն չի, այլ անգամ գաղափար էլ չի...

2861. Հող հետ ուզելը պատերազմի սկիզբ է:

2862. Վտանգ կա, որ սահմանի բացումից հետո քրդերն էլ «կոգևորվեն» և լրացուցիչ խնդիրներ կառաջացնեն հայերի համար:

2863. Ստացվում է, որ մենք մեր հողերն ուզում ենք մեկ այլ ժողովրդից, որն ապրում է այդտեղ, այլ ոչ թե նրանից, ով մեզանից խլել է դրանք:

2864. Հենց այս պահին մենք երեք միլիոն ենք, իսկ Արևմտյան Հայաստանում տասնհինգ միլիոն քուրդ կա: Այսօր մենք ընդհանրապես պատրաստ չենք Թուրքիային հողային պահանջներ ներկայացնել:

2865. Մեր նպատակն իշխանությանը հավատալն է, լավ ապրելն է:

2866. Փակ սահմանները, շրջափակումը միանշանակ լավ չի: Չենք կարող այլևս այսպես զարգանալ:

2867. Այս շրջանում երրորդ սցենարը ցանկալի է, բայց ոչ իրատեսական: Ցանկալի է, որ մեր քննարկման արդյունքում որոշակի աշխատանքներ տարվեն մտավախությունները վերացնելու ուղղությամբ:

2868. Եթե մենք նայում ենք միայն սահմանի բացումը առանց որևէ հարցերի, մեզ ձեռնտու է: Հայաստանի շրջափակումը դառնում է շրջափակում Ադրբեջանի համար:

2869. Մենք պետք է հաշվի առնենք, որ մենք գործ ունենք ոչ միայն թուրքերի հետ, այլ մեզ շատ անգամներ թվով գերազանցող քրդերի հետ:

2870. Պաշտոնական մակարդակով դեռևս Հայաստանը հողային պահանջներ չի ներկայացրել, միայն ցեղասպանության ճանաչման մասին ենք խոսում:

2871. Ճապոնիան Ռուսաստանի հետ նույն դիվանագիտական հարաբերություններն ուներ, բայց Ճապոնիան իր ոչ մի թղթում չի նշել, որ Ռուսաստանի հետ տարածքային խնդիրներ ունի: Այսինքն կան նախադեպեր չէ՞... Ամեն ինչ իր տեղն է ընկնում, եթե հարցերը տարբերակում ու առանձնացնում ենք:

2872. Մենք այսօր լավ չենք ճանաչում թուրքերին, բաց սահմանները մեզ դրա հնարավորությունը կտան:

2873. Ես կողմ եմ սահմանի բացմանը, բայց մեր կողմից պայմաններ առաջադրելու պայմանով միայն: Թուրքիան ցանկացած իրավիճակում շահող կարող է դուրս գալ:

2874. Մեր մտավախությունների պատճառը մենք ենք. օրինակ նույն ԱՀԿ մենք ավելի վատ պայմաններում ենք, քան Թուրքիան: Մենք պետք է փոխենք մեր հարկային ու մաքսային դաշտը, նոր բացել սահմանները:

2875. Այլևս պետք չէ այս հարցի լուծումը ձգձգել: Ժամանակն էլ է մեծ ֆակտոր:

2876. Ղարաբաղի հարցը ածանցյալ է սահմանի բացման հարցից:

2877. Ցեղասպանությունը ճանաչելուց հետո պարզ է, որ մենք ծովից ծով Հայաստան չենք ստանալու ու կարող է ստացվել, որ մենք ընդամենը փոքրիկ երեխայի պես լացը կտրելու համար կոնֆետ ենք ստացել:

2878. Մեզ մոտիվացիա է պետք առաջ շարժվելու համար. ժողովուրդը մինչև անդունդի եզրին չլինի, առաջընթաց չի լինի:

2879. Կարսի պայմանագիրը մեր էն դարդուցավն է, որից էլ սկսել է ողջ շիլաշփոթը: Թեև միջազգային նորմերով այդ պայմանագրի իրավական ուժի մեջ լինելը խիստ վիճարկելի է:

2880. Բաց սահմանի առկայության դերում Թուրքիայի դերը կնվազի Ղարաբաղյան հարցում՝ ինչ-որ լծակ կվերանա:

2881. Եթե սահմանի հարցը մնա անփոփոխ, ապա սրանից վատ չի լինի: Սակայն, եթե դա լինի Հայաստանի պատճառով, դա կարող է հետագայում ինչ-որ կերպ օգտագործվել Հայաստանի դեմ:

2882. Փակ սահմանների դեպքում Թուրքիայի համար Եվրոմիության դռներն էլ փակ կլինեն:

2883. Սահմանի բացումը կնպաստի հայկական դիրքերի ամրապնդմանը Ղարաբաղյան հարցի լուծման ընթացքում:

2884. Ոնց ամերիկացիներն ունեն ամերիկյան երազանք, այդպես էլ մեզ է հարկավոր մեր երազանքը՝ Արևմտյան Հայաստան, որ օրերից մի օր պետք է հետ բերենք: Բայց դա երազանք է, անիրականանալի:

2885. Մենք պետք է լուծենք մեր ներքին խնդիրները, նոր մտածենք սահմանների բացել-չբացելու մասին:

2886. Թող այսպես էլ շարունակվի, ոչինչ չփոխվի, Ղարաբաղի հարցն էլ ինչքան հնանա, այնքան ավելի հայանպաստ լուծում կստանա:

2887. Այսօր մենք չենք կարող ասել, թե մի քանի տարի հետո ինչ զարգացումներ կլինեն և արդյոք մենք կարող ենք դա օգտագործել ի օգուտ Հայաստանի:

2888. Սահմանը չի էլ բացվելու, դա հաստատ է:

2889. Աբսուրդ է սահմանների ճանաչումը, պետք է սահմանը վերահաստատել: Մյուս կողմից սահմանի չճանաչելը վտանգավոր է, քանի որ թուրքը կասի, սահման չես ճանաչել, ուրեմն մինչև Երևան էլ կարող եմ գալ:

2890. Ցեղասպանության ճանաչումը դեռ այն փուլում է, որ մենք աշխարհից միայն ճանաչում ենք սպասում, որպեսզի կանխվեն նման հնարավոր ոճրագործությունները: Իսկ դա մեր հողերի հետ քիչ է կապված:

2891. Սահմանը փակ պահելու դրական կողմը այն կլինի, որ մենք պարտավորված ոչինչ չենք անի:

2892. Եթե սահմանը բացեցինք, մի՞թե նույն հանցավոր տարրը չի զարգանալու Հայաստանում:

2893. Եթե ինչ-որ բիզնեսմեն փորձի այսօր մտնել ներմուծման դաշտ, ապա բախվելու է մեր մոնոպոլիստներին:

2894. Մենք, հանպատրաստից բացելով՝ կուլ կտանք տնտեսական խայծերը ու...

2895. Հարաբերությունների կարգավորման դեպքում էլ որևէ կերպ չի վերանա մեր պահանջատիրության հարցը:

2896. Սահմանի բացումը կխլացնի ցեղասպանության ճանաչման ալիքը:

2897. Սահմանի բացումը ինտեգրալ մասն է մեր արձանագրությունների:

2898. Ես չեմ ասում հենց հիմա եկեք բացենք սահմանը, եկեք հիմա երկխոսենք, բանակցենք գոնե: Թող, ասենք, մեր հարաբերությունների հարցը 15 տարի հետո լուծվի, բայց պետք է փորձել հարցեր լուծել, որը ենթադրում է բանակցություն՝ երկխոսություն:

2899. Ցեղասպանության ճանաչումը կարող է դանդաղել, սակայն չի դադարի, որովհետև մենք շարունակելու ենք պնդել ու պահանջել ճանաչումը:

2900. Մենք նման ենք երեխայի, որ անօգնական գնում-կանգնում է մայրուղու մեջտեղում:

2901. Խոսելով հող չեն վերցնում: Քսան թվին մենք արդեն հանձնվել ենք: Այսօր հաղթելու համար միայն մի ճանապարհ ունենք՝ ուժի միջոցով:

2902. Տնտեսական բարելավման համար հարկավոր է ինչ-որ գին վճարել. այս պարագայում այդ գինը կլինի ազդեցությունը Հայկական մշակույթին, դեմոգրաֆիային և այլն:

2903. Սահմանի բացում ասելով ի՞նչ ենք հասկանում... ինձ թվում է սահմանի բացումը միայն կոմունիկացիաների բաց լինելն է:

2904. Երրորդ սցենարը չեմ էլ ցանկանում քննարկել, քանի որ սահմանի բացումն այլընտրանք չունի:

2905. Էրդողանի իշխանության գալուց հետո Թուրքիայի առաջնահերթությունները փոխվել են. այսօր Թուրքիան առանձնապես չի ձգտում մտնել Եվրոմիություն:

2906. Թուրք և հայ մոնոպոլիստների բախումը կարող է վերածվել ոչ տնտեսական կոնֆլիկտի:

2907. Սահմանը չի բացվելու ոչ թե մեր, այլ թուրքական պառլամենտի դեմ լինելու պատճառով:

2908. Եթե անգամ սահմանը բացվի, միևնույն է. դա կկրի ձևական բնույթ:

2909. Կարծում եմ, որ պրոցեսների արդյունքում ռեալ քայլեր կլինեն:

2910. Երբ որ հարաբերությունների «արանքն» արյուն կա, հարաբերություն կարգավորելը բարդ է:

2911. Արցախի հարցի հետ կապված ասեմ, որ կոնկրետ տարածքային հարց կա, իսկ հայ-թուրքականում հստակ հողային խնդիր չկա:

2912. Ես այն տպավորությունն ունեմ, որ մեր իշխանությունները այս քայլերը իրականացնում են, որ «մանթրաժի» մեջ չընկնեն. նրանք սկսել են խաղը ու չեն ցանկանում դրա կեսից դուրս գալ:

2913. Կողմը, որը լավ ռեսուրս ունի, միշտ աշխատում է օգտագործել փոխհամագործակցության սկզբունքը:

2914. Թուրքիան կբացի մեր հետ սահմանը ու հատուկ ծառայությունների միջոցով կդրդի փակել հայ-վրացական սահմանը:

2915. Թուրքական պետությունը այնպիսի քաղաքականություն ունի, որ կխրախուսի իր ավելի զարգացած բնակչությանը տարածքներ և բիզնեսներ հիմնել և գնել Հայաստանում: Տարիներ հետո այդ ամենը կամրացնի թուրքերի դիրքերը մեր երկրում:

2916. Երկու կողմն էլ շահագրգիռ է իմիտացիա անել, թե գնում են հաշտեցման ու կարգավորման:

2917. Ոչ Հայաստանն է Արցախի հարցում զիջելու, ոչ էլ Թուրքիան է այդ հարցում իր մասնակցությունից հրաժարվելու:

2918. Հայ գրողներից մեկը ասել է. «Թուրքը մարդասպան է: Եթե նրան կրթես, նա կդառնա կրթված մարդասպան»:

2919. Ադրբեջանը կօգտագործի իր ռեսուրսները Թուրքիայում, որպեսզի ուժեղացնի լծակները:

2920. Սահմանի հարցը կարող է անվտանգության բալանսի վրա ազդել:

2921. Բանակցություններ վարելուց հետո շահում են բոլորը՝ մեկը շատ, մյուսը քիչ:

2922. Հարկավոր է հստակ քաղաքականություն վարել և քայլ առ քայլ մտցնել մեր բնակչության գիտակցությունում այն փաստը, որ չգնեն թուրքական ապրանքները, չնպաստեն թուրքական տնտեսության զարգացմանը:

2923. Բնական զարգացման հետևանք է, որ թուրքական արևելյան գյուղերը թերի զարգացած են: Ստացվում է, որ մեզ վրա է դրված այդ հողերը ծաղկեցնելու պարտականությունը: Հայերը ներդրում են անելու Թուրքիայի վատ զարգացած շրջաններում:

2924. Սահմանը բացվելու դեպքում Թուրքիան հնարավորություն է ստանում մեզ կործանելու, բայց, միաժամանակ, մենք էլ ենք հնարավորություն ստանում նրանց դեմ պայքարելու: Ես համոզված եմ, որ այդ պայքարում մենք չենք պարտվելու:

2925. Մեզ ժամանակ չի մնացել Ցեղասպանության ճանաչման գործընթացը ավարտին հասցնելու համար: Մի որոշ ժամանակ անց այն արդեն մոռացության կմատնվի:

2926. Ղարաբաղյան և հայ-թուրքական հարաբերությունների փոխկապակցությունն ընկած է աշխարհաքաղաքական հարաբերությունների հիմքում:

2927. Ես չեմ կարծում, որ երբևէ մենք ավելի ուժեղ կլինենք, քան Թուրքիան:

2928. Արդյո՞ք մեր ներդրումները Թուրքիայում պարտադիր կբերեն մեր խնդիրների լուծմանը: Չէ, բայց կբերեն համակեցության որոշակի մթնոլորտի:

2929. Սերժ Սարգսյանը հրավիրեց Գյուլին, բայց հետո շատ փոշմանեց դրա համար

2930. Իմ տեղեկությունների համաձայն, որոշ գերտերություններ արդեն սկսել ե զբաղվել համատեղ պրոյեկտներով: Բայց դրանից կշահի Թուրքիան, իսկ մեզ կտան փշրանքներ:

2931. Փակ սահմաններով սցենարը մեզ համար ամենաանպաստն է:

2932. Ջավախքի հարցում մենք ավելի ենք ուժեղացել, ու ավելի կարևոր է՝ ինքը Ջավախքն է ուժեղացել: Իսկ սա գալիս է համակեցության մթնոլորտից:

2933. Մենք կկորցնենք Սփյուռքը սահմանների բացման պարագայում:

2934. Հարկավոր է պետական մակարդակով հետևել նրան, որպեսզի հայերը նախապատվություն տան հայկական արտադրանքին, հարկավոր է ներքին սանկցիաներով սահմանափակել հայերի տուրիզմը Թուրքիայում:

2935. Ճիշտ կլիներ քննարկել ոչ թե արդյունքների սցենարներ, այլ ազդեցությունների սցենարներ:

2936. Մենք ռեսուրսներ չունենք և թույլ ենք, դրա համար էլ դրսից փորձում են մեզ վրա ճնշում գործադրել:

2937. Սփյուռքը և Հայաստանի հայությունը մի կարծիքի են, Հայաստանի կառավարությունը մի այլ:

2938. Արձանագրությունների ստորագրումը Սարգսյանի ու Գյուլի կողմից, նույնն է, որ ես և Դուք այն ստորագրենք: Որովհետև միևնույն է, այն ուժի մեջ չի մտնի մինչև չվավերացվի պառլամենտների կողմից:

2939. 15 թվին էլ կար համակեցություն, բայց կար խոշոր պետությունների հակամարտությունը և որ ավելի կարևոր է՝ չկար Հայաստանի Հանրապետությունը: Հայերը պետք է ընտրություն կատարեին՝ կամ այս, կամ այն պետությանը հարել:

2940. Հայ- թուրքական սահմանի բացման հարցը քննարկվելու է ոչ թե հայ թուրքական, այլ միջազգային հարաբերությունների հարթության մեջ: Դա գերտերությունների մտածած քայլն է:

2941. Ցեղասպանության հարցն այնպիսի հարց է, որի պարագայում «վրեմյա լեչիտ վսե ռանի» առածը չի գործում:

2942. Հնարավոր պատերազմի դեպքում Ռուսաստանը իր ձեռքերը լվալու է, ու մեզ էլ, թուրքերին էլ զենք է վաճառելու:

2943. Հայ-թուրքական հարաբերությունների հարցը մեր ղեկավարության նախաձեռնողական քաղաքականությունն է:

2944. Եթե մարդուն չես տալիս գործողությունների ընտրության հնարավորություն, բայց տալիս ես հետևանքներից մեկը ընտրելու հնարավորություն, դա դառնում է աստղագուշակության նման մի բան:

2945. Երաշխիք չկա, որ հայ աղջիկներից 5-ից 3-ը չեն ընտրի թուրք երիտասարդներին և չեն ձուլվի թուրքերին:

2946. Մենք Ռուսաստանի «ոտքի տեղն» ենք Անդրկովկասում, նրանց համար մենք շատ կարևոր ենք:

2947. Իսկ ես էմոցիաների առկայությունը նորմալ եմ համարում. մարդ ենք, քար չենք: Բայց Հայաստանի զարգացումը պիտի այլևս քննարկման առարկա չլինի, այլ միակ հետագա ճանապարհ:

2948. Հայ- թուրքական հարաբերությունների վերանայման հարցը երկու պետություններին էլ ավելի քաղաքակիրթ կերպարն են հաղորդում:

2949. Ուժի մեծամասնություն, այլ ոչ թե մեծամասնություն ուժ: Սա էլ, բիզնեսն է շահում, ուրեմն՝ երրորդ կողմը, բայց ոչ Հայաստանը:

2950. Մենք դեմոգրաֆիայի լուրջ խնդիր ունեն: Այսօր էն ցեղերը, որին մենք համարում ենք քոչվոր, դարձել են յոթանասուն հազար: Իսկ մենք, հողին կպած լինելով, սպառվել ենք:

2951. Սահմանի անհստակությունը նոր մարտահրավեր է Թուրքիայի ձեռքում Հայաստանի դեմ:

2952. Պետք է հիշել այն փաստը, որ այս պահին Հայաստանում տղաների թիվը ավելի քիչ է, քան աղջիկներինը, ուստի խառը ամուսնությունները անխուսափելի են:

2953. Համարում եմ, որ հնարավոր է նման զարգացում, ռուսական ու թուրքական ազդեցությունը մեզանում կսաստկանա:

2954. Մենք պետք է այնպես անենք, որ Ռուսաստանի ու Վրաստանի միջև կոնֆլիկտ չլինի:

2955. Մեր երեք նախագահներն էլ երկրի պատրիոտն են եղել, դա հաստատ է:

2956. Մենք կարող էինք երեք հարյուր հազար փախստականներին ներգրավել մեր մեջ ու այդքանով ավելացնել մեր ներուժը: Իսկ մենք ընդհանրապես չօգտագործեցինք այդ ռեսուրսը:

2957. Թուրքիային ձեռնտու է այս ամենը, որ ազդեցություն ապահովի մեզ վրա ու ասի «խելոք պահեք ձեզ, թե չէ լավ չի լինի»:

2958. Այսօրվա ցանկացած լավ սցենար մեզ համար վեր է ածվում վատ սցենարի:

2959. Եթե մենք առաջնորդվենք բիզնես շահերով, պարզ է, թե մեզ հետ ինչ կլինի: Պետք է պետությունը կարողանա սանձել ու կարգավորել մեր պետության շահին հակասող քայլերը:

2960. Երբ Վերին Լարս սահմանը փակվեց և ամեն ինչ թանկացավ, անհրաժեշտություն առաջացավ նոր քաղաքականություն մտածել: Սահմանի բացումն, ըստ էության, Հայաստանի տնտեսությունը վերականգնելու փորձ է:

2961. Մեզ համար ամենալուրջ վտանգը Ադրբեջանից է: Եթե մենք հնարավորություն չունենանք հայ-թուրքական հարաբերությունները օգտագործել՝ պառակտում մտցնելու թուրք-ադրբեջանական հարաբերությունների մեջ, տանուլ ենք տալու:

2962. Ռուսաստանը ճնշում է գործադրում, որ հայ-թուրքական սահմանը բացվի՝ իր տնտեսական նկատառումներից ելնելով:

2963. Ես, միևնույն է, կարծում եմ, որ Թուրքիան այդքան շահ չունի Հայաստանից:

2964. Արձանագրությունները մեր իրավաբանական և դիվանագիտական պարտությունն են:

2965. Հայաստանի առաջին նախագահը կերազեր այսպիսի պայմաններով բացել սահմանը:

2966. Չեմ հասկանում, ամեն հարցում ինչի՞ են ծայրահեղություններ տեսնում. «կխեղդի, կմորթի...». մարդ, ենք հո էշ չե՞նք...

2967. Եկեք պարզենք, թե մենք ի՞նչ ենք ուզում շահել սահմանը բացելուց: Եթե մեր ուզածը առևտուրն ու ճանապարհն է, ապա մենք դրան հասնում ենք 4-րդ սցենարով, ուրեմն ամեն ինչ լավ է:

2968. Միջազգային հանրությունը շարժվում է որոշակի «կլիշեներով»: Այդ կաղապարներից մեկը երկու երկրների միջև ստորագրվող արձանագրություններն են: Իսկ մեր հարաբերությունների ջերմացումը հաստատ որոշակի խնդիրներ է առաջացնելու թուրք-ադրբեջանական հարաբերություններում:

2969. Սահմանի բացումը հարկավոր չէ համարել միայն որպես ծուղակ. շատ հնարավոր է, որ Ռուսաստանի հետ միասին մենք կարող ենք ազդել Թուրքիայի վրա:

2970. Եթե թուրքերը սահմանը բացեն, իսկ մենք ոչ, ապա թուրքական դիվանագիտությունը «կոչնչացնի» Հայաստանին միջազգային ասպարեզում:

2971. Դիվագիտական հարաբերություններ, դեսպաններ կլինեն, բայց սահմանը չի բացվի այնքան ժամանակ, մինչև ղարաբաղյան հարցը չլուծվի:

2972. Սահմանի բացումը այնպիսի վտանգ չէ, որից մենք պետք է վախենանք, բայց միևնույն ժամանակ պետք է հստակ իմանանք մեր հետագա քայլերը՝ ինչպես շահմատում:

2973. Մենք դարերով ապացուցում ենք, որ Ցեղասպանությունը եղել է, իսկ մեր կառավարությունը ստեղծում է հանձնաժողով՝ քննարկելու այդ հարցը:

2974. Թուրքիան կարողացել է հասնել նրան, որ մեզ մոտ ընկալում է, թե մենք ենք խնդրում, այլ ոչ թե թուրքերը: Դա իրենց հաղթանակն է, իսկ մենք պետք է այդպիսի ընկալում թույլ չտայինք:

2975. Հայ-թուրքական հարաբերություններն այսօր ինչ-որ տեղ արդեն բիզնես շահերի են վերածվել:

2976. Ես չեմ կարծում, որ Սարգսյանը մի օր քնից արթնացավ (ընդ որում՝ Մոսկվայում) ու որոշեց Թուրքիայի նախագահին հրավիրել ֆուտբոլի խաղը դիտելու:

2977. Թուրքիան իր սերունդը մեծացնում է ոչ միայն կրթական դաշտում, այլև հզոր գաղափարական դաշտ ստեղծելով:

2978. Մենք ոչ մի դար էլ թուրքերի հետ համերաշխ չենք ապրել: Օսմանյան կայսրությունում էլ, ռուսականում էլ խտրականություն է եղել:

2979. Այս տարբերակը հնարավոր զարգացումների ամենահավանական տարբերակն է, եթե ստորագրվեն ներկա արձանագրությունները:

2980. Վրացիներն ավելի վատ են մեզ հետ վարվում:

2981. Այս ամենը սկսվել է այն բանից, որ գերտերություններին պետք է այստեղ ունենալ խաղաղ միջավայր, զրկվել այս մի գլխացավից: Կլինի այնպես, ինչպես նրանք են ուզում:

2982. Մեր զինվորների 90%-ը ասում է. «Ձև ունենայի, փող ունենայի չէի ծառայի», ի՞նչ հայրենասիրության մասին է խոսքը:

2983. Միակ մտավախությունը մեր արտաքին քաղաքականության ոլորտում է:

2984. Հինգերորդ սցենարը ուղղակի երազանք է:

2985. Այնպիսի կարծիք կա, թե միջազգային հանրությունը օժանդակում է Թուրքիային ու Ադրբեջանին: Իրականում այդ նույն միջազգային հանրությանն ընդհանրապես պետք չի տարածաշրջանում ունենալ մեկ ուժեղ պետություն: Նրանց պետք է կայունություն:

2986. Ամեն ինչ կախված է այն բանից, թե մեր ուզածը ինչ է ու ինչ աստիճանի ախորժակ ունենք մենք:

2987. Սահմանի բացումը թուլացնում է մեր դիրքերը Ջավախքում. դա է, որ Վրաստանն էսօր ուզում է ճշգրտել իր սահմանը: Մենք, սահմանը բացելով, Ջավախքին զրկում ենք մեր տրանզիտը լինելու հնարավորությունից ու քաղաքական մեր դիրքերն այնտեղ թուլացնում ենք:

2988. Մեզանից է կախված՝ մենք կշահենք, կվերահսկենք գործընթացները, թե տանուլ կտանք:

2989. Այսօր բացի հայերից ու թուրքերից գենոցիդի ընդունումը ոչ մեկ չի կապում հողերի վերադարձի հետ:

2990. Թուրքերը հիմա ավելի հեռուն են նայում և անկախ սահմանի բացումից լրացուցիչ երկաթուղային ճանապարհներ են կառուցում:

2991. Ոչ մի պետություն չի կարող առաջ տանել իր քաղաքական շահերը՝ առանց ունենալու հզոր տնտեսություն: Չտանք էն ազգի անունը, որը փողի միջոցով կարողացավ գնել պետություն:

2992. Եթե կարողանանք մեր շահերը համադրել խոշոր պետությունների շահերին, կկարողանանք շահել:

2993. Երկու մտավախություն. ներքին՝ տնտեսական էքսպանսիա, արտաքին՝ դեմոգրաֆիական ու պառակտում սփյուռքի հետ:

2994. Գենոցիդի ընդունումը չի նշանակում հողերի վերադարձ:

2995. Մենք նման ընթացքին դիմանալ չենք կարողանա, կուլ կգնանք:

2996. Մեր այժմյան շփումը թուրքերի հետ ուրիշ հարց է, քաղաքականը՝ ուրիշ: Մենք բոլորս էլ լսում ենք թուրքական երաժշտություն...

2997. Քաղաքականության մեջ անհնարին բան չկա, կա ուղղակի ժամանակի խնդիր:

2998. Աղքատությունը, սոցիալական խնդիրները գերակշռում են, մարդիկ այսօր օրվա հացի խնդիր են լուծում: Նման դեպքում ավելի վեհ ու խոշոր ծրագրերով նրան չես վարակի:

2999. «Ջհաննամը» թե կողքից մեկն էլ չի շահում այս ամենից, կարևորը՝ արանքից ես իմ շահույթը վերցնեմ:

3000. Աշխարհում ոչ մի բան չի փոխվել, ամեն ինչ նույնն է, կապ չունի, թե որ դարում ենք ապրում:

3001. Մենք Թուրքիային պետք է ասենք. «Դու ես փակել, դու էլ բացի, մեր հողերն էլ մեզ տուր»:

3002. Կաթվածահար լինելու վտանգը միշտ կա:

3003. Պետք է ուժեղ լինել, պատմությունը ուժեղներն են գրում: Եկեք լինենք ուժեղ ու միասնական:

3004. Ցեղասպանության պահանջատիրությունը ոչ մի փաստաթղթով չի կարող կարգավորվել: Եթե դու ապրիլի քսանչորսին գնում ես Ծիծեռնակաբերդ, ուրեմն պահանջատեր ես:

3005. Իմ մտավախությունն այն է, որ մենք կարող է տեր չկանգնենք մեր ու Թուրքիայի միջև ԲԱՑ սահմանին:

3006. Հրեաներին պետք եկավ երկուսուկես հազար տարի, որ կարողանան համախմբվել իրենց սիոնիզմի շուրջ:

3007. Սփյուռքի ու մեր հոգեբանությունը տարբեր է, հայ է՝ թող գա այստեղ ապրի, այլ ոչ թե խոսի կորցրածի մասին:

3008. Մերձավոր Արևելքից հայերը գաղթում են Արևմուտք, ու այս տեմպերով ավելի արագանալու է ասիմիլյացիան:

3009. Մեր հողերը թուրքերի համար անիծված հողեր են...

3010. Մենք տեսնում ենք «ինչ» հարցը և չենք ուզում պատասխանել «ինչու» հարցին:

3011. Եթե մի կողմ դնենք բոլոր տնտեսական շահերը, Թուրքիան երբեք չի համաձայնի ընդունել ցեղասպանությունը, չի համաձայնի փոխել իր դասագրքերը, իր քարտեզները:

3012. Հարցերի հարցն այն է, որ ոչ թե Հայաստանն է սփյուռքի համար, այլ սփյուռքը՝ Հայաստանի:

3013. Ավելի լավ է լինենք հարուստ ու առողջ, քան աղքատ ու հիվանդ: Հինգերորդ սցենարը լավն է:

3014. Մենք պետք է թուրք հասարակության վրա ազդենք թուրք ինտելիգենցիայի միջոցով:

3015. Ես վախենում եմ նրանից, որ մենք տեր չենք կանգնելու մեր բաց սահմանին:

3016. Հայաստանի ու սփյուռքի կապը միշտ է եղել, Հայաստանն անհրաժեշտ է սփյուռքին:

3017. Պետք է կարողանալ տարբերակել ու հասկանալ գերակա նպատակը՝ Հայաստան, թե սփյուռք:

3018. Սա հայկական դիվանագիտությունը մեկուսացումից դուրս բերելու փորձ է:

3019. Ես «հեփի էնդին» չեմ հավատում...

3020. Ինչու ոչ, հինգերորդը հնարավոր է: Ուղղակի սա ժամանակի հարց է:

3021. Եթե պետությունը երեխաների մեջ սերմանում է թշնամություն, ապա դա շատ դժվար է հանել, նույնիսկ երկար տարիների ընթացքում:

3022. Եթե ասում եք, թե տասնամյակ անց մենք կորցնելու ենք սփյուռքը, ուրեմն իմաստ ունի իրոք քննարկել, թե ինչ կարժենա դա մեզ համար, եթե կորցնենք, բայց այսօր, ու դիմացն էլ լուրջ ձեռքբերում շահենք:

3023. Պետք է սահմանը բացել, պետք է հարաբերություններ հաստատել՝ հստակ որոշելով մեր վճարելիք գինը:

3024. Հարաբերությունները կոնստանտ երևույթ չեն. զարգանում են, թուլանում են, փոփոխվում են... պիտի պարզապես ճկուն լինենք:

3025. Թուրքը աճում է երկրաչափական պրոգրեսիայով, մենք թվաբանական պրոգրեսիայով:

3026. Եթե այս տեմպով շարունակվի, ես վախենում եմ երեխայի ապագայի համար, ու մտածելու տեղիք ունեմ երկրորդ երեխա ունենալու համար:

3027. Օրինակ Սովետ Միության քայքայումից հետո ինֆորմացիայի մեծ հոսք եղավ տարբեր կողմերից, ինչու ենք հիմա բացառում, որ նույնն էլ կլինի Թուրքիայի հետ սահմանի բացումից հետո:

IV քննարկում

3028. Առաջին տարբերակը բացառված է, իմ կարծիքով պետք է այն ճղել ու շպրտել:

3029. Հայ-թուրքական հարաբերությունները քննարկվել են մեկ տասնամյակ, հիմա ի՞նչ ենք քննարկում:

3030. Ես կարծում եմ, որ այս արձանագրությունն այս տեսքով ստորագրելու դեպքում մենք ամեն հարց տանուլ ենք տալու:

3031. Մեր քննարկումների արդյունքը արդյո՞ք հաշվի է առնվելու:

3032. Պատմությունը երբեք չի կարելի մոռանալ:

3033. Սահմանի բացումից կրկին անգամ կշահեն կոնկրետ մի քանի օլիգարխներ:

3034. Սա շատ ռեալ սցենար է, որովհետև ցույց է տալիս, որ ընդամենը մի քանի օլիգարխ են օգտվում:

3035. Հարցադրումները պետք է դնել այնպես, որ ամենասկզբում պատասխանենք այն հարցին, թե արդյոք լավ կամ վատ է մեր համար սահմանի բացումը:

3036. Մարդկանց մոտ ձևավորվում են այն կարծիքները, որոնք արտահայտվում են մի քանի հոգու կողմից. իշխանության, ընդդիմության, դեպուտատների և այլն: Ողջունելի են

այսպիսի քննարկումները, որ մարդկանց կարծիքները ձևավորվեն իրար հետ կիսվելու միջոցով:

3037. Շատ խորը տնտեսական վերլուծություն պետք չի, որպեսզի պարզ լինի, որ սահմանի բացումից օգտվելու են մի քանի տասնյակ հոգի:

3038. Տնտեսականից առավել վտանգավոր է քաղաքական ոլորտը: Եթե տնտեսության մեջ օտարը կարող է նույնիսկ մրցունակ դարձնել մյուսներին, ապա քաղաքականում օտար մարմինը միշտ էլ բացասական ազդեցություն է ունենում:

3039. Հասարակության մեծ մասը տեղեկացված չէ, չգիտի էլ ինչ է կատարվում:

3040. Բիզնեսի մեջ ազգություն չկա, կա շահ ու եկամուտ:

3041. Նշվում է, որ սահմանի բացումը կնպաստի մեր գյուղատնտեսության զարգացմանը, ինչը ռեալ չի: Թուրքիան մաքսային քաղաքականությամբ կզսպի մեր արտահանումը:

3042. Սահմանների բացումը հնարավոր է և իրատեսական, ընդ որում 30%-ով կշահի Հայաստանը, 70%-ով Թուրքիան:

3043. Մենք տաքարյուն ժողովուրդ ենք ու սահմանը բացվելուց հետո, տեսնելով, թե ինչ են արել մեր եկեղեցիների հետ քրդերը, կարող է կռվենք ու մի քանի հոգու սպանել: Այս մթնոլորտում ես դեմ եմ սահմանի բացմանը:

3044. Գլոբալ առումով մենք պատրաստ չենք սահմանների բացմանը:

3045. Այսօրվա դրությամբ Թուրքիան այնպիսի դիրքորոշում ունի, որ կստիպի Հայաստանին անել այն, ինչ ինքն է ցանկանում, սակայն սահմանի բացումը առաջին հերթին անհրաժեշտ է Թուրքիային, որն ունի Եվրոմիություն մտնելու խնդիր:

3046. Պետք չի մոռանալ, որ թուրքը թուրք է, նույնիսկ եթե ոսկի էլ դառնա, էլի գրպանդ մի դիր:

3047. Ցեղասպանությունը, որին միլիոն ու կես մարդ զոհ գնաց, Արևմտյան Հայաստանի հողերը, որոնք մնացին Թուրքիային, երբեք ուրանալ չի կարելի: Մեր պետությունը հիմա զրկված է զարգանալու հնարավորությունից:

3048. Երբ կինը հղի է ու երեխա է սպասում, կարող է կամ տղա ծնել կամ աղջիկ: Մենք հիմա քննարկում ենք մի բան, որ չգիտենք՝ սպասելու ենք, իսկ ինչի՞:

3049. Բաց սահմանների դեպքում էնքան թուրք է լցվելու Հայաստան, որ կարճ ժամանակում հարց լուծող են դառնալու:

3050. Քանի որ Վրաստանը մեզ թելադրում է, իսկ մենք նրանց դեմ ոչինչ չենք կարող անել, ուստի այլընտրանք է պետք:

3051. Հիմա մենք չենք գնո՞ւմ մեեեեծ «պալոսկավոր» սումկաներով չուլ բերում... ի՞նչ տարբերություն կլինի սահմանը բացելուց հետո. մի սումկա ավել-պակաս:

3052. Հնարավոր է, որ ներկրումը և արտահանումը մնա օլիգարխների ձեռքում, սակայն, նույնիսկ լինելով մանր արտահանող, կարող են օգուտ քաղել՝ տրանսպորտային ծախսերի նվազեցման շնորհիվ:

3053. Մեր օրենքը այսօր թույլ է տալիս ցանկացած մարզում 99 տարով հող «վարձակալել»

3054. Ցեղասպանությունը՝ որպես հանցագործություն, չունի վաղեմության ժամկետ: Այնպես որ սուտ է, թե 100 տարի հետո այն հնարավոր չէ այլևս քննարկել: Ընդհակառակը, հարյուր

տարուց հետո ավելի նպաստավոր պայմաններ են դրա համար ստեղծվում՝ բացվում են գաղտնի արխիվները:

3055. Հայ -թուրքական հարաբերությունների զարգացումը շուտ էր սկսվել ու ակտիվացավ Հրանտ Դինքի սպանությունից հետո: Կարծում եմ, որ դա նախօրոք մտածված սցենարն էր:

3056. Նույնիսկ, եթե շահելու լինենք 70%-ով, չարժի Ցեղասպանության հարցը դնել զոհասեղանին:

3057. Սահմանի բացման պատճառները տարբեր են, սակայն Հայաստանը պետք է չեզոք դիրք ընդունի այս հարցում, մենք չենք փակել սահմանը:

3058. Այս քննարկումները ցուցադրվում են հեռուստատեսությամբ, ու վերջում հանրությանն են ներկայացնում, թե մարդիկ նախընտրում են քայլ ձիով: Ու բոլորին ներկայացվում է, թե մարդիկ «այո» են ասել արձանագրություններին: Խայտառակ խեղաթյուրում են իսկությունը:

3059. Այսօր Վրաստանը ինչ ուզում, անում է Ջավախքի հետ՝ օգտվելով նրանից, որ Հայաստանը մեծ կախվածության մեջ է վրացական ճանապարհից:

3060. Եթե չկա ցեղասպանության հարց՝ չկա սփյուռք:

3061. Սահմանի բացումը պետք է ճիշտ օգտագործել. բարոյական հարթությունից հարցը պետք է տեղափոխել քաղաքական դաշտ:

3062. Տնտեսական առումով սահմանների բացումը միանշանակ շահեկան է, իսկ քաղաքական-գաղափարախոսական առումով՝ ոչ:

3063. Սերունդն է փոխվում, ու հնարավոր է, որ Ցեղասպանության հարցը հետագայում այսպիսի սրություն չունենա:

3064. Սահմանի բացումից հետո Հայաստանը կդառնա ներդրողների համար ավելի հուսալի երկիր, քանի որ ավելի կմոտենա Եվրոպային:

3065. Հայը հային չի հասկանում, ինչ մնաց հայը քրդին կամ թուրքին հասկանա:

3066. Ես համոզված եմ, որ Թուրքիայի մեջլիսը չի հաստատելու արձանագրությունները:

3067. Կարսի պայմանագիրը կարդացել են մեզանից 4-ը, հայ-թուրքական հարաբերություններում էլի տասնյակ փաստաթղթեր կան, որոնք չենք կարդացել: Համատարած անգրագիտություն է:

3068. Մենք թուրքական արտադրանքն ավելի քիչ ենք սպառում, քան կարծում ենք. իրականում վախենալու բան չկա:

3069. Մեծ հիասթափություն է ապրում սփյուռքը, որն այս քայլը դիտում է որպես դավաճանություն:

3070. Այսօր Թուրքիայում շատ քիչ մարդ գիտի իրականությունը Ցեղասպանության մասին: Բաց սահմանի դեպքում մենք՝ հասարակ քաղաքացիներս, կարող ենք հենց տեղում բացատրել տեղի ունեցածը:

3071. Սահմանի բացման հարցում մենք չպետք է "ծախենք" ցեղասպանությունը, հանուն տնտեսական օգուտի:

3072. Մեր բյուջեի 60%-ը սփյուռքի միջոցներն ենք և դրանք դեռ կան, որովհետև ցեղասպանության ճանաչման խնդիրը կա:

3073. Այս պարագայում մենք Ցեղասպանության հարցը տեղափոխում ենք պատմական հարթության վրա, որը միանշանակ ուրացում է:

3074. Եթե մի մասը տեղյակ չի արձանագրություններին, չենք կարող ասել՝ լավ է, թե վատ:

3075. Եթե Կարսի պայմանագիրը իրավական հետևանքներ մեզ համար չի ունենա, անվտանգության հարց առաջ չի գա, ապա սահման բացել կարելի է:

3076. Մենք նշում ենք, որ թուրքերը լցնելու են Հայաստանը: Իսկ ի՞նչն է նրանց խանգարում այսօր դա անել:

3077. Այս հարցին պետք չէ նայել հայրենասիրության տեսանկյունից, այլ դիվանագիտության, ինչպես Թուրքիան: Ես նույնիսկ հպարտանում եմ, որ Թուրքիայի պես հարևան ունեմ, որովհետև այդ ազգը լավ մարդասպանից դառավ հմուտ դիվանագետ:

3078. Երբ հարցը վերաբերվում է երկու պետությունների սահմանին, ապա ոչ մի երրորդ կողմ չպետք է մասնակցի այդ հարցի լուծմանը, առավել ևս շահ ունենա:

3079. Երկրորդ սցենարով արժե շարժվել. սահմանի բացումից ոչինչ չի փոխվի: Մենք ոչինչ էլ չենք մոռանա:

3080. Համաձայն եմ, որ բոլորս էլ ուզում ենք խաղաղություն լինի, սակայն հարց է, թե դա կլինի հաշտության պայմանագրով, թե կապիտուլյացիայի կնքումով: Կապիտուլյացիայի համաձայն չեմ:

3081. Ցանկացած դեպքում սահմանի բաց լինելը նպաստելու է Հայաստանում մեծ տնտեսական ներդրումներին:

3082. Իհարկե երկու կողմերն էլ դարեր շարունակ դեռ մնալու են իրենց կարծիքին:

3083. Տնտեսական առումով կողմ կլինեի սահմանի բացմանը, եթե մեր տնտեսությունն այսքան խայտառակ մենաշնորհային չլիներ:

3084. Այս սցենարը մեզ բացարձակապես ձեռնտու չի, որովհետև ոչ քաղաքական, ոչ տնտեսական օգուտներ չենք ունենալու:

3085. Իրականում մեր տնտեսական շահը այդքան էլ ակնհայտ չի. մենք լուրջ խնդիրներ կունենանք թուրքական էժան ապրանքներին դիմակայելու հարցում, ուստի պետք է արհեստականորեն ապահովենք մեր մրցունակությունը:

3086. Կան երկրներ, որոնց սահմանը բաց է, բայց ունեն հողային հարցեր իրենց հարևանների հետ: Դե եկեք փակվենք, մեկուսացվենք ու նստենք:

3087. Սահմանը բացելը կարևոր է, որ մենք ունենանք պատուհան դեպի Եվրոպա: Այն ձեռնտու է երկու պետություններին:

3088. Սահմանի բացումը առաջին հերթին ձեռնտու է Ռուսաստանին, քանի որ հնարավորություն կտա ուղիղ գծով լուծել ռուսական գազի հարցը:

3089. Հավանական է առաջին սցենարը, քանի որ այս ամենը ձևական բնույթ է կրում, ուղղակի ուզում ենք աշխարհին ցույց տալ, որ քաղաքակիրթ ենք:

3090. Այսօր շահեկան չի սահմանի բացումը, որովհետև մենք բացասական սալդո ունեցող պետություն ենք: Եթե որոշ գործատեղեր բացվեն, հետո որոշ ներկրողներ կորոշեն, որ ավելի լավ է ներկրել, այլ ոչ թե արտադրել: Թուրքականը կողողի երկիրը:

3091. Ուրախ եմ, որ սահմանը կբացվի, ու ես կկարողանամ գնալ ու իմ պապենական Մուշը տեսնել:

3092. Թուրքիայի համար տնտեսապես ավելի բարենպաստ պայմաններ են ստեղծվելու, քան Հայաստանի:

3093. Կարող է, չէ՞, առաջին մի երեք տարին միայն տնտեսական կապեր լինեն, իսկ հետո թուրքն առիթից օգտվի ու մտնի մեր կենցաղ:

3094. Ես հարյուր տոկոսով կողմ եմ սահմանի բացմանը, բայց՝ գնահատելով, թե ինչ ենք զիջում:

3095. Ռուսաստանի շահը սահմանի բացման հարցում այն, որ դրանով նա կճնշի Վրաստանին:

3096. Թուրքիան սահմանի բացումով ուզում է ինքնահաստատվի Եվրոպայում:

3097. Կարծում եմ, որ սահմանի բացումը կնպաստի, որ հայերը հեռանան դեպի Թուրքիա:

3098. Հարցի վատ հետևանքները կանխատեսելու համար պետք է հարցին մոտենալ ոչ թե էմոցիոնալ, այլ «պեսսիմիստորեն»:

3099. Թուրքիան փակել է, նա էլ բացելու է սահմանը: Խնդիրը մեր ներքին ուժերը համախմբելու ու երկրի ներսում կարգավորումը ճիշտ ուղղությունով զարգացնելու մեջ է:

3100. Նույնիսկ մեր հաձայնությունից հետո, դեռ հարց կա՝ արդյո՞ք Թուրքիայի մեջլիսը կհաստատի այս փաստաթուղթը:

3101. Սահմանների փակ մնալը վնասում է նաև մեր վարկային քաղաքականությանը:

3102. ԱԺ-ում քննարկումներ են տեղի ունեցել 12 ժամ տևողությամբ, այսօր հայ հանրությունը դիտել է դրա հեռուստատեսային ներկայացումն ու իմացել, որ բոլորը կողմ են սահմանը բացելուն: Սա մանիպուլյացիա է:

3103. Բանակից խուսափողն ա՞ հայրենասեր...

3104. Սահմանը պետք է բացվի, բայց ոչ հիմա:

3105. Թուրքիան երբեք չի անի մի քայլ, եթե իրեն օգուտ չունենա:

3106. Ճիշտ լինելը չի նշանակում, որ այդ ճիշտը ընդունվում է: Հետո ի՞նչ, որ ճիշտ ենք:

3107. Սահման բացելը մենակ տնտեսության համար ա՞...

3108. Սա մի բան է, որ ուզում են կախեն մեր վզից՝ առանց մեզ հարցնելու:

3109. Հայաստանի կենդանիների հիմնական մասը հիվանդանում են սահմանամերձ գոտիներում, քանի որ Թուրքիայում պատվաստումներ չեն կատարվում և դա վտանգներից մեկն է:

3110. Այս տարբերակներից ոչ մեկում չեմ կարդացել, թե ի՞նչ է լինելու, երբ սահմանը բացելուց հետո զինված քրդական զանգվածը հոսի Հայաստան:

3111. Արձանագրությունում առկա են որոշ սահմանումներ, որոնք կարող են մեկնաբանվել ոչ միանշանակ:

3112. Հայ կինն իր բարոյական կերպարով թուրքի հետ անհամադրելի է:

3113. Ցեղասպանության հարցը ընդհանրապես կապված չի սահմանների բացման հարցի հետ:

3114. Այսօրվա մենաշնորհային, կոռումպացված ու աննորմալ տնտեսության պայմաններում ի՞նչ խոսք կարող է լինել տնտեսական հնարավոր զարգացումների մասին:

3115. Առաջին սցենարը մեզ կբերի քաղաքական լճացման:

3116. Կարելի է ասել, որ սա պայքար է ԱՄՆ-ի և Ռուսաստանի միջև, որպեսզի իրենցից մեկը ավելի հզորացնի իր ազդեցությունը այս գոտում:

3117. Վրաստանը սարքեցինք տվինք վրացիներին, Ադրբեջանը սարքեցինք տվեցինք ադրբեջանցիներին, Հայաստանն էլ տանք քրդերի՞ն...

3118. Արձանագրությունը ստորագրելուց հետո Թուրքիան ամեն րոպե հնարավորություն կունենա բարձրացնել ցեղասպանության հարցը:

3119. Երկրորդ սցենարը ոչ թե սցենար է, այլ այն իրական ճանապարհը, որով շարժվում է այսօր Սարգսյանը:

3120. Պահանջատեր լինելու համար սահմանի բաց թե փակ լինելն ի՞նչ կապ ունի:

3121. Թեկուզ և կոռումպացված իրավիճակ է մեր երկրում, այնուամենայնիվ օգտակար է ունենալ ալտերնատիվ ճանապարհ: Բոլորն էլ դրանից կշահեն:

3122. Թռչնի և խոզի գրիպները չհասան Հայաստան միայն նրա շնորհիվ, որ հայ-թուրքական սահմանը փակ էր:

3123. Թուրքական շուկայի համեմատ մեր շուկան շատ փոքր է, նրանք շահագրգռված չեն մեզ հետ առևտուր անել:

3124. Ես սկզբունքորեն կողմ եմ սահմանի բացմանը ու հարաբերությունների հաստատմանը, բայց գինը չափազանց բարձր է:

3125. Երկրորդ սցենարը թերևս ամենաընդունելին է, քանի որ այստեղ նախապայմաններ առկա չեն, սակայն այն ոչ իրատեսական է:

3126. Այս սցենարով մենք մեր ձեռքով ստորագրում ենք մի փաստաթուղթ, որով ասում ենք, թե մենք քսանութ հազար քառակուսի մետր տարածք ունենք ու վերջ:

3127. Վրաստանը Հայաստանի նկատմամբ կիրառում է ամենաբարձր տարիֆները, պետք է ազատվել դրանից:

3128. Գերտերությունները կարծում են, որ Ցեղասպանության ճանաչումը նոր խնդիրներ կառաջացնի, քանի որ մենք մեր ուզածը հստակ չենք ձևակերպում, ավելին, մենք էլ չգիտենք թե ինչ ենք ուզում:

3129. Այս սցենարը աբսուրդ է, որովհետև թուրքին ասում ենք «արի մեզ կեր»:

3130. Թուրքերը կամաց-կամաց գրավում են Բաթումը, թուրքական կապիտալի մեծ ազդեցություն կա: Մենք պետք է առաջինը հարց տանք՝ Հայաստանը պատրա՞ստ է սահմանի բացմանը:

3131. Կողմ եմ սահմանի բացմանը, առանց նախապայմանների:

3132. Ինչ գնով էլ ուզում է լինի, պետք է սահմանը բացենք ու տնտեսապես զարգանանք:

3133. Մենք պահանջատեր ենք եղել մինչև սահմանի փակելը, փակ սահմանով և կլինենք նաև սահմանի վերաբացումից հետո:

3134. Ինձ թվում է, որ այնպիսի զարգացում հանրավոր չէ, որտեղ Արցախի հարցը չքննարկվի:

3135. Թուրքերի ղեկավարության մեծամասնությունը կարծում է, որ Հայաստանը աջակցում է քրդերի զինված պայքարին: Եթե պայմանագիր կնքվի ահաբեկչության դեմ պայքարի մասին, Թուրքիան հնարավորություն կունենա ամեն բան ուղղել մեր դեմ:

3136. Սա երկրի համար ֆորս-մաժորային տարբերակ է, որին պետք է տասնյակ տարիներ պատրաստվել: Իսկ մենք ուզում ենք սա անել ամիսների ընթացքում:

3137. Առաջին սցենարը տնտեսական լճացման կբերի, այն հեչ գրավիչ չէ:

3138. Լավ ասեցիր, վերաբացում... էնպես որ եկեք վերաբացենք նույն պայմաններով, ինչ որ եղել է մինչև սահմանը փակելը:

3139. Իրոք մեր երկիրը այսօր պատրաստ չէ սահմանի բացմանը ո՛չ տնտեսապես, ո՛չ էլ այլ կերպ

3140. Ես ցանկանում եմ վստահել մեր ԱԳ նախարարին, որը նշել է, որ Արցախի հարցը ոչ մի կերպ չի շոշափվելու:

3141. Արձանագրությունները նշում են միայն «տարածքային ամբողջականության» սկզբունքը, իսկ «ազգերի ինքնորոշման» սկզբունքը ընդհանրապես նշված չի: Սա անմիջական վտանգ է ԼՂ-ի հարցում:

3142. Մեր դիվանագիտությունը «Վեց հոգով յոթ երգ ենք երգում» վիճակում ա...

3143. Արցախի հարցը և հայ-թուրքական հարաբերությունները զուգահեռ գործընթացներ են, որոնք երբեք չեն հատվելու:

3144. Մենք ինքներս թուրքերի ձեռքն ենք դնում ոչ թե իրավունքը, այլ պարտավորվածությունը՝ բացելու սահման:

3145. Հիշելով նախորդ տարվա փորձը կարող ենք ասել, որ եթե համաշխարհային շուկայում բենզինի գինը իջնում է 20-30%-ով, իսկ Հայաստանում ընդամենը 20-30 դրամով, ուստի կարող ենք ասել, որ ամեն ինչ օլիգարխների ձեռքում է: Սա նշանակում է, որ սահմանի բացման պարագայում էլ գները կիջնեն չնչին չափով և շատ կարճ ժամանակով:

3146. Ես բացառում եմ սահմանի բացում, եթե այն որևէ կարպ կարող է կապված լինել Ղարաբաղում զիջումների գնալու հետ:

3147. Ի՞նչն է փակում թուրքերի կամ քրդերի Հայաստան գալու ճանապարհը: Որ ուզեց, այսօր էլ սարով կամ Վրաստանով կգա:

3148. Սահմանը բացելը դեռ վաղ է:

3149. Հայ-թուրքական սահմանի բացումը տարածաշրջանի ամենամեծ գլոբալ հարցն է: Սա շատ կարևոր հարց է և ոչ միայն մեր համար:

3150. Եթե մենք այլևս կախված չլինենք Վրաստանից, մենք կարող ենք սպասել հարմար պահի և բարձրացնել Վրաստանի հայերի հարցը:

3151. Մենք չենք որոշելու բացել-չբացելու հարցը, ես ցանկանում եմ ուղղակի հասկանալ, այս հարցը որևէ կերպ առնչվելու՞ է Արցախի հարցի հետ:

3152. Ենթադրենք, Թուրքիան ճանաչել է Ցեղասպանությունը, ընդունել է Սևրի պայմանագիրը, ու մենք ունենք 160000 քառ. մետր տարածք, որտեղ ապրում է 20 միլիոն քուրդ, 5 միլիոն թուրք, 3-4 միլիոն հայ. ի՞նչ է լինելու այդ երկրի անունը:

3153. Սահմանի բացումով ՌԴ-ն մեզ հանձնում է ուրիշ տերերի:

3154. Շատ հնարավոր է, որ Թուրքիան նվիրի մեր հողերը և դրա հետ միասին 7 միլիոն քրդերին, որպեսզի Հայաստանի կանգնի ավելի բարդ խնդրի առաջ:

3155. Մենք ունենք արտահայտություն՝ «տարածքային ամբողջականություն», որն անուղղակի կերպով առնչվում է Արցախի հարցին:

3156. Եթե մենք 300 տարի պարսիկի լծի տակ ենք ապրել, հիմա դա մոռացել ենք ու նորմալ ապրում են իրենց հետ, նույնն էլ թուրքի հետ. սահմանի բացման դեպքում ժամանակի ընթացքում Ցեղասպանությունն էլ կմոռացվի:

3157. Մեր կառավարությունը ասում է, որ զիջումներ չենք անելու, իսկ տեքստը այլ բան է ասում:

3158. Հարկավոր է, որ մենք որոշ ժամանակ լռենք, բայց չկորցնենք մեր պահանջատիությունը և քայլ առ քայլ լուծենք մեր խնդիրները:

3159. Եթե դու մի պետության հետ սահման ես բացում, ապա պետք է ընդունես նրա հետ ունեցած սահմանդ:

3160. Արդյոք մեր իշխանությունները հնարավորություն են տալիս սփյուռքին դեմ գնալ իրեն:

3161. Առաջ Ցեղասպանության հարցը միջազգային հարթակում դրված չէր, այն զիջելու խնդիր չկար, իսկ հիմա կա՞:

3162. Մենք կարծում ենք, որ եթե ամեն մեկս մեր շահի մասին մտածի, ամբողջի շահը կկառուցվի. հերիք է, ժամանակն է հասկանալ, որ ամբողջի շահի մասին մտածելով կօգտվի նաև անհատի շահը:

3163. Հայ գյուղացի էլ չի լինելու, հենց սահմանը բացվի գյուղացին գնալու է Տրապիզոն առևտուր անելու, առանց այդ էլ մենք հողի գործ չենք սիրում:

3164. Մենք, թեկուզ և փակ սահմաններ ունենք ու մեկուսացված ենք, այնուամենայնիվ այդ գնով հասել ենք ինչ-որ արդյունքների մեր շահերը պաշտպանելու տեսանկյունից: Ու պետք չէ այս ամենը կորցնել:

3165. Մինչև հիմա Կանադան չի ճանաչել ԱՄՆ-ի սահմանը, Ռուսաստանը չի ճանաչել Ճապոնիայի սահմանը, բայց վա՞տ են ապրում իրար հետ:

3166. Այո, առևտրական հարաբերությունները շատ օգտակար են, բայց կան շատ այլ վտանգավոր հարցեր:

3167. Այս սցենարով այն, ինչ ձեռք են բերել մեր հայրերն ու պապերը մենք տանուլ ենք տալիս:

3168. Միակ պարագան, որ կարող է կանխել փաստաթղթի ստորագրումը դա կամ նախագահի և նախարարի մահն է, կամ էլ 3 միլիոնի միավորվելը և դեմ կանգնելը:

3169. Մենք թուրքի ձեռքին խամաճիկ չենք... բայց մենք սա վախենում ենք խոստովանել ու բարձրաձայնել:

3170. Լինի տնտեսական, թե քաղաքական հարթությունում, սահմանների բացումը միանշանակ դրական երևույթ է:

3171. Մենք տասնութ տարի ապրում ենք փակ սահմաններով, բայց չենք կորել:

3172. Պետք չի այս վերջին 10 տարվա ապաշնորհ կառավարման պատճառով մենք սկսենք կորցնել ինչ-որ բաներ հանուն հարաբերությունների հաստատման:

3173. Ցեղասպանության հարցի համար արածն ա ափսոսս գալիս:

3174. Մեր քննարկածին շատ քիչ են նայելու, ցավոք:

3175. Այսօր մեր իշխանությունները տեսան, որ հայերը պատրաստ են «մի կտոր հացի համար» մոռանալ և՛ ցեղասպանությունը, և՛ հողերը:

3176. Երկրորդը նախընտրելի սցենարն էր, իսկ երրորդը ամենահավանական:

3177. Վրաստանը հինգ օր էլ պատերազմ անի, մի ամիս էլ, մենք կգտնենք մեր պաշարները թե՛ վառելիքի, թե՛ սննդի:

3178. Պետք չի հրահրել նոր պատերազմ, որ մեր բնակչությունը նորից պակասի: Հազիվ խաղաղ ենք ապրում, եկեք խաղաղ ժամանակաշրջանի քաղաքականություն վարենք:

3179. Թուրքերը ինչ ուզեն անցկացնելու են ու կարողանալու են մեր դիվանագետներին համոզել, որ դա մեր ուզածն ա:

3180. Ժողովուրդ, սահմանը կարող է բացել, երկու օր հետո էլ փակել: Ու մենք խոսում ենք մի բանի մասին, որի վրա ազդելու ոչ մի հնարավորություն չունենք:

3181. Եթե որևէ դիվանագիտական փաստաթուղթ չեղյալ հայտարարվի, դա կարող եք անել միակողմանի:

3182. Եթե թուրքերը կարողացել են հզոր Պարսկաստանի տնտեսությունը գրավել, ապա Հայաստանի մասին խոսելն ավելորդ է:

3183. Մենք ավելի շատ բան ունենք կորցնելու, քան թուրքերը:

3184. Ստատուս քվոյի պահպանումը այսօր ձեռնտու է նրանով, որ եթե Սարգսյանը արձանագրությունները չստորագրի էլ, Եվրոմիությունը վաղը ստիպելու է Թուրքիային բացել սահմանը:

3185. Ժողովուրդ, հիմա սահմանն իրականում բաց է. խոսքը գնում է պաշտոնապես այդ բաց լինելը հաստատելու մասին. վե՛րջ:

3186. Մեր ազգը օտարասեր է, սահմանի բացումից մոտ 200 տարի հետո կձուլվենք:

3187. Մեր դիվանագիտությունը անընդհատ պարտվում է:

3188. Վրաստանը շահում է, որովհետև գիտի՝ մեր միակ ճանապարհն է: Հետևաբար սահմանը բացելուց գոնե փոքր տոկոս կշահենք:

3189. Սահմանի բացումը կամ փակումը չի կարող ազդեցություն ունենալ Ղարաբաղում հաստատված զինադադարի վրա:

3190. Շատ մեծ զգուշություն է հարկավոր, իսկ մենք այդ զգուշությունը չունենք:

3191. Եթե մեջլիսը դեմ քվեարկի սահմանի բացմանը, դա կլինի մինուս իրենց համար, իսկ եթե Հայաստանի պառլամենտը չստորագրի, դա կլինի արդեն շատ մեծ քաղաքական մինուս Հայաստանի համար:

3192. Ես պարսկահայ եմ և վստահ եմ, որ սահմանի բացումը շատ, մեծ վտանգ ունի:

3193. Երրորդ սցենարում Թուրքիան Արցախի գործոնը կօգտագործի որպես հաղթաթուղթ:

3194. Օբամայի խոսքը Ստամբուլում այնքան հայանպաստ էր, որ անհասկանալի էր, թե ինչու՞ առաջացավ այս արձանագրությունների ստորագրման անհրաժեշտությունը:

3195. Պետք չէ վազել փողի հետևից, մենք վտանգ ունենք:

3196. Հենց հիմա ԱՄՆ-ն ուզում է բացել սահմանը ու գազամուղը անցկացնել Հայաստանով:

3197. Մեր սխալն այն է, որ նստած գցում-բռնում ենք, թե Թուրքիան ինչի ա սահման բացում-փակում, փոխանակ մտածենք մեզ ինչ ա պետք, ինչ ենք ուզում... Ցավոք, վերևներում էլ են էս կերպ մտածում:

3198. Թուրքիան հաստատ դիվանագիտորեն կճնշի մեզ, որ զիջումների գնանք Ղարաբաղի հարցում: Բայց ռեալ կյանքում դա չի իրականացվի: Անկախ ամեն ինչից, հենց Ադրբեջանը զգաց, որ ռազմականորեն մեզանից առավել է, կսկսի պատերազմը մեր դեմ:

3199. Հայաստանցի հայերը շատ շուտ են ձուլվում, դա մեծ վտանգ ունի իր մեջ:

3200. Եթե սա լիներ երկկողմ փոխզիջում՝ գոնե լավ կլիներ, բայց հիմա միայն զիջում ենք, զիջում ենք, զիջում ենք...

3201. Ամենալուրջ խնդիրը՝ դա հանձնաժողովի ստեղծումն է, քանի որ դա մեր դեմ կհանի ամբողջ աշխարհի այն երկրներին, որոնք ընդունել են ցեղասպանությունը:

3202. Երրորդ սցենարը ֆորս-մաժորային է:

3203. Եթե մենք քաղաքականապես չենք շահում, սահմաններ պետք չի բացել:

3204. Պետությունը կարգավորելու հսկա դաշտ ունի:

3205. Թուրքական էքսպանսիայից պետք է վախենալ, որովհետև մենք թուլամորթ ազգ ենք:

3206. Մեր նպատակը գոյատևելը չի լինելու, մեր նպատակը մարդավարի ապրելն է:

3207. Որ պահին որ մեր ԱԺ-ն սկսի «բազար անել» արձանագրության որևէ կետի համար, թուրքերը հրաժարվելու են:

3208. Ցանկություն չկա տեղում դոփելու:

3209. Հայաստանում իշխանությունը լեգիտիմ չի, այդ պատճառով էլ Սերժի վրա ազդելու լծակներ շատ կան: Ու նա մեր շահերը լավագույն պաշտպանը չի:

3210. Հնարավոր է մեջլիսը չվավերացնի փաստաթուղթը մինչև տարվա վերջ, բայց նա անպայման կանի դա մինչև ապրիլ, որպեսզի կրկին անգամ Օբամային հետ պահի «ցեղասպանություն» բառը արտասանելուց:

3211. Ես զարմանում եմ մեր երիտասարդության օպտիմիզմի վրա ու մեր ժողովրդի կարճ հիշողության վրա...

3212. Մեր մեջ սերմանված է սերը դեպի հաճույքն ու փառքը

3213. Օլիգարխը դեռ ստանալիք ունի Սերժ Սարգսյանից, ում իշխանությունը հաստատելու ու պահելու համար որոշակի ծառայություն է մատուցել: Հետևաբար՝ ամեն բան կախված կլինի անհայրենիք ու անազգ այդ բիզնեսմեններից:

3214. Համաձայնագիր կա, որի տակ ստորագրել է Թուրքիան և որը նախատեսում է երրորդ երկրին մուտք ապահովել դեպի ծով: Մենք ինչու՞ չենք կարողանում օգտագործել այդ համաձայնագիրը:

3215. Մենք ավելի շատ ենք ատում թուրքին, քան նրանք մեզ:

3216. Կողմերը, եթե հաստատում են սահմանները ու եթե այս դրույթը մնում է արձանագրություններում, ապա դրանք վավերացնել չի կարելի:

3217. Մենք ունենք ընտրության երկու հնարավորություն. վատ կամ ավելի վատ:

3218. Այսօր մենք նեղացրել ենք սփյուռքին, իսկ մեր եկամուտների հիմնական մասը գալիս է հենց սփյուռքից: Այսուհետ սփյուռքը կզրկի մեզ իր օգնությունից:

3219. Այդ ինչքա՞ն ես քո մեքենայով բենզին բերելու, որ ապահովես պահանջներդ: Իհարկե՝ քիչ: Ու պարբերաբար գնալ-գալու դեպքում քեզ հանգիստ կմեղադրեն մաքսանենգության մեջ:

3220. Քաղաքական ասպարեզում մենք ոչ մի դեպքում չպետք է վճարենք «Ցեղասպանություն» գինը:

3221. Մենք այսօր իրական շրջափակման մեջ ենք. երկու սահմանը փակ են, Իրանի հետ սահմանը չի կարող բաց համարվել, որովհետև շատ սահմանափակումներ կան, Վրաստանն էլ՝ Ռուսաստանի հետ խնդիրներ ունենալու պատճառով վստահելի չէ:

3222. Ես ուզում եմ, որ թուրքերը հետ տան մեր հողերը և ճանաչեն ցեղասպանությունը:

3223. Սահման բացելուն ես դրական եմ վերաբերվում. եթե հայապահպանությունը տեսնում ենք կղզիացվածության մեջ, ապա շատ թույլ ենք:

3224. Հայաստանում բացարձակ մենաշնորհ չկա:

3225. Հայաստանը կարող է դառնալ տարանցիկ երկիր թմրանյութերի առևտրում:

3226. Պետք չէ հայերի համար բուսաբանական այգի ստեղծել, պետք է հակազդեցության միջոցներ ու մեխանիզմներ ստեղծել:

3227. Հայ-թուրքական սահմանի բացումը, եթե աբստրահվենք այն փաստից, որ ես հայ եմ, կարող է բերել նոր չինական տնտեսական հրաշքի: Դրա վերաբերյալ լուրջ տնտեսագիտական հաշվարկներ կան: Բայց չի կարելի ջարդել մեր քաղաքական ողնաշարը ու դառնալ ինչ-որ մեկի տնտեսական կցորդը:

3228. Եթե թուրքը ցանկանում է ապրել հայ աղջկա հետ, նա հիմա էլ կարող է գալ և տանել այդ աղջկան: Դրա համար բաց և փակ սահման չկա:

3229. Եթե սահմանը բացվի, եվրոպական երկրներն ավելի լուրջ կվերաբերվեն մեզ...

3230. Պետք է Հայաստանում ներքին կյանքում այնքան բան փոխել, որ մենք պատրաստ լինենք, այս ամենը ճիշտ հուն մտնի:

3231. Մենք չպետք է հետ կանգնենք մեր դիրքերից, պետք է բացենք ու ստորագրենք երկկողմ պայմանագրեր:

3232. Միջազգային հանրության աչքերում վարկ ձեռք բերելու համար պետք է նախ և առաջ մարտի մեկ չլիներ:

3233. Եթե մենք մի փոքր ազնիվ լինենք մեր առջև, պետք է խոստովանենք, որ առաջնայինը մեր անհատական կենսամակարդակն է, մեր ապահովվածությունը:

3234. Հայերի մոտ կխոսի արյան կանչը և հայ աղջիկները չեն ամուսնանա թուրքերի հետ:

3235. Հիմա ես համոզված եմ, որ ժողովրդի 60%-ը թքած ունի ամեն ինչի վրա. թուրքը կգա, պարսիկը կգա, ինձ ի՞նչ:

3236. Պետք է մտածել մեր միջազգային վարկի և համբավի մասին, պետք է ստորագրել արձանագրությունները:

3237. Ես չեմ վստահում մեր ոչ լեգիտիմ իշխանությանը այս հարցում:

3238. Սցենարներից մեկի անունը քայլ ձիով է: Ի՞նչ քայլ ձիով, երբ որ մենք ուղղակի պեշկա ենք:

3239. Ո՞վ եմ ես, որ յոթ միլիոնանոց Սփյուռքին ասեմ .«Մոռացեք ձեր պահանջատիրությունը»

3240. Պարզ է մի բան, որ մենք այսօր չունենք ուժեղ երկիր, իսկ Թուրքիան բավականին ուժեղ է: Այն խնդիրները, որոնք մենք հիմա ունենք դա միայն թույլ երկրի հետևանք է:

3241. Ամբողջ Սփյուռքը դեմ է, ես էլ եմ դեմ...

3242. Ինչ-որ մեկը ճիշտ է ասել. զենք տուր հային, ու իրենք իրար կսպանեն:

3243. Ինչպես կարելի է մի երկրի լուրջ վերաբերվել, որի հետ չես շփվում... չի կարելի կաղապարված մտածել:

3244. Ախր էտ սահմանները պետք ա պահել է:

3245. Չի կարելի առևտուրը և Անթալիայում հանգստանալը քաղաքականացնել:

3246. Քուրդն էժան աշխատուժ ա. կգա, էստեղ մեր ձեռից աշխատանքը կխլի, ավելին՝ իրենց կրթական հարցերը էլի կլուծեն մեր հաշվին:

3247. Ես կարծում եմ, որ սահմանը հիմա պետք չի բացվի. մեկ ա, էդ շորերը կամ մնացած թուրքական ապրանքները «սենց թե նենց» հասնում են Հայաստան:

3248. Իմ կարծիքով սահմանների բացումը միայն ԱՄՆ-ի շահն է, իսկ Ռուսաստանը ընդհանրապես դուրս է մղվում տարածաշրջանից:

3249. Սահմանի բացումը Հայաստանին տալիս է նոր շուկա, քանի որ Թուրքիայի սահմանամերձ գոտիները բավականին հետամնաց են:

3250. Իրականում միջազգային հանրությանը կոնֆլիկտներ պետք չեն այս տարածաշրջանում. Կովկասը Եվրոպային միասնական է պետք:

3251. Այսօր մարդիկ քարոզում են չհանգստանալ Անթալիայում, սակայն երեկոյան թուրքիայից բերած շաքարավազով թեյ են խմում: Չի կարելի ամեն ինչ քաղաքականացնել:

3252. Մեր պառլամենտում գրաճանաչ մարդիկ անգամ քիչ են, վաղը մյուս օրը դրա թիկնապահը կմտնի պառլամենտ: Մեզ նման բռնապետական երկրում փորձ են անում ազգայնական կոչերով բոլորին հիմարացնել:

3253. Եթե նոր հնարավորություններ բացվեն, խոշոր բիզնեսը կսկսի մրցել ինքն իր հետ:

3254. Ռուսաստանը մեր տնտեսության 70%-ի տերն է, տնտեսապես նրան ձեռնտու է, իսկ քաղաքական առումով՝ ոչ:

3255. Հայաստանում, մեր մեջ ավելի շատ «թուրքեր» կան : Մենք պետական պաշտոնյաների մեջ չունենք հայրենասեր ու անձնազոհ մարդիկ, որոնց շնորհիվ հզոր պետություն ստեղծվի:

3256. Մեզ երաշխիքներ են անհրաժեշտ սահմանի բացման հետ կապված, օրինակ տնտեսական աճի վերլուծություններ:

3257. ԱՄՆ-ն էլ է ուզում ազատվել Ապրիլի 24-ից...

3258. Մենք իրար չենք կարողանում լսել, տաս հոգով նստած ենք... Թուրքին ե՞նք լսացնելու կամ լսելու...

3259. Մենք նայելով մեր քաղաքական գործիչներին՝ չունենք սովորելու ոչ մի բան:

3260. Մենք պետք է տարբեր երաշխիքներ ունենանք, դա բնական է ու ճիշտ է: Բայց հարցը նրանում է, որ մենք հայերով հիմա հավաքված, տարբեր կարծիքներով, միևնույն է վերջում չենք կարողանալու ընդհանուր հայտարարի գալ:

3261. Մենք պետք է փորձենք շփվել, ճանաչել միմյանց: Բաց սահմանները տալու են այդ հնարավորությունը:

3262. Թուրքը չի կարող գալ ու բիզնես անել այստեղ, որովհետև ինչպես մյուսներին, սրանք էլ կասեն՝ բեր բիզնեսիդ 30 տոկոսը մեզ տուր: Կհամաձայնվի՝ կաշխատի, չէ՝ հնարավորություն չեն տա:

3263. Այս սցենարով, ինչպես միշտ, Ռուսաստանը խաղալիքի նման է օգտագործելու մեզ:

3264. Մեծ գերտերությունը, որ պիտի ինչ-որ բան պոկեր Հայաստանից, արդեն պոկել է: Էլ ոչ մի վերցնելու բան չկա:

3265. Մենք պետք է օգտագործենք հնարավորությունները և օրինակ ճիշտ օգտագործենք ինֆորմացիոն պատերազմը:

3266. Մեր իշխանավորների մի մասը թուրքից չեն տարբերվում: Եթե նրանց տանում ենք թուրքերին էլ կտանենք:

3267. Ռուսաստանը այս քայլերին գնում է, որպեսզի կարողանա ազդեցություն ունենալ նաև Թուրքիայի վրա:

3268. Կշեռք չունենք, որ շահ ու չշահ չափենք... այս պարագայում կշեռքը դիվանագիտությունն ա:

3269. Սահմանի բացումը շատ խորը պրոբլեմ ունի, Թուրքական էքսպանսիան շատ վտանգավոր է:

3270. Այս սցենարով մեր շահերը, մեր խնդիրները հետին պլան են մղվում:

3271. Մենք այնքան կանք, որ կարող ենք մեր շահը ունենալ և ձևակերպել:

3272. Այսօր մեր գերխնդիրը Ցեղասպանության հարցն է. պատմական հանձնաժողով ստեղծելով մենք ինքներս կասկածում ենք... Պատմական հանձնաժողովը պետք է հայ-թուրքական սահմանները որոշելու համար:

3273. Թուրքիայում օրենքով արգելված է սահմանված չափից ավելի հող գնել: Իսկ մենք նման օրենք չունենք: Մեծահարուստ թուրքը կգա ու մի ամբողջ մարզ կգնի:

3274. Հիմա էլ, միշտ էլ մենք պարում ենք գերտերությունների, մասնավորաբար Ռուսաստանի, դուդուկի տակ : Նույնն էլ հինգերորդ սցենարի մեջ է գրված ապագայի մասով:

3275. Ճանապարհ դեպի Եվրոպա. վերջ, սա է մեզ պետք, ինչը կարող ենք «չերեզ Թուրքիա» անել:

3276. Երկուսի կռվում միշտ էլ երրորդը շահում է: Պարզից էլ պարզ է, որ Ռուսաստանը շահում է:

3277. Եթե ԱՄՆ-ը հիմա կարողանում է իր ցանկությունը թելադրի Թուրքիային, ապա եթե սահմանի բացումից հետո ԱՄՆ-ի շահերը ավելանան՝ նա ավելի շատ կարող է ճնշել Թուրքիային:

3278. Ես ողջունում եմ այն սցենարները, որոնք ենթադրում են Ցեղասպանության հարցի հետագա քննարկումը:

3279. Ի՞նչ վատ բան կա, եթե Ռուսաստանը զարգանա ու շահի: Ինսուլիններից սկսած որքան Ռուսաստանն է առաջ գնացել, այնքան էլ մենք ենք գնացել:

3280. Մենք ինքներս մեզ թերագնահատում ենք , մենք ավելի մեծ պոտենցիալ ունենք, պարզապես չենք կարողանում ներկայանալ:

3281. Մենք չունենք լեգիտիմ իշխանություն, այդ պատճառով էլ մեզ կարողանում են ստիպել գերտերությունները:

3282. Հերիք է հա Հայաստանին փնովենք:

3283. Ուրիշի փորձի վրա դժվար է սովորել:

3284. Այստեղ պետք է եռակողմ պայմանագիր. Հայաստան, Թուրքիա, Ադրբեջան: Իսկ երկկողմ՝ միայն դիվանագիտական հարաբերություններ ու վե՛րջ:

3285. Մենք պետք է հասկանանք թե ինչպիսի փոխհատուցում ենք մենք ուզում ցեղասպանության համար՝ բարոյական թե ֆինանսական: Օրինակ, եթե ես թուրք եմ տեսնում, ես ցանկանում եմ, որ նա ներողություն խնդրի իմ պապերի համար:

3286. Մի մտածեք, թե հայերիս հետ է հեշտ գործ բռնել: Մենք էլ ուրիշի համար ենք բարդ:

3287. Հիմա պետք է գնալ և ասել, որ հասարակությունը ոտքի է ելել, որ չստորագրվի: Սա է ելքը: Մենք դա կարող ենք:

3288. Հնարավոր չի, որ Հայաստանն ու Ռուսաստանը հավասար չափով շահեն:

3289. Մարդիկ կան ասում են. «եկեք սահմանը բացենք, մի քիչ զարգանանք, հետո ամուր դիրքերից խոսենք Թուրքիայի հետ մեր բոլոր խնդիրների վերաբերյալ», բայց չեն պատկերացնում, որ Թուրքիան այնքան հզոր է, որ մենք երբեք նրա հետ հավասար չենք կարող լինել:

3290. Հինգերորդ սցենարը ուտոպիա է...

3291. Իսկ ռիսկ չի՞, որ քրդերը գան մեզ մոտ, հետո հայաստանի տարածքը որակվի որպես քրդական բազա ու մեզ ռմբակոծեն:

3292. Եթե միջազգային հանրությունը ճանաչում է սահմանը, ապա կսառեցվի ցեղասպանության հարցը:

3293. Մենք թուլացնելու ենք մեր կախվածությունը Վրաստանից:

3294. Եվրոպային ու ԱՄՆ-ին իհարկե շատ է ձեռք տալիս սահմանների բացումը:

3295. Մեզ հիմա անհրաժեշտ է շատ հզոր դաշնակից, որպեսզի մենք միավորվենք Թուրքիայի դեմ:

3296. Մեր տնտեսության մեջ ներդրումները անմիջականորեն ազդելու են մեր կենսամակարդակի վրա, ու մեր թոշակառուները չեն սպասի դրսից եկած գումարներին:

3297. Հայաստանը նմանեցնում եմ մի փոքրիկ երեխայի, որին ամեն անգամ լացելիս, երբ կոնֆետ են տալիս, լռում է: Մենք միշտ հույսներս դնում ենք ուրիշի վրա, հավատում ու վստահում ենք նրանց: Պետք է մենք լինենք մեր գլխի տերը ու հույսներս էլ դնենք միայն մեր բազկի վրա:

3298. Մենք կարող ենք հինգերորդը իրականություն դարձնել, երբ դանակը ոսկորին հասնի: Իսկ հիմա մենք չենք գիտակցում, որ այդ իրավիճակում ենք:

3299. Բիզնես շահն իհարկե ազդում է մեր ու վրացիների հարաբերությունների վրա: Նույնը կլինի հայ-թուրքականի դեպքում:

3300. Մենք հաղթող ենք պատերազմում, բայց մեզ պահում ենք պարտվողի նման...

3301. Սահմանի բացումը մեզ միայն տալիս է մի փոքր տնտեսական զարգացման հնարավորություն, փոխարենը մենք դառնում ենք խամաճիկ Թուրքիայի ձեռքում:

3302. Այս տարածաշրջանում մենք միակ քրիստոնյա պետությունն ենք ու Ռուսաստանի համար միակ ելքն ու դարպասն ենք:

3303. Եթե մենք համախմբված լինենք, բաց սահմանի դեպքում Թուրքիան ոչնչով էլ մեր վրա բացասական ազդեցություն չի կարող ունենալ:

3304. Շահողը հայտնի է՝ Թուրքիան: Մենք ոչինչ էլ չենք շահում:

3305. Պարտվողի սինդրոմը մի կողմ դնենք, բայց դատարկ տեղը գելի սի՞րտ ուտենք ու վերցնենք առանց զենքի պատերազմ գնա՞նք:

3306. Իրականությունն այն է, որ այսօր մենք ինչ ունենք-չունենք, տվել ենք Ռուսաստանին: Հիմա նստել ենք, ասում ենք բազար անե՞նք Ռուսաստանի հետ:

3307. Ելնելով ներկա հայ-թուրքական հարաբերություններից և արձանագրությունից, հինգերորդը անհնար է:

3308. Հայաստանը երբեք էլ հայանպաստ պետություն կամ քաղաքականություն չի ունեցել. իշխանություն միշտ էլ հետապնդել է իր շահերը:

3309. Չի բացառվում, որ մի օր Թուրքիայի քաղաքացիները, նույնիսկ նախագահը գան և խոնարհվեն ցեղասպանության զոհերի հիշատակի առջև:

3310. Ես համոզված եմ, որ երբ սահմանը բացվի, մոտ երկու տարի մենք մեզ լավ կզգանք: Բայց ի՞նչ կլինի հետո:

3311. Հայաստանն ապրում է տրանսֆերտների հաշվին: Իսկ նման զարգացումների դեպքում սփյուռքի հետ մեր հարաբերությունները կվատանան ու այդ գումարներն էլ չեն մտնի Հայաստան:

3312. Եթե քաղաքականությամբ զբաղվեն քաղաքական գործիչները, հինգերորդը կլինի իրատեսական: Մեզ մի հատ թեթև իշխանափոխություն է պետք...

3313. Հինգերորդ սցենարը հնարավոր կլինի, եթե մենք դառնանք Հիսուս Քրիստոս:

3314. Կկտրվի Հայաստան-Սփյուռք կապը, բարոյական հարթության մեջ մենք լուրջ խնդիրների առաջ կկանգնենք:

3315. Սա ազգային խնդիր է, հիմա պահն է, որ ոտքի կանգնենք: Կողմ եմ սահմանի բացմանը, սակայն առանց նախապայմանների: Չի կարելի հիմա սահմանը բացել:

3316. Մեր տարածաշրջանում Ռուսաստանը կորցրել է Վրաստանին, Ադրբեջանի հետ հարաբերությունները հեղհեղուկ են: Մենք կարող ենք օգտվել մեր «մենաշնորհային» դիրքից՝ Ռուսաստանին առաջադրելով մեր պայմանները:

3317. Մենք պետք է խելոք, լուրջ քննարկենք մեր տնտեսական քաղաքականությունը:

3318. 94-ին պետք չէր հաշտության համաձայնագիր ստորագրել, պետք էր հասնել Բաքու ու ստորագրել կապիտուլյացիա:

3319. Սահմանները չենք բացում, պետք է ճիշտ տերմինոլոգիա օգտագործել՝ ապաշրջափակվում ենք:

3320. Այսօր շատ մեծ թվով հայեր առևտուր են անում Թուրքիայի հետ, գնում են հանգստանալու և դա միայն հանդուրժողականության արդյունք է, այսինքն թուրքերը բավականին փոխվել են հիմա:

3321. Սփյուռքն այսօր է արդեն ցույց տալիս, որ, եթե այսպես զարգանան իրադարձությունները, սփյուռքը կմասնատվի ու մեր կորուստն անհաշվելի կլինի:

3322. Ասում են չէ՞. «դու քո պատիվը գետնին մի տուր, մյուսներն էլ քեզ կհարգեն»:

3323. Մեզ մոտ իշխանության ու ժողովրդի կապն է խզված:

3324. Մի համոզի, եթե սահմանը բացվի, վտանգն ավելի կմոտենա ինձ:

3325. Եթե Էրդողանը հայտնվի Ծիծեռնակաբերդում, դա արդեն մեծ առաջընթաց կլինի:

3326. Մեր ամենամեծ թշնամին անգրագիտությունն է, մենք տեղեկացված ու զարգացած չենք:

3327. Լինելու բանը մի անգամ ա լինում, ուզում ա սահմանը բաց լինի, ուզում ա՝ փակ:

3328. Հարաբերությունների հաստատումը այս արձանագրություններով հակասում է մեր Սահմանադրությանն ու Անկախության Հռչակագրին:

3329. Եթե հայերը հողերի հետ ստանան նաև այդքան թվով քրդեր, ապա մենք անմիջապես կձուլվենք նրանց և կկորենք:

3330. Մեր այսօրվա կառավարության դեպքում մենք չենք կարող կատարել քայլ ձիով:

3331. Այսօր տեղի է ունենում այն սցենարը, որ Թուրքիան ասում է. «զորքերդ հանի հինգ շրջաններից, սահմանը կբացեմ, չես հանի՝ չեմ բացի»:

3332. Ես իմացել եմ, որ Ցեղասպանության ճանաչումը վաղեմության ժամկետ չունի: Ցավն ու կորուստը չեն կարող անցնել:

3333. Եթե Էրդողանն իմանա, որ ծաղկով կպրծնի, հենց էսօր կգա ու ծաղիկ կդնի:

3334. Ինչի՞ հաշվին պետք է տեղի ունենա հինգերորդ սցենարը:

3335. Ռուսական բազան ամբողջ տարածաշրջանն ա պահում. մեզ լավ ա, որ էս պահին մենք էդ ուժի հետ ենք:

3336. Սփյուռքի հանգանակությունը անգամ ԱՄՆ օգնության չափ չի կազմում, իսկ այսօր այդ սփյուռքը նախագահի առջև ցույցեր է կազմակերպում:

3337. Սփյուռքը մեր «խլամ» դիվանագիտության վիճակը մի կերպ շտկում է, պատկերացնո՞ւմ եք, եթե հարաբերությունները սրենք, ինչ կլինի մեր վայ դիվանագիտության վիճակը:

3338. Ախր մենք շատ հյուրասեր ձևով ընդունել ենք թուրքի, հաց կիսել նրա հետ, իսկ նրանք նույնիսկ Բուդապեշտում են մեզ մորթել:

3339. Եթե մենք ինքներս իմանանք , թե ինչ ենք ուզում թուրքերից, ապա կբացենք սահմանն ու կկարողանանք ճիշտ որոշումներ կայացնել ու օգուտներ քաղել:

3340. Մենք ուզում ենք ապացուցել առյուծին, թե ինչ բան է ճիշտը:

3341. Սերժ Սարգսյանին «մեշոկով» փող տան, կարող է և հանձնի Արցախը, սակայն ինքը ժողովուրդը կկանգնի, արցախցին իր հողը չի տա:

3342. Սահմանի բացումը և հարաբերությունների բարելավումը պետք է քննարկվի միմիայն ցեղասպանության ընդունումից հետո:

3343. Ես որպես վեցերորդ սցենար առաջարկում եմ. սահմանը բացվում է, ու հաջորդ օրը փակվում է, եթե զորքերը չենք հանում: Էս տղեն, որ բանակցում ա, մանդատ չունի: Մեկին ուղարկենք, որ գոնե մանդատ ունենա:

3344. Այս տարբերակում մենք կշահենք տնտեսապես, միաժամանակ մենք կշարունակենք մեր պահանջատիրությունը առաջ տանել:

3345. Հիմա էլ են գնում, է՛, թող գալարապտույտ շրջոլորաններով գնան, ոչ ուղիղ ճանապարհով:

3346. Հինգերորդ սցենարը Գյուլնազ տատի ժանրից է:

3347. Ադրբեջանն արհեստականորեն ձևավորում է ու հավաքում իր սփյուռքը՝ հասկանալով, թե ինչ ուժ է դա:

3348. Սահմանի բացումը Հայաստանին օգուտ է, սակայն պետք չէ կարծել, թե բոլորը անմիջապես հարստանալու են և հանուն դրա մոռանալ ցեղասպանությունը:

3349. Ոնց նախագահը «բլից» գնաց արտասահման, էդպես «բլից» էլ մենք ենք քննարկվում:

3350. Ի՞նչ վատ բան կա թուրք խոհարարի մեջ:

3351. Ո՞նց ենք մենք հակակշռում Թուրքիայի հզոր տնտեսությանը՝ այծի պանրո՞վ:

3352. Ցեղասպանություն էն թեման է, որից ոչ մի պայմանով մենք չենք կարող հետ կանգնել:

3353. Ես չէի ուզենա, որ այս հարցը հանրաքվեի դրվեր, քանի որ նորից կեղծիքի ենք ականատես լինելու:

3354. Աբսուրդ է հավատալ, որ Թուրքիան կարող է բարեկամ երկիր դառնալ:

3355. Սփյուռքը փողն ուղարկել է Լևոնի օրոք, Քոչարյանի օրոք, Սերժի օրոք, վաղը Վահանի, մյուս օրը՝ Էդոյի...

3356. Եթե նույնիսկ կես տարով մի կողմ դրվեց ցեղասպանության հարցը, ապա դա մոռացվելու է, քանի որ այսօրվա սերունդը այլևս լավ չի պատկերացնում գրեթե մեկ դար առաջ կատարվածը:

3357. Թուրքը ոտքիդ տակ կընկնի, բայց վեր կկենա, գլուխդ կջարդի:

3358. Սփյուռքը դեմ չէ սահմանի բացմանը, այլ դեմ է այս գնով սահման բացելուն:

3359. Ամենաճիշտը կլիներ, եթե լուծեինք առավել ակտուալ խնդիրները, օրինակ Ղարաբաղի հարցը: Այսինքն , պետք է նախապայմաններ ստեղծվեն , նոր բացվեն սահմանները:

3360. Ամեն ոք, ով իրեն հայ է համարում, չի կարող մոռանալ ցեղասպանությունը:

3361. Հող հանձնողը արդեն հանձնել է, սահման բացողն էլ արդեն բացել է, ի՞նչ եք քննարկում...

3362. Նյուրնբերգում ֆաշիստներին դատում էին, որ հրեաների ողջակիզման պես էլ ոչինչ չկրկնվի:

3363. Լավ, եկեք սահմանը փակ պահենք, վաղն էլ Ջավախքը ասեց, վերջ կռիվ ա, ու Վրաստանի հետ պատերազմ սկսեցինք... ի՞նչ ենք անելու:

3364. Մեր ցեղասպանության ճանաչումը անհրաժեշտ է ոչ միայն մեզ, այլ աշխարհին, որ կանխարգելվի նման այլ ոճիր:

3365. Պետք է ամեն կերպ թև տալ սփյուռքին, աջակցել, որպեսզի նրանք առաջ տանեն ցեղասպանության հարցը:

3366. Ոնց մեկ օրում ստիպեցին ամրագոտիները կապել, էդպես էլ հեռուստատեսության ճիշտ աշխատանքի դեպքում ժողովրդից կհասնենք դրական արդյունքի ցանկացած հարցում:

3367. Սահմանի բացումն այդքան էլ հեշտ խնդիր չէ ու պետք չէ հապճեպ որոշումներ կայացնել: Մեզ համար հարմար նախապայմաններ պետք է լինեն: Փաստաթուղթը ստորագրելուց առաջ պետք է, որ վերևում մեր կարծիքներն ու մտքերը իմանան: Մենք ենք էս հողում ապրում ու աշխատում:

3368. Պետք է վարվի երեխաներին հայրենասեր դաստիարակելու քաղաքականություն:

3369. Չորս մեծագույն վտանգները, որի առաջ կկանգնենք արձանագրությունները ստորագրելուց հետո, սրանք են. ԼՂ կորցնելու վտանգը, Ցեղասպանության հարցից հրաժարում, տնտեսապես խժռվելու վտանգ, Ցեղասպանության հարցը քննարկելու ենթահանձնաժողովի ստեղծումը:

3370. Սահմանը պետք է բացվի այն ժամանակ, երբ մենք հանգիստ ու վստահ կլինենք:

3371. Մեզ հարց լուծող ղեկավար ա պետք, ոչ թե ժպտացող...

3372. Հայ-թուրքական հարաբերությունները կարող են քննարկվել միայն լեգիտիմ և խելացի իշխանությունների օրոք:

3373. Եթե ստորագրված արձանագրությունները հայանպաստ են, ուրեմն ես «դեբիլ» եմ

3374. Եթե հարևանդ գա ու տունդ թալանի, մյուս օրը դատարան կդիմես: Եթե դատարանն էլ արդարացնի, մյուս օրը դռանդ վերևը մուրճ կկախես ու գործի կանցնես:

3375. Մեզ դիկտատոր է պետք, որովհետև Հայաստանում քնում է երեք միլիոն հայ, արթնանում է երեք միլիոն նախագահ...

3376. 90 տարի առաջ վերաբնակեցված քուրդը ի՞նչ վտանգ կարող է հանդիսանալ մեզ համար, եթե լինեն Հայաստանի կազմում: Ղարաբաղցիները, որոնք ապացուցել են, որ բնիկ են իրենց հողի վրա, չեն կարողանում անկախություն հաստատել իրենց երկրում, քրդերը ո՞նց են դա անելու այնտեղ, որտեղ իրենք բնիկ չեն:

3377. Ինձ համար շատ վտանգավոր է սփյուռքահայերի գործոնը. սփյուռքից եկած հայերը փորձում են իրենց մշակույթը տարածել Հայաստանում:

3378. Ստորագրված արձանագրությունները գրողները, եթե այն համարում են հայանպաստ, ուրեմն նրանք առողջ չեն: